Կարէն Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

ՅՏԵՍՈՒԹԻ՛ՒՆ, ՆԱԹԱՆԱՅԷԼ

Զաւթիչների համար աւելի վտանգաւոր են գրքերը, երգերը… այն ամէնը, ինչ դարերի ընթացքին ժողովուրդն ստեղծել է։ Ըմբոստներին կարելի է կոտորել մէկ անգամ։ Ժողովրդին կարելի է ստրկացնել մէկ անգամ։ Բայց երբ տարիներ յետոյ սերունդը մեծանայ ու ճանաչի ինքն իրեն, իմանայ իր պատմութիւնը, դարձեալ պէտք է ըմբոստանայ։ Եւ եթէ ժողովուրդը կորցնէր իր յիշողութիւնը, ապա կը ձուլուէր բիւզանդացիներին, պարսիկներին, ռուսներին, թուրքերին ու վերջ։ Բայց յիշողութիւնը չէր կորցնում։

Լաւ իմացիր, եթէ միայն ինքներս չկորցնենք, ապա ոչ ոք չի կարող մեր յիշողութիւնը ջնջել։ Իսկ յիշողութիւնը կարող ենք կորցնել, եթէ կտրուենք մեր հազարաւոր տարիների անցեալից ու կարծենք թէ մեր աշխարհը սկսւում է մեզնով … Եւ եթէ այնքան սիրենք տգիտութիւնը եւ այնպէս կորցնենք մեր արժանապատուութիւնը որ կարծենք, թէ մենք որեւէ արժէք ներկայացնում ենք այն դէպքում միայն, երբ ինչ որ կողմնակի ու օտար մէկն է իր շահերից ելնելով՝ փորձում մեզ գնահատել…

«Յտեսութի՛ւն, Նաթանայէլ»

Նուիրում եմ
Փահլեւանենց Վաղարշակ Պապի
եւ Թամբագործաց Համասփիւռ Մալոյի
յիշատակին

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Փոթորիկը ծովում: Առեւանգուածը: Եւ եթէ մեր հերոսներն իսկապէս յայտուած լինէին բոլորովին անծանօթ ցամաքի վրայ, թերեւս ծովահէններից ոչ մի նամակ էլ չստացուէր, եւ մեր պատմութիւնն էլ՝ դեռ չսկսուած, աւարտուէր:

ՆԱԽ անցնում եմ ջրհորի մօտով, շրջանցում եմ պատշգամբի դիմաց գտնուող ծաղկեթմբերը, թռչում եմ սոխի, բիբարի ու կոտեմի փոքրիկ մարգերի վրայով, յետոյ մտնում եմ խնձորի ու սալորի ծառերի թաւուտը որ ջունգլներից շատ քիչ բանով է տարբերւում՝ միայն պատատուկներ չկան, ցատկում եմ առուի վրայով, որտեղ հիմա ջուր չկայ եւ, հետեւաբար, շերեփուկներ ու գորտեր էլ չկան, յետոյ... յետոյ դարձեալ քայլո՛ւմ եմ, քայլո՛ւմ, ու վերջապէս հասնում եմ փայտէ ցանկապատին, որը եւ սահմանագծում է իմ ամբողջ տիրապետութիւնը՝ մեր այգին: Այգու ամենամեծ ծառը թթենին է: Հարիւր կամ երկու հարիւր տարեկան կը լինի: Բունն էլ այնքան հաստ է որ չգիտեմ, թէ երբ՝ պատառոտել է իրեն կաշկանդող կնճռոտուած, դարչնագոյն կեղեւը: Եւ այդ կեղեւի ու բնի արանքը եղած հազար ու մի ճեղքերի մէջ իրենց համար բնակւում են ինչ որ միջատներ, ինչ որ զեռուններ, յետոյ մրջիւններ, որոնք լոյսը բացուելուն պէս սկսում են իրենց անհանգիստ վերուվարը մինչեւ մայրամուտ:

Դեռ անցեալ տարի այդ թթենու վրայ մի հարթակ եմ սարքել: Գետնից շատ բարձր է: Սակայն, երբ մագլցում եմ վեր ու նստում հարթակի վրայ, պարզւում է որ կապոյտ-կապոյտ երկինքը, այնուամենայնիւ, դեռեւս շատ հեռու է:

Հէնց որ նստում եմ թթենու վրայ սարքած հարթակին, աշխարհը յանկարծ փոխւում է: Ի հարկէ, ո՛չ թէ միանգամից, այլ աստիճանաբար: Թթենին դադարում է թթենի լինել, հարթակը դառնում է... ենթադրենք՝ մի նաւ. սովորական քամին փոխւում է փոթորիկի, իսկ կանաչ-կանաչ սաղարթը, ազնիւ խօսք, դառնում է մի իսկական ովկիանոս կամ ծով:

Ամենաիսկական:

Եթէ կասկածում էք, կարող էք հէնց հիմա քմծիծա-ղել ու հեռանալ: Իմ պատմութիւնը այն մարդկանց համար է, ովքեր նոյնիսկ իրենց մտքում չեն ծաղրի ինձ. եւ այն տղաների ու աղջիկների համար, ովքեր իրենց կեանքում գեթ մի անգամ տեսել են երաժշտութիւնը եւ լսել գոյների երգը, ինչպէս ես՝ իմ թթե-նու հարթակին նստած ժամանակ, դեռեւս անցեալ տարի աշնանը:

– Ղեկը դէպի ա՛ջ...

Տեսնո՞ւմ էք, թէ իմ նաւը ինչպէս է դանդաղ, շա՛տ դանդաղ թեքւում դէպի աջ, ճեղքելով ծառս եղող ալիքների պատնեշը:

– Հաւաքե՛լ յետնակայմի առագաստները...

Այս հրամանը տալու ժամանակ պէտք է անպայման ամուր կառչել բազրիքից: Իսկ միւս ձեռքով սովորաբար բռնում եմ բրեզենտէ կնգուղի եզրը, որպէսզի դէմքս պաշտպանեմ փոթորիկի կատաղի հարուածներից:

Նաւը թեքուել է կողքի: Ալիքները թափով զարնւում են նաւակողին, յետոյ փշրւում են ապակու պէս ու ջրի ցայտերը սփռելով չորս բոլոր, տարածւում տախտակամածի վրայ: Ջրափոշու ամպի միջով չեմ կարողանում տեսնել, թէ ճարպիկ ու արագաշարժ

նաւաստիներն ինչպէս են աճապարանքով հաւաքում առագաստները: Այդ նաւաստիներին վարձեցի Հոնոլուլուում. խեղճերը երկար ժամանակ անգործ էին մնացել, եւ անմիջապէս, առանց նոյնիսկ լրջօրեն սակարկելու օրավարձի մասին, համաձայնեցին ծառայութեան անցնել նաւիս վրայ:

Առագաստները հաւաքելուց յետոյ նաւը դադարեց գալարուել ալիքների յորձանուտում: Բայց յաջորդ պահին նոր ուժով պոռթկացող փոթորիկը ծղօտի պէս ջարդեց միջնակայմը:

— Գրո՛ղը տանի,— չկարողացայ զսպել ինձ ու բարկութիւնից մի սալոր կերայ: Իսկ կորիզը նետեցի մոլեգնած ծովը:

— Ինչո՞ւ ես ծովը նետում,— հարցրեց քիչ հեռու կանգնած օգնականս, հազիւ պահպանելով հաւասարակշռութիւնը, որպէսզի չսայթաքի լպրծուն տախտակամածի վրայ:— Ծովն աւելի կը կատաղի:

— Նախապաշարումներ չեմ սիրում,— անտարբերութեամբ ասացի ես:— Ղեկը դէպի ձա՛խ... Ձա՛խ... Այդպե՛ս պահել... Հա՛, ինչ էի ասում: Ծովից վախենալ չի կարելի: Վստահ եղիր, փոթորիկը լուսադէմին կը հանդարտուի: Միայն թէ դիմանալ է պէտք: Իսկ մի քանի օր յետոյ մենք արդէն տեղ հասած կը լինենք:

Յանկարծ ովկիանոսը հանդարտուեց: Եւս մի ալիք փշրուեց տախտակամածի վրայ. ջրի թանձր շերտը ողողեց մեր ոտքերն ու յետ քաշուեց: Դա, ի հարկէ, ժամանակաւոր խաղաղութիւն էր:

— Ուշադրութի՛ւն,— ձայն տուեցի ես:— Հիմա նոր ուժով կը սկսուի: Հաւաքե՛լ բոլոր առագաստները... Ղեկապե՛տ, այդպէս պահել...

— Իսկ գանձը անպայմա՞ն կը գտնենք,— հարցրեց իմ օգնականը: Հակառակի պէս նա այս հարցը տալիս էր ամենավտանգաւոր պահերին: Եւ միշտ էլ լսելով իմ դրական պատասխանը, սրտապնդւում էր:

Բայց հիմա, երբ ճամբորդութիւնը մօտենում էր իր աւարտին, ով էլ լինէր իմ փոխարեն, կը բարկանար ու կը վճռէր ասել ճշմարտութիւնը: Ես բարկացայ ու մի սալոր էլ կերայ:

— Մենք պեղումներ ենք կատարելու,— չոր-չոր ասացի ես. եւ կորիզը նետեցի ծովը:

— Պեղումնե՞ր...

Առանց վրան ջին խմելու ես կ՚ուտեմ իմ բրեզենտէ կնգուղը, եթէ նա կեանքում առաջին անգամ չէր լսում այդ բառը: Եւ, ճիշտն ասած, հէնց սկզբից էլ չէի հաւանել այդ մութ ու տգէտ մարդուն, որ նոյնիսկ քնած ժամանակ էլ ծխախոտ էր ծամում: Բայց Թանժերում ստիպուած էի վարձել նրան, որովհետեւ իսկական, հաւատարիմ օգնականս տառապում էր արեւադարձային տենդով ու Մարսելում ցամաք իջնելով, որոշեց վերադառնալ Լուսաշէն:

— Հողն ենք քչփորելու,— համբերութեամբ բացատրեցի ես, որովհետեւ նաւապետը կարող է, ի հարկէ, բարկանալ, բայց իրաւունք չունի առանց պատճառի կոպիտ վարուել անձնակազմի հետ:

— Որպէսզի գա՞նձ գտնենք:

— Այո՛... Գա՛նձ: Բայց ոչ թէ այնպիսի գանձ, որ դու ես պատկերացնում, կամ այդ անիծեալ ծովահէնները... Լեոպարդո Սերոբոն ու Ճիզվիտ Կարոն,— ասացի ես, ու տեսնելով օգնականիս ահաբեկուած հայեացքը, յանկարծ յիշեցի որ նաւարկութեան ժամանակ, այն էլ երբ ծովը մոլեգնած է, չի կարելի բարձրաձայն արտասանել այդ անունները:— Կարրամբա՛... Գուցէ շիրիմներ յայտնաբերենք... Կամ հրդեհուած քաղաքներ, որոնք դարերի ընթացքին ծածկուել են հողի հաստ շերտով, կամ...

— Իսկ դրա համար արժէ՞ր տարուայ այս եղանակին ծով դուրս գալ,— ասաց յուսախաբ օգնականս:— Թանժերի պանդոկում դու ինձ ասացիր, թէ գանձ ենք որոնելու:

— Եթէ որեւէ բան գտնենք, ապա դա կը լինի իսկական գանձ:

— Շիրիմնե՛ր ենք քչփորելու... Հազար տարուայ հանգուցեալների՛ ենք անհանգստացնելու... Ի զուր բան է: Ո՛նց էլ չես ափսոսել այս ճանապարհորդութիւնը սկսելու համար ծախսած պեսոները: Կը սնանկանաս, բայց արդէն ուշ կը լինի:

— Դարձեալ մեղրամոմի վաճառք կը սկսեմ,— անվրդով պատասխանեցի ես:

— Ի՞նչ...— կարգին զարմացաւ իմ օգնականը ու սկսեց աւելի եռանդով ծամել ծխախոտը: Երեւի յուզմունքից կամ բարկութիւնից:

— Մեծ գործը մեծ զոհողութիւններ է պահանջում... Այդ մասին դեռ իր ժամանակ ասել է...

Բայց հէնց նոյն պահին էլ առժամանակ հանդարտուած փոթորիկը պայթեց մի նոր ուժով: Խաւարն աւելի էր թանձրացել: Աստղերը չէին երեւում: Տախտակամածը աղօտ լուսաւորւում էր նաւախելին ամրացրած լապտերով որ քամու հոսանքին հնազանդ՝ ճօճւում էր անօգնականօրեն:

— Անիծեա՛լ փոթորիկ,— ասացի ես, ու մի սալոր էլ կերայ:

Երբ կորիզը դարձեալ նետեցի ծովը, լսուեց մի նուաղած ձայն.

— Նաւապե՛տ... Նաւապե՛տ...— Ես ցնցուեցի: Ձայնը ափից էր լսւում երեւի: Մի՞թէ ցամաքն արդէն այսքան մօտ է... Աւազակներն ըստ երեւոյթին առեւանգել են այդ աղջկան որ նշմարելով մօտեցող նաւը, աւելի ճիշտ՝ լապտերի առկայծող լոյսը, օգնութիւն է կանչում: Պէտք է փրկել նրան, ի՛նչ գնով էլ լինի: Ես արդէն ուզում էի ղեկապետին հրամայել որ նաւը թեքի ձայնի ուղղութեամբ, երբ դարձեալ լսուեց.

— Նաւապե՛տ... Ինչո՞ւ ես կորիզները վրաս նետում:

Ես բազրիքից վար նայեցի: Ձայնը շատ մօտիկից էր գալիս:

Եւ, պատկերացնո՞ւմ էք, փոթորիկն անմիջապէս դադարեց, մոլեգնած ծովն ու կատաղի ալիքներն ընդհանրապէս անհետացան: Անհետացան նոյն հրաշքով, ինչպէս եւ յայտնուել էին:

...Հարեւան բակում, ցանկապատի երկայնքով ձգուող հաղարջենու թփերի մէջ ես տեսայ աղջկան:

— Դո՞ւ էիր կանչում:

— Այո՛, նաւապետ,— ասաց նա:

— Որտեղի՞ց հնարեցիր: Ես նաւապետ չեմ:

— Հապա ո՞ւմ էիր հրամայում. «Ղեկը դէպի ա՛ջ, ղեկը դէպի ձա՛խ»,— աղջիկն այնպէս խռպոտացրեց ձայնը որ շփոթուեցի:

— Հէնց այնպէս... խօսում էի ինքս ինձ հետ,— ասացի ես:— Իբրեւ թէ նաւի վրայ եմ:

— Ես էլ եմ երբեմն խօսում ինքս ինձ հետ,— ասաց աղջիկը:— Իսկ ինչո՞ւ էիր սալորի կորիզներով խփում:

— Ե՞ս... Նետում էի ծովը: Քեզ չէի խփում: Հաղարջը հասե՞լ է:

— Բայց ինձ էր դիպչում,— ասաց նա:— Մի քիչ հասել է: Ուզո՞ւմ ես: Ամենահասածներն եմ հաւաքել:

— Ուզում եմ,— ասացի ես:— Բայց ձեռքս չի հասնի:

— Իջի՛ր ծառից:

— Հիմա՛:

Խնձորներն ու սալորները լցրեցի ծոցս ու վար սահեցի թթենուց:

— Ցատկի՛ր,— ասաց նա, յետ քաշուելով: Երկու ձեռքով կախուեցի վարի հաստ ճիւղից: Մի քանի անգամ ճօճուեցի, ու երբ ճօճուելիս դարձեալ յայտնուեցի հարեւան բակի օդային սահմանների վրայ, ձեռքերս բաց թողեցի ու ցած թռայ:— Բարե՛ւ,— ասացի ես:

— Բարե՛ւ, նաւապետ:

— Աւազակնե՞րն էին քեզ առեւանգել:

— Այո՛, բայց երբ տեսան մօտեցող նաւը, ինձ թողեցին ու փախան,— ծիծաղելով ասաց աղջիկը:— Կե՛ր,— նա պարզեց հատապտուղներով լիքը գաւաթը:

— Իսկ դու սալոր սիրո՞ւմ ես:

— Սիրում եմ:

— Խնձո՞ր:

— Խնձոր էլ:

— Վերցրո՛ւ,— ասացի ես՝ խնձորներն ու սալորները հանելով ծոցիցս:

— Շնորհակալութի՛ւն, նաւապետ: Իսկ դու չե՞ս բարկացել:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ խանգարեցի: Որովհետեւ աւազակները քեզնից վախեցան ու փախան:

— Ինձնից վախենում են,— ասացի ես, որովհետեւ այս զրոյցը ինձ դիւր էր գալիս:— Այսինքն՝ գրեթէ բոլորը... Բայց երկու ծովահէններ կան որոնք...

— Սարսափելի՞ են:

— Շա՛տ:

— Դու հեռո՞ւ էիր գնում:

— Ասենք՝ Մեքսիկա:

— Շատ հեռու է,— համաձայնեց նա:— Բայց աւելի մօտիկ տեղեր էլ կան:

— Ուզում եմ այնտեղ պեղումներ կատարել: Ասթեկների ու մայաների քաղաքներ կան որոնք դեռեւս չեն յայտնաբերուած:

— Սիրո՞ւմ ես ճանապարհորդել:

— Այո՛: Եթէ ուզես՝ միւս անգամ միասին կը մեկնենք: Գուցէ կարողանանք գտնել Մոնտեսումայի աշտարակի հետքերը:

— Ի՜նչ համով խնձոր է,— ասաց նա, դէմքը ծամածռելով, որովհետեւ մեր ծառերի խնձորները աշնանային են ու դեռ չեն քաղցրացել:

— Դու մեր քաղաքից չես,— ասացի ես:

— Անպայման կը գամ քեզ հետ ճանապարհորդելու,— ասաց նա:— Մազերդ դիտաւորեա՞լ ես զզել:

— Չէ՛: Սանրուելու հետ գլուխ չունեմ: Դու երկա՞ր ժամանակով ես եկել:

— Հայրիկս աշխատելու է ձեր գիւղի հիւանդանոցում:

— Ի՜նչ գիւղ...

— Հայրիկս էլ էր ասում որ քաղաք է, բայց ախր իսկական գիւղ է: Դրա համար էլ մայրիկս սկզբում չէր ուզում: Յետոյ մի կերպ համաձայնեց:

— Բոլոր մայրիկներն էլ այդպէս են: Իսկ մեր քաղաքը՝ քաղաք է,— ասացի ես:—Նոյնիսկ թերթում էլ գրեցին, որ Լուսաշէնն արդէն քաղաք է: Իսկ Բարթուղ պապը, յիշում եմ, հէնց նոյն օրը, երեկոյեան, իրենց բակի դռանը նստած, հէքիաթն սկսելուց առաջ ասաց. «Ի՜նչ տելեւիզոր, ի՜նչ սպուտնիկ... Եոթանասուն ինը տարի գիւղացի էի, բայց որ հրամայեցին՝ մի օրում դարձայ քաղաքացի, բա՜… Հիմա էլ էդպէս ենք ինքներս մեզ խաբելու»… Քաղաք է,— կրկնեցի ես:

— Ուրեմն, մենք էլ մեզ խաբենք, հա՞…

— Ինչո՞ւ խաբենք… Արդէն գրել են…

— Թող լինի քաղաք,— ասաց նա։— Բայց հայրիկս ասում է որ ամէն գրածի չէն հաւատա…

— Ուրեմն, այստեղ էք ապրելու։

— Ապրելու ենք, մինչեւ որ...— նա լռեց, յետոյ շտապ աւելացրեց.— Մինչեւ որ՝ տեսնենք։

— Ի՞նչ տեսնէք։

— Չգիտեմ... Միւս անգամ ե՞րբ ես ճամբորդելու։

— Դա հո իմ կամքով չէ։ Յանկարծ այնպէս է լինում որ գնում եմ ճամբորդելու։ Բայց չեմ հասկանում թէ ինչպէս է լինում։ Մէկ էլ տեսար՝ յանկարծ լինում է։

— Քո նաւը երեւի խորտակուեց, հա՞։

— Երեւի,— ասացի ես։— Ափսո՛ս… լաւ նաւ էր։

— Եւ դու յայտնուեցիր բոլորովին անծանօթ մի ցամաքի վրայ։ Աւազակների ձեռքից փրկեցիր ինձ, եւ շուտով կը սկսուեն մեր զարմանալի արկածները այս անծանօթ վայրերում։

— Ուրիշ նաւ կը գայ ու կը տանի մեզ,— ասացի ես։— Հիմա մարդիկ չեն կորչում։

— Մարդիկ միշտ էլ կորել են… Իսկ հիմա՝ աւելի շատ…

Հայրի՞կդ է ասում։

Իսկ դու ինձ մի՛ ծաղրիր, նաւապետ… Թէ չէ…

Իսկ դու էլ մեր քաղաքին…

— Լաւ… թող լինի ձեր քաղաքը… Թէ չէ՝ այնքան կը վիճենք որ չենք էլ հասցնի կարգին ծանօթանալ… Իմ անունը Նուարդ է,— ասաց աղջիկը։— Բայց կարող ես Նանա ասել… Իսկ քո՞նը։

— Տիգրա՛ն։

— Դու շտապո՞ւմ ես։ Երեւի հետախուզութեան ես գնալու։

— Ե՞ս... Ինչո՞ւ։

— Չէ՞ որ չգիտէնք, թէ որտեղ ենք յայտնուել… Գուցէ մօտակայքում որեւէ բնակավայր կայ։

— Լա՛ւ խաղ կը լինի,— ոգեւորուեցի ես։— Այդպէս կարելի է անդադար խաղալ։

— Տիգրա՛ն,— լսուեց փողոցից։

— Քե՞զ են կանչում,— անհանգստացաւ Նուարդը։— Ուրեմն, մօտակայքում տեղաբնակներ կան։

— Շէկ Դավիթն է,— ասացի ես շշուկով։— Ծովահէնների համհարզը։ Տեսնես որտեղի՞ց է իմացել որ այստեղ եմ։

— Եթէ ծովահէններ են, կ’իմանան,— ասաց Նուարդը։— Ծովահէնները ուրիշ տեսակ տիպեր են։ Վախենո՞ւմ ես։

— Մի քիչ։

— Տիգրա՛ն,— դարձեալ ձայն տուեց Շէկ Դավիթը։

— Գնա՞մ տեսնեմ ինչ է ասում,— առաջարկեց Նուարդը։

— Ինքս կը գնամ։

Ես վազեցի դէպի պարիսպն ու բակի կողմից ձայն տուեցի.

— Ի՞նչ ես ուզում։

— Դո՛ւրս արի... բան եմ տալո՛ւ...

— Ի՛-ի՛նչ...

— Նամա՛կ,— պարսպի միւս կողմից ասաց Շէկ Դավիթը։

— Պատի վրայից գցիր,— ասացի ես։— Ժամանակ չունեմ։

Շէկ Դավիթը փողոցի կողմից ինչ որ բան փնթփնթաց, յետոյ թղթով փաթաթած մի քար ընկաւ ոտքիս մօտ։

— Պատասխան գրելու կարիք չկայ,— ասաց Շէկ Դավիթը։— Ես էլ ժամանակ չունեմ։

Ես հարթեցի ճմրթած թուղթն ու մօտեցայ Նուարդին։

— Այդ ի՞նչ է,— հարցրեց նա։

— Նամակ։

— Ծովահէնների՞ց։

— Երեւի,— ասացի ես ու բարձրաձայն կարդացի կարմիր մատիտով ու անճոռնի ձեռագրով գրած նամակը.

> «Թշուառական, մենք քո երեսը տեսնել չենք ուզում։ Եթէ ընկնես մեր ձեռքը, քեզանից միայն յուշ կը մնայ։ Բայց քանի որ կարօտել ես մեզ, ուստի եւ նամանաւանդ պատրաստ ենք այսօր երեկոյեան ժամը ինին ընդունելու քեզ։ Կը հանդիպենք այնտեղ, որտեղ սովորաբար հանդիպում ենք»։

— Յետոյ՞,— հարցրեց Նուարդը։

— Տակն էլ ստորագրութիւն կայ։Ծովահէնական ստորագրութիւն։

— Քե՞զ են ուղարկել։

— Ի հարկէ՛։

— Ի՞նչ գիտէս։ Քո անունը չկայ։

— Թշուառականը ես եմ։

— Ինչ հետաքրքի՜ր է,— ուրախացաւ Նուարդը։

— Որ թշուառականը ե՞ս եմ։

— Ասում էի, չէ՞… որ արկածներ կը սկսուեն։ Իսկական արկածներ։ Անպայման կը գնաս, լա՞ւ։

— Իսկ եթէ գերի՞ վերցնեն,— մտահոգուած ասացի ես։

— Կը գամ քեզ փրկելու,— խոստացաւ Նուարդը։— Այնպէս կ’անես որ քեզ անպայմա՛ն գերի վերցնեն, խոշտանգե՛ն, տանջե՛ն… Շատ հետաքրքիր կը լինի։

— Խոշտանգե՞լը… Բայց ախր ես նրանց չեմ կարօտել։ Որտեղի՞ց են հնարել, թէ կարօտել եմ։

— Ի հարկէ, չես կարօտել։ Ծովահէնների՞ն էլ կը կարօտեն։ Բայց առանց դրա էլ նամակը բոլորովին հետաքրքիր չէր լինի։ Անպայման կը գնաս։

— Եթէ շատ ես ուզում՝ անպայման կը գնամ,— խոստացայ ես, եւ Նուարդը շատ ուրախացաւ որ իր ցանկութեամբ եմ գնում։ Ես նրան, ի հարկէ, չասացի որ միեւնոյն է, գնալու էի։

Որովհետեւ ուրիշ ելք չունէի։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Կիսաւարտ բաղնիք կամ աւերուած դղեակ։ Տիգրանը ակամայ յայտնւում է ծովահէնների գաղտնի հաւաքատեղիում։ Մտերմական զրոյց ճապոնական եւ հին հնդկական ձեւերով գերիներին խոշտանգելու մասին։ Միլիոնատէր դառնալու հեռանկարներ։

ԵՐԲ ջրհորից քաշում հանում էի ցանցի մէջ դրած ձմերուկը, յանկարծ անդրադարձայ որ երգում եմ քթիս տակ։ Պարզւում է, որ ես ուրախ եմ ու չեմ էլ

նկատում այդ: Ես երգում եմ միայն ուրախ լինելու դէպքում, այդ բանը հաստատ գիտեմ:

Իսկ ձմերուկը ջրհորի մէջ ենք կախում, որպէսզի սառի: Հայրս ասում է թե սառցարանի մէջ ձմերուկը համն ու հոտը կորցնում է: Իսկ ջրհորում ուրիշ տեսակ է սառում: Ի հարկէ, նա այս դէպքում ճիշտ է: Ու ես համոզուած եմ որ եթէ պարանը յանկարծ կտրուէր, ու վիթխարի ձմերուկը ընկնէր ջուրը, ես, այնուամենայնիւ, կը շարունակէի երգել, որովհետեւ աշխարհում ամէն-ամէն բան լաւ էր:

Սովորաբար ճաշում ենք ուշ երեկոյեան, երբ հայրս՝ հոգնած ու հաճախ անտրամադիր, տուն է գալիս աշխատանքից:

— Եթէ վաղը մեքենաներ չլինեն, ահագին միրգ կը փչանայ,— դանդաղ ուտելով՝ ասում է նա :

— Կը լինեն,— հանգստացնում է մայրս:— Յանկարծ գիշերը չվերկենաս ու իրար յետեւից չծխես:

— Իսկ եթէ չլինեն...

Եւ այսպէս, մինչեւ որ ճաշում վերջացնում ենք: Եւ այսպէս, գրեթէ ամէն օր: Ամէն տարի: Հէնց որ սկսւում է մրգաքաղը:

...Արդէն մթնել էր, ու ես համոզուած էի որ ժամը ինն անց է: Չէի շտապում, որովհետեւ ամէն անգամ հանդիպման գնալիս, Լեոպարդո Սերոբոն ու Ճիզվիտ Կարոն ահագին սպասեցնում էին ինձ: Ես էլ ուզում եմ որ գոնէ մէկ անգամ էլ նրանք սպասեն, եւ ի զուր տեղը ծովահէնութիւն չանեն:

Երբ հայրս դուրս ելաւ բակ՝ փեթակները աչքի անցկացնելու, ես մի անգամ էլ նայեցի ժամացոյցին. արդէն ուշանում էի:

Հէնց որ կարգին մթնում է, փողոցները նմանւում են կէտագծերի, որոնք երկրաչափութեան ուսուցիչը շատ է սիրում նկարել սեւ գրատախտակին: Պատճառը էլեկտրական լամպերն են, որոնք յուրաքանչիւր քսան-երեսուն մետրի վրայ իրենց դեղնաւուն լոյսով փորձում են լուսաւորել շրջապատը: Ու դառնում է այսպէս՝ մի քիչ լոյս, յետոյ՝ խաւար, մի քիչ լոյս, յետոյ՝ խաւար: Իսկական կէտագիծ:

Լոյսի տակ կարելի է հանդիպել միայն անցորդների, իսկ այնտեղ, ուր տիրում է խաւարը, դռների առջեւ, նստոտած են լինում մարդիկ:

Սովորականի պէս, մթնում նստած մարդկանց մէջ ե՛ւ մեծեր կային, ե՛ւ երեխաներ: Ի հարկէ, մեծերն աւելի շատ էին, քան երեխաները: Մի ժամանակ ես էլ էի սիրում նստել նրանց հետ ու լսել անվերջանալի, մի քանի գիշեր տեւող հէքիաթները մութ ու լոյս աշխարհների, անխելք թագաւորների ու դեւերի առեւանգած ամաչկոտ գեղեցկուհիների մասին. հէքիաթներ՝ որոնք պատմում էին ոչխարի մորթուց կարած փափախները ամբողջ տարին երբէք գլուխներից չհանող պապիկները. ի դէպ, նրանք թաւ ու սրածայր բեղեր էլ ունէին: Պատմում էին միալար, խռպոտած ձայնով, ու շատ էին վրդովւում, երբ ունկնդիրներից ոմանք գործի բերումով կէսից թողնում հեռանում էին:

Յետոյ, երբ յանկարծ պարզուեց որ աշխարհում հէքիաթներից բացի ուրիշ հետաքրքիր բաներ էլ կան գրքերի մէջ, այլեւս մինչեւ ուշ գիշեր չէի նստում բեղաւոր ու փափախաւոր պապիկների մօտ, եւ փողոցով անցնելիս էլ, խուսափում էի երեւալ նրանց աչքին:

Դեռ հեռուից տեսնելով Բարթուղենց տան մօտ նստոտած մարդկանց, ես դանդաղեցրի քայլերս, որպէսզի սուսիկ-փուսիկ, առանց նկատուելու գնամ իմ գործին:

— Նալբա՛նդ, ա՛յ Նալբանդ,— երբ անցնում էի փոստի երկ-յարկանի շէնքի մօտով, ներսից լսուեց հեռախօսավարուհու միալար ու խեղդուած ձայնը:—Նալբա՛նդ...

Հեռախօսավարուհին երեւի մինչեւ ուշ գիշեր չկարողանայ կապուել հեռաւոր այդ բնակավայրի հետ, որովհետեւ վախենում էր ձայնը բարձրացնել. որովհետեւ գիտէր՝ հէնց հարեւան տան դռանը մարդիկ հէքիաթ են լսում:

— Սա հո՛ Տիգրանն է:

— Թող գնա սուտ-սուտ գրքեր կարդայ,— իբրեւ թէ անտարբեր վրայ բերեց Բարթուղ պապը:— Այս հէքիաթը դեռ մարդու չեմ պատմել:

Առանց ուշադրութիւն դարձնելու այդ գայթակղեցնող յայտարարութեանը, ես հասայ փողոցի ծայրն ու թեքուեցի դէպի աջ:

Հեռուն, խաւարի մէջ, լապտերների դժգոյն լոյսի տակ ուրուագծուեց կիսաշէն բաղնիքը: Պատերը շարել էին վաղուց, շա՛տ վաղուց... Որքան յիշում եմ, դրանք միշտ էլ եղել են: Իսկ տանիքը չէին կապել ու չեն էլ կապի: Խճի ու աւազի երբեմնի բլրակները մենք վաղուց հողին ենք հաւասարեցրել: Հայրս պատմում էր որ ժամանակին գիւղացիներից մի քանիսը բողոքել են շրջկենտրոն, թէ նախագահն ի զուր փող է վատնում բաղնիք կառուցելու համար: Իբր՝ ո՞ւմ է պէտք: Լուսաշէնը երեւի մի հազար տարի ճամբայ է անցել առանց բաղնիքի: Շրջկենտրոնից կարգադրել են դադարեցնել շինարարութիւնը, յետոյ փոխել են նախագահին, իսկ երկու տարի առաջ էլ թերթով յայտարարել-հրամայել են որ Լուսաշէնն արդէն քաղաք է, իսկական քաղաք. բայց բաղնիքը այնպէս էլ ոչ ոք չի ուզում կառուցել-վերջացնել:

Ամէն անգամ, երբ գիշերով յայտնուում եմ այս կողմերը, կիսաշէն բաղնիքը թւում է լքուած ու ավերուած միջնադարեան մի դղեակ: Եւ դա, անտարակոյս, ծովահէնների ձեռքի գործն է եղել. Լեռպարդո Սերոբոն ու Ճիզվիտ Կարոն սկզբում կողոպտել են դղեակը, իսկ յետոյ՝ հրդեհել:

Ես պտտուեցի դղեակի չորս կողմը, յետոյ ներս մտայ, շրջեցի մութ սրահներով, եւ զգացի, որ շատ եմ տխրում:

Ծովահէնների համհարզը դեռ չէր եկել: Այս երեկոյ էլ նրանք սպասեցրին ինձ: Ոչի՛նչ:Յաջորդ անգամ աւելի ուշ կը գամ:

Արդէն ուզում էի բարկանալ ինքս ինձ վրայ, բայց չհասցրեցի, որովհետեւ խաւարի միջից մի թոյլ սուլոց լսուեց: Դուրս ելայ դղեակի աւերակներից: Բայց ոչ ոք չկար: Ձեռքիս փաթեթը սեղմեցի ծնկներիս միջեւ, եւ ցուցամատներս դնելով լեզուիս տակ, որքան ուժ ունէի՝ սուլեցի:

— Կամաց, հո չե՞ս գժուել,— հէնց ականջիս տակ լսեցի Շէկ Դավիթի ձայնը:

— Ինչո՞ւ ուշացար,— դժգոհեցի ես:— Արդէն յետ էի գնալու:

— Այդ դո՛ւ ուշացար,— ասաց Շէկ Դավիթը:— Բերե՞լ ես:

— Եթէ եկել եմ, ուրեմն, բերել եմ:

— Տո՛ւր տեսնեմ:

Փաթեթը պահելով մէջքիս յետեւ, ասացի.

— Սկզբից դու...

— Տուր տեսնեմ,— անվրդով կրկնեց Շէկ Դավիթը: Եւ ասաց այնպիսի երանգով, որ քիչ էր մնում փաթեթը տայի, բայց յաջորդ պահին միտքս փոխեցի:

— Նախ փողը տուր: Ես շտապում եմ:

— Ասացի՝ տեսնեմ,— եւ նա առանց թոյլ տալու որ ուշքի գամ, իմ ձեռքից գրեթէ խլեց փաթեթը:

Ես ախր նրա դասը կը տայի, որովհետեւ ինձնից չորս տարով փոքր էր: Նա էլ գիտէր, որ հեշտութեամբ կը կարողանամ իր հախիցը գալ, ու հէնց այդ պատճառով էլ ծառայութեան մէջ էր մտել ծովահէնների մօտ: Ապահովութեան համար: Եւ իրեն ուժեղ էր զգում:

— Եթէ փող ես ուզում՝ գնանք Սերոբենց հացատուն:

— Չեմ կարող, շտապում եմ:

— Եթէ շտապում ես՝ գնա:

— Իսկ փո՞ղը:

Շէկ Դավիթն արհամարհանքով վարից վեր նայեց ինձ ու փաթեթը ափի մէջ ծանրութեթեւ անելով, դանդաղ հեռացաւ:

Այս ամէնը նորութիւն էր: Չէի հասկանում, թէ ի՛նչ է կատարւում, եւ շուարած կանգնել էի դղեակի աւերակների մօտ:

— Իսկ մեր պայմա՞նը,— երբ Շէկ Դավիթը բաւական հեռացել էր, սթափուելով գոչեցի ես: Բայց պատասխան չստանալով, ակամայ քայլեցի նրա հետեւից:

Ես նոր հասկացայ, թէ ի՛նչ է նշանակում, երբ ասում են «ձեռքերս քոր է գալիս»: Հասկացայ որ այդպիսի պահերին Շէկ Դավիթին մի լաւ, փառաւորապէս թակելու ցանկութիւն է առաջանում: Ես հիմա կը վազեմ, կը հասնեմ նրան, մի ձեռքով կը բռնեմ օձիքը, իսկ միւսով կը հասցնեմ ուզածիս չափ, մինչեւ որ ձեռքերիս քորն էլ անցնի:

Բայց մինչ ես որոշում էի, թէ ինչպէս է աւելի հարմար քորել ձեռքերս, Շէկ Դավիթը հասաւ Սերոբենց տուն, եւ բակ մտնելուց առաջ կանգնելով, յետ նայեց: Յետոյ սպասեց այնքան, մինչեւ մօտեցայ, ու մի կողմ քաշուելով, առանց որեւէ բան ասելու, առաջ թողեց ինձ:

Մենք յայտնուեցինք մութ թաւուտում, որտեղ բացուած նեղ արահետով այդ զարհուրելի ծովահէնները երեւի հարիւրաւոր գերիներ էին տարել իրենց որջը:Նոյնիսկ թւում էր, թէ թաւուտում նշմարում եմ խոշտանգուած ու գազանաբար սպանուած գերիների մարմինների մնացորդները:

— Դու մեզ պէտք ես,— շշուկով ասաց Շէկ Դավիթը:— Եթէ խելոք լինես՝ քո օգուտն է: Թէ որ չէ՝ մեղքը քո վիզը: Մի՛ վախեցիր, գնա՛: Քեզ չենք ուտի:

— Ես չեմ վախենում,— բարձրաձայն պատասխանեցի ես, որպէսզի չմտածեմ խոշտանգուող գերիների արահետի մասին:

Եւ հէնց այս խօսքի վրայ մութ թփերից դուրս թռաւ ինչ որ մէկը ու զարհուրելի ձայնով աղաղակեց.

— Օ՛-օ՛-օ՛... Ա՛-ա՛-ա՛...

Մարմնովս մի սարսուռ անցաւ, նոյնիսկ փշաքաղուեցի: Քաշուեցի յետ, բայց Շէկ Դավիթը փակել էր նահանջի ճանապարհը:

— Գիտեմ որ չես վախենում,— ասաց Շէկ Դավիթը:— Գնա՛… առաջ գնա՛:

Քունքերս կատաղօրեն տրոփում էին, սիրտս արագարագ խփում էր... Թփերից դուրս պրծած ուրուականն անհետացաւ:Իսկ Շէկ Դավիթը ինքնագոհ ծիծաղեց:

— Ի՛նչ ես ծիծաղում,— շունչս յետ բերելով, հարցրեցի ես:

— Քայլի՛ր,— ասաց նա: Ու կրկնեց:— Մի՛ վախեցիր, քեզ չենք ուտի:

— Ես չեմ վա...— ուզեցի ասել, բայց ինձ թուաց, թէ մութ թփերը դարձեալ շարժուեցին: Ու խօսքիս կէսին լռեցի: Ոչ թե վախից: Ախր ո՞ւմ է հաճելի մութ գիշերով այդպիսի աղեկտուր ճիչեր լսել:

— Այս կողմն է,— ասաց Շէկ Դավիթը:

Մտածեցի որ առայժմ ամէն ինչ կարգին է: Նուարդի ուզածի պէս: Ամենայն հաւանականութեամբ ես կարող եմ ինձ գերի համարել:Վստահել եմ հակառակորդին, գնացել եմ հանդիպման, բայց պարզուել է, որ իմ դիմաց անազնիւ մարդիկ են: Ինձ անմիջապէս գերի են վերցրել: Ու քիչ յետոյ էլ, երբ սկսեն խոշտանգել՝ սքանչելի բան կը լինի: Հետաքրքիր է, թէ ի՛նչ բնոյթի կը լինեն այդ խոշտանգումները:

Ու ես յիշեցի այն իսպանացիներին, որոնք մօտ չորս հարիւր տարի առաջ յայտնուել էին մայաների գերութեան մէջ, նաւաբեկութիւնից յետոյ: Մայաները

առերեւոյթ շատ լաւ են ընդունել նրանց. եւ միամիտ նաւապետին թուացել է որ նրանք ի սրտէ համաձայն են անցնել Իսպանիայի թագաւորի հպատակութեան ներքոյ: Գերիներին հանդիսաւոր թափորով տանում են տաճար: Յետոյ նոյնպիսի հանդիսաւորութեամբ բարձրաստիճան տեղաբնակները իսպանացի նաւազներին չտեսնուած ու չլսուած թանկարժէք զարդեր են նուիրում, իսկ նաւապետի վզից կախում են ահագին հաստ մի ոսկէ շղթայ: Իսկ յետոյ... յետոյ, կարծեմ քուրմերից մէկը այդ երջանիկ նաւապետին հրաւիրում է կլորիկ քարի մօտ ու հասկացնում որ մէջքի վրա պառկի այդ քարին: Նաւապետը համոզուած լինելով, թէ դա սովորական ծէս է եւ անսահման յարգանքի ու Իսպանիայի թագավորին հպատակուելու անվերապահ մի նշան, ժպիտը դէմքին՝ պառկում է: Եւ հէնց նոյն պահին քուրմերից մէկը դաշոյնով հարուածում է նաւապետին ու գլխից վեր բարձրացնում նրա դեռեւս տրոփող սիրտը: Տաճարի մօտ հաւաքուած բազմութիւնը կարգին ուրախանում է: Յետոյ, ի հարկէ, միւս նաւաստիներին էլ են սպանում:

Մայաները, ինչ խօսք, այս ամէնը արել են առանց գերիներին խոշտանգելու: Բայց իմ հակառակորդներն ախր այդ ազնիւ եւ իրենց ազատութիւնը պաշտպանող մայաները չեն, այլ ամենասովորական ծովահէններ: Եւ ամէնից կարեւորն այն է, թէ ես կը դիմանա՞մ արդեօք այդ խոշտանգումներին: Ուզած-չուզած պէտք է դիմանամ: Ախր Նուարդը շատ էր ոգեւորուել դրանով: Բայց ինչպե՞ս է կարողանալու փրկել ինձ:

Այս մռայլ մտքերից սթափուեցի, երբ անցանք Սերոբենց քարաշէն, երկ-յարկանի տան յետեւ:

Շէկ Դավիթը ոտքի հարուածով բացեց երբեմնի հացատան դուռը: Ասում եմ՝ երբեմնի, որովհետեւ հիմա գրեթէ բոլորն էլ հացը խանութներից են գնում: Այսինքն, հաւկիթն էլ, երբ գալիս էր մեր չունեցած հաւերից պետութեանը հաւկիթ յանձնելու ժամանակը:

Ընդհանրապէս մեր թոնրատանը հաց էինք թխում դէպքից դէպք. ալիւրը ճարում էինք քաղաքի խանութներից: Հիմա երեւի ուրիշ քաղաքներ գնալու կարիք չէր լինի, քանի որ արդէն իսկական քաղաք էր Լուսաշէն գիւղը: Մնում էր միայն ժամանակին իմանալ որ խանութը ալիւր են ստացել…

Երբ մտանք հացատուն, աչքերս կկոցեցի, թէեւ ներսը նաւթի մի հին լամպ էր վառում միայն: Սակայն խաւարից յետոյ այդ դեղնաւուն, հոգնած լոյսն էլ առաջին պահին թւում էր նոյնիսկ կուրացուցիչ: Մեր յետեւից դուռն ինքն իրեն փակուեց, ու ես լսեցի մի քանի անգամ չխկչխկացող շղթայի ձայնը:

— Եկա՛նք,— հպարտ-հպարտ ասաց Շէկ Դավիթը:

— Եթէ ուզում ես, նստի՛ր,— անտարբեր առաջարկեց Լեոպարդո Սերոբոն:— Հիմա Կարոն կը գայ:

Ես ժպտացի: Ախր նրանցից ոչ մէկն էլ չգիտէր որ անուններ եմ կպցրել իրենց ու համարում եմ ծովահէններ: Հետաքրքիր է, ի՞նչ կանեն, եթէ յանկարծ իմանան, որ ծովահէն են ու ծովահէնական անուն էլ ունեն: Ես ժպտացի այս մտքից, բայց Լեոպարդո Սերոբոն բոլորովին ուրիշ բան հասկացաւ:

— Շա՛տ ես ուրախացել,— ասաց նա հեգնանքով:— Ծիծաղո՛ւմ ես... Չլինի՞ կարծում ես, թէ...

— Ոչինչ էլ չեմ կարծում,— շտապ վրայ բերեցի ես:— Հէնց այնպէս... մի բան յիշեցի:

Լեոպարդո Սերոբոն կասկածանքով նայեց վրաս, Շէկ Դավթից վերցրեց փաթեթը, նորէն ինձ նայեց, յետոյ փաթեթից հոտ քաշեց ու գլուխը յետ գցելով, երանութեամբ կիսախուփ արեց աչքերը:— Անմահական հոտ է,— վերջապէս ասաց նա, ու մօտենալով նաւթավառի վրայ դրած թիթեղեայ տուփին որի մէջ հալուած պարաֆին

կար, մի քանի կտոր դարչնագոյն մեղրամոմ աւելացրեց։— Ապրե՛ս, այս անգամ ժլատութիւն չես արել,— շարունակեց նա։— Բայց եթէ մաքուր մեղրամոմ լինե՛ր...— Նա բացեց փաթեթը։— Թե չէ՝ այս դարչնագոյնը… որ կ՚ուզես իմանալ, բանի պէտք չէ: Չե՞ս կարող մի քիչ մաքուրը բերել: Կրկնակի կը վճարենք:

— Չեմ կարող:

— Դե լա՛ւ... Եթէ ուզենաս՝ կը բերես:

— Չեմ կարող,— կրկնեցի ես:

— Ասում եմ՝ կրկնակի կը վճարենք:

— Միեւնոյն է:

— Ախր ինչո՞ւ:

— Որովհետեւ մաքուր մեղրամոմը հայրիկս օգտագործում է:

— Մի քիչ... Շա՛տ քիչ,— աղերսեց նա:

— Գողութի՞ւն անեմ:

Շէկ Դավիթը զարմացած ինձ նայեց:

— Իսկ սա որ բերել ես՝ ի՞նչ է:

— Ձա՛յնդ,— սաստեց նրան Լեոպարդո Սերոբոն:

— Գողութիւն չէ,— ասացի ես։— Հայրիկս սա չի հալում: Նետելու փոխարեն հաւաքում եմ:

— Հա՛,— մեծաւարի ծոր տուեց Շէկ Դավիթը։— Ուրեմն, ազնիւ տղա ես:

— Ասացի՝ ձա՛յնդ,— չհամբերեց Լեոպարդո Սերոբոն։— Ի հարկէ, Տիգրանը ազնիւ տղա է: Հապա ի՞նչ էիր կարծում:

Դռան շղթան դարձեալ չխկչխկաց, ու ներս մտաւ Ճիզվիտ Կարոն:Նա մի տարօրինակ քմծիծաղով ինձ նայեց ու աչքով արեց Լեոպարդո Սերոբոյին:

— Եկել ես, հա՞,— հարցրեց նա ինձ ու շրջուեց Լեոպարդո Սերոբոյի կողմը։— Ախր ասում էի, որ կը գայ: Իսկ Սերոբը չէր հաւատում: Ասում էր, թէ կը վախենայ:

— Ինչո՞ւ պէտք է վախենայ,— անմեղ-անմեղ հարցրեց Շէկ Դավիթը:

— Ի՞նչ իմանամ:

— Մենք հո վայրի գազաններ չե՞նք, որ վախենայ:

— Ճիշտ է, գազաններ չենք:

— Ոչ էլ ուրուականներ ենք,— շարունակեց Ճիզվիտ Կարոն:

— Ոչ էլ ուրուականներ ենք,— կրկնեց Շէկ Դավիթը, ու երեքով ծիծաղեցին:

Ես անհանգիստ ու անօգնական նայեցի շուրջս…

Խաղը՝ խաղ, բայց ինչ որ բան ինձ արդէն դիւր չէր գալիս: Ախր խաղը խաղ է միայն ինձ համար ու մէկ էլ Նուարդի: Ծովահէններն ու նրանց համհարզը խաղի ոչ մի տրամադրութիւն էլ չունէին. ես արդէն ներքուստ համոզուել էի: Եւ նրանք հաճոյքով ծաղրում էին ինձ: Դեռ աւելին, ծիծաղում էին երեսիս:

Իսկ պարաֆինը լաւ հալուել էր: Լեոպարդո Սերոբոն էլ դա նկատեց, ու ալումինե հին պատառաքաղով խառնեց թանձր զանգուածը որ մեղրամոմով դեղին գոյն էր ստացել:

— Կաղապարները պատրաստիր,— ասաց նա:

— Լցրո՛ւ,— Ճիզվիտ Կարոն մօտ բերեց բարալիկ մոմերի կաղապարները:

Երբ տուփի պարունակութիւնը թանձր շիթով լցուեց կաղապարների մէջ, նրանք մեր խանութից գնած պարաֆինէ հաստ ու ճերմակ մոմերը դարձեալ կոտրատեցին ու լցրեցին թիթեղեայ տուփը, յետոյ վրան մի քիչ էլ մեղրամոմ աւելացրեցին: Ես ուշադիր հետեւում էի նրանց: Դեռ երբէք չէի տեսել, թէ ինչպէս են մոմ պատրաստում:

— «Մոմի պատմութիւնը» կարդացե՞լ ես,— հարցրեց Ճիզվիտ Կարոն:

— Ե՞ս:

— Դժուար թէ կարդացած լինես,— ասաց Լեոպարդո Սերոբոն։— Դպրոցի գրադարանում մի օրինակ կայ, այն էլ մեր ձեռքին է։ Շատ օգտակար գիրք է։ Ֆարադէյը կարծես հէնց մեզ համար էլ գրել է։

— Մինչեւ կիրակի կը կարողանա՞նք գոնէ հինգ հարիւր հատ սարքել,— մտախոհ ասաց Ճիզվիտ Կարոն։

— Գիշերը ցերեկ պիտի անենք,— վճռականօրեն

ասաց Լեոպարդո Սերոբոն։— Լաւ է, Տիգրանը մեղրամոմը հասցրեց։ Այս կիրակի ահագին ժողովուրդ կը գայ։ Կարծեմ կարեւոր տօն է։ Անունն էլ չգիտեմ։

— Ո՞ւմ անունը,— հարցրեց Շէկ Դավիթը։

— Տօնի,— պատասխանեց Լեոպարդո Սերոբոն, ու յանկարծ բարկացաւ.— Ես չասացի՞, որ մէջ չընկնես։

— Ոչինչ, ոչինչ,— հանգստացրեց նրան Ճիզվիտ Կարոն։— Դեռ փոքր է։ Չի հասկանում։— Նա յետ ու առաջ քայլեց, կարծես մի շատ կարեւոր հարցով էր մտահոգուած։ Քայլե՛ց, քայլե՛ց, յետոյ կանգնեց.—Վաճառելն էլ մի փորձանք է։ Երեքով չենք հասցնի։

— Ի հարկէ, չենք հասցնի։

— Գոնէ մի օգնող էլ ունենայինք,— հառաչելով ասաց Ճիզվիտ Կարոն։

— Օգնականներ շատ կը ճարուեն,— պատասխանեց Լեոպարդո Սերոբոն։— Բայց վստահելի մարդ չկայ, վստահելի մարդ...

— Ես գնամ,— ասացի ես, մտածելով, որ իմ ներկայութիւնը այստեղ աւելորդ է, եւ բացի այդ, նրանց մտահոգութիւններն ինձ բոլորովին էլ չէին հետաքրքրում։— Շտապում եմ։

— Հիմա ամբողջ աշխարհում մի վստահելի մարդ չես գտնի,— գլուխը ցաւակցաբար օրորելով, նկատեց Ճիզվիտ Կարոն։

Ես չէի հասկանում, թէ ինչո՛ւ նրանք իմ փողը չեն տալիս։ Եթէ տուած լինէին, սուսիկ-փուսիկ կը գնայի։

— Կաղապարներից հանիր, արդէն սառել են,— յիշեցրեց Լեոպարդո Սերոբոն։— Նոր բժշկին տեսե՞լ ես։ Մեր թաղումն է ապրում։

— Չեմ տեսել։ Լցրու։

— Ես գնում եմ,— ասացի ես։

Լեոպարդո Սերոբոն ուշադիր հետեւելով հալուած պարաֆինի շիթին, հերթով լցրեց բոլոր կաղապարները։

— Ի զուր էլ տանջւում ենք,— ասաց Ճիզվիտ Կարոն։— Երեք հոգով չենք կարողանայ վաճառել։

— Եթէ աշխարհում ազնիւ ու վստահելի մարդիկ լինե՛ն,— ծուռ-ծուռ նայելով ինձ, ասաց Լեոպարդո Սերոբոն։

— Շտապում եմ,— կրկնեցի ես։—Գնամ։

— Գուցէ Տիգրանին խնդրենք,— առաջարկեց Լեոպարդո Սերոբոն։

Նրանք այնպէս էին խօսում, կարծես բացակայ լինէի։

— Վստահելի՞ է։

— Երեւի։

— Ազնի՞ւ է։

— Շա՛տ...— բազմանշանակ պատասխանեց Լեոպարդո Սերոբոն։

— Դավիթ, մեղրամոմի փողը տուե՞լ ես։

— Մօտս փող չկար,— ասաց Շէկ Դավիթը։

— Ինչքա՞ն ենք տալու։

— Երեւի մէկ ռուբլի։

— Եթէ կիրակի օրը մեզ օգնի, կարելի է հինգ ռուբլի տալ: Ու Տիգրանը կը դառնայ միլիոնատէր:

— Իմ ռուբլին տուէք, ես գնամ,— ասացի ես:

— Իսկ եթէ չհամաձայնի՞ օգնել:

— Չենք տայ: Ո՛չ մի կոպեկ [Ռուբլի - *փողի միաւոր, երբ Հայաստանը Ռուսաստանի եւ ապա Սովետական կայսրութեան գաղութն էր: Կոպեկը ռուբլու հարիւրերորդական մասն է:*]:

— Ո՛նց թե,— բողոքեցի ես:— Մենք ախր պայմանաւորուել ենք:

— Լաց կը լինի,— ասաց Ճիզվիտ Կարոն:— Ես լացկաններին չեմ հանդուրժում:

— Իսկ ո՞վ է ուշադրութիւն դարձնողը: Եթէ գլուխ

ցաւացնի, ճապոնական ձեւով մի լաւ կը հասցնես վզակոթին:

— Ճապոնակա՛ն ձեւով... Շատ կը ցաւի: Ախր մի հարուածով կարող եմ փայտը երկու կէս անել,— ասաց Ճիզվիտ Կարոն:

Ես, ի հարկէ, հաւատացի նրան: Ծովահէնները սովորաբար ուժեղ են լինում:

— Իսկապէ՞ս,— զարմացաւ Լեոպարդո Սերոբոն:

— Ուզո՞ւմ ես, ցոյց տամ: Դավիթ, այդ տախտակը տուր տեսնեմ:

Շէկ Դավիթը նետուեց դէպի հացատան մութ անկիւնը, մի ձող բերեց ու հորիզոնական դիրքով դրեց աթոռակների վրայ: Ճիզվիտ Կարոն լիզեց աջ ձեռքի ափի եզրն ու մի քանի անգամ կտրուկ հարուածներով օդը ճեղքելուց յետոյ թափով իջեցրեց ձողի վրայ: Փայտը կոտրուեց ճիշտ մէջտեղից, ու ես ակամայ կծկուեցի՝ պարանոցս քաշելով ուսերիս մէջ:

— Բաւարարուած եմ,— ծովահէնի պէս աչքով անելով, ասաց Լեոպարդո Սերոբոն:— Դու մարդու վիզն էլ տեղից կը պոկես:

— Ես գնամ... Իմ ռուբլին տուէք,— ասացի ես, ջանալով խօսել հնարաւորին չափ անվրդով ու բարձրաձայն, սակայն, չգիտեմ ինչո՛ւ, ձայնս շատ խղճալի ու կամացուկ հնչեց:

— Հիմա ի՞նչ խորհուրդ ես տալիս: Ճապոնական ձեւո՞վ հասցնեմ վզակոթին, թե՞ հին հնդկական:

— Հին հնդկակա՞ն,— արդէն իսկապէս զարմացաւ Լեոպարդո Սերոբոն:— Նո՞ր ձեւ է:

— Ասում եմ՝ հին հնդկական,— կրկնեց Ճիզվիտ Կարոն:— Եթէ նոր լինէր՝ կ'ասէի նոր հնդկական: — Հա՛... Տե՛ս, թէ ինչպէս աւելի հարմար կը լինի: Բայց նախ համոզիր, բացատրական աշխատանք տար: Տիգրանը լաւ տղայ է: Ի զուր չնեղացնենք: Յետոյ էլ ախր իր օգտի համար ենք ասում: Նախ՝ կը պարզուի որ աշխարհում գոնէ մի ազնիւ ու վստահելի մարդ կայ. դա շատ կարեւոր է... բարոյական առումով: Յետոյ էլ՝ մէկի փոխարէն հինգ ռուբլի կը վաստակի ու կը դառնայ միլիոնատէր:

— Իսկ եթէ չհամոզուի՞:

— Ճապոնական, հին հնդկական, կամ էլ Կարո-Կաննի ձեւերից մէկը հո՞ կայ,— ասաց Լեոպարդո Սերոբոն:

— Կարո-Կաննը շախմատում է լինում,— չհամբերեցի ես:

— Ոչինչ, դու Կարո-Կաննով կը պաշտպանուես, իսկ մեր Կարոն էլ ճապոնականով կը հարձակուի: Ու սերունդների հիշողութեան մէջ կը մնայ որպէս ճապոնական Կարոյի հարձակում:

— Դու մի ծաղրիր, գիտէ՞ս,— վրայ պրծաւ Ճիզվիտ Կարոն:

— Չեմ ծաղրում... Բացատրում եմ: Հասկացա՞ր, Տիգրան: Թե՞ նորէն բացատրեմ:

— Լաւ,— հոգոց հանելով ասացի ես:— Կիրակի օրը կը գամ փողս վերցնելու:

Եւ դուրս գալով հացատնից, համարձակօրեն ան-ցայ մութ բակով, որովհետեւ Ճիզվիտ Կարոն հացատանն էր, ու ոչ ոք վայրենի աղաղակով դուրս չէր պրծնի թփերի միջից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հազարամեայ վանքում: Տարօրինակ շշուկներ: Անծանօթը: Մեր հերոսները որոշում են հետեւել նրան: «Ի՛նչ լաւ է որ աշխարհում ծովահէններ էլ կան»:

ԾԱՆՐ հեւալով, մի քանի քայլ եւս մօտեցանք վանքին ու կանգնեցինք ցուցանակի առջեւ:

Հետաքրքիր մի զգացողութիւն եմ ունենում, երբ մէկն ու մէկի հետ, որ լուսաշէնցի չէ, յայտնւում եմ այս կողմերը: Տարիներ շարունակ տեսել եմ միեւնոյն վանքը, քիչ հեռու գտնուող միեւնոյն սրբատեղին, բայց երբ ինձ հետ նորեկ մարդ է լինում, ես էլ կարծէս դառնում եմ նրա պես մէկը որի համար ամէն բան նորութիւն է: Ամէն ինչ տեսնում եմ առաջին անգամ ու սկսում եմ գնահատել նորեկի աչքերով:

Հէնց թէկուզ ցուցանակը որ պատրաստուած է ամենասովորական թիթեղից:Իւղաներկով ճերմակ էին ներկել ու սեւ տառերով գրել, թէ վանքը քանի՛ հարիւր տարի առաջ է կառուցուած, ո՛վ է կառուցել, յետոյ՝ ո՛ր վանդալ ցեղերն են իրենց ասպատակութիւնների ժամանակ աւերել, եւ ապա՝ ո՛ր հայոց տիկինն է վերակառուցել... Իսկ ամենացածի խոշոր տառերով մակագրութիւնը յիշեցնում է որ ճարտարապետական այս յուշարձանը պահպանւում է պետութեան կողմից. եւ փչացնելու փորձ անողներն էլ պատժւում են օրէնքով:

Հազար տարեկան վանքի գաւիթը շրջափակող պարիսպը տեղ-տեղ քանդուած էր, իսկ գետնի սալերը մաշուել ու փոս էին ընկել:Երբ անձրեւ էր գալիս, ջուրը հաւաքւում էր այդ գոգաւոր սալերի մէջ եւ ամբողջ վանքը արտացոլւում էր գետնի վրայ: Ափսոս որ հիմա ո՛չ անձրեւաջուր կար հաւաքուած, եւ ո՛չ էլ այն հաւանականութիւնը, թէ առաջիկայ օրերին անձրեւ կը գայ:

Մենք անցանք գաւիթով ու մօտեցանք վանքի մուտքին:Ես կանգնեցի, եւ ցոյց տալով վիթխարի դուռը, Նուարդին ասացի.

– Նայի՛ր:

Ծանր ու զանգուածային փայտէ մի դուռ էր դա: Երկփեղկանի: Փորագրուած: Զարդապատկերներից ոչ մէկը չէր կրկնւում:Ես քանի՛-քանի՛ անգամ եմ կանգնել այս դռան առաջ հասկանալու, ըմբռնելու համար փորագրութիւնների ներքին օրինաչափութիւնը:Բայց ի զուր: Զարդապատկերների հիւսուող, խաչուող ու անվերջանալի գծերն իրենց մոգական ուժով պարուրում էին ինձ, եւ ես, ինքս էլ չիմանալով, թէ ինչպէս, օրը ցերեկով, քսաներորդ դարում, սկսում էի մի սքանչելի ճանապարհորդութիւն վաղեմի ժամանակների եւ այլ աշխարհների մէջ, որոնք միշտ էլ Հայաստանն էին, բայց տարբեր դարաշրջաններում:Փոփոխական ժամանակների տարօրինակ ու հէքիաթային լոյսերի տակ երկիրն էլ լեռնային բյուրեղապակու նման, որից մեր դպրոցի բնագիտական աշխատասենեակում մի մեծ բեկոր ունենք, փոփոխում էր իր երանգները, լինում էր նարինջ ու ալ, լինում էր կանաչ ու կապոյտ, լինում էր մոխրագոյն ու սեւ... Բայց միշտ էլ, ինչպէս ասացի, նոյն աշխարհն էր՝ Հայաստանը:

Ա՛յ, հիմա էլ, երբ մի փոքր կանգնեցի դռան առջեւ, որպես զի Նուարդը տեսնի, թէ ի՛նչ հրաշք է դա, ինձնից անկախ սկսեցի ինչ որ հիմարաւուն ու ծիծաղելի բաներ մտածել:

— Կարելի՞ է ձեռք տալ,— գրեթէ շշուկով հարցրեց Նուարդը:

— Կարելի է,— թոյլ տուեցի ես, որովհետեւ հասկացայ որ նա էլ սիրեց այդ կախարդական դուռը. դուռը՝ որից այն կողմ արիւնով ու մոխիրով շաղախուած հարիւրամեակներն էին:

Նուարդը մատը հպեց գծերից մէկին ու շարժեց

վրայով:Մատը սահում էր ու գծի հետ սքանչելի զարդեր նկարում դռան վրայ:

— Ինչպե՛ս են փորագրել,— ասաց Նուարդը:— Իմ համբերութիւնը չէր բաւի:Ինձ կը թուար որ երբէք չեմ աւարտի...

—Իսկ փորագրող վարպետին չի թուացել,— ասացի ես:

— Ինչո՞ւ:

— Երեւի հաւատացել է, թէ կ'աւարտի: Երբ մարդ հաւատում է մի բանի, անպայման կարողանում է գործն աւարտել: Ուզո՞ւմ ես, մտնենք ներս:

— Իսկ ներսը ի՞նչ կայ:

— Քանդակներ... Պատերին՝ նկարներ: Բայց արդէն խամրել են:

— Տէրտէր չկայ՞:

— Տէրտէրին վաղուց աքսորել են… հայրիկս է պատմել: Գուցէ նոյնիսկ սպանել են:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ եղել է Աստծու հետ: Եւ օգնել է որ ուրիշներն էլ լինեն Աստծու հետ:Բայց վերջերս մի ուրիշ տէրտէր է գալիս սրբատեղի:

— Իսկ սրբատեղին ի՞նչ է… Այստեղից հեռո՞ւ է…

— Բլուրի միւս կողմը, քարափի վրա... Մարդիկ էլ են այնտեղ գնում: Մոմ են վառում: Աղօթում են:

— Իսկ այս եկեղեցու ներսը մոմ վառո՞ւմ են,— հարցրեց Նուարդը:

— Երբեմն,— ես հրեցի դռան ծանր փեղկը, ու մենք յայտնուեցինք զով կիսախաւարի մէջ:

— Լքուած ամրոցի նման է,— կիսաձայն ասաց Նուարդը:—Հիմա ուրուականներ էլ կը յայտնուեն:

Ուզեցի ծիծաղել, բայց սրահը այնպէս թնդաց, որ սսկուեցի:

— Ի՜նչ լաւ է, որ ծովահէնները քեզ գերի չվերցրեցին ու չխոշտանգեցին,— շարունակեց Նուարդը:— Դու ազատուեցիր նրանց ճիրաններից, ու մենք կա-րողացանք յայտնաբերել այս լքուած ամրոցը:

— Բոլորովին էլ չազատուեցի,— ասացի ես:—Նրանք պահանջեցին որ կիրակի օրն անպայման գնամ իրենց մօտ:

— Չես գնա:

— Խոստացել եմ:

— Ոչինչ... Մենք շուտով կը կորցնենք օրերի հաշիւը, եւ դու չես իմանայ, թէ երբ է կիրակին:

— Փայտի վրայ խազեր կ'անենք ու հաշիւը կը պահենք,— ասացի ես, որովհետեւ այդպիսի օրացոյ-ցը շատ վստահելի է ու ժամանակին փորձարկել է նոյնիսկ Ռոբինզոնը:— Գուցէ շատ երկար մնանք այստեղ, իսկ չիմանա՞նք, թէ քանի՛ տարի ենք միայնակ ապրում: Դու ափսոսո՞ւմ ես որ ինձ չխոշտանգեցին ու գերի չվերցրեցին:

— Ինչո՞ւ ափսոսամ,— ասաց Նուարդը:— Աւելի լաւ, որ այդպէս վերջացաւ: Իսկ դու դժգո՞հ ես:

— Կ'ուզենայի, որ ամէն բան իսկականից լինէր,— ասացի ես:— Եթէ իսկականից լինէր, դու հաստա՞տ կը գայիր ինձ ազատելու:

— Ի հարկէ: Ու մենք դարձեալ կը գտնէինք այս լքուած ամրոցը եւ կը պատսպարուէինք:

— Չէի՞ր վախենայ:

— Իսկ դո՞ւ:

Եթէ ասեի՝ ոչ, ճիշտ չէր լինի:Ես մի քիչ վախենում էի Սերոբից ու Կարոյից: Ու երբէք չէի ուզենայ որ Կարոն ճապոնական կամ հին հնդկական ձեւերն ինձ վրայ փորձէր: Բայց չէ՞ որ այս ամէնը, այնուամենայնիւ, խաղ էր, սովորական խաղ, ուստի պատասխանեցի.

— Իսկական ծովահէններից չէի վախենայ:

— Կարելի՞ է բարձրանալ բեմ,— հարցրեց Նուարդը:

— Կարելի է:

Մենք բարձրացանք բեմ՝ որ դարեր առաջ զարդարուած է եղել ամէն տեսակի թանկարժէք իրերով, պատկերներով, ոսկէկար վարագոյրներով, իսկ հիմա բոլորովին դատարկ է ու անհրապոյր:Բեմեզրին կանգնելով, Նուարդը մի քանի անգամ ինչ որ մեղեդի երգեց. եւ սրահը արձագանքեց՝ հաճելի ու մի քիչ էլ խորհրդաւոր:

— Իսկ սա՞ ինչ դուռ է,— հարցրեց նա:

Դա խորշ էր եւ ոչ թէ դուռ: Չգիտեմ, գուցէ ժամանակին դուռ եղել է, բայց հիմա մնացել է ուղղանկիւնի մի բացուածք, որի եզրերին հարուստ բարձրաքանդակներ կան:Ես մի անգամ էի միայն այդ խորշով ներս մտել, բայց չէի համարձակուել գնալ նեղլիկ, գրեթէ անվերջանալի մութ միջանքով որի ձախ կողմում ուրիշ խորշեր էլ պէտք է լինէին:

Նուարդը որոշեց որ երկուսով կարող ենք շատ հանգիստ ուսումնասիրել այդ զարհուրելի միջանցքը:

— Ոչ մի հետաքրքիր բան չկայ,— փորձեցի համոզել նրան:— Հայրիկս ասում է որ այնտեղ միայն խցեր են:Քարէ յատակով ու շատ նեղլիկ լուսամուտով խցեր:

— Մարդի՞կ են ապրել:

— Այո՛:

Վանականներ:

Թէ՞ տէրտէրներ:

— Այստեղ ապրող վանականները նաեւ գիտնականներ են եղել,— ասացի ես:— Խցերի մէջ են ապրել եւ գրքեր են գրել, կամ հայերեն են թարգմանել օտար լեզուներով գրուած աշխատութիւնները, կամ էլ ուղղակի նորէն ու նորէն արտագրել են արդէն մաշուած ձեռագրերը:

— Ի՞նչ գիտէս:

— Գիտեմ: Ճերմակ, երկար մօրուքով ծերունիները մարխի լոյսի տակ նստած գրել են ու գրել:

— Լուցկի ունե՞ս,— հարցրեց Նուարդը:

— Սովորական խցեր են: Ոչ մի հետաքրքիր բան չկայ,— կրկնեցի ես:

Նուարդը մի քայլ արեց ուղղանկիւն բացուածքից այն կողմ ու կորաւ խաւարի մէջ:

— Ո՞ւր,— գոչեցի ես:— Մութ է:

— Ձեռքս բռնիր,— խնդրեց Նուարդը:— Այստեղ առնէտներ կա՞ն:

— Որտեղի՞ց հնարեցիր,— զարմացայ ես, որովհետեւ առնէտները սովորաբար շտեմարաններում են լինում: Իսկ հազար տարեկան այս եկեղեցու մէջ, եթէ ժամանակին որեւէ ուտելիք էլ եղել է, ապա վաղուց ի վեր ոչ մի փշրանք չի մնացել: Ժամանակակից առնէտների նախա-նախապապերն ու նախա-նախատատերը վաղուց մաքրազարդել են եղածը:

— Ձայն լսեցի,—նոյն պահին ահաբեկուած ասաց Նուարդը՝ դուրս գալով խորշից:

— Ոչ մի ձայն էլ չկայ:

Ու երկուսով էլ մի քանի վայրկեան լռեցինք:

— Լսեցի՞ր,— քիչ անց դարձեալ հարցրեց Նուարդը։
— Այստեղ առնէտներ չկան։
— Գուցէ ուրի՞շ բան է։
— Ի՞նչ։
— Չգիտեմ։
— Ծովահէններն են,— փորձեցի կատակել ես, որպէսզի մի քիչ սրտապնդուեմ։— Եկել են մութ նկուղներում թաքցրած գանձերը տանելու։
— Ափսո՛ս լուցկի չունես,— ասաց Նուարդը։
— Յաջորդ անգամ անպայման կը վերցնեմ։
— Նորէն գալո՞ւ ենք։
— Ես հաճախ եմ գալիս։ Հէնց որ մի քիչ տխրում եմ, գալիս ու նստում եմ դռան մօտ։ Նայում եմ փորագրած նախշերին... Լսեցի՞ր։ Կարծէս թէ ոտնաձայ-ներ էին։
— Մա՞րդ է։
— Ուրուականները անշշուկ են քայլում։ Թաքնուենք սիւնի յետեւ։
— Երանի քեզ,— ասաց Նուարդը։—Բոլորովին չես վախենում։
— Ո՞վ ասաց... Բայց դու ինձ հետ ես։
— Ես էլ եմ վախենում։
— Գիտեմ,— ասացի ես։
— Բայց դու անվախ ես,— պնդեց Նուարդը։— Իսկ այստեղից չե՞նք երեւայ։
— Եթէ ասէի որ չեմ վախենում, դարձեալ չէիր հաւատայ,— դժգոհեցի ես։
— Գուցէ,— ասաց Նուարդը։— Մօտենում է։
Մենք աւելի սեղմուեցինք սառը սիւնին եւ շունչներս պահեցինք։ Ես զգացի Նուարդի մազերի բոյրը։
— Ի՞նչ օձանելիք է,– հարցրեցի ես։
— Ոչ մի... Սը՛ս...— ասաց նա։— Գալիս է։
Մութ խորշից յայտնուեց ինչ որ մէկը։ Կանգնեց, նայեց շուրջը, ափերն իրար շփեց, երեւի փոշին սրբելու համար, եւ արագաքայլ դուրս ելաւ կիսախաւար սրահից։
Իսկ մենք երեւի մի հարիւր տարի այդպէս կանգնեցինք՝ սիւնին կպած ու սսկուած։
— Տեսա՞ր,— շշնջաց Նուարդը։
Ես գլխով արեցի։
— Դո՞ւրս գնաց։
Ես դարձեալ գլխով արեցի։
— Ո՞վ էր։
Ես ուսերս վեր քաշեցի։ Իբր՝ «Ի՞նչ իմանամ»։
— Ի՛նչ ես կանգնել։ Վազենք,— յանկարծ տեղից պոկուելով, գոչեց Նուարդը։
— Ո՞ւր,— պարզուեց որ խօսելը չեմ մոռացել։
— Տեսնենք, թէ ի՛նչ մարդ էր։ Վազե՛նք... թէ չէ՝ կը կորցնենք։
Ես դժկամութեամբ հետեւեցի Նուարդին, որովհետեւ, իմ կարծիքով, ոչ մի արտակարգ բան էլ չկար այս անակնկալ, եղած կամ գուցէ չեղած հանդիպման մէջ։
Մենք բլրակի լանջով վազեցինք դէպի վար։Ու մէկ էլ շունչ առանք փոքրիկ, փայտէ կամրջի մօտ։ Շրջապատում ոչ ոք չկար։
— Մեզ պարզապէս թուաց,— վստահօրեն ասացի ես։Նուարդը կշտամբանքով ինձ նայեց։
— Ի հարկէ, թուաց,— պնդեցի ես։— Ոչ ոք էլ չկար։
— Կանաչ հագուստով էր,— ասաց Նուարդը։— Դուրս ելաւ ու ձեռքով յարդարեց մազերը։Նոյնիսկ ժպտաց։Դու չտեսա՞ր որ ժպտաց։

— Հազուստի գոյնը չեմ յիշում: Բայց ոչ թէ մազերը յարդարեց, այլ ձեռքերն իրար շփեց,— ասացի ես:

— Միեւնոյն է: Ուրեմն, դու էլ տեսար: Կարեւորն այդ է: Եւ իմ կարծիքով այդ անծանօթը ծովահէնների թաքցրած գանձի հետեւից էր եկել: Ա՜հ, եթէ շուտ վազէինք ու հասնէինք...

— Ախր ոչ մի գանձ էլ չկայ,— ասացի ես:

— Ի՞նչ գիտէս:Հապա ինչո՞ւ էր եկել:Դու ուզում ես Մեքսիկա գնալ պեղումներ անելու, իսկ ուրիշներն էլ գանձը որոնում են հէնց քթներիս տակ:

— Ոչ գանձ կայ եւ ոչ էլ գանձ որոնողներ,— ասացի ես, որովհետեւ արդէն համոզուած էի որ պարզապէս մեր աչքին է երեւացել այդ անծանօթը:— Ազնիւ խօսք, եկեղեցու մէջ ոչինչ էլ չկայ: Եթէ ժամանակին եղել է, ապա վաղո՜ւց արդէն թալանել տարել են: Ախր հազար տարուայ վանք է եղել այստեղ: Բայց եթէ շատ ես ուզում, կարող եմ վերեւի թումբը պեղել: Շատ կասկածելի թումբ է: Եւ բոլոր կասկածելի թմբերի տակ էլ հետաքրքիր, հազուագիւտ բաներ են լինում: Կիրակի օրն սկսե՞նք պեղումները:

— Սկսենք,— ոգեւորուեց Նուարդը:— Միեւնոյն է, ստիպուած ենք մնալ այս անմարդաբնակ վայրերում, մինչեւ որեւէ նաւ պատահաբար յայտնուի հե-ռու հորիզոնի վրայ:Քո ծովահէնների վրայ յոյս դնել չի կարելի:

— Մի բան խնդրեմ՝ կանե՞ս, Նուարդ:

— Ասա՛:

— Ի՞նչ կը լինի, ծովահէնների մասին քիչ յիշիր:

— Վախենո՞ւմ ես:

— Վախենո՜ւմ ես... Վախենո՜ւմ ես...— բարկացայ ես.— Մի բան եմ ասում, թէ չէ՝ վախենո՜ւմ ես: Ուղղակի չեմ ուզում անդադար յիշել նրանց: Կարծում ես՝ հաճելի՞ է:

— Եթէ խաղ է, ուրեմն՝ հաճելի է:

— Խաղը՝ խաղ է: Բայց... բայց նրանք ախր իսկական ծովահէններ են,— գոչեցի ես:

— Ի՞նչ,— սարսափեց Նուարդը:

— Այո՛, ամենաիսկական:

— Միլիցիա [*Սովետական տիրակալութեան տակ այսպէս էր կոչւում ոստիկանութիւնը*] հայտնենք,— առաջարկեց Նուարդը:

— Միլիցիա՜...— յուսահատութեամբ ասացի ես, որովհետեւ Նուարդը երբէք չէր կարող հասկանալ, թէ ինչպէս են լինում ամենաիսկական ծովահէնները, եթէ նոյնիսկ իրականում ծովահէն էլ չեն:— Աւելի լաւ է, նրանց մասին քիչ յիշես:

— Լաւ,— խոստացաւ Նուարդը:

Եւ մենք լուռ քայլեցինք դէպի տուն: Եւ երկուսով էլ մտածում էինք երեւի միեւնոյն բանի մասին: Երբ երկու հոգի լուռ քայլում են այն դէպքում, երբ խօսելիք շատ ունեն, ապա նրանք մտածում են միեւնոյն բանի մասին:

Երբ հասանք տուն, նախքան հրաժեշտ տալը, Նուարդն ասաց.

— Տիգրան, ի՜նչ լաւ է որ աշխարհում ծովահէններ էլ կան, չէ՞...

— Սքանչելի՜ է, հոյակա՜պ է, առանց այդ ծովահէնների կեանքը իմաստ չէր ունենայ,— բարկացած վրայ տուեցի ես:

— Ի հարկէ, ոչ իմաստ կ’ունենար եւ ոչ էլ հետաքրքիր կը լինէր,— ամենայն սառնասրտութեամբ հաստատեց Նուարդը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Անսպասելի ժամանում է Ռուբէնը: Գիշերային զրոյց աշխարհի, քաղաքի ու չասուող գաղտնիքների մասին, որն ընդհատւում է բնաւ էլ ո՜չ անսպասելի ձեւով:

ԵՂԲԱՅՐՍ եկաւ բոլորովին անսպասելի:

Եկաւ իրիկնադեմին, երբ ջրհորից արդէն հանել էի ձմերուկը, եւ մենք երեքով՝ հայրս, մայրս ու ես նստել էինք ճաշելու:

Հայրս դարձեալ բողոքում էր ավտոմեքենաների պակասից, բարձրաձայն հաշւում էր, թէ մօտաւորապէս որքան միրգ կը փչանայ, եթէ մինչեւ վաղը կէսօր մեքենաներ չլինեն: Մայրս փորձում էր հանգստացնել նրան, որովհետեւ հակառակ դէպքում, ամբողջ գիշեր մինչեւ լոյս, հայրս բարկութիւնից անդադար ծխելու էր ու ծխելու:Իսկ ես լուռ ուտում էի, որովհետեւ՝ նախ քաղցած էի, եւ ապա՝ եթէ լաւ չուտէի, ձմերուկից կը զրկուէի:Իսկ ես ձմերուկ շատ եմ սիրում:

Հայրս պնակը յետ մղեց, վարդագոյն անձեռոցիկով սրբեց բերանն ու վերցնելով մսագործի խոշոր դանակը, սեղանի վրայով գլորեց-մօտեցրեց ձմերուկը: Յետոյ նայեց ինձ: Վերջին պատառն էլ կուլ տալով, ցուցադրաբար ես էլ յետ մղեցի պնակն ու նայեցի հօրս:

Դանակը մխրճուեց ձմերուկի մէջ ու լսուեց մի հաճելի ճայթիւն: Եւ նոյն պահին բացուեց սեղանատան դուռը. շեմքին երեւաց եղբայրս՝ փոքրիկ ճամպրուկը ձեռքին:

— Ռուբէ՛ն,— հազիւ կարողացաւ բացագանչել մայրս ու վազեց եղբորս գրկելու:

Հայրս նախանձելի անվրդովութեամբ շարունակեց կտրատել կարմիր-կարմիր ձմերուկը, յետոյ լաթով սրբեց դանակն ու մի սիգարեթ վառեց:

— Բարեւ, հայրիկ,— ասաց Ռաբէնը:

— Գուցէ լուր կը տայիր որ գալու ես,— դժգոհեց հայրս:

— Չհասցրեցի,— արդարացաւ Ռուբէնը:— Ո՞նց ես, Տիգրան:

Ես միայն ժպտացի:Ի հարկէ, լաւ եմ:Շատ լաւ եմ, որովհետեւ դու տանն ես, որովհետեւ երեկոներն այլեւս տխուր չեն անցնի, որովհետեւ այնքա՛ն բան ունեմ քեզ պատմելու:Ես ժպտում էի:Չէի խօսում: Եւ Ռուբէնն ամէն բան հասկացաւ:

— Լաւ ես,— ասաց նա:— Վաղն ի՞նչ ես անելու: Ազա՞տ ես: Կը խօսենք:

Յետոյ մի շերտ ձմերուկ վերցրեց ու սկսեց ուտել:

— Ճանապարհից ես եկել, քաղցած կը լինես,— ասաց հայրս:— Համա՛ս, ճաշ լցրու:Թո՛ղ այդ ձմերուկը:

Ռուբէնն ինձ աչքով արեց, կիսատ շերտը դրեց սեղանի եզրին, ու ձեռքերը շփելով, համբերութեամբ սպասեց, մինչեւ որ մայրս նրա առջեւ դրեց կերակուրով լի պնակը:

Նա ուտում էր առանց մեզ նայելու: Իսկ մենք՝ հայրս, մայրս ու ես, ձմերուկը մոռացած հետեւում էինք նրա անշտապ շարժումներին:

...Արդէն հինգ տարի էր որ Ռուբէնն ապրում էր տնից հեռու, Երեւանում:Գնացել էր սովորելու գիւղատնտեսական հիմնարկութիւնում:Սկզբում բոլոր տօներին անպայման գալիս էր տուն: Յետոյ սկսեց գալ միայն արձակուրդներին:Յետոյ պարզուեց որ երբեմն պարտք է ունենում, եւ ստիպուած, ձմերային արձակուրդին էլ է մնում Երեւանում, որպէսզի պարապի ու քննութեան պարտքը յանձնի:

Իսկ վերջին երկու ամառը մէկ-երկու շաբաթով հազիւ էր գալիս տուն: Ընկերներով հանգստանալու էին գնում Սեւ ծովի ափերը: Հայրս ինքն իրեն բարկանում էր, մայրս կարօտում էր, իսկ ես մտածում էի որ երբ ինքս էլ գնամ սովորելու, ապա հէնց սկզբից էլ ամարնային արձակուրդին հանգստանալու կը մեկնեմ ծովափ:

— Մնալո՞ւ ես,— յանկարծ հարցրեց հայրս:

Ռուբէնը գդալը մի վայրկեան պահեց բերանի մօտ, ունքերի տակից նայեց հօրս, յետոյ կերաւ, գդալը ցած դրեց, երկար, շատ երկար սրբուեց անձեռոցիկով ու, վերջապէս, ասաց.

— Տեսնենք:

— Հա՛... Տեսնե՛նք...— ծոր տուեց հայրս:— Ուրեմն միտքդ չես փոխել:

Ու դարձեալ լռեցինք:

Նոյնիսկ ձմերուկը չէինք գովում: Մի սովորութիւն որ տարիներ շարունակ գոյութիւն ունէր մեր տանը: Մինչեւ հիմա չեմ յիշում մի դեպք, որ հայրս յանկարծ անյաջող ձմերուկ գնած լինէր: Եւ նա շատ էր սիրում, երբ գովում էինք այդքան յաջող կատարած ընտրութիւնը:

Քիչ յետոյ մայրս կանաչ կեղեւները դուրս տարաւ,

խոնաւ լաթով սրբեց սեղանը, բայց հայրս դեռ աթոռին նստած, ծխում էր իր համար:

— Ասում ես՝ աւարտեցիր,— դարձեալ բոլորովին անսպասելի խօսեց նա:

— Աւարտեցի, հայրիկ:

— Եւ ուզում ես մնալ այնտեղ:

— Տեսնե՛նք,— պատասխանեց Ռուբէնը:

— Ե՞րբ ես վերադառնալու:

— Չգիտեմ,— ասաց եղբայրս, ու ես վստահ էի որ նա իսկապէս չգիտէ, թէ երբ է վերադառնալու Երեւան:

— Իսկ ես գիտեմ,— ասաց հայրս:– Քարշ կը գաս մի քանի օր, ու յետոյ էլ կը պարզուի որ անհետաձգելի գործեր ունես, չէ՞:

— Ոչ մի անհետաձգելի գործ էլ չունեմ,— ասաց Ռուբէնը:— Ուղղակի չգիտեմ, թէ ինչպէս կը դասաւորուի:

— Օ՛ֆ,— հառաչեց մայրս:

— Վաղն առավօտ շուտ վեր կաց,— ասաց հայրս, առանց Ռուբէնին նայելու:— Ցախատան պատն ենք նորոգելու:

— Չայն տուր,— ասաց Ռուբէնը:

— Ժամը տասն է,— ասաց հայրս:—Համա՛ս, անկողինները բաց՝ քնենք:

Ռուբէնը նայեց ինձ ու նորէն աչքով արեց: Մենք այդպէս աւելի լաւ էինք հասկանում իրար:

Հայրս սիգարեթը մարեց ալումինե մոխրամանի մէջ, ինչ որ բան փնթփնթաց ու գնաց բակի դուռը գոցելու:

— Քնե՞նք, Տիգրան,— հարցրեց Ռուբէնը:

— Ուզո՞ւմ ես՝ քնենք,— ասացի ես:

— Մի նեղացիր, Ռուբեն ջան,— խնդրեց մայրս:— Չոր մարդ է...

— Գիտեմ,— ասաց Ռուբէնը:

— Առաւօտ էլ շուտ չարթնանաս: Ցախատան պատին ոչինչ էլ չի եղել,— շարունակեց մայրս:

— Գիտեմ,— ասաց Ռուբէնը:

— Չարացել է:Միրգը փչանում է, դրա համար էլ խեղճ մարդը չարացել է,— բացատրեց մայրս:— Ամբողջ գիշեր ծխելու է...

— Գիտեմ, գիտեմ,— ասաց Ռուբէնը:

— Բարի գիշեր,— ասաց մայրս, անկողինները յարդարելով:

— Բարի գիշեր:

Երբ մայրս գնաց, սեղանատանը մնացինք երկուսով:Ռուբէնը դուռը գոցեց ու նայեց մահճակալներին: Ես անմիջապէս հասկացայ նրան:

— Մօտեցնե՞նք:

— Ի հարկէ,— ասաց նա:—Ծերուկները չե՞ն բարկանայ:

Նա վաղուց էր իրեն օտար զգում մեր տանը: Ես դա նկատել էի դեռեւս նախանցեալ տարի: Չգիտեմ ինչպէս էր պատահել, ինչից էր սկսուել, որ Ռուբէնը իրեն պահում էր հիւրի նման:Տանը շատ մտերիմ հիւրի նման որն, այնուամենայնիւ,

կաշկանդուած է զգում իրեն, զգում է որ իրեն սիրում են, համարում են նոյնիսկ ընտանիքի անդամ, սակայն ինչ որ տեղ օտար է ինքը, ընդամէնը՝ հիւր:

Մահճակալները մօտեցրինք իրար, ջանալով աղմուկ չբարձրացնել:Յետոյ շտապ-շտապ հանուեցինք ու մտանք անկողին:

Ռուբէնը ձեռքը պարզեց, պտտեց անջատիչը, եւ նոյն պահին աշխարհի աստղերն ու մի հատ էլ քառորդ լուսին պատուհաններից լցուեցին սենեակ, իրենց հետ բերելով ամարնային գիշերուայ հաճելի մի զով:

Քնելիս սիրում եմ գլուխս ծածկել վերմակով, անկախ այն բանից՝ ամա՞ռ է, թէ ձմեռ: Կծկւում եմ մահճակալի վերին կէսում, եւ այնպէս ամուր եմ փաթաթւում վերմակով որ աշխարհը իր բոլոր աստղերով ու դիմակն անդադար փոխող լուսնով դադարում է ինձ համար գոյութիւն ունենալ: Եւ ես մնում եմ իմ բոլոր հաճելի ու տհաճ մտքերի հետ:

Յետոյ սկսում եմ այդ հաճելի ու տհաճ մտքերի

հաշուէկշիռը:Եւ միշտ էլ թեթեւութեան ուրախ մի դող է անցնում մարմնովս, որովհետեւ պարզւում է որ տհաճութիւնները կորցրել են իրենց ազդեցութիւնը. որ աշխարհի եւ իմ միջեւ ոչ մի միջնորդ չկայ. ու յանկարծ, ինքս էլ չիմանալով, թէ երբ եւ ինչպէս, քնում եմ մինչեւ առաւօտ:

Ամէնից տխուրն այն էր, որ կիրակի օրը ստիպուած մոմ էի վաճառել: Տհաճ էր նաեւ Կարոյի ու Սերոբի գոյութիւնն աշխարհում:Տխուր ու տհաճ էին ամէն տեսակի հին հնդկական կամ ճապոնական ձեւերը, որոնք ինձ վրայ փորձելու հնարաւորութեան միտքը նոյնիսկ նողկանք էր առաջացնում: Մի խօսքով, այն ամէնը, ինչ միայն ի՛մ գաղտնիքն էր, տհաճութիւնից բացի, առայժմ ոչ մի լաւ բան չէր պարունակում:

Հաճելի բաները կարծէս աւելի շատ էին:Նախ՝ որ Նուարդը աշխարհի ամենալաւ աղջիկն է եւ ամենահաւատարիմ ընկերը: Յետոյ այն որ ծովահէններն այնուամենայնիւ ընդամէնը իսկականի ու անիսկականի խառնուրդ էին:Եւ ամէնից կարեւորը՝ եկել էր Ռուբէնը:Եղբա՛յրս:Աշխարհում միակ մարդը որ երբեմն հասկանում էր ինձ, ու նրա հետ ոչինչ սարսափելի եւ յուսահատական չէր թւում: Ռուբե՛նը: Օտարացած, հիւրի պէս եկող, հիւրի պէս կաշկանդուած եղբայրս:

Ռուբէնը անհանգիստ շրջուեց անկողնի մէջ:

Ես գլուխս դուրս հանեցի վերմակի տակից:

— Տիգրա՛ն, քնե՞լ ես:

— Չեմ քնել: Մտածում եմ:

— Ինչի՞ մասին:

— Աշխարհի:

Ռուբէնը շշուկով ծիծաղեց:

— Շուտ ես սկսել,— ասաց նա:—Աշխարհի մասին դեռ չարժէ մտածել:

— Իսկ ես մտածում եմ:

— Թւում է:Ուղղակի մտքերդ գալիս ու գնում են, եւ քեզ թւում է, թէ մտածում ես աշխարհի մասին:

— Ճիշտ է:Իսկ որտեղի՞ց գիտէս:

— Ինձ հետ էլ է պատահում,— ասաց Ռուբէնը:— Եթէ Երեւանում հաստատուեմ, մերոնք շա՞տ կը վշտանան:

— Ուրեմն, իսկականի՞ց գնալու ես,— հարցրեցի, նստելով անկողնում:

— Մտածում եմ...

— Հայրիկը կը վշտանայ,— ասացի ես:— Նա մտադիր է տան վրայ մի յարկ էլ աւելացնել: Քե՛զ համար:

Ռուբէնը ոչինչ չասաց։Ես սպասում էի, բայց նա լուռ էր։ Ու ես գիտէի թե ինչո՛ւ։ Ուրիշ ժամանակ նա անպայման մի ծիծաղելի բան կ՚ասեր, անլուրջ մի բան։ Բայց հիմա լռում էր։ Ու ես լսում էի նրա ծանր շնչառութիւնը միայն։

— Մայրիկն էլ չէր ուզենայ,— շարունակեցի ես, որովհետեւ լռութիւնն արդէն վախեցրեց ինձ։ Ու երբ լսեցի իմ ձայնը, թուաց, թէ բոլորովին էլ չենք լռել։ Երբ խաւարում զրուցում ես, դադարները բնաւ չեն զգացւում։ Մի նախադասութիւնից յետոյ մինչեւ յաջորդն ասելը կարող ես լռել կէս ժամ, նոյնիսկ աւելի, բայց դա չի զգացւում, եթէ յանկարծ անհասկանալի մի վախ չի պարուրում քեզ։— Բայց չի էլ վշտանայ։ Որովհետեւ շուտ-շուտ կը գայ քեզ մօտ, Երեւան։ Նա հիւր գնալ շատ է սիրում։

— Իսկ դո՞ւ։

— Չեմ սիրում։

— Ի՞նչ։

— Հիւր գնալ։

— Խելոք, ես այդ մասին չեմ հարցնում։ Իսկ դու չե՞ս վշտանայ։ ,

— Չգիտեմ։

— Չես ուզում ասել։

— Չգիտեմ, Ռուբէն,— ասացի ես։—Գուցէ կ՚ափսոսամ... երբ դու գալիս ես թէկուզ եւ երկու-երեք օրով, ինձ թւում է, թէ աշխարհում ամէն բան կարգին է։ Ես համոզուած եմ լինում որ աշխարհում իսկապէս միլիոնաւոր մարդիկ կան։

— Մօտ երեք միլիարդ,— ասաց Ռուբէնը։

— Միեւնոյն է... Բայց երբ դարձեալ գնում ես, պարզւում է, որ ոչ մի երեք միլիարդ էլ չկայ։ Միայն ես եմ։ Մեն-մենակ։

— Քո տարիքին ինձ էլ էր այդպէս թւում,— ասաց Ռուբէնը։— Յետոյ, երբ մի քիչ էլ մեծացայ — դա մէկ-երկու տարուայ հարց է — պարզուեց, որ բոլորովին էլ մենակ չեմ։ Իսկ երբ սովորելու գնացի, սկզբում մի քիչ վախենում էի։ Երբ ծնուել ու մեծացել ես գիւղում, եւ այն էլ այնպիսի գիւղում որ մեր գիւղերն են, բոլոր քաղաքները սկզբում վախեցնում են։ Եթէ յաղթահարում ես այդ վախը, քաղաքները դառնում են ինչ որ տեղ սիրելի։

– Ինչի՞ց է։

— Մի քիչ դժուար է բացատրելը,— Ռուբէնը լռեց։ Ու երեւի մի ժամ յետոյ միայն նորից խօսեց.— Դու գիտէ՞ս, թէ որքան թշնամիներ ունի կուպրը։

— Կո՞ւպրը։

— Ասում են որ ձիւթի եւ խճի այդ շերտը մարդկանց կտրում է հողից։

— Ճիշտ է։

— Չի կտրում։ Դու միամիտ ես, ու քեզ թւում է,

թէ երբ ասում են՝ կտրում է, ապա սոսկ ֆիզիկական իմաստով։ Ո՛չ... Դրա տակ ուրիշ իմաստ կայ։

— Կպրաածածկ գետինը լաւ բան է։ Դու ախր չգիտէս, թէ ինչ լաւ է հոլ խաղալ այդպիսի գետնի վրայ։

— Հո՛լ խաղալ,— կամացուկ ծիծաղեց Ռուբէնը։—

Դա ի՛նչ է որ... Հողի վրայ հոլը աւելի լաւ է պտտւում։ Պտտւում եւ իր սուր ծայրով փոսորակ է փորում… Բայց կպրաածածկ գետինը մարդուն է աւելի ամուր պահում հողի վրայ, ու երբ անձրեւ է գալիս, մինչեւ ծնկներդ չես թաղվում ցեխի մէջ։

— Էլ ինչո՞ւ չեն սիրում ամուր գետինը։

— Որովհետեւ վարժուած չէն որ ոտքի տակ հողը շատ աւելի ամուր լինի կպրաշերտի միջոցով։

— Իսկ դո՞ւ։

— Ես ուզում եմ ամուր գետնի վրայ զգալ ինձ: Հռոմեացիները սալարկում էին իրենց ճանապարհները եւ իրենց ամուր եւ անվտանգ էին զգում խոշոր արշաւանքների ժամանակ,— ասաց Ռուբէնը:

— Մենք արշաւելու տեղ չունենք:

— Որովհետեւ մեզ խաբում են եւ մենք էլ սիրով խաբւում ենք:

— Ինչո՞ւ:

— Խաբկանքով ապրելը դիւրին է:

— Երեւանում խաբկանքով չէ՞ս ապրի:

— Այնտեղ խաբկանքը աւելի շատ է:

— Հապա ինչո՞ւ ես ուզում այնտեղ հաստատուել:

— Գուցէ ինչ որ չափով ինձ էլ յաջողուի յաղթահարել խաբէութիւնը: Եւ մարդիկ հաւատան որ արշաւանքների ժամանակները չեն աւարտուել:

— Ո՞ւմ դէմ:

— Հէնց թէկուզ ինքներս մեր դէմ: Որպէսզի վերջնականապէս չդառնանք մարդկային հաճոյակատար տեսակ…

— Ես էլ կ՚ուզենայի… Ռուբէն, ե՛ս էլ կ՚ուզենայի Երեւան ապրել:

— Հա՞,— ուրախացաւ Ռուբէնը:— Իսկ ինչո՞ւ կ՚ուզենայիր:

— Ինչո՞ւ...— այդ մասին երբէք չէի մտածել: Բայց

հիմա արդէն պատասխան ունէի.— Որպէսզի հողի վրա ինձ աւելի ամուր զգամ:

Ռուբէնը դարձեալ կամացուկ ծիծաղեց:

— Ամուր եւ է՛լ աւելի ամրացուած, է՛լ աւելի պինդ հող…— ասաց նա:— Դա մեր տեսակի գոյութեան գրաւականն է... Քանի որ ամէն քամի կամ նոյնիսկ փոթորիկ չի կարողանայ քշել-տանել հողի շերտը եւ մերկացնել մեր արմատները: Փոթորիկից յետոյ արեւի բարկ ճառագայթները դիւրութեամբ կը չորացնեն մեզ… Բայց ինչո՞ւ ամպայման Երեւան…

— Հապա էլ որտե՞ղ…

— Աշխարհում այնքա՜ն քաղաքներ կան Երեւանից շատ աւելի խոշոր… Եթէ փոքր, ապա շատ աւելի գեղեցիկ…

— Բայց դրանք Հայաստան չեն:

— Իսկ դու գիտէ՞ս թէ ո՛րն է Հայաստանը:

— Գիտեմ…

— Չեմ կարծում, թէ գիտէս…

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ Հայաստանը ճանաչելու համար միայն դպրոցի դասագիրքը բաւական չէ: Ընդհակառակը, այդ դասագրքերը կարող են մոլորեցնել:

— Իսկ դու գիտէ՞ս:

— Ի հարկէ:

— Ինձ էլ կ՚ասե՞ս:

— Եթէ ինքդ չկարողանաս գտնել…— խոստացաւ Ռուբէնը:

— Գաղտնի՞ք է:

— Պատկերացրու որ՝ այո… Բաներ կան որոնք քեզ

համար դո՛ւ պէտք է յայտնագործես: Եւ քո մէջ պահես… Թէեւ դա միայն քոնը լինել չի կարող… Ուրիշներն էլ են երբեմն կարողանում գտնել…

— Ուրեմն, դու կարողանում ես գաղտնիք պահել, Ռուբէն:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց եղբայրս:

— Հէնց այնպէս եմ ասում:

— Ի հարկէ, կարողանում եմ:

Ես նայեցի պայտաձեւ լուսնին, որի վերին կէսը կոտրել էր պատուհանի շրջանակը:

— Իսկ եթէ դա միայն քո՞ գաղտնիքն է: Քո սեփակա՞նը...

— Այսինքն՝ ինչպե՞ս,— չհասկացաւ Ռուբէնը:

— Ասենք, մի բան ես անում, որը միայն դու գիտէս: Քո գաղտնիքն է: Ու քո արածից ուրիշներին ոչ մի վնաս չի հասնում:

— Եթէ լաւ բան ես անում, ի հարկէ, կարող ես ոչ ոքի չասել: Նոյնիսկ անհարմար է: Իսկ երբ մարդ վատ բան է անում, սկսում է ինքն իր ձեռքին տանջուել:

— Եթէ նոյնիսկ ազնի՞ւ նպատակով է անում:

— Ազնիւ նպատակով վատ բան անել հնարաւոր չէ: Եթէ քեզ թւում է, որ նպատակն ազնիւ է, բայց տանջւում ես ինքդ քո ձեռքին, նշանակում է, ինչ որ վատ բան ես արել:

— Հաստա՞տ:

— Հաստատ… Իսկ ի՞նչ է պատահել:

— Ոչինչ: Հէնց այնպէս հարցրեցի:

— Եթէ չես ուզում ասել՝ պէտք չէ:

— Ի՛նչ լաւ եղաւ, որ եկար, Ռուբէն:

Եղբայրս այս անգամ բարձրաձայն ծիծաղեց, որովհետեւ այսօր շատ ուրախ էր: Իսկ նա միշտ արտակարգ ուրախ էր լինում, երբ մի ծանր հոգս կամ թախիծ էր ունենում հոգու խորքում: Միշտ էլ, որքան յիշում եմ, նա առերեւույթ ուրախութեամբ կամենում էր խեղդել հոգսն ու թախիծը:

Ռուբէնի ծիծաղի վրա սեղանատան դուռը բացուեց ու հարեւան սենեակի լամպի պայծառ լոյսը խուժեց ներս:

Հայրս ոտաբոբիկ կանգնել էր շեմին:

— Ի՛նչ եք փսփսում, հա՛ փսփսում,— դժգոհեց նա:— Մարդ չի կարողանում քնել: Համբերէ՛ք մինչեւ լոյսը բացուի...

Յետոյ շրխկոցով գոցեց դուռը:

Ու մենք այլեւս չհամարձակվեցինք ծպտուն հանել:

Ես անթարթ հետեւում էի կոտրուած լուսնին, որի վերին եզրը աննկատ կրծում էր պատուհանի շրջանակը: Աւելի շուտ՝ լիզում էր: Ինչպէս Շէկ Դավիթն է լիզելով մաշում, վերջացնում փայտի ծայրին թառած շաքարէ կարմիր աքաղաղին:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ուխտագնացութիւն: Ռոբինզոնի օրացոյցը չի օգնում, օրերը չեն խառնւում, կիրակին էլ մնում է կիրակի: Շլիմանը, վաճառականութիւնը եւ պեղումները: Գլասեւոս պապի կաւէ խաղալիքները: Նաթ կամ Նաթանայէլ:

ՄԱՋԵՐՍ համառօրեն հրաժարւում էին սանրին հնազանդել: Բայց ես նոյնքան համառութեամբ չէի հեռանում հայելու առջեւից: Այնքան կանգնեցի, այնքան նայեցի ինքս ինձ, որ հայելին զանազան ծամածռութիւններ անելու մի ցանկութիւն թելադրեց: Ակամայ սկսեցի աղաւաղել դէմքս, իսկ հայելին անվրդով մի հանդիսաւորութեամբ կրկնում էր իմ հիմարութիւնները: Սկզբում ծիծաղելի էր, յետոյ լըրջացայ ու փորձեցի ճանաչել ինքս ինձ: Պարզուեց, որ դա այնքան էլ հաճելի բան չէ: Ուրիշ հարց, երբ ճանաչելու փորձ անելիս ինչ որ լաւ բաներ ես յայտնաբերում որոնք մինչ այդ անյայտ էին: Այդ ժամանակ մարդ իրեն շատ լաւ է

զգում, զգում է համարձակ ու ինքնավստահ: Բայց երբ հակառա՛կն է լինում... Եւ ես համբերեցի, համբերեցի ու չգիտէս ինչո՛ւ, ասացի. «Հիմա՛ր»: Ու այնպէս էլ չհասկացայ, թէ դա ում էր վերաբերում, իմ երկվորեակի՞ն, հայելո՞ւն, թէ ինձ:

Եւ նոյն պահին էլ մի գիւտ արեցի որ մարդուն վիրաւորելու ամենադիւրին ձեւը նրա դիմաց հայելի պահելն է: Կարող ես բոլորովին չխօսել, վիրաւորական բառեր չօգտագործել, այլ գրպանից հանել փոքրիկ, կլոր հայելին որի հակառակ երեսին, չգիտէս ինչո՛ւ, մարդիկ զետեղել են Կիսլովոդսկի առողջարաններից մէկի լուսանկարը, եւ պահել որեւէ ծովահէնի դիմաց:

Յետոյ մտածեցի որ ի զուր եմ այդպէս տանջւում, ու ձեռք քաշելով մազերս յարդարելու անյոյս գործից, ստուերի պէս դուրս սահեցի տնից:

Թէեւ առաւօտեան ժամը ինը հազիւ լինէր, սակայն Լուսաշէնը արդէն խայտաբղետ մի տօնավաճառի էր նման: Մարդիկ գալիս էին անընդհատ հոսքով: Գալիս էին գերդաստանով, երեխաներով, տան ծերունիներով, նորահարս-նորափեսաներով... Մի քանի նախնադարեան «Պոբեդաներ» խենթի պէս սլանում էին նեղլիկ փողոցներով, ու քանի որ ժողովուրդն էլ շատ էր, անդադար ազդանշան էին տալիս: Գիւղից՝ կայարան, կայարանից՝ գիւղ... Այս աղմուկ-աղաղակի մէջ որոշակիօրեն զատւում էր գառների ու ոչխարների մայունը: Խեղճ կենդանիներն էլ էին եկել տօնակատարութեան: Կոտոշներին, ականջներին ու վզներին կարմիր ժապաւէններ էին կապուած: Նրանք բութ ու բարի հայեացքով նայում էին մարդկանց ու հնազանդօրեն քայլում հետեւներից: Քիչ յետոյ, գուցէ մէկ ժամ, կամ երեք ժամ յետոյ ոչխարներին ու գառներին մորթելու էին, որպէսզի սուրբը բարի աչքով նայէր իր դուռը եկած մարդկանց:

Ճիշտն ասած, այս ամէնը ինձ համար շատ սովորական էր: Տարիներ շարունակ, գրեթէ ամէն կիրակի, մեր փողոցները լցւում էին հարեւան գիւղերից եւ մօտիկ ու հեռու քաղաքներից եկած ուխտաւորներով:

Ուրիշ ժամանակ ես ոչ մի ուշադրութիւն չէի դարձնում դէպի բլուրից այն կողմ գտնուող սրբատեղին գնացողների վրայ: Բայց այսօր, ակամայ, զննում էի ամէն մէկին եւ գլխովս տարօրինակ մտքեր էին անցնում: «Այս տատիկը անպայման երկու հատ կը գնի... Իսկ երեխային գրկած մա՞րդը... Գուցէ բոլորովի՞ն չգնի: Աղջիկներն անպայման կ՚ուզենան մոմ վառել, որպէսզի շուտ ամուսնանան եւ որպէսզի անպայման ուսումով տղայ առնեն... Հիմա դա շա՛տ կարեւոր բան է:

— Ի՞նչ ես լուսնոտի պէս քայլում:

Ճիզվիտ Կարոն էր:

— Մերոբը գնաց քո հետեւից,— ասաց նա:— Գուցէ կէսօրին կը գայիր, հը՞...

— Ինչո՞ւ:

— Որպէսզի գործը գլուխ չգար ու մոմերի ձեռքին կրակն ընկնէինք:

— Ահագին ժողովուրդ կայ,— փորձեցի հանգստացնել նրան:— Կէս ժամում կը վերջացնենք:

— Կէս ժամո՛ւմ... Մութուլուսից ոտքի վրայ ենք: Տեսանք որ ուշանում ես, սկսեցինք ինքներս առեւտուր անել: Մոմ առնո՛ղ ես գտել... Ոչխարին ու գառանը տուած փողը չեն ափսոսում, իսկ տասը կոպեկանոց մոմը չեն ուզում առնել: Չեն հասկանում, որ սուրբը մոմ է ուզում եւ ոչ թէ ոչխար: Յիսուն հատ հազիւ վաճառեցինք:

— Յիսուն հատ...

— Կարծում, ես շա՞տ է: Եթէ կարգին հաւատացեալներ լինէին... Ախր սրանք ինչ հաւատացեալներ են որ... Ուզում են կիրակի օրով կերուխում անել՝ պատճառը բռնում են սրբին:

— Իսկ դու կարգի՞ն հաւատացեալ ես,— հետաքրքրուեցի ես:

— Ի՞նչ... Ե՞ս... Հիմա՛ր,— ասաց նա։—Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, ժամանակ մի՛ կորցնի...— Կարոն բացեց փոքրիկ պայուսակը եւ իրար յետեւից հանեց բարալիկ մոմերի խրձերը։— Մէկ... Երկու... Երեք... Ամէն կապուկի մէջ քսան հատ է։ Չորս... Հինգ... Սա էլ վերցրու։ Եթէ չես հաւատում՝ մէկ-մէկ հաշուիր։ Բայց ժամանակ կը կորցնենք։ Ինքս եմ հաշուել ու կապել։ Հէնց որ վերջանայ, նորէն կը գաս։ Ես գնացի։

Քիչ յետոյ Ճիզվիտ Կարոն թեքուեց դէպի հարեւան փողոցն ու ես էլ ստիպուած քայլեցի դէպի բլուրը։

Կապուկները դրեցի ծոցս. չտեղաւորուեցին։ Երկուսն էլ ձեռքիս բռնած, քայլեցի առուակի ափով։ Իսկ փողոցով յետ ու առաջ էին սլանում մեքենաները, եւ մարդկանց հոսանքը վերջ չուներ։

Խանութի մօտ բազմութիւն էր հաւաքուել։ Գործակատար Վռամը խոշոր տակառները հէնց փողոցը դրած, գարեջուր էր վաճառում։ Տղամարդիկ կանգնում էին, որպէսզի մի-մի գաւաթ գարեջուր խմեն, որովհետեւ շոգն արդէն սաստկանում էր։ Գործակատար Վռամի կինն այսօր գուլպայ չէր հիւսում։ Կանգնել էր ամուսնու կողքին եւ ջանասիրաբար պոմպով օդ էր մղում տակառի մէջ, որի հետեւանքով գարեջուրը փրփրում էր, փրփրում, եւ պղպջակներն էլ պսպղում էին գաւերի մէջ՝ ծիածանի բոլոր գոյներով։

Փորձեցի մի կերպ ճեղքել անցնել այդ բազմութիւնը։

— Տղայ ջան, մոմն ի՞նչ արժէ։

Ես ծուռ-ծուռ նայեցի հարցնողին։ Երեխան գրկին մի կին էր որ առանց պատասխանի սպասելու, կապուկներից սկսեց մէկ-մեկ մոմեր քաշել, ինքն իրեն ասելով.

— Այս մէկը՝ Գէորգին, սա՝ Յարութիկին, սա՝ մամային, սա՝ ինձ... սրանք էլ Ջեմմային ու Ջուլետային։ Գէո՛րգ, վաթսուն կոպեկ տուր...

Գարեջուր խմող տղամարդը գաւաթը տուեց կնոջն ու գրպանից ռուբլիանոց հանեց։ Ես, ի հարկէ, զարմացայ թէ կինը որտեղի՞ց գիտէր մոմերի արժէքը, եւ եթէ գիտէր, էլ ինչո՞ւ հարցրեց։

— Մանր չունեմ,— կմկմացի ես։— Ոչ մի կոպեկ։

— Փչո՛ւմ ես, հա՛,— ծիծաղեց տղամարդը, դրամը խցկելով վերնաշապիկիս գրպանը։

— Ազնիւ խօսք... Ես... Մոմերը յետ տուէք։ Մանր չունեմ։

— Լաւ դերասան կը դառնաս,— ծաղրեց այդ Գէորգը։— Ոչինչ, մանրը պէտք չէ... Դեհ, փախի՛ր,— ձայնը բարձրացրեց նա, ու կնոջ ձեռքից վերցրեց գարեջրի գաւը։

Մարդկանց հոսանքը ինձ քշեց տարաւ տակառների մօտից, ու քիչ անց ես յայտնուեցի կամրջի մօտ, որից այն կողմ, մինչեւ երկինք ձգւում էր կանաչ բլրակը։ Մարդիկ բարձրանում էին բլուրն ի վեր, շրջանցում հազարամեայ եկեղեցին ու վանական տեղանքը ու անհետանում թմբի յետեւ։

— Մի մոմ տո՛ւր, տղայ,— ասաց մի երիտասարդ աղջիկ։

Ու սկսուե՛ց...

Ըստ երեւոյթին, տեղն էր հարմար։ Վերելքից առաջ շունչ առնելու համար, մարդիկ կամրջի մօտ մի փոքր դադար էին անում, եւ տեսնելով ինձ, յիշում էին որ անհրաժեշտ է մոմ գնել։ Քիչ անց ստիպուած եղայ հանել ծոցիս կապուկները։

Իսկ յետոյ չէի հասցնում նոյնիսկ դրամը հաշուել կամ մանրը վերադարձնել, որովհետեւ մարդիկ շտապում էին ու բարկանում իմ դանդաղկոտութեան վրայ։

— Իսկակա՞ն մեղրամոմ է,— հարցրեց մէկը։

— Չե՞ս տեսնում, աղջիկ ջան, դեղին մոմեր են։ Ուրեմն՝ իսկական է,— իմ փոխարեն բացատրեց մի տղամարդ։— Վերցրու, կը վառես, որպէսզի Աստծոյ աչը քո վրայից անպակաս լինի։

Աղջկայ ձայնը ծանօթ էր: Եւ իմ դէմքն սկսեց այրուել: Առանց գլուխս բարձրացնելու, որոշեցի թողնել հեռանալ, բայց Նուարդը բռնեց ձեռքս:

— Ես... Իմ մոմերը չեն,— ասացի ես:— Իսկ օրերն էլ չխառնուեցին... Ես խոստացել էի կիրակի օրուայ համար: Օրացոյցը...

— Ինչո՞ւ չասացիր, որ մոմ ես վաճառելու,— հարցրեց Նուարդը:— Այստեղ մի կանգնիր: Չեն թողնի, որ խօսենք...

— Սրա՞նք ինչ անեմ,— ես անօգնական նայեցի ձեռքիս մոմերին:

— Նետիր:

Ու ես նետեցի մոմերը:

— Խե՛նթ է,— ասաց մի կին, որը մօտեցել ու պատրաստվում էր մոմ գնել:

Նուարդը ոտքից գլուխ չափեց նրան ու այնպէս ծամածռեց դէմքը, որ կինը վախեցած գոչեց.

— Երկո՛ւսն էլ խենթ են...

Մենք ծիծաղեցինք ու քիչ ցած վազելով, նստեցինք գրեթէ ցամաքած գետակի ափին:

Երբ մնացինք երկուսով, ես մտածեցի, որ գոնէ մի բան պէտք է ասեմ: Այլապէս ժամերով կը նստէինք լուռ, խռովածի նման:

— Այսօր շատ ժողովուրդ կայ...

— Յետոյ ի՞նչ,— ասաց Նուարդը:

— Զարմանում եմ, որ կարողացար գտնել ինձ:

— Յետոյ ի՞նչ:

— Ես տեղնուտեղը նետեցի մոմերը,— յիշեցրի ես:

— Յետոյ ի՞նչ,— Նուարդը անտարբերութեամբ վեր քաշեց ուսերը:

Զգացի, որ հիմարութիւններ եմ դուրս տալիս: Ու ասացի.

— Ախր նրանք խոստացան հինգ ռուբլի տալ:

— Ովքե՞ր:

— Ծովահէնները:

— Ես չգիտէի:

— Գաղտնիք է...— Յանկարծ պարզուեց, որ չեմ կարող լռել:—Ախր ես... ես պէտք է քաղաքներ պեղեմ: Պատմել եմ, յիշո՞ւմ ես... Իսկ պեղումներ կատարելու համար շատ փող է հարկաւոր: Ես էլ հաւաքում եմ...

— Մոմ ծախելով,— ծաղրեց Նուարդը:

— Շլիմանն էլ էր առեւտուր անում... Վաճառական էր… Մինչեւ որ միլիոնատէր դարձաւ ու գնաց Տրոյը պեղելու: Եթէ գիտութեան համար է, ամէն բան էլ կարելի է զոհաբերել:

— Ուրեմն, հանուն գիտութեան մո՞մ ես վաճառում... Գուցէ այդ փողերով ուզում ես սինքրոֆազատրո՞ն էլ կառուցել... կամ էլ պատրաստվում ես հրթի՞ռ պատրաստել… Վեներա ուղարկելու համար:

— Ոչ: Ես պեղումներ եմ անելու: Շլիմանը…

— Գիտեմ:

— Դու էլ ուզում էիր որ միասին գնանք ճանապարհորդելու,— յիշեցրի ես:

— Հիմա էլ եմ ուզում:

— Եթէ իմանայի որ...

— Ախր մենք երկուսով ենք այս անծանօթ ցամաքում: Իսկ դու ինձնից գաղտնիք ես պահում:

— Էլ ի՛նչ գաղտնիք: Արդէն ոչ մի գաղտնիք էլ չկայ: Իսկ հինգ ռուբլին էլ կորաւ: Ափսո՛ս...

— Եթէ ասէիր, գոնէ միասին կը վաճառեինք,—

մտախոհ ասաց Նուարդը։– Որովհետեւ գիտութեան համար է... Հայրիկս էլ այստեղ տեղափոխուեց գիտութեան համար։

— Մոմ շատ կայ,— ասացի ես։— Բերե՞մ։

... Քիչ անց ես արդէն կանգնել էի կամրջի մի ծայրին, իսկ Նուարդը՝ միւս ափին, կամրջից բաւականին հեռու։

Նրանք, ովքեր անտարբեր անցնում էին իմ մօտով, մինչեւ Նուարդին հասնելը, կռահում էին որ անհրաժեշտ է մի քանի հատ մոմ գնել։

Ես դարձել էի աւելի համարձակ։ Երեւի միշտ այդպէս է։ Ընկերով լինելիս դառնում ես աւելի համարձակ։ Երբ քո գաղտնիքն այլեւս գաղտնիք չէ, մարդու սիրտն էլ մի տեսակ թեթեւանում է, որքան էլ անախորժ պատմութեան մէջ ընկած լինի։ Իսկ իմ պատմութիւնը մի քիչ անախորժ էր, եւ այդ զգացողութիւնը չէր մարում նոյնիսկ փառահեղ պեղումներ կատարելու եւ չտեսնուած յայտնագործութիւններ անելու հեռանկարից։

Մօտ մէկ ժամ յետոյ Նուարդը միւս ափից եկաւ ինձ մօտ։ Նա իր բաժինն արդէն վաճառել էր, ու որոշեց օգնել ինձ։ Չգիտեմ, թէ որքան ժամանակ անցաւ, երբ մենք, վերջապէս, թեթեւացած շունչ քաշեցինք, ժպտացինք իրար ու առանց ուշադրութեան դարձնելու մարդկանց վրայ, որոնք անհանգստացած հարցնում էին. «Տղայ ջան, մոմ չունե՞ս», կամ՝ «Աղջիկ ջան, գնա… էլի մոմ բեր», բարձրացանք գետի ափով՝ հոսանքն ի վեր։

Երբ բաւականին հեռացանք մարդկանց բազմութիւնից, նստեցինք գետափին ընկած բազալտէ սրբատաշ մի բեկորի վրայ, որ տարիներ կամ տասնամեակներ ասաջ էին երեւի բերել հինաւուրց վանքի գաւիթից։

Ես հաշուեցի դրամը։

Ամէնից շատ ռուբլիանոցներն էին, յետոյ՝ երեքնոցները ու մի հատ հինգ ռուբլիանոց թղթադրամ։ Եւ մի լիքը բուռ՝ մետաղադրամներ։— Վաթսուն մէկ ռուբլի եօթանասուն կոպեկ,— վերջապէս հաշուեցի ես։— Շատ է։

— Ինչո՞ւ։

— Այսքան պէտք չէ լինէր։ Մի կապուկ մոմ նետեցի՞։

— Նետեցիր։

— Իսկ քանի՞ մոմ ենք վաճառել։

Նուարդը նայում էր գետափից դէպի Վերին թաղ տանող փողոցին, ու միայն ուսերը վեր քաշեց։

— Նետածն ու վաճառածը միասին չորս հարիւր հիսուն հատ էին,— ասացի ես։— Ուրեմն, տասնվեց ռուբլի եօթանասուն կոպեկ աւելի է։

Դրամը դրեցի թաշկինակիս մէջ ու խնամքով կապեցի։

— Այն օրուայ մարդը,— յանկարծ գոչեց Նուարդը, տեղից վեր թռնելով։

Նայեցի նրա ցոյց տուած ուղղութեամբ, բայց ոչ ոք չկար։

— Ի՞նչ ենք անելու,— ասացի ես։— Փողն աւելացել է։

— Պահիր պեղումների համար,— խորհուրդ տուեց Նուարդը։— Կամ էլ բոլորը տուր ծովահէններին, թող աչքները կշտանան։ Վազենք...

— Բոլորը կը տամ Ճիզվիտ Կարոյին,— վճռեցի ես։

— Եթէ վազենք, անպայման կը հասնենք։

— Անազնիւ բան կը լինի, եթէ չտամ,— շարունակեցի ես, որովհետեւ յանցաւոր չեմ որ մարդիկ մանրը չէին վերցնում։ Մի՞թե յանցաւոր եմ։

— Յանցաւոր չես,— ասաց Նուարդը։— Շտապում էին, ու դրա համար էլ մանրը չէին վերցնում։ Լաւ պահիր, որ վազելիս յանկարծ չթափուի գրպանիցդ։ Երե՛ք ու... չո՛րս։

Նուարդը ձեռքս բռնեց, ու մենք վազեցինք դէպի Վերին թաղ: Մենք վազում էինք, ու ես այնպէս էլ չէի հասկանում, թէ ինչու:

— Սպասի՛ր, շունչս կտրուեց,— ասացի ես:

Քանի որ Նուարդն էլ էր շնչակտուր լինում, մենք պարզապէս դադարեցինք վազել եւ քայլեցինք արագ-արագ: Բայց ոչ մի տեղ անծանօթ մարդու չտեսանք:

— Ուշացանք,— ասաց Նուարդը:— Նորէն անհետացաւ:

— Գուցէ բոլորովին էլ գոյութիւն չունի՞,– ասացի ես:— Գուցէ միայն թո՞ւմ է մեզ:

— Թէկուզ միայն թւում է,— համառեց Նուարդը:— Բայց ես համոզուած եմ, որ նա կայ:

— Ո՞վ:

— Անծանօթ մարդը: Ու ես համոզուած եմ, որ նա շատ լաւն է:

— Որտեղի՞ց գիտէս:

— Փողը չե՞ս կորցրել:

Ես սարսափով ստուգեցի գրպանս:

— Ոչ... Բայց ի զուր ենք այս կողմերում քարշ գալիս: Ծովահէնները կը սպանեն ինձ: Նախ փողը տանենք, իսկ յետոյ...

— Տանենք,— համաձայնեց Նուարդը:— Ի զուր էլ այսքան վազեցինք:

Վերին թաղից անշտապ քայլեցինք դէպի վար, դէպի մեր թաղամասը: Դրա համար պէտք է անցնէինք փոքրիկ, խորդուբորդ հրապարակով: Իսկ ես խուսափում էի այդ հրապարակում յայտնուել, որովհետեւ այնտեղ միշտ նստած էր լինում Գլասեւոս պապը: Դժուար բան էր գրպանում փող ունենալ ու միեւնոյն ժամանակ չգայթակղուել խաղալիքներով որոնք վաճառում էր պապը:

Բայց մենք ստիպուած էինք անցնել այդ հրապարակով, ու երբ դուրս ելանք նեղլիկ փողոցից, Նուարդը հանկարծ ամուր սեղմեց ձեռքս: Ու մենք ինքնաբերաբար մեխուեցինք տեղում:

Նա, այդ թուացող անծանօթը կանգնել էր ծառի ստուերում նստած Գլասեւոս պատի մօտ: Կռանում էր, յետոյ՝ ուղղւում: Նորից էր կռանում: Իսկ երբ լսուեց սուլիչի կլկլացող ձայնը, ես անմիջապէս կռահեցի, որ նա Գլասեւոս պապի պատրաստած խաղալիքներն է փորձում:

Դրանք կաւէ փոքրիկ սրուակներ էին, տարբեր ձեւի ու չափի սրուակներ: Մէջը ջուր էինք լցնում ու փչում ծորակից:

Ջուրը կլկլում էր. ու թւում էր, թէ երեւակայական, հէքիաթային ինչ որ թռչուններ են դայլայլում: Տարիներ առաջ Գլասեւոս պապը կաւէ սուլիչներից բացի, շւիներ էլ էր պատրաստում: Բայց, չգիտէս ինչու, մենք սկսեցինք գերադասել կաւէ սուլիչները, եւ պապն էլ անմիջապէս կրճատեց եղեգնեայ շւիների արտադրութիւնը:

Ճիշտն ասած, այսօր ինձ զարմացրեց այն, որ Գլասեւոս պապի մօտ կանգնել էր մեծահասակ հաճախորդ: Ոչ մի նշանակութեան չունէր, թէ դա մե՞ր անծանօթն էր, թէ մէկ ուրիշը: Ախր միշտ էլ Գլասեւոս պապի շուրջը միայն երեխաներով էինք հաւաքւում, հերթով փորձում էինք սուլիչները, յետոյ ընտրում դրանցից մէկնումէկը, եւ վազում գետափ՝ սուլելու:

Ես ու Նուարդը մօտեցանք հինաւուրց ընկուզենուն: Կանգնեցինք անծանօթից մի քիչ հեռու, եւ հետաքրքրութեամբ սպասում էինք, թէ ինչ է լինելու յետոյ:

— Այս մէկը, կարծես, ամենալաւն է,— ասաց անծանօթը:– Ի՞նչ արժէ, հայրիկ:

— Երեխաների համար՝ քսան կոպեկ,— պատասխանեց Գլասեւոս պապը բալենու ճիւղից պատրաստած մուշտուկին սիգարեթ ամրացնելով:

— Իսկ մեծերի՞:

— Վաթսուն,— պապը վառեց սիգարեթը եւ ծուռ-ծուռ նայեց հաճախորդին:

— Վերցրու, հայրիկ,— ասաց անծանօթը, գրպանից դրամը հանելով:

— Քե՞զ համար է:

— Այո,— ասաց անծանօթը, եւ սուլիչն այնպէս փչեց, որ ականջներս խլացան։— Չի՞ կարելի։

— Կարելի է, կարելի է,– պատասխանեց Գլասեւոս պապը։ Յետոյ վերադարձրեց ռուբլիանոցի մանրը՝ երկու հատ քսանկոպեկանոց։ Ու երբ անծանօթը շրջուեց, որ հեռանայ, առանց մուշտուկը բերանից հանելու, ասաց.— Այս երկուսն էլ վերցրու։ Կը տաս, ա՛յ, կանգնած երեխեքին։

Անծանօթը դարձաւ մեր կողմը։ Ժպտաց։ Ես ինձ զսպեցի, որ չժպտամ, բայց Նուարդը չկարողացաւ, որովհետեւ նա շատ էր հաւանում ժպտացող մարդկանց։

— Վերցրե՛ք,— ասաց անծանօթը։

Ես շփոթուած նայեցի մէկ անծանօթին, մէկ՝ Գլասեւոս պապին։ Պապը երկնագոյն ծխի քուլաները քթանցքներից բաց թողնելով, աչքերը խորամանկօրեն կկոցած, խրախուսաբար նշան արեց գլխով։

— Շնորհակալութիւն։

— Սուլել գիտէ՞ք,— հետաքրքրուեց անծանօթը։

— Այո։

— Իսկ ձեր անուններն ի՞նչ են։

— Նուարդ, բայց կարելի է նաեւ Նանա սաել։

— Իմը՝ Տիգրան,— ասացի ես։— Հապա ձե՞ը։

— Ի՞մը...— անծանօթը սուլիչը մօտեցրեց շուրթերին ու ամբողջ ուժով փչեց։— Լաւ սուլիչ է։ Տիգրան, ես շատ դժուար անուն ունեմ։

— Ոչինչ։

— Որպէսզի դիւրին լինի, կարող էք ուղղակի ասել Նաթ։ Նա՛թ։

— Իսկ դժուա՞րն ինչպէս է,— չհամբերեց Նուարդը։

— Նա՛-թա՛-նա՛յէ՛լ։

— Ա՛յ թե անուն եմ ասել,— հիացայ ես։

— Չհաւանեցի՞ր,— հարցեց Նաթը։

— Դուք լուսաշէնցի չեք,— ասացի ես։

— Դա եւ ճիշտ է, եւ սխալ։ Ես առաջին անգամն եմ ձեր գիւղում, թէեւ հէնց այստեղ էլ ծնուել եմ։

— Ի՛նչ գիւղ,— վիրաւորուեցի ես։— Թերթերում տպուածը չէ՞ք կարդացել։ Լուսաշէնն արդեն քաղաք է։

— Թող այդպէս լինի,— ժպտաց Նաթը։— Թող լինի քաղաք։ Թէեւ թերթերում յայտարարութիւն տպելով չէ, որ գիւղը քաղաք է դառնում։ Բայց Լուսաշէնը անպայման կը դառնայ քաղաք։ Եւ այն էլ ինչպիսի՛ քաղաք։

— Ուրեմն նո՞ր էք եկել,— ճշտեց Նուարդը։

— Մի քանի օր առաջ... Եւ ձեզ հետ ծանօթանալու համար։

— Մեզ հե՞տ։

— Միշտ որոշել եմ գալ, բայց չի յաջողուել։ Այս ամառ այնպէս դասաւորեցի գործերս որ, ինչպէս տեսնում էք, կարողացայ ժամանել։ Միայն թէ, Տիգրան, ի սէր Աստծոյ, այդպէս մի՛ նայիր,— խնդրեց Նաթը։

— Ինչպե՞ս եմ նայում,— շփոթուեցի ես։

— Ես ոչ յանցագործ եմ, որին միլիցիան է որոնում, եւ ոչ էլ սահմանն անցած լրտես, որ չգիտես ինչու եւ ինչպէս՝ եկել է եւ կարծէս դա քիչ է, դեռ նաեւ ուզում է թաքնվել պե տական ապահովութեան աշխատողների աչքից, որպէսզի նրանք պարապ չնստեն եւ արդարացնեն իրենց գոյութիւնը,— շարունակեց Նաթը ու դարձեալ փչեց սուլիչը։— Հիմա դուք էլ փորձեք։ Տեսնենք ո՞ւմն է լաւը։

— Ի հարկէ՝ ձերը,— ասաց Նուարդը։

— Երեւի: Ես ախր կարողանում եմ լաւ ընտրութիւն անել: Յատկապէս, երբ խօսքը վերաբերում է խաղալիքներին:

— Բայց դուք ո՞վ էք,— հարցրեցի ես:

— Ես Նաթանայէլն եմ: Նա՛թը: Մի շատ սովորական մարդ ու համեստ անձնաւորութիւն, որ ժամանել է իր երբեմնի հայրենի գիւղը... այսինքն, ուզում եմ ասել՝ քաղաքը: Փաստաթղթերս տեղին են: Պակաս բան չկայ: Կարող ես չանհանգստանալ: Ի սէր Աստծոյ... Ես քո նման տղաներին լաւ եմ ճանաչում: Յանկարծ պատմութիւն չսարքէք գլխիս... Իսկ եթէ լրտես կամ վտանգաւոր յանցագործ որսալու ցանկութիւն ունենաք, ես էլ կը միանամ ձեզ: Եւ դարձեալ խնդրում եմ, ինձ ուղղակի Նաթ անուանեցեք: Ու առանց «դուք»ի: Ես սիրում եմ, երբ ձեր տարիքի մարդիկ ինձ հետ զգում են հաւասարը հաւասարի պէս:

— Ո՞ւմ տանն էք ապրում,— հարցրեցի ես:

— Ոչ թէ «էք», այլ՝ «ես»: «Ո՞ւմ տանն ես ապրում, Նաթ», կամ՝ «Ու՞մ տանն ես ապրում, սիրելի Նաթ»: Միեւնոյն է: Միայն թէ այնպէս լինի, ինչպէս հաւասարը հաւասարի հետ: Աւելորդ պաշտօնականութիւն չեմ սիրում: Սովորական, պարզ, անկեղծ... Տիգրան, սիրելիս, չե՞ս ասի, թէ այդ ի՞նչ է եկեղեցուց քիչ հեռու, քարափի վրայի հիւղակը:

— Այն, որ այստեղից չի՞ երեւում:

— Մի՞թե չի երեւում...— Նաթ նայեց վանքի կողմը:— Իսկապէս որ չի երեւում: Տները խանգարում են:

— Սրբատեղի է:

— Զարմանալի է,— գլուխն օրորեց Նաթը:— Վանքի կողքի՞ն: Ինչո՞ւ:

— Չգիտեմ:

— Զարմանալի է ու հետաքրքիր: Հա՛, քիչ մնաց մոռանայի,— ձեռքը ճակատին խփեց Նաթը:— Ես ախր շտապում եմ: Ամբողջ օրս կորաւ: Գուցէ վաղը հանդիպենք, հա՞:

— Հանդիպենք,— համաձայնեց Նուարդը:

— Վաղը այս նոյն ժամին...— Նաթը նայեց ժամացոյցին,— ժամը վեցն է... Այս նոյն ժամին կը լինեմ կամրջի մօտ: Եղա՞ւ:

— Բայց...— Ես ինչ որ բան ուզեցի ասել նրան: Նաթը արագ շրջուեց ու քայլեց դէպի աղբիւրը: «Բայց ո՞ւմ տանն էք ապրում»,— պէտք է հարցնէի ես: Դրա փոխարեն մրմնջացի նրա ետեւից.— «Որ այդպէս է, ցտեսութի՛ւն»:

Ասացի այնպիսի երանգով որ Նուարդն ու Գլասեւոս պապը ծիծաղեցին: Պապն այնքան հաճոյքով էր ծիծաղում որ սկսեց ցնցուել, ու սիգարեթի ծայրին երկարած մոխիրը պոկուեց ու թափուեց կաւէ խաղալիքների վրայ:

— Նաթանայէլ,— ինքս ինձ ասացի ես:—Նա՛թ... Զարմանալի անուն է: Ի՞նչ մարդ էր, Գլասեւոս պապ:

— Չգիտեմ, որդի: Լաւ մարդ էր,— ասաց Գլասեւոս պապը:

— Իսկ դու այդպէս մի՛ ծիծաղիր,— Նուարդի վրայ բարկացայ ես:

— Միւս անգամ լաց կը լինեմ,— խոստացաւ Նուարդը:

Հեռուից, բլուրի կողմից հասնում էին քեֆ անողների աղմուկ-աղաղակն ու աղեկտուր, կլկլացող երգի ձայները:

ԳԼՈԻԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Արժէ՞ արդեօք լինել ազնիւ, երբ գործ ունես ծովահէնների հետ: Նոյնիսկ լաց լինել կարելի է յատուկ թոյլտուութեամբ միայն: Սուլիչ, որտեղ կարելի է տեղաւորել

— ՃԻՇՏ է… Վաթսուն մէկ ռուբլի եօթանասուն կոպէկ,— դրամը տալով Լեոպարդո Սերոբոյին՝ ասաց Ճիզվիտ Կարոն:— Դու էլ հաշուիր:

Լեոպարդո Սերոբոն թքոտեց մատներն ու սկսեց հաշուել:

— Ասում ես, մանրը չէի՞ն վերցնում,— հարցրեց Ճիզվիտ Կարոն:

Ես ժպտացի: Չէի ուզում, բայց ժպտացի, որովհետեւ Կարոն հիացմունքից քիչ էր մնում համբուրէր ինձ: Ես նաեւ հպարտ էի: Նրանց հետ ինձ զգում էի հաւասարը հաւասարի պէս: Ու մտածեցի որ հաճոյքով ինքս էլ ծովահէն կը դառնայի: Թէեւ այդ դէպքում, ի հարկէ, ոչ ինձ եւ ոչ էլ նրանց արդէն ծովահէն չէի անուանի: Ստիպուած պէտք է մէկ ուրիշ անուն գտնեմ: Բայց դա՝ յետոյ: Ախր Սերոբն ու Կարոն բոլորովին էլ վատ տղաներ չեն:

— Իսկ դու կարող էիր ընդամէնը քառասունհինգ ռուբլի բերել, չէ՞,— հարցրեց Կարոն:

«Փորձում է»,— մտածեցի ես: Ի հարկէ, կարող էի:

— Ո՛չ. չէի կարող,— պատասխանեցի ես:

— Ինչո՞ւ:

— Անազնիւ բան կը լինէր:

— Մենք ոչինչ չէինք իմանայ, չէ՞:

— Ի՞նչ նշանակութիւն ունի: Միեւնոյն է, անազնիւ բան կը լինէր,— պնդեցի ես, որովհետեւ հէնց այդպէս էլ համոզուած էի: Մարդ ամէն ինչի էլ ընդունակ է երեւի, բայց ինչ որ տեղ ամաչում է իրենից ու չի անում: Դրան ասում են ազնւութիւն, ասում են խիղճ, ասում են… ուրիշ բաներ էլ են ասում, բայց մարդ պարզապէս ինքն իրենից է ամաչում: Ես, օրինակ, կ՚ամաչեի: Կը նայեի հայելուն ու կ՚ամաչեի:

— Այո՛, ի հարկէ, դու շա՛տ ազնիւ ես,— համաձայնեց Կարոն: Բայց ինձ բոլորովին դիւր չեկաւ այդ «շա՛տ»ը:— Մեղրամոմ ծախելիս էլ ես ազնիւ, չէ՞: Իսկ հիմա մի բան էլ ասա տեսնենք, ո՞ւր էիր ամբողջ օրը:

— Երե՞կ:

— Երեկ: Ինչո՞ւ անմիջապէս փողը չբերեցիր: Գիտե՞ս, խեղճ Սերոբը քանի՛ անգամ եկաւ քո հետեւից:

— Եօթ անգամ,— կատակով ասացի ես: Կարող էի ասել «տասներեք», բայց դա արդէն շատ կը լինէր:

— Հազա՛ր,— ճշտեց Կարոն:— Հարիւր հազար անգամ եկաւ քո հետեւից:

— Ուշ մնացի: Որոշեցի՝ այսօր կը բերեմ,— փորձեցի բացատրել, որովհետեւ այս խօսակցութիւնը սկսեց ինձ դիւր չգալ:— Իսկ մեղրամոմը բերում եմ, որովհետեւ շատ էք խնդրում: Թափելու փոխարեն՝ բերում եմ: Ի՞նչ կայ որ…

— Միլիոն անգամ եկաւ,— շարունակեց Ճիզվիտ Կարոն:— Ո՞ւր էիր կորել: Տեսնո՞ւմ ես, չի ուզում ասել, Սերոբ:

— Վաթսուն մէկ ռուբլի եօթանասուն կոպէկ,—ասաց Սերոբը:— Ճիշտ է:

— Գալու էի, բայց մէկին հանդիպեցի:

— Հա՞…

— Ըհը՛… Նաթին հանդիպեցինք:

— Ո՞ւմ…

— Նաթանայէլին: Նաթին:

— Այդ ո՞վ է:

— Մի մարդ է, որ սկզբում թւում էր թէ չկայ, յետոյ պարզուեց, որ իսկական է:

— Սերոբ, չի՞ փչում:

— Փչում է:

Ես վիրաւորուած լռեցի:

— Յետոյ՞,— հարցրեց Ճիզվիտ Կարոն:

— Որ չեք հաւատո՛ւմ...— բողոքեցի ես:

— Դու պատմիր, յետոյ կտեսնենք,— ասաց Լեոպարդո Սերոբոն:

— Նաթին հանդիպեցինք, զրոյցով ընկանք: Ու ես էլ... մոռացայ:

Նրանք խելագարի պէս սկսեցին ծիծաղել: Յետոյ Ճիզվիտ Կարոն նայեց Լեոպարդո Սերոբոյին, աչքերը պլշեց ու դարձեալ սկսեց քրքջալ: Բայց աւելի բարձր, որպէսզի խլացնի ծովահէն ընկերոջը: Սերոբն էլ իր հերթին ուզեց խլացնել նրան: Ճիզվիտ Կարոն սկսեց գոռգոռալ, իբրեւ թէ ծիծաղում է: Լեոպարդո Սերոբոն նրանից յետ չմնաց: Յետոյ միանգամից լռեցին:

— Եթէ ուզենայի՝ քեզ կը յաղթէի,— ասաց Ճիզվիտ Կարոն:

— Չէիր կարող,— ասաց Լեոպարդո Սերոբոն:— Իմ ձայնը շատ ուժեղ է: Ուզենամ՝ երգիչ կդառնամ: Բենիամինո Ջիլլի, Մարիո դել Մոնակո...

— Իսկ դերասանուհի չե՞ս ուզում դառնալ,— իբրեւ թէ միամտօրեն հարցրեց Ճիզվիտ Կարոն:— Սոֆի Լորեն կամ Բրիջիդ Բարդո... Տուեալներ ունես: Վրայ չգա՛ս... Վրայ չգա՛ս, ասում եմ: Հին հնդկականով կը հասցնեմ:

— Սպասի՛ր,— հաշտարար տոնով ասաց Լեոպարդո Սերոբոն:— Իսկ մենք ինչի՞ վրայ ծիծաղեցինք:

— Տիգրանի՞:

— Չէ՛... ոնց էր անունը... Նաթայէ՞լ:

— Նաթանայէ՛լ,— ճշտեցի ես, ափսոսալով, որ նրանք չը կռուեցին իրար հետ:

—Նաթանայէլ... Չէ՛, դու նստիր, Տիգրան,— ասաց

Ճիզվիտ Կարոն:— Նստիր ու կարգին պատմիր, թէ ինչեր ես յօրինել:

— Ոչինչ էլ չեմ յօրինել,— սրտապնդուելով, բողոքեցի ես:—Հանդիպեցինք: Ծանօթացանք: Նուարդն էլ ինձ հետ էր:

— Բժշկի աղջի՞կը:

— Իսկ Նաթը Գլասեւոս պապից խաղալիք էր գում:

— Խաղալի՞ք... Լսեցի՞ր, Կարո:

— Խաղալի՛ք... Հի՛-հի՛... Իսկ ի՞նչ մարդ էր:

— Չգիտեմ,— ասացի ես:— Բայց ոչ լրտես էր, ոչ էլ յանցագործ:

— Ի՞նչ գիտէս:

— Ինքն ասաց:

— Խելոք... Այդ ո՞ր լրտեսը կամ յանցագործը կ'ասի, թէ ինքը լրտես է կամ յանցագործ,— Ճիզվիտ Կարոն զարմանքից ձեռքը խփեց ծնկին:

— Բայց նա նման էլ չէր:

— Վա՛յ, խելոք,— Կարոն այս անգամ խփեց Սերոբի մէջքին: Սերոբը ցաւից ճչաց, ու ես դարձեալ ուրախացայ, մտածելով, թէ հիմա կը կռուեն:

— Ի հարկէ, նման չէր:

— Վա՛յ, խելոք,— դարձեալ ասաց Ճիզվիտ Կարոն, բայց այս անգամ Լեոպարդո Սերոբոն խոյս տուեց նրա հարուածից, ու ինքը հասցրեց Ճիզվիտի ծոծրակին:

— Շա՛տ հետաքրքիր բաներ ես աատմում,— ասաց Սերոբը:

— Դրա համար էլ երեկ չկարողացայ գալ,— յաղթականօրեն վրայ բերեցի ես:

— Պարզ է,— ասաց Ճիզվիտ Կարոն:— Սերոբ, որքա՞ն էր փողը:

— Վաթսուն մէկ ռուբլի եօթանասուն կոպեկ:

— Դեհ լա՛ւ, Տիգրան ջան, կարգին ուրախացանք,

պրծանք... Հիմա մնացածն էլ տուր եւ՝ ազատ ես: Իսկ մենք ինքներս կը պարզենք, թէ այդ ի՛նչ մարդ է Նաթանայէլը:

— Ի՞նչ տամ:

— Շատ դժուար ես հասկանում: Փո՛ղը տուր: Մնացածն էլ տուր, իսկ յետոյ հինգ ռուբլին կը ստանաս:

— Բոլորը տուել եմ,— ապշահար ասացի ես:

— Բոլորը... Որովհետեւ շատ ազնիւ ես, չէ՞:

— Ազնիւ խօսք:

— Մի՛ երդուիր: Ամօթ է: Որքա՞ն ես թոցրել: Տո՛ւր: Հինգի փոխարեն վեցը կը ստանաս: Համաձա՞յն ես, Սերոբ:

— Եօթը,— մեծահոգաբար ասաց Լեոպարդո Սերոբոն:

— Շատ կը լինի,— ասաց Ճիզվիտ Կարոն, աչքերը ոլորելով Լեոպարդո Սերոբոյի վրայ:

— Ուզում էք՝ ստուգե՛ք,— գոչեցի ես՝ գրպաններս շրջելով:— Ոչ մի կոպեկ չկայ: Բոլորը ձեզ տուեցի:

— Վա՛յ... Մեզ ապուշի տեղ է դրել,— գոչեց Ճիզվիտ Կարոն:— Եթէ երեկ գայիր՝ կը ստուգէինք: Կարծում ես՝ չգիտէ՞նք որ հիմա քո մօտ ոչ մի կոպեկ չկայ: Համոզուա՛ծ ենք: Հէնց դրա համար էլ ոչ թէ երեկ, այլ այսօր ես բերել:

Ու ես նոր միայն հասկացայ, թէ նրանք ինչ են ասում: Նրանք կարծում են, որ ես... ես... Ես հիմա լաց կը լինեմ: Լաց կը լինեմ բարկութիւնից, վիրաւորանքից, այն բանի համար, որ ինձ ստախոս ու խարդախ են համարում: Ու միայն կարողացայ ասել.

— Ես ճիշտ եմ ասում:

— Մենք այդ հէքիաթը կը ստուգենք,— խոստացաւ Ճիզվիտ Կարոն:— Եւ ի զուր լաց չլինես: Դեռ շուտ է: Հէնց որ լաց լինելու ժամանակը գայ, ես կը զգուշացնեմ: Քեզ քսան րոպէ ժամանակ: Վազիր ու բեր մնացած փողերը:

— Ես ոչ մի կոպեկ... Ախր... ոչ մի...— կոշտ գունդը դէմ էր առել կոկորդիս ու խեղդում էր:

— Դէ լաւ, կէս ժամ,— ասաց Լեոպարդո Սերոբոն: Այսօր նա արտակարգ առատաձեռն էր դարձել:

— Եղած-չեղածը բերել եմ,— ասացի ես:— Չէք ուզում՝ հինգ ռուբլին էլ մի՛ տուէք:— Ես շրջուեցի, որովհետեւ այլեւս չէի ուզում մնալ այս անտանելի հացատանը, բայց Լեոպարդո Սերոբոն ճարպկորեն կտրեց ճանապարհս:

— Սերոբ, լսեցի՞ր, փողը չի ուզում,— նկատեց Ճիզվիտ Կարոն:

— Լսեցի:

— Իսկ ինչո՞ւ է հրաժարւում:

— Որովհետեւ հիմար է: Ես չէի հրաժարուի:

— Հիմարը դու ես որ չես հասկանում,– ասաց Ճիզվիտ Կարոն:—Ո՛վ գիտէ, թէ որքան է թոցրել վրայից, որ հինգ ռուբլին էլ այլեւս աչքին չի երեւում:

— Հա՛...— ծոր տուեց Լեոպարդո Սերոբոն, աչքերը ճպճպացնելով:—Երեւի քսան ռուբլի, հա՞:

— Ի՛նչ քսան ռուբլի,— բողոքեցի ես:

— Թող լինի քսանհինգ կամ երեսուն... Ո՞վ գիտէ,— անվրդով շարունակեց Ճիզվիտ Կարոն:—Այդքան թոցնելուց յետոյ հինգ ռուբլին ի՞նչ է, որ դրա համար սկսես վիճել: Չէ՞, Տիգրան:

— Որ այդպէս է՝ իմ հինգ ռուբլին տուէք:

— Չեղա՛ւ, չեղա՛ւ, Տիգրան: Դու արդէն մատնեցիր քեզ,— Ճիզվիտ Կարոն դանդաղ մօտեցաւ ու ոտքից գլուխ չափեց ինձ: Լուռ չափեց, չափեց, յետոյ գրեթէ շշուկով ասաց.—Կէս ժամ յետոյ բերած լինես:

— Ես բոլորը...

— Ձա՛յնդ,— անսպասելի գոռաց Կարոն որքան կոկորդում ուժ ուներ: Այնպէս գոռաց, որ Լեոպարդո Սերոբոն էլ ցնցուեց տեղում: Այդ նկատելով, Ճիզվիտը յաղթականօրեն նրան նայեց: Ինձ թուաց, թէ Ճիզվիտ Կարոն ուզում է ասել.

«Հիմա տեսա՞ր, թէ ձայնն ինչպէս է լինում»: Յետոյ այնքան մօտեցաւ, որ դէմքիս զգացի նրա տաք շունչը:

— Կը բերես: Մտքովդ թող չանցնի, թէ կը կարողանաս մատների վրայ խաղացնել մեզ: Եւ որպէսզի չմոռանաս...— Կարոն խօսքը կիսատ թողնելով, ափեզրով այնպէս խփեց պարանոցիս, որ մի պահ թուաց, թէ հիմա կ'ուշաթափուեմ: Ու խաւար-խաւար մի տեղից լսեցի նրա ձայնը.— Ճապոնական ձեւն էր: Նրանք այսպիսի հարուածով փայտ էլ են ջարդում, վիզ էլ: Տե՛ս, քիչ էր մնում մոռանայի... Հիմա կարող ես լաց լինել: Թոյլ եմ տալիս: Իսկական ժամանակն է:

Լեոպարդո Սերոբոն ուրախացաւ Ճիզվիտի այդ սրամտութեան վրա, ու մշուշի միջից ես լսեցի նրա ծիծաղը:

Յետոյ՝ Կարոյի ձայնը.

— Դուռը թող:

Յետոյ՝ Սերոբի ձայնը.

— Հիմա հինգ րոպեն էլ բաւական է, որ փողերը բերի:

Յետոյ՝ Կարոն.

— Ի հարկէ, կը բերի: Սպասում ենք: Չգնաս ու կորչես: Չես կորչի, չէ՞: Մտքովդ էլ չանցնի եղբորդ գանգատուել: Եթէ իմանայ, որ մեղրամոմ ես թռցնում, ինքն էլ մի լաւ կը ջարդի քեզ: Հասկացա՞ր: Իսկ մենք այնպէս կ'անենք, որ իմանայ: Ի՞նչ ես քարացել: Վազի՛ր: Թէ՞ համը բերանդ մնաց:

Երկու ափով շփեցի դէմքս եւ ուզեցի հեռանալ:

— Ի՛նչ անքաղաքավարի մարդ ես,— լսեցի Ճիզվիտ Կարոյի ձայնը:

— Ցտեսութի՛ւն,— փնթփնթացի ես:

— Ապրե՛ս: Ցտեսութի՛ւն,— ծիծաղեց Ճիզվիտ Կարոն:— Սպասում ենք: Եթէ բերեցիր՝ վեց ռուբլին քոնն է: Իսկ եթէ կորար՝ միեւնոյն է, կը գտնենք: Ու երբ գտանք, հին հնդկական ձեւն էլ կը փորձեմ վրադ: Զարհուրելի ձեւ է: Սերո՞բ...

— Շատ զարհուրելի ձեւ է,— հաստատեց Լեոպարդո Սերոբոն:

... Ես դանդաղ քայլում եմ: Դէպի ո՞ւր... Տո՞ւն... Գետա՞փ... Չգիտեմ: Եւ չեմ ուզում իմանալ:

Սիրտս մի տեսակ ճմլւում է: Ճապոնական ձեւի՞ց... Ի հարկէ, դա էլ վիրաւորական էր... Երկու հոգով հարձակւում են մէկի վրայ: Վերջին հաշուով, դա ստորութիւն էր:

Սիրտս ճմլւում է, որովհետեւ նրանք չեն հաւատում ինձ: Ինչո՞ւ չեն հաւատում: Ու մեղադրում են խարդախութեան մէջ: Եթէ թէկուզ մի կոպեկ էլ պահած լինէի, չէի վիրաւորուի: Գոնէ դո՛ւք գիտէք, որ ամբողջ եկամուտը տուեցի նրանց: Ինչո՞ւ չեն հաւատում:

...Ես քայլում եմ դանդաղ ու գլխումս պտտվում է միեւնոյն «ինչո՛ւ»ն: Ես քայլում եմ, ու երանի եմ տալիս Գլասեւոս պապին որ ընկուզենու տակ նստած իր համար անվերջ ծխում է ու խաղալիքներ վաճառում երեխաներին: Եւ կարծում է, թէ աշխարհի բոլոր դժբախտութիւնները, անախորժութիւններն ու տհաճութիւնները եղել են սրանից հարիւր տարի առաջ, երբ ինքն էլ չէր պատկերացնում, թէ երբեւէ պապիկ է լինելու, իսկ հիմա էլ չի պատկերացնում որ երբեւէ երեխայ է եղել: Նրան

անպայման թում է, որ հիմա երեխաների միակ հոգսը իր պատրաստած սուլիչները գնելն է:

Մօտենում եմ Գլասեւոս պապին: Կանգնում եմ քիչ հեռու եւ նայում, թէ ինչպէս են ոտաբոբիկ ու աղտոտ պստիկները աճապարանքով փորձում սուլիչները, իսկ յետոյ էլ՝ ափսոսանքով բաժանւում ափերի մէջ ամուր սեղմած մետաղադրամներից:

Ես էլ շատ կուզենայի հիմա լինել ոտաբոբիկ ու աղտոտ մի մանչուկ որի համար ամենամեծ երջանկութիւնը կաւէ սուլիչ ունենալն է: Ես էլ հաճոյքով ու սրտի թրթիռով մի սուլիչ կը գնեի, կամ գուցէ՝ շւի, Ի հարկէ, անպայման շւի, որպէսզի Գլասեւոս պապի շւիները նորէն դառնային փնտրուած ապրանք: Շւին կը վերցնէի ու կը գնայի բլուրներից այն կողմ: Եւ ժամերով կը փչէի շւին, կը փչէի այնքան, մինչեւ որ շրթունքներս սկսէին քոր գալ: Յետոյ կը վերադառնայի թեթեւացած սրտով ու բոլորովին անհոգ:

Բայց դա այնքան էլ դիւրին բան չէր: Որովհետեւ մայրս՝ արդէն տարուց աւելի է, ինչ նոյն բանն է պնդում, թէ տասնչորս տարեկան տղայի համար ամօթ է սուլիչով կամ շւիով խաղալը: Եւ ես հաւատում եմ նրան: Հաւատում էի: Մինչեւ այսօր: Մինչեւ այս պահը:

Գրպանիցս հանում եմ Նաթանայէլի նուիրած կաւէ սուլիչը եւ փչում եմ ամբողջ ուժով: Քանի որ սուլիչի մէջ ջուր չկայ, ձայնն էլ շատ զիլ է ու չոր՝ մարդու թմբկաթաղանթները պայթեցնելու չափ:

Գլասեւոս պապի շուրջը խռնուած երեխաները շփոթուած այս ու այն կողմ են շրջւում: Բայց ես հանգիստ, դանդաղաքայլ հեռանում եմ:

Քայլում եմ, ու չգիտեմ, թէ դէպի ուր...

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Անհրաժեշտ եզրակացութիւններ եւ ապա հարցեր, որոնց ոչ ոք չի կարող պատասխանել: Ռուբէնի կախրդական վառիչը, որի օգնութեամբ հնարաւոր է փաատել տարակուսանքները: Մեծ փոփոխութիւն՝ շատ կարճ երեկոյի ընթացքին:

ԱՐՏԱՍՈՎՈՐ երեկոյ էր:

Դիմացի սարերից փչում էր զով քամին: Ու մարդիկ դուրս էին եկել իրենց պատշգամբները՝ շնչելու ամարնային այդ պաղը, արդէն մոռանալով որ ընդամէնը մի քանի ժամ առաջ արեւի ճառագայթների տակ թե՛ պատշգամբների ցեմենտած յատակները, եւ թե՛ ամենասովորական հողը՝ տապակւում էին ու կրակ արտաշնչում:

— Իսկական շոգերն հիմա են սկսուելու,— եզրակացրեց հայրս, ու ցանցը քաշելով գլխին, իջաւ բակ՝ փեթակներն ստուգելու:

Ես մտածեցի, թէ ախր ինչո՛ւ են իսկական շոգերն հիմա սկսելու, երբ աշխարհի ամենազով երեկոն իջել է Լուսաշէնի վրայ, երբ սարերից փչող քամին երգում է ծառերի սաղարթների մէջ, կանաչը խշշում է չորս բոլորդ, իսկ ճնճղուկները ամէն կողմից հաւաքուել են մի տեղ ու սկսել իրենց իրիկնային հաշուետուութիւնը, բայց թէ ո՞ւմ՝ հասկանալի չէ:

Երկինքը դարձել էր գորշ: Չսպասելով, որ մութն ընկնի, քամու հետեւից, սարերի մուգ սապատների միջեւ յայտնուեց մոխրագոյն լուսինը որ մի քիչ յետոյ դառնալու էր փայլուն եւ նոր մետաղադրամ:

Ամէն տարի էլ երեւի այս ամէնը գոնէ մէկ անգամ կրկնւում է: Ամէն տարի էլ ամռան ընթացքին բացւում է այն օրը, երբ հեռուներից պարտաւոր է փչել քամին, երբ արտակարգ շտապողականութեամբ գորշաւուն երկնքից կախուելու է անհամբեր լուսինը, եւ մարդիկ էլ առանց կասկածելու յայտարարելու են որ իսկական շոգերը նոր են սկսելու: Ամէնից զարմանալին եւ վիրաւորականն այն է, որ ես, Փահլեւանեան Տիգրանը, տասնչորս երկար ու ձիգ տարիների ընթացքին, այդ ամէնը նկատում, տեսնում եմ առաջին անգամ: Եւ այն էլ մի այնպիսի երեկոյ, երբ ահագին հարցեր ունեմ, որոնց վրայ անհրաժեշտ է մտորել, ծանրութեթեւ անել, վերլուծել... Յատկապէս վերլուծել: Մի բան, որ միշտ էլ դժուարութեամբ է յաջողուել ինձ:

«Իսկ հիմա Տիգրանը կը վերլուծի «Անուշ» պոէմը»... Եւ, ի հարկէ, սկսում եմ պատմել միայն բովանդակութիւնը: Անուշը սիրում էր Սարոյին, Մոսին Անուշի եղբայրն էր, ու չէր ուզում, որ քոյրն ամուսնանայ մի այնպիսի մարդու հետ ինչպիսին Սարոն է... Մի խօսքով Սարոյին սպանում են, յետոյ էլ Անուշը խելագարւում է... Յետոյ՞:

Ի՞նչ է կամեցել ասել հեղինակը: Ինչպիսի՞ եզրակացութիւններ պէտք է անել այս ամբողջ պատմութիւնից:

Այդ եզրակացութիւնները ինձ բնաւ էլ չէին յուզում: Հաճոյքով կարդացել էի պոէմը, նոյնիսկ անգիր գիտէի առանձին հատուածներ: Երբ դասարանում մի անգամ արտասանեցի Անուշի խելագարութեան կտորը, մարմնովս ասես մրջիւններ էին վազվզում: Եւ դա ինձ բաւարարում էր: Բայց վերլուծել... Դա սոսկալի բան է:

Աչքիս ծայրով նայեցի հօրս կողմը: Սկզբում նա ծխով շշմեցնում էր մեղուներին, յետոյ բացում փեթակի կափարիչը, ստուգում էր բերքը, նշումներ անում լաթակազմ տետրակի մէջ, փնթփնթում էր ծոյլ ընտանիքների վրայ, եւ կարգին գոհ էր այդ աշխատանքից, որտեղ տնօրէնը միայն ինքն էր:

Տեսնես մեղուները իրենց հերթին որեւէ եզրակացութիւն անո՞ւմ են արդեօք: Իսկ ժամանակ ունե՞ն խեղճերը այդքան բարդ ու անհետաքրքիր գործի համար:

... Երեկոն արտասովոր էր նաեւ նրանով, որ ես մի տեսակ անհանգիստ էի զգում: Դա իմ երեկոն էր: Իմ երեկոն, ու յետոյ էլ յաւիտենական, կախարդական մի գիշեր:

Ընդհանրապէս, բոլոր գիշերներն էլ, ցանկութեան դէպքում, կախարդական են: Եթէ փորձես չքնել ու ոտքի վրայ դիմաւորել լուսաբացը՝ նաեւ յաւիտենական:

Սկզբում, մինչեւ ժամը տասնմէկը, ժամացոյցի սլաքները պտտւում են խելագարի նման: Ընթրում ես, ջրհորի ջրով լուանում ես ոտքերդ, ու... այլեւս ժամանակ չի մնում մտածելու կամ եղբօրդ հետ զրուցելու: Իսկ յետոյ այդ նոյն սլաքներին ասես կշռաքարեր են կապում: Հազիւ են շարժւում տեղից, իսկ լուսադէմին նոյնիսկ կանգ են առնում:

Բայց եթէ քնում ես, թւում է, թէ մի ակնթարթ է տեւել ամբողջ գիշերը:

Եւ կախարդանքն էլ հէնց այդ է որ կայ:

Ուստի, քանի որ ժամանակ ունեմ, պէտք է մտածել, թէ ինչն է իմ անհանգստութեան պատճառը: Չգիտեմ ինչու, թւում էր որ եթէ գտնեմ աատճառը, ապա անհանգստութիւնն էլ տեղնուտեղը կ'անցնի կը գնայ, ինչպէս սարերից եկող քամու իւրաքանչիւր պոռթկումը, որից, երեւի, վաղն այլեւս հետք անգամ մնացած չի լինի, ու կը սկսուեն իսկական շոգերը:

— Հայրի՛կ,— ձայն տուեցի ես:

— Ասա՛:

— Եթէ իսկական շոգերն սկսուեն, երեկոները դարձեա՞լ քամի կը լինի:

— Կը լինի, ի հարկէ, կը լինի,— պատասխանեց հայրս ու առիթից օգտուելով, փուքսը դրեց փեթակներից մէկի առաջ, նստեց կոճղի վրայ ու ցանցի եզրը բարձրացնելով, մի սիգարեթ վառեց։— Սրանից յետոյ, մինչեւ սեպտեմբեր, ցերեկները դժոխք է լինելու, գիշերները՝ քաւարան։—Սիգարեթի ծուխը թեքուեց, միացաւ փուքսի կտուցից ծուլօրեն դուրս հոսող քուլաներին ու ձգուեց դէպի գորշաւուն երկինք։

Ռուբէնը գլուխը բարձրացրեց ու խեթ-խեթ նայեց իմ կողմը։ Կարդում էր։ Ու ես երեւի խանգարեցի նրան։

...Ուրեմն, Նուարդն ու ես ծանօթացանք Նաթանայէլի հետ։ Զարմանալի անուն է։ Ինքն էլ պակաս տարօրինակ մարդ չէ։ Սկզբում տեսիլքի էր նման, յետոյ դարձաւ իսկական անծանօթ։ Իսկ հիմա՞... Դարձեա՞լ միայն թւում է, որ աշխարհում կայ շատ լաւ, շատ տարօրինակ մի մարդ, որ չի ուզում ասել, թէ որտեղ է իջեւանել։ Յետոյ՞ ինչ եղաւ... Հա՛, ես չկարողացայ նոյն օրը հանդիպել ծովահէններին։ Գրո՛ղը տանի, ինչո՞ւ համաձայնեցի մոմեր վաճառել։ Ի՞նչ արած, արդէն եղել-անցել է։ Ի զուր, ի զուր համաձայնեցի...

— Ռուբէ՛ն,— ասացի ես։—Ռուբէ՛ն։

— Մի՛ խանգարիր,— ասաց եղբայրս, որովհետեւ հասել էր գրքի ամենահետաքրքիր տեղը։

— Հայրի՛կ,— ես մօտեցայ պատշգամբի եզրին։

— Ասա՛։

— Մարդ կարո՞ղ է սխալուել։

Հայրս կոճղին նստած դեռ ծխում էր ու մէկ-մէկ դժգոհ հայեացքներ նետում ծոյլ ընտանիքների կողմը։

— Էլի լուացքի մեքենա՞ն ես քանդել,— անմիջապէս զգուշացաւ հայրս։— Ես էլ մտածում եմ, թէ ինչո՛ւ այս երկու օրը ձայնդ չի լսւում։

— Ի՛նչ լուացքի մեքենայ,— վիրաւորուած բողոքեցի ես։— Հէնց այնպէս եմ հարցնում։

— Հէնց այնպե՛ս,— կասկածանքով ծոր տուեց հայրս։— Մարդ ասածդ սխալական է։ Կարող է սխալուել, ինչո՞ւ չէ։ Բայց հէնց որ զգաց, թէ սխալուել է, այլեւս իրաւունք չունի սխալը շարունակելու կամ կրկնելու... օրինակի համար՝ լուացքի մեքենան։ Ո՞վ էր խնդրել, որ քանդէիր։ Ե՞ս, մա՞յրդ... Կարգին աշխատում էր։ Տակից մտար, վրայից դուրս եկար։ Լաւ էր՝ շուտ վրայ հասանք։

— Հայրի՛կ։

— Հասկացայ։ Ասելս այն է, որ սխալը կրկնելը վատ բան է։ Իսկ մարդիկ չեն ուզում ականջներին օղ անել։ Թէ չէ՝ ամէն տարի, տեսնում ես, նոյն պատմութիւնն է։ Բերքի ամենաթունդ ժամանակ սխալւում են ու մեքենաներ չեն ապահովում... Բերքն էլ ոչ քար է, ոչ ցեմենտ։ Թողեցիր՝ պիտի փչանայ։ Ժամերն էլ նշանակութիւն ունեն։ Տանջւում են, հաւաքում են, որ յետոյ էլ մի դատարկ պատճառով ուղարկեն գրողի ծոցը։ Իսկ ուրիշներն էլ սխալւում են պրծնում, յետոյ նորէն են սխալւում։ Դա էլ արդէն յանցագործութիւն է։ Սխալը կրկնելն ու շարունակելն է յանցագործութիւն։— Հայրս սիգարեթի մնացորդը նետեց, տրորեց ոտքով ու վերցրեց փուքսը։— Տեսնենք, թէ դո՛ւք ինչ օրի եք,— ասաց նա, դիմելով յաջորդ փեթակի մեղուներին։ Ու ես թեթեւացած շունչ քաշեցի։

...Ծովահէնները հնարամտօրեն, ինձ էլ խարդախ համարելով, խոստացած հինգ ռուբլին չտուեցին։ Իսկ դա ինձ համար իսկական հարստութիւն էր։ Ես որոշել էի գնել Կերամի գիրքը աստուածների, դամբարանների ու գիտնականների մասին որ գրադարանից եմ վերցրել ու մի տասը անգամ երեւի կարդացած կը լինեմ։ Տեղեր էլ կան, որ անգիր եմ յիշում. «...Չիչեն-Իցայում յայտնաբերուած ոսկէ գանձերն իրենց

արժէքով զիջում են միայն Թութանհամոնի գանձերին: Բայց փարավոնի ոսկին գտնւում էր մումիայի մօտ, որը վեհաշուք անդորրի մէջ պառկած էր դամբարանում: Իսկ սենոտի ոսկին ընկած էր աղջիկների աճիւնի մօտ, որոնք զոհերն էին վայրագ աստծոյ եւ տմարդի քուրմերի... Աղջիկների բազմաթիւ գանգեի հետ գտնուել է տարեց տղամարդու միայն մի գանգ: Արդեօք քուրմի՞ գանգ է դա: Ո՞վ կարող է պատասխանել այդ հարցին»: Եթէ գիրքն ունենայի, ոչ մի անհրաժեշտութիւն չէր լինի ամենահետաքրքիր ու սարսափելի տեղերն անգիր անել: Գրքից բացի կը գնէի վրձիններ. դրանք շատ պէտք են պեղումների ժամանակ գտնուած իրերի վրայից փոշին ու հողը սրբելու համար: Տարբեր տեսակներ կան. կոշտ խոզանակներ, փափուկ խոզանակներ, նուրբ վրձիններ՝ բոլորն էլ զանազան չափերի: Հնէաբանին ուրիշ շատ բաներ էլ են հարկաւոր, որոնք ես առայժմ չունեմ: Բայց ամէն բան հո միանգամից չի լինի:

Ասենք, Ռուբէնին կը խնդրեմ որ եթէ շատ ուզենայ ինձ որեւէ նուէր տալ, ապա թող գնի Կերամի գիրքը: Իսկ եթէ շատ-շատ ուզենայ՝ վրձիններ ու խոզանակներ էլ թող գնի: Իր կամքն է:

Բայց գուցէ ծովահէնները իրո՞ք համոզուած են, որ իրենց փողը լրիւ չեմ տուել: Նոյնիսկ ժամանակ էլ սահմանեցին, որպէսզի մնացորդը տանեմ ու յանձնեմ: Դա երկու օր առաջ էր: Ու այնպէս էլ չանհանգստացրին ինձ: Մոռացե՞լ էին: Հազիւ թէ... Երբ տուն վերադարձայ, մտածում էի որ անպայման մի տեղից փող կը ճարեմ ու կը տանեմ նրանց: Բայց որտեղի՞ց: Որոշեցի հաւաքել: Հիմա գրպանումս քսանհինգ կոպեկ կայ: Այսօր, ցերեկը, թթենու վրայի իմ հարթակին նստած, հաշւում էի, թէ քանի՛ օրում կը կարողանամ կոպեկ-կոպեկ հաւաքել այդ հնարովի մնացորդը: Ու յանկարծ գլխի ընկայ, որ նրանց ոչ մի կոպեկ էլ չեմ տալու: Չէ՞ որ իրականում ես լրիւ յանձնել եմ փողը: Ու ոչ մի մնացորդ էլ չկայ: Իսկ տալու դէպքում, անմիջապէս կ'ապացուցուի, որ ես անազնիւ բան եմ արել: Նոյնիսկ ինքս էլ կը հաւատամ, թէ մնացորդ է եղել:

Երբ յիշեցի թթենու վրայ կայացրած իմ որոշումը, վերջնականապէս հասկացայ, թէ ինչու եմ մի տեսակ անհանգիստ:

Ու վեր թռայ տեղիցս:

— Հանգիստ նստիր, էլի՛,— ասաց Ռուբէնը:—Վանդակ նետուած սպիտակ ա՞րջ ես, ի՛նչ է:

— Սպիտակ ա՞րջ,— հարցրեցի ես, ու մի քիչ տխրեցի, որովհետեւ սպիտակ արջերը վանդակում դառնում են դեղին, նոյնիսկ՝ գորշ:

— Այո՛: Սպիտակ արջ, որ իր ցուրտ հիւսիսն է երազում,— բացատրեց Ռուբէնը եւ գրպանից մի փոքր վառիչ հանեց:— Չէ՞... Երազում է, երազում, յետոյ էլ մտնում գաղջ ջրով լի աւազանը:

— Յետոյ՞:

— Յետոյ՝ հէքիաթը պրծաւ:

— Էլ չե՞ս կարդալու:

— Ձանձրալի գիրք է,— ասաց Ռուբէնը ու սեղմեց վառիչի նիկելապատ լծակը: Խարտոցի նման անւակի տակից ժայթքեց կայծերի մի խուրձ, որ նման էր հրէծաղիկների փոքրիկ փնջի, եւ պատրոյգը բոցավառուեց:— Կեանքումս աւելի ձանձրալի գիրք չեմ կարդացել:

— Հետաքրքիր չէ՞:

— Հետաքրքիր ու անհետաքրքիր բան գոյութիւն չունի: Նոյնիսկ ձանձրալին էլ հետաքրքիր է լինում:

Վառիչին մի շղթայ էր ամրացուած, որի միւս ծայրին օղակ կար: Չը-ըը՛խկ... Կայծերի փունջ... Յետոյ՝ կարմրաւուն բոց: Չը-ըը՛խկ...

— Ռուբէն, քեզ հետ պատահե՞լ է այնպէս որ սիրտդ ճմլուի, ճմլուի ու չիմանաս, թէ ինչից:

— Երբեմն: Իսկ վերջերս՝ միշտ:

— Իսկ ի՞նչ ես անում, որ չճմլուի:

— Փորձում եմ ծիծաղել: Իսկ եթէ չի յաջողւում, որեւէ ձանձրալի գիրք եմ վերցնում եւ սկսում կարդալ:

— Որտեղի՞ց ես իմանում, որ հէնց այդ գիրքն է ձանձրալի:

— Դա շատ դիւրին բան է: Բոլոր այն գրքերը, որոնք օր ու գիշեր նստած կարդում են ծերունիները՝ ձանձրալի են:

Ես կասկածանքով նայեցի եղբորս:

— Ախր նրանց թւում է, որ եթէ վաթսուն կամ եօթանասուն տարի ապրել են, ապա այդքան էլ դեռ պիտի ապրեն: Նրանց համար այլեւս ժամանակ գոյութիւն չունի: Որոնում ու գտնում են ամենա-ամենահաստ ու ամենա-ամենաձանձրալի գրքեր, նստում են, գիշեր-ցերեկ կարդում, յետոյ էլ ափսոսում են, որ ոչ թե յիսուն, այլ քառասուն օրում վերջացրին: Յետոյ երեւի նամակ էլ են գրում հեղինակին, թէ ինչո՛ւ շարունակութիւնը չկայ:

— Ի՞նչ գիտէս, թէ նամակ են գրում,— զարմացայ ես:

— Դրա համար պէտք է տրամաբանել,— ասաց եղբայրս:— Դու լսե՞լ ես որ հեղինակներին նամակներ են գրում:

— Լսել եմ:

— Դու որեւէ մէկին գրե՞լ ես:

— Ոչ:

— Ես էլ չեմ գրել: Երիտասարդները նամակներ չեն գրում: Ժամանակ չունեն: Նրանք դեռ իրենց մանութեան տարիներին են կարդացել աշխարհի ամէից հետաքրքիր գրքերը: Իսկ վաթսուն տարեկան ընթերցողները որ դեռ մինչեւ հիմա էլ չգիտեն Թոմ Սոյերին, Սանչո Պանսային կամ Գուլիվերին, երկար-երկար նամակներ են գրում, որովհետեւ վստահ են թէ ամէնից հետաքրքիր գրքերը… Իսկ այդ գրքերի հեղինակները իրենք էլ չգիտեն, թէ ովքեր են Նիլսը, Պինոքիոն կամ Տանիքի վրայ ապրող Կարլսոնը…Դու սիրահարուե՞լ ես:

— Ե՞ս... Որտեղի՞ց հնարեցիր:

— Թուաց: Ուրեմն սխալուել եմ: Գուցէ ուրի՞շ բան է պատահել:

Ես գլխով արեցի: Թեեւ յանկարծ անդրադարձայ, որ երեւի, իսկապէս, սիրահարուել եմ:

— Ասա՛ տեսնենք:

— Ախր գաղտնիք է:

Ռուբենը ծիծաղեց:

— Ոչ ոքի չե՞ս ասի:

Ռուբէնը ձախ ձեռքի ափով սեղմեց բերանը, իսկ աջով մի այնպիսի շարժում կատարեց, որ իբրեւ դուռն է կողպում բանալիով:

Իսկ ես բառերը կուլ տալով, նրան պատմեցի աշխարհի ամենատխուր պատմութիւնը: Եղբայրս լուռ, կենտրոնացած նայում էր իր վառիչին: Յետոյ՝ չը-ը՛խկ... Կայծերի խուրձ: Բո՛ց: Ու նորից: Մի քանի պահ միայն լուսաւորւում էր նրա մտահոգ դէմքը՝ թրթռացող կարմրա-նարնջագոյն երանգով, քիչ յետոյ դարձեալ իրիկնային գորշութեան մէջ սուզուելու համար:

— Իսկապէս, տխուր բան է,— ասաց նա, երբ լռեցի:— Դու, ի հարկէ, ուզում ես, որ խորհուրդ տամ:

— Ըհը...

— Բայց չեմ կարող: Չեմ էլ ուզում: Որովհետեւ շատ որոշակի դէպքերի առիթով տրուած խորհուրդները միշտ էլ սխալ են լինում: Եթէ որեւէ բան ասեմ, դա կը լինի այն, ինչ իւրայատուկ է միայն ինձ: Այն, ինչը ճիշտ կը լինէր ինձ համար: Իսկ դու բոլորովին այլ մարդ ես: Ուրեմն, իմ խորհուրդը ճիշտ լինելով ինձ համար, քեզ համար կարող է սխալ լինել: Հասկանո՞ւմ ես:

Ես յուսախաբ, դարձեալ գլխով արեցի:

— Ինքդ պէտք է կարողանաս դուրս գալ այդ հիմար վիճակից:

— Ինչպե՞ս:

— Չգիտեմ: Բայց աշխարհում ոչինչ սարսափելի չէ: Միայն թէ պետք չէ յուզուել: Չյուզուելու համար, ես, օրինակ, գրպանիցս հանում եմ այս վառիչն ու չրխկացնում: Ի հարկէ, վատ սովորութիւն է, բայց շատ է օգնում:

— Իսկ ես վառիչ չունեմ:

— Կարող ես ուրիշ բան մտածել,— ասաց Ռուբէնը: Յետոյ վառիչը պարզեց ինձ.— Հաւանո՞ւմ ես: Վերցրո՛ւ: Նուիրում եմ: Միայն թէ չկորցնես: Անպայման կ'օգնի: Ինձ գոնէ օգնում էր:

— Քեզ այլեւս պետք չէ՞:

— Երեւի՝ ոչ: Ես հիմա մի այնպիսի խնդիր եմ ուզում վճռել, որի վրայ անհրաժեշտ է մի փոքր յուզուել: Երբ յուզւում ես, մէկ էլ տեսար՝ գտար ամենաճիշտ պատասխանը: Դու մի՛ ծիծաղիր: Կեանքում խնդիրներ են լինում՝ որոնք հուզուելով պէտք է վճռել: Տարիքի հետ կապուած բան է: Եւ ինձ արդէն կարելի է...

Ես սեղմեցի նիկելապատ լծակը: Չը-ըը՛խկ... Կայծերի խուրձ... Բոց:

Հայրս գլխից հանեց ցանցը, փուքսը դրեց պատշգամբի տակ. դուրս ծորացող ծուխը հասաւ մեզ ու կսկծացրեց աչքերս: Հայրս մի քանի անգամ ոտքերը թփթփացրեց քարէ սանդուղքին ու բարձրացաւ պատշգամբ:

— Անիծուածներն այս տարի բոլորովին բերք չեն տալու,— դժգոհեց նա իւրովի, բայց այնպէս, որ մենք էլ լսենք ու կարծենք, թէ մեզ հետ է խօսում:— Անցեալ տարի ուրիշ էր...

Ռուբէնը նայեց ինձ ու աչքով արեց: Ես ժպտացի: Ախր հայրիկը միշտ դժգոհում է: Մի՛շտ: Առաջներում կարծում էի, թէ դրութիւնը իսկապէս լուրջ է: Բայց հիմա, երբ Ռուբէնը աչքով արեց, կռահեցի, որ հայրս դժգոհում է սատանային մոլորութեան մէջ գցելու համար:

— Առաջ ուրիշ էր,— արդէն մեզ դառնալով, ասաց հայրս:— Ուրիշ էր: Կարգին գիւղ էր մեր գիւղը: Անունը դրեցին քաղաք, մի երկու գործարան էլ կսարքեն ու կը պրծնի կը գնայ: Կարծես աշխարհում քիչ քաղաք կայ, մէկն էլ ավելացրին:

— Սա ի՛նչ քաղաք է որ...— առարկեց Ռուբէնը:

Հայրս խեթ-խեթ նայեց նրան, ուզեց ինչ որ բան ասել:

Յետոյ ձեռքը թափ տուեց ու գնաց ներս:

— Ուշ է, հը՞,— ասաց Ռուբէնը:

Ես նայեցի սարերի կողմը: Լուսինն արդէն ահագին բարձրացել էր, ու հիմա լողում էր աստղերի միջեւ: Գոյնն էլ էր փոխուել: Դարձել էր իսկական պղինձ:

— Ուզում ես քնե՞լ,— հարցրեցի ես:

— Կը փորձեմ,— ասաց Ռուբէնը, եւ աթոռակն ու գիրքը վերցնելով, գնաց ննջարան:

— Լոյսը մարէք,— լսեցի հօրս ձայնը:— Մեղուները կը կատաղեն:

Անջատիչը պտտեցի եւ նոյն պահին հեռու երկնքից աստղերը իջան ցած ու ինձ առան իրենց մէջ: Աստղերի հետ խաւարն էլ չորս կողմից վրայ տուեց ու գրկեց ինձ:

Պատշգամբի բազրիքին հենուած, նայում էի պղնձէ լուսնին ու մտածում, որ այսքան արտասովոր երեկոներ մարդու կեանքում լինում են միայն մէկ անգամ:

Այնպիսի երեկոներ, երբ եղբօրդ նամ հօրդ օգնութեամբ փորձում ես ինչ որ բան վերլուծել, բայց արդիւնքում յանկարծ գալիս ես մի եզրակացութեան, որ այլեւս երեկուայ երեխան չես:

Որովհետեւ ես արդէն իմ հոգսերն ունեմ, իմ սեփական խնդիրները, որոնք վճռելու համար ոչ ոքի խորհուրդն օգնել չի կարող: Արդէն ունեմ իմ վառիչը: Հէնց առաջին պահից, երբ վերցրեցի ձեռքս, զգացի, որ մի խորը հաւատ ունեմ այդ վառիչի նկատմամբ: Ինչ որ թեթեւութիւն էլ իջաւ վրաս: Որովհետեւ հաւատում էի:

Վառիչի՞ն:

Ո՛չ:

Հաւատում էի ինձ, հաւատում էի եղբօրս, հաւատում էի աշխարհին՝ աստղերին, լուսնին, արեւին որ կը ծագի մի քանի ժամ յետոյ:

Ու այս ամէնն ստացուեց բոլորովին անսպասելի, ընդամէնը մի երեկոյի ընթացքին:

Տարօրինա՞կ է:

Թերեւս:

Ինչ որ անհասկանալի ուրախութիւն պարուրեց ինձ: Ես այնքան ուրախ էի, որ նոյնիսկ ուզում էի ինչ որ բան ասել լուսնի երեսին:

Բայց որովհետեւ այլեւս երեկուայ երեխան չէի, անմիջապէս միտքս փոխեցի եւ աւելորդ չյուզուելու համար սեղմեցի վառիչի լծակը:

Կարմրա-նարնջագոյն կրակի բոցը սպունգի նման ներծծեց թանձր-թանձր խաւարը:

Ընդամէնը մի քանի պահ:

Եւ ես էլ գնացի քնելու:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ուսումնասիրութիւնները շարունակւում են: Նաթանաէլի յայտնագործութիւնը: Հարիւրամեակների վրայով թռիչք դէպի հեռաւոր անցեալը:

ԴԱ փոքրիկ մի շինութիւն էր: Վիթխարի քարատորները ո՛վ գիտէ, թէ երբ, շրջանաձեւ շարել էին իրար վրայ, ու ոչ մի տեսակի շաղախ չէին գործածել: Տանիքը կապել էին փայտէ հաստ չորսուներով, մի մասը ծածկել էին թիթեղով, մի մասն էլ էթերնիտով: Ինձ միշտ թւում էր, թէ դա ընդամէնը բոստանի պահակի հիւղակ է եղել: Միայն թէ հիմա բոստանը չկայ, եւ մնացել է միայն հիւղակը: Իսկ աշխարհում ամենահաճելի տեղը բոստանի պահակի հիւղակն է: Ներսը փայտաշէն տախտամած է լինում՝ վրան չոր ու բուրաւէտ խոտ փռած: Իսկ պատի տակ, արծնուած կաթսայի մէջ իւղալի մածունն է եւ կտաւի մէջ փաթաթած չոր լաւաշը: Գիշերները հիւղակի ճեղքերից ու դռան տեղ ծառայող միակ բացուածքից դուրս է ծորում ճրագի դեղնաւուն, թանձր լոյսը: Մի խօսքով, նա, ով գեթ մի անգամ ամբողջ օրն անցկացրել է բոստանի պահակի հիւղակում, այլեւս երբէք չի մոռանայ այդ օրը:

Բայց քարափին ծուարած շինութիւնը ոչ թէ բոստանի պահակի հիւղակ էր, այլ սրբատեղի: Մարդիկ տանջուելով գալիս հասնում էին այստեղ, երկիւղածութեամբ մտնում ներս, այդ նեղլիկ շինութեան մէջ, միւսներն էլ դռան մօտ համբերութեամբ հերթի էին սպասում: Անհարթ պատերի ցցուածքների վրայ անդադար աւելանում էր մոմերի ճարպոտ հետքերը:

Խորքը, թեք առաստաղի ու պատի վրայ փակցուած էին գունատուած լուսանկարներ, որոնք իբրեւ թէ սրբեր էին ու կրոնի բնագաւառում գործող

նշանաւոր անձինք: Հին-հին նկարիչների գործերից էլ կային: Դրանցից մէկը՝ «Քրիստոսի յայտնութիւնը ժողովրդին», շատ լաւ ծանօթ էր ինձ եղբորս բերած պատկերագրքից:

Իսկ ամէնից հետաքրքիրը ջահն էր: Երեւի ուխտաւորներից մէկն էր նուիրել: Դա մելքիորէ մի բաժակակալ էր, որ բռնակից կախել էին առաստաղից: Բարակ պատերով մի բաժակ էլ դրուած էր մէջը: Բաժակը լի էր ձէթով, ու փոքրիկ պատրոյգն էլ խղճալիօրեն հակուել էր եզրից: Վստահ եմ, որ այդ ջահը երբէք չէին վառում, որովհետեւ մութն ընկնելուց յետոյ այստեղ ոչ ոք չէր լինում: Բայց բաժակի ձէթն անդադար աւելացնում էին, որովհետեւ պատրոյգից, ֆիզիկայի օրէնքների համաձայն, ձէթը կաթիլ-կաթիլ թափւում էր հողէ հատակին:

Քարափի այս սրբատեղին եւ շրջապատը մարդաշատ էր լինում միայն շաբաթ ու կիրակի օրերը: Իսկ լի օրերը գալիս էին հատուկենտ մարդիկ, եւ այն էլ եկեղեցին ու վանքի տարածքը տեսնելու համար, որ իբր պահպանւում էր պետութեան կողմից:

Ես ու Նուարդը նստել էինք դուրսը, խոտերին, ու համբերութեամբ սպասում էինք Նաթանայէլին, որ մտել էր քարաշէն այդ հիւղակը: Շատ կարեւոր ուսումնասիրութիւն կատարելու նպատակով: Հէնց այդպէս էլ ասաց. «Շատ կարեւոր ուսումնասիրութիւն»:

Քիչ առաջ արեւը վերջնականապէս թեքուեց դիմացի սարի յետեւը, եւ հիմա էլ ճառագայթները կարմիր էին ներկել ձախ լանջը, գրեթէ ստորոտին մօտ: Այստեղից նայելիս, մարդ միշտ էլ երկու անգամ կարող է տեսնել կարմրաշէկ մայրամուտը, մէկ՝ սարի գագաթին, յետոյ՝ ստորոտի մօտ:

— Աշխարհում այլեւս ոչ մի տեղ չես գտնի, որ մայրամուտը երկու անգամ լինի,— ասացի ես:—Միայն այստեղ է:

— Ի՞նչ գիտես:

— Գիտեմ,— ասացի ես,— ուրիշ տեղ Լուսաշէն կա՞... Չկայ:

— Բայց սարեր կան,— առարկեց Նուարդը:

— Իսկ Լուսաշէն չկայ:

— Լուսաշէնը ի՛նչ է որ...

— Ո՛նց թե:

— Երեւանը աւելի լաւ է,— ասաց Նուարդը:

— Պա՛հ...

— Ի հարկէ,— ասաց Նուարդը:— Մենք ի զուր էլ եկանք այստեղ:

Ես ապշած նայեցի նրան:

— Ու երեւի շուտով կը վերադառնանք,— շարունակեց Նուարդը:

— Ո՞նց կը լինի... Նոր էք եկել ու արդէն...

— Ի՞նչ կայ որ: Գիւղում կեանքը դժուար է:

— Լուսաշէնը...

— Գիտեմ, գիտեմ, անունն է քաղաք:

— Շուտով գործարանը կ'աշխատի, բանուորներ կը գան... Իսկ գիւղում գործարաններ լինո՞ւմ են: Չեն լինում: Հինգ տարի յետոյ գիտէ՞ս քանի գործարան կառուցած կը լինեն:

— Միեւնոյն է,— անտարբերութեամբ պնդեց Նուարդը:— Թող լինի քաղաք: Աւելի վատ... էլ ի՞նչ քաղաք, որտեղ կաթ չկայ: Իսկ մայրիկս սովոր է, որ ես ամէն առաւօտ կաթ խմեմ:

— Կա՞թ: Ես կը բերեմ:

— Չի լինի:

— Ուզո՞ւմ ես, ամէն առաւօտ եկ մեր տուն՝ խմիր:

— Շնորհակալութիւն: Ես ախր կաթ չեմ սիրում:

— Աւելի լաւ: Ուրեմն չի խանգարում, որ կաթը...

— Չէ: Դա ամէնից կարեւորն է: Յետոյ, ախր մենք վարժուած չենք այսպիսի պայմաններում ապրելու:

— Ինչպիսի՞:

— Փոշի է: Ջուր բերելն էլ իսկական պատմութիւն է: Մայրիկիս թեւերն էլ հո երկաթից չե՞ն:

— Ընդհանրապէս, մարդկանց թեւերը երկաթից չեն լինում,— համաձայնեցի ես:

— Շրջապատ էլ չկայ: Ո՞ւմ հետ նստես, վեր կենաս... Ո՞ւմ այցելութիւն կատարես: Ո՞ւմ հետ կարելի է ինտելեկտուալ զրոյց անել:

— Ինչպիսի՞ զրոյց:

— Ինտելեկտուա՛լ,— վանկ առ վանկ կրկնեց Նուարդը:

— Դա ի՞նչ է նշանակում,— հարցրեցի ես:— Երեւի այն է, երբ բամբասո՞ւմ են:

— Չգիտեմ: Երեւի: Դա էլ զրոյցի տեսակ է: Իսկ քաղաքում ամէն բան տեղը տեղին է:

— Սպասիր, իսկ ե՞ս:

Նուարդը տարակուսած նայեց ինձ:

— Դու ինձ հետ ընկերութիւն չե՞ս անում: Մենք հիմա չե՞նք զրուցում: Յետոյ ի՞նչ, որ չգիտէնք այդ ինտ... ինտե...

— Չես հասկանում,— վրա բերեց Նուարդը:— Մայրիկս է ուզում զրուցել:

— Թող զրուցի: Որքան ուզես մարդ կայ: Երեկոները բոլորն էլ դուրս են գալիս իրենց դռների առաջ ու մինչեւ գիշեր բամբասում:

— Ուրիշ պատճառ էլ կայ,— ասաց Նուարդը:—Օրինակ, ինչպիսի՞ հեռանկար կարող եմ ունենալ: Գիւղից մարդիկ գնում են քաղաք, իսկ հայրիկս, չգիտես ինչո՛ւ, քաղաքը թողել, եկել է այստեղ: Ենթադրենք որ նրա համար դա անհրաժեշտ էր: Իսկ ե՞ս... Ախր կը դառնամ գեղջկուհի: Ճի՞շտ է: Այդ պատճառով էլ այստեղ երկար մնալ չի կարելի: Մէկ շաբաթն էլ բաւական էր: Համը տեսանք... Ենթադրենք, թէ ամառանոց էինք եկել:

— Դա է՞լ է մայրիկդ ասում:

— Մայրիկս է ասում:

— Իսկ դո՞ւ:

— Ե՞ս:

— Դո՞ւ ինչ ես ասում:

— Չգիտեմ,— շփոթուեց Նուարդը:— Ոչինչ էլ չեմ ասում:

Ես ուրախացայ, որ Նուարդը ոչինչ չի ասում:

— Ճիշտն ասած, ես էլ կ'ուզենայի Երեւանում ապրել,— խոստովանեցի ես:— Ուղղակի այնտեղ հետաքրքիր բաներ շատ կան: Ասենք՝ պատմական թանգարանը: Նախանցեալ տարի հայրիկս ինձ տարաւ այնտեղ: Ու հէնց այդ ժամանակ էլ որոշեցի որ պեղումներ պիտի կատարեմ: Իսկ հիմա՝ միասին կը պեղենք: Քաղաքներ կը յայտնագործենք:

— Նաթը ի՞նչ է անում,— ասաց Նուարդը:— Ի՞նչ է գտել ներսում: Ախր ոչ մի հետաքրքիր բան էլ չկար:

— Իսկ մենք հետաքրքիր բաներ կը գտնենք: Անպայման կը գտնենք: Օրինակ, որեւէ թագուհու զարդեր... Եւ ես թոյլ կը տամ, որ այդ զարդերը մի անգամ փորձես քո վրայ:

— Գուցէ կը նուիրե՞ս:

— Չի կարելի: Զարդերը կը նուիրենք թանգարանին: Բայց դու կը լինես միակը, որ գոնէ մէկ անգամ կը հագնես այդ զարդերը:

— Հնարում ես...

— Շլիմանն էլ է այդպէս արել:
— Ծովահէ՞ն է:
— Չէ... Ի՜նչ ծովահէն... Մոռացե՞լ ես: Հնէաբան էր: Սկզբում խեղճ տղայ էր: Յետոյ դարձաւ մեծ առեւտրական ու միլիոններ դիզեց:
— Յիշեցի... Վաճառական էր՝ աժան առնում ու թանկ ծախում էր,— ծաղրեց Նուարդը:
— Բայց եթէ դրամ չունենար, չէր կարողանայ պեղել ու յայտնաբերել Տրոյը:
— Հոմերոսի՞:
— Ի հարկէ: Ու երբ դրամը պակասում էր կամ սպառվում, Հայնրիխը թողնում էր պեղումները, ու դարձեալ սկսում վաճառաշահութիւնը:
— Անունը Հայնրի՞խ էր:
— Այո: Տրոյը պեղելիս, նա գտաւ գեղեցկուհի Հեղինեի զարդերն ու հագցրեց կնոջը: Իսկ կնոջ անունը Սոֆի էր:
— Ես հո քո կինը չե՞մ, որ թագուհու զարդեր հագցնես:
— Մենք անպայման կ'ամուսնանանք,— ասացի ես:— Երբ լաւ ընկերներ են լինում, յետոյ անպայման ամուսնանում են:
— Իսկ ես երբէք չեմ ամուսնանայ,— ասաց Նուարդը:
— Տիգրա՜ն... Նուա՜րդ,— ձայն տուեց Նաթը, դուրս գալով հիւղակից:
Նա այնպէս էր շտապում, որ նոյնիսկ մոռացաւ կռանալ եւ գլուխը խփեց մուտքի վերեւի փայտին: «Օ՜ֆ»,— ակամայ հառաչեց նա, շփեց ճակատն ու գոչեց.
— Տեսէք, թէ ի՜նչ եմ գտել:
— Գանձ,— անմիջապէս գուշակեց Նուարդը:
— Այո՛:
— Իսկակա՞ն:
— Ամենաիսկական:
— Ոսկի՞,— հարցրեց Նուարդը: Նրա աչքերը փայլեցին:
— Մի՞թե ոսկին գանձ է,— ասաց Նաթը:—Տեսէ՛ք ու հիացէ՛ք:
Եւ նա մեզ պարզեց մի քանի գունաթափ ու աղտոտ էջեր:
Դրանք դեղնաւուն, եզրերը մաշուած թղթեր էին կամ... իմ շունչը բռնուեց: Կամ, գուցէ, մագաղա՞թ... Ի հարկէ: Ես աւելի ուշադիր զննեցի այդ էջերը, որոնցից մէկի վրայ միայն նկարուած էր, իսկ միւսների վրայ ինչ որ բաներ էին գրուած ձեռագրով: Սակայն լուսանցքներին եւս փոքրիկ նկարներ կային: Ես ոչ մի պահ չտարակուսեցի, որ դրանք հին ձեռագրեր են:
— Սրա՞նք են գանձերը,— հիսաթափուեց Նուարդը:
Իսկ ես յուզմունքից խօսել չէի կարողանում: Ախր դրանք իսկական թանգարանային նմուշներ էին:
— Այս էջի վրայ աշխատել է իններորդ կամ տասներորդ դարի մանրանկարիչ,— ոգեւորուած բացատրեց Նաթը:— Տեսնո՞ւմ էք: Իսկ այս մի քանի էջերը նկարազարդուած են տասնչորսերորդ դարում:
— Որտե՞ղ է գրուած,— հետաքրքրուեցի ես:
— Չի գրուած: Ո՛չ մի տեղ: Բայց ես կարող եմ նոյնիսկ ասել, թէ ո՛վ է եղել նկարիչը:
— Ո՞վ:
— Սարգիս Պիծակը: Ի հարկէ, դա առայժմ սոսկ ենթադրութիւն է:
— Իսկ միւսնե՞րը:
— Երեւի անանուն ծաղկողներ:
— Անուն չե՞ն ունեցել,— հարցրեց Նուարդը:
— Ունեցել են: Բայց նրանց անունը առայժմ մեզ յայտնի չէ: Շատ ծաղկողներ կան, որոնց անունը մեզ չի հասել: Եւ մենք նրանց անուանում ենք Անանուն: Օրինակ,

ամբողջ աշխարհին յայտնի է մի Անանուն ծաղկող որ պատկերազարդել է «Փղոսկրեայ Աւետարանը»:

— Իսկ ինչո՞ւ է փղոսկրեայ:

— Ինը հարիւր ութսունինը թուականին, գրեթէ հազար տարի առաջ, Նորավանքում Անանուն ծաղկողը մի Աւետարան է նկարազարդել,— երկար ու նուրբ մատներով կզակը շփելով ասաց Նաթը:— Հետագային այդ ձեռագիրը զետեղել են փղոսկրեայ կազմի մէջ: Իսկ այդ կազմը պատրաստուած է եղել աւելի շուտ, վեցերորդ դարում: Սքանչելի փորագրութիւններ են կատարուած վրան: Եւ հէնց այդպէս էլ ձեռագիրը հասել է մեզ: Հիմա այդ Աւետարանը անուանում են «փղոսկրեայ: Ձեռագրի իսկական օրինակը գտնւում է Մատենադարանում, իսկ Փարիզում հրատարակուել է ձեռագրի պատճենահանուած տարբերակը:

— Երեւի շատ կարեւոր ձեռագիր է,— ենթադրեց Նուարդը:

— Ոչ... Սովորական Աւետարան է,— ասաց Նաթը:— Բայց արժէքաւոր է իր ձեւաւորմամբ, որի մասին բազմութիւ լեզուներով ուսումնասիրութիւններ են գրուել: Դա իսկական գանձ է:

— Իսկ սրա՞նք...

— Եթէ ենթադրութիւնս ճիշտ է, ապա սրանք էլ: Մատենադարանում ընդամէնը տասնութ ձեռագիր կայ, որ նկարազարդել է Սարգիս Պիծակը: Այս էջերը կամ այդ գրքերից պոկուած պատառիկներ են, եւ կամ մինչեւ հիմա անյայտ ձեռագրեր: Իսկ անանուն նկարիչի գործը... Ո՛չ, աւելի լաւ է, ինքներդ նայեցէք: Ուշադի՛ր նայեցէք:

Նաթը նստեց մեր կողքին, քարակտորի վրայ, եւ ծուատուած ու մաշուած թերթիկը պարզեց մեզ:

— Տիգրան, սա կարող ես նոյնիսկ քննութիւն համարել: Հնէաբանը բացի գիտելիքներից, պէտք է փայլուն երեւակայութիւն էլ ունենայ: Հապա՞...

Ես վերցրեցի թերթիկը: Նայեցի: Սովորական մանրանկարներ էին: Զարմանալի էր, որ ներկերը չէին խունացել: «Ուշադիր նայեմ: Ուշադիր նայեմ»,— մտքումս կրկնում էի ես ու... առանձնապէս ոչինչ էլ չէի հասկանում: Երեւի լոյսն էր անբաւարար: Օրն արդէն իրիկնանում էր: Լարումից աչքերս հոգնեցին: Ու ես արդէն ուզում էի ասել, որ ինձնից, ըստ երեւոյթին, ոչ մի փայլուն երեւակայութիւն ունեցող հնէաբան էլ դուրս չի գայ, երբ այդ նոյն պահին, կապտաւուն աղջամուղջի մէջ մի զարմանալի բան պատահեց:

Նկարները յանկարծ կենդանացան: Պատկերուած մարդիկ սկսեցին շարժուել:

Ու ես տեսայ, ազնի՛ւ խօսք, տեսայ...

...Որ պատն օրեցօր բարձրանում էր ու բարձրանում: Վաղ առաւօտից մարդիկ տաշում էին բազալտը, շաղախ էին անում: Պատշարները վերեւից անդադար պահանջում էին մերթ քար, մերթ շաղախ: Մուրճերը չրխկում էին, քերծելով բազալտը, պոկելով աւելորդ ցցուածքները, որպէսզի քարը դառնար ողորկ, սրբատաշ... Իսկ արձանագործ վարպետները զարմանահրաշ քանդակներ էին փորագրում, որպէսզի շինութիւնը լինէր նաեւ գեղեցիկ: Պատշարը լարից կապած ծանրութիւն էր կախում քարի եզրից, եւ պատը բարձրանում էր ուղղահայեաց, որպէսզի յետոյ կանգուն մնար դարեր ու դարեր: Շաղախը վերեւ էին տալիս տախտակե տաշտերով: Սրբատաշ քարերը բարձրացնում էին ճախարակներով, իսկ փոքրիկ քարերը մարդիկ շալակով էին հասցնում պատշարներին: Որքան բարձրանում էր պատը, այնքան դժուարանում էր վերուվարը: Եւ մշակները, արեւի խանձող ճառագայթների տակ բանող մշակները թեւքով կամ գդակով սրբում էին ճակատի քրտինքը, դժգոհ նայում անամպ երկնքում վառուող արեւին, ու երգում էին քթի տակ: Ամէն մէկն ունէր իր երգը, ամէն մէկն ունէր իր հոգսը, եւ ամէն մէկն ունէր իր մեծ կամ փոքրիկ երջանկութիւնը: Անպայման ունէր, որովհետեւ մեծ կամ

փոքրիկ երջանկութիւն, ու նաեւ հոգս ունեցող մարդիկ են ունենում իրենց երգը: Բարձրանում էին պատերը, ծածկւում զարդաքանդակներով ու ահաւասիկ, պատրաստ է այն շինութիւնը, որ պէտք է լինէր Աստծոյ տուն, բայց շատ հաճախ դառնում էր բերդ, դառնում էր ապաստարան, դառնում էր ազգի գլխին եկած ամէն տեսակի արհավիրքների մի համր վկայ: Երբ դառնում էր բերդ, թշնամին ջանում էր աւերել այն. երբ դառնում էր ապաստարան, թշնամին դարձեալ ջանում էր աւերել այն: Իսկ կարճատեւ խաղաղութեան շրջանին մարդիկ վերանորոգում էին շինութիւնը, եւ նորէն այնտեղ սկսում էր ծխալ խունկը, նորէն վառւում էին ճարպամոմերը... ու այսպէս շարունակ: Ու այսպէս՝ հազար ու ձիգ տարիներ: Որպէսզի այդ շինութիւնը, վերջապէս, դառնայ ճարտարապետական արժէքաւոր մի յուշարձան որն իբր պահպանւում է պետութեան կողմից: Հայրս ասում էր՝ «իբր», քանի որ տասնեակներով ու հարիւրներով այսպիսի մէծ ու փոքր հրաշքներ էին աւերել մարդիկ, որոնք հպարտօրէն իրենց յայտարարել են անաստուած եւ ուրեմն՝ անպատիժ կործանողներ:

— Հապա՞...— հեռու-հեռու մի տեղից լսեցի Նաթի ձայնը:

Ու ամէն բան չքացաւ կապտաւուն մշուշի մէջ. ես դարձեալ տեսայ խունացած թերթիկը, պայծառ նկարները դարձեալ քարացան ու ես շատ ափսոսացի, որ ինձ խանգարեցին:

— Մեր վանքն է, եկեղեցին, — վստահօրեն ասացի ես:

— Ի հարկէ,— հաստատեց Նաթը փոքր-ինչ զարմացած, որ այդքան շուտ կարողացայ կռահել:— Պատկերները պատմում են վանքի կառուցման մասին: Իսկ շինարարութիւնն աւարտուել է տասներորդ դարում: Ուրեմն, ձեռագիրը տասներորդ դարից է մեզ հասել: Ծաղկողն էլ անփորձ է, անվարժ: Գուցէ ծերունի՞ է, եւ դողացե՞լ է ձեռքը... Ես համոզուած էի, որ կը գտնեմ: Համոզուած էի:— Նաթանայէլը պատառիկը զգուշօրեն տեղաւորեց թղթապանակի մէջ:— Մասնագէտների համար ահագին խնդիրներ կան այս ձեռագրերում:

— Իսկ դո՞ւք:

— Ես՝ ի՞նչ: Ես ընդամէնը սիրում եմ պատմութիւնը: Ինձ համար այս ամէնը պարզապէս հաճելի զբաղմունք է: Եթէ կ՚ուզէք՝ յիշողութիւններ հեռու-հեռաւոր ժամանակների մասին…

— Ու այս ամէնը հիւղակո՞ւմն էր,— զարմացայ ես: Ախր քանի՜ քանի՜ անգամ եմ եղել այստեղ, բայց ոչինչ չեմ նկատել: Մի պահ նոյնիսկ յուսահատուեցի: Էլ ի՞նչ հնէաբան, եթէ չեմ նկատել… Եթէ ինքս չեմ գտել:

— Այո՛: Էջանոց պատկերը փակցուած էր Ռուբենսի վերատպութեան կողքին,— ասաց Նաթը:

Յուզմունքից թուքս կուլ տուեցի: Իսկ ես կարծում էի, թէ դա մէկնումէկն է նկարել ու նուիրել սրբատեղիին: Ու մտքումս էլ նոյնիսկ ծիծաղել եմ այդ տարօրինակ նկարի վրայ:

— Իսկ միւս պատառիկները,— շարունակեց Նաթը,— սալին դրուած գրքի մէջ էին, որն անդադար համբուրում են: Անցեալ կիրակի, մինչեւ ձեզ հանդիպելս, այստեղ էի: Հնարաւորութիւն չունեցայ թերթել: Իսկ այսօր մի լաւ տնտղեցի: Գիրքն առանձնապէս մի բան չէ, բայց մագաղաթեայ պատառիկները ժամանակին գրքի հետ են կազմել որպէս նկարչական ձեւաւորում:

— Պոկեցի՞ք,— վախեցած հարցրեցի ես:

— Այո:

— Բայց ախր...

— Այս պատառիկները բախտի քմահաճոյքին թողնել չի կարելի,— ասաց Նաթը:

Նուարդը հայեացքով սաստեց ինձ ու ես ոչինչ չպատասխանեցի:

— Մի շատ հետաքրքիր դեպք է տեղի ունեցել գրեթէ երկու դար առաջ,— մի փոքր լռելուց յետոյ ասաց Նաթը:— Հազար եօթն հարիւր ութսուն եօթն թուականին: Այն ժամանակ մի գիտնական ճանապարհորդել է Հայաստանով ու Փոքր Ասիայով, ձեռագիր մատեաններ գտնելու համար: Մի գիշեր նա իջեւանում է շամախեցի հայի տանը: Գիշերուայ կէսին ծարաւում է, ելնում է ջուր խմելու, ու երբ վերցնում է ջրամանի կափարիչը, տեսնում է որ դա մի շատ տարօրինակ կափարիչ է: Ու քանի որ հետաքրքրասեր մարդ էր, ուշադիր նայում է, զննում, ու տեսնում է որ դա հնադարեան մի ձեռագիր է:

— Երբ մենք էլ գնանք Մեքսիկայով ճանապարհորդելու,— ասաց Նուարդը,— բոլոր ջրամանների կափարիչները կը ստուգենք:

— Իսկ ինչո՞ւ էք ուզում այդքան հեռուները գնալ: Կարծում էք հէնց մեր շուրջը քի՞չ գանձեր կան, որոնք համբերութեամբ սպասում են իրենց յայտնագործողներին: Բայց ես իմ պատմութիւնը չաւարտեցի: Ախր այդ ձեռագիրը չորրորդ դարի յոյն պատմիչ Եւսեբիոս Կեսարացու նշանաւոր «Քրոնիկոն»ի, այսինքն՝ «Ժամանակագրութեան» հայերէն թարգմանութիւնն էր: Բանն այն է, որ «Քրոնիկոն»ի»յունարէն բնագիրը անհետ կորել էր, եւ պահպանուել էր միայն հայերէն թարգմանութիւնը: Այդ յայտնագործութիւնից քառասուն տարի անց Վենետիկում «Քրոնիկոն»ը տպագրուեց հայերէն ու լատիներէն: Իսկ հիմա, պատկերացրու, Տիգրան, որ գիտնականը այդ ձեռագիրը այնպէս էլ թողնէր ջրամանի վրայ, բախտի քմահաճոյքին… Գնանք,— առաջարկեց Նաթը:— Մութն արդէն ընկնում է: Մենք այսօր իսկական յայտնագործութիւն կատարեցինք: Ամբողջ գիշեր կը նստեմ ու մի լաւ կ’ուսումնասիրեմ այս նմուշները:

— Իսկ ո՞ւմ տանն էք ապրում,— հարցրեց Նուարդը:

— Դա ի՞նչ կարեւոր է... Ես միշտ ճանապարհորդում եմ: Ապրում եմ այնտեղ, որտեղ ինձ դիւր է գալիս:

— Իսկ որտե՞ղ եք ճանապարհորդում,— հետաքրքրուեցի ես:

— Հիմնականում՝ ժամանակի մէջ: Մերթ գնում եմ մեր թուարկութիւնից առաջ, մերթ՝ նախնադարեան ժամանակաշրջան, մերթ՝ ասենք տասներորդ դար, երբեմն էլ՝ քսաներորդ... Քսաներորդ դարում ես ձեզ հանդիպեցի:

— Գիտեմ,— ասացի ես:— Մեր պատմութեան ուսուցիչն էլ է ասում. «Երեխաներ, իսկ հիմա եկեք տեղափոխուենք այն ժամանակաշրջանը, երբ Հայաստանում թագաւորում էր Տիգրան Մեծը»:

— Ուզում ես ասել, որ արքայական անուն ունես,— խայթեց Նուարդը:

— Ես ոչինչ չեմ ուզում ասել:

— Նաթն էլ ոչինչ չի ուզում ասել,— վրայ տուեց Նուարդը:

— Ի՞նչ,— Նաթանայէլը շփոթուած նայեց Նուարդին:

— Վախենում էք, թե հի՞ւր կը գանք,— ասաց Նուարդը:

— Հա՛...— Նաթը ծիծաղեց:— Հասկացայ: Չեմ վախենում: Իջեւանել եմ Գլասեւոս պապի տանը:

— Պա՛հ...— շշմեցի ես:— Ու տեսնո՞ւմ ես, թէ նա ինչպէս է պատրաստում սուլիչները:

— Դեռ չեմ տեսել, բայց յոյս ունեմ, որ առիթ կ’ունենամ,— ասաց Նաթը:— Ինչո՞ւ այդպէս սառեցիր, Տիգրան… Գնա՛նք…

Ես մեքենաբար ոտքի ելայ եւ քայլեցի նրանց հետեւից: Մի քանի անգամ էլ յետ նայեցի: Բայց հիւղակի անկիւնից ոչ մի գլուխ չերեւաց, ոչ սեւ մազերով եւ ոչ էլ կարմրահեր գլուխ: Բայց ախր ես վստահ եմ, որ տեսայ Շէկ Դավթի գլուխը: Ազնիւ խօսք... Մի պահ միայն: Գլուխը մի քիչ դուրս հանեց պատի յետեւից ու դարձեալ յետ քաշեց: Կարելի է վերադառնալ եւ ստուգել:

— Տիգրան,— ձայն տուեց Նաթը:— Ի՛նչ ես յետ մնում:

Ես ակամայից արագացրի քայլերս:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Մատնութիւն, որը բացայայտւում է ընկուզենու մօտ: Վառիչն ունենում է ճակատագրական նշանակութիւն: Տիգրանը հեռանում է առանց յետ նայելու:

Մի անգամ էլ նայեցի վիթխարի ընկուզենու տակ հաւաքուածներին: Նայեցի, եւ նոյն պահին լսեցի Նուարդի ձայնը.

— Տիգրա՛ն, ես այստեղ եմ:

Ես վարանած, ինքնաբերաբար կանգնեցի: Ի հարկէ, նկատել էի, որ նա ընկուզենու տակ է, բայց ո՛ւմ հետ... Նուարդը ձեռքով էր անում ինձ, հաւանաբար ինչ որ բան էլ էր ասում, որ ես չէի լսում, որովհետեւ մտածում էի այն մասին, թէ ինչպէս մարդիկ, իրենց կամքից անկախ, հաճախ կատարում են մի բան, որը ոչ մի դէպքում չէին կամենայ անել: Մտածում էի, ու յետոյ զգացի որ ես էլ, կամքիս հակառակ, մօտենում եմ Գլասեւոս պապի շուրջ հաւաքուածներին:

Ճիզվիտ Կարոն խեթ-խեթ նայեց ինձ, ու արմունկով թեթեւակի բոթեց Լեոպարդո Սերոբոյին: Շէկ Դավիթն այնպէս էր ժպտում, կարծես դէմքի մկանները կաթուածահար եղած լինէին: Մի երկու հոգի էլ կային, կարծեմ Հայկն ու Սուրէնը, որոնք նոյնիսկ չնայեցին իմ կողմը: Նրանք շատ հեռու էին այս բոլոր անցուդարձից, եւ տարուած լսում էին Գլասեւոս պապի յուշերը:

— Նստի՛ր… տեղ կայ…— ասաց Նուարդը տեղ տալով… եւ ես մեքենաբար նստեցի չեչոտ քարի եզրին:

Երեւի շատ էի յուզուած: Ձեռքս ինքնաբերաբար տարայ գրպանս ու չրխկացրեցի վառիչը: Եւ Ռուբէնն էլ, ի հարկէ, իրաւացի էր: Վառիչը օգնեց: Սիրտս դադարեց խենթի պէս խփել: Յուզմունքս անցաւ: Գուցէ պատահաբար է Նուարդը յայտնուել Գլասեւոս պապի մօտ, իսկ ծովահէններն էլ նրան տեսնելով՝ անմիջապէս մօտեցել են որպէսզի ծանօթանան: Շատ հնարաւոր է, մտածեցի ես: Ի հարկէ, մարդ իր սառը դատողութիւնը պէտք չէ կորցնի… Իսկ ես քիչ էր մնում փախչէի… Հիմա, երբ վառիչի շնորհիւ արդէն հանգստացայ, պարզուեց որ առաջին անգամ եմ տեսնում Գլասեւոս պապին: Երեւի հաճախ է պատահում մարդկանց հետ՝ մի բան որ միշտ քո աչքի առաջ է, այնքան սովորական է դառնում որ մի օր էլ նայում ես մի փոքր այլ կերպ… Ու յայտնագործութիւն ես անում:

Եթէ աւելի առաջ որոշած լինէի պատմել Գլասեւոս պապի մասին, ապա բոլոր ասածներս երեւի սխալ կը լինէին… Ես կը պատմէի գոյութիւն չունեցող մի մարդու մասին որ չգիտես ինչո՛ւ, մինչեւ այսօր իմ մէջ տպաւորուել էր որպէս մի սովորական Գլասեւոս պապ:

Բայց հիմա իմ դիմաց բոլորովին մէկ ուրիշ մարդ էր նստած:

Ինչպէս միշտ, նա հագել էր առագաստալաթէ բաճկոնակ, որ ժամանակին բոլորի համար գրեթէ համազգեստի պէս մի բան է եղել, որպէսզի ոչ մէկը առանձնապէս աչքի չզարնի եւ բոլորը միասին հագնուած լինեն անպայման այն մէկի նման որին կարծել են թէ իրենց հայրն է… Առագաստալաթը տարօրինակ ճերմակութիւն ունէր ու երեւում էին արդուկի թողած ուղիղ հետքերը: Ես նայեցի պապին ու մտածեցի թէ արդեօք նրան երբեւէ տեսե՞լ եմ չսափրուած: Ի հարկէ՝ ոչ… Խնամքով սափրած, փոքր ինչ կապտաւուն մաշկի վրայ երեւում էին դէմքի կարմիր մազանօթները: Իսկ

ամենից զարմանալին պապի մազերն էին՝ փարթամ, ճեպ-ճերմակ մազերը, որոնք մի փոքր խառնուել էին մեզմ քամու տակ:

Գլասեւոս պապը ծխում էր ու պատմում իր սքանչելի պատմութիւնները: Այդպիսի առիթ լինում էր դէպքից դէպք, եւ այն ժամանակ միայն, երբ նա տրամադրութիւն էր ունենում յիշելու անցած-գնացածը: Նրա պատմութիւնները մութ ու լոյս հէքիաթային աշխարհների, անխելք թագաւորների ու դեւերի առեւանգած ամաչկոտ գեղեցկուհիների մասին չէին, եւ ոչ էլ այն մասին, թէ ինչպէս են թշնամիները անդադար խաբել մեր միամիտ արքաներին ու կոտորել ժողովրդին:

Ես լսում էի նրան, միաժամանակ մտածում ու զարմանում, թէ այդ ինչպե՞ս զգացի, որ այլեւս երեխայ չեմ, ինչո՞ւ յանկարծ պարզուեց, որ Գլասեւոս պապը բոլորովին ուրիշ մարդ է: Ինչո՞ւ ես հեռու չփախայ այս խմբից: Վստահ եմ, եթէ մի քանի օր առաջ լինէր, ես անպայման վիրաւորանքից խեղդուելով, կը վազէի տուն, կը փակուէի նկուղի մէջ եւ լաց կը լինէի: Բայց հիմա՝ ուրիշ էր: Դեռ աւելին՝ վառիչ էլ ունէի: Կախարդական մի վառիչ, որն անմիջապէս օգնութեան էր հասնում ինձ:

Գլասեւոս պապը երեւի արդէն պատմել էր քսան թուականի մայիսյան ապստամբութեան մասին, որ կազմակերպել էր Ռուսաստանը՝ կոմունիստական յեղաշրջում կատարելու համար եւ Հայաստանի նոր ստեղծուած հանրապետութիւնը տապալելու նպատակով: Ռուսաստանը թէեւ արդէն գնդակահարել էր իր թագաւորին եւ իբր թէ պայքարի էր դուրս եկել իմպերիալիզմի, այսինքն կայսրականութեան դէմ, ինքն էր վերականգնում մասնատուած իր կայսրութիւնը այնպիսի խաբէութեամբ, թէ հիմա էլ ազատութիւն է տալու գաղութացուած ժողովուրդներին, որոնցից մէկն էլ հայ ժողովուրդն էր: Գլասեւոս պապը միշտ էլ ինքն իրեն հարց էր տալիս, թէ էլ ի՞նչ ազատութիւն էր բերելու հայերին, երբ իրենք՝ հայերը, արդէն պետութիւն էին հաստատել ու չնայած դժուարութիւններին՝ արդէն հիւանդանոցներ էին կառուցում, համալսարան էին հիմնել… Չնայած Հայաստանի իշխանութիւնները կարողացան Մայիսին զսպել օտարներին ծառայող դաւաճաններին, բայց ռուսները այնպիսի հրեշաւոր միջոցների դիմեցին, որ հանրապետութեան կառավարութիւնը երկիրն ու ժողովրդին կործանումից փրկելու նպատակով՝ համաձայնեց իշխանութիւնը յանձնել ռուսական բոլշեւիկներին: Դրանք, այդ բոլշեւիկները նոյնիսկ հայկական անուններ ու ազգանուններ ունէին… Մի քանի ամիս անց՝ Դեկտեմբեր 3-ին Ռուսաստանը ներխուժեց Հայաստան եւ նորէն նուաճեց իր երբեմնի գաղութը որ համարձակուել էր հազիւ երկու տարի ապրել ազատութեան մէջ:

Այդ ամէնը ինձ թւում էր եւ շատ մօտիկ, եւ չափազանց հեռու: Շատ մօտիկ, որովհետեւ պատմում էր մի մարդ որ մասնակից էր եղել այդ դէպքերին, եւ չափազանց հեռու, որովհետեւ ոչ մի կերպ չէի պատկերացնում քսանմէկ թուականի ժանտախտի համաճարակը, որից հրաշքով փրկուել էր Գլասեւոս պապը:

Բոլշեւիկեան վերանուաճումից յետոյ Գլասեւոս պապը շարունակել է հաշուետարի իր համեստ աշխատանքը Երեւանում: Յետոյ նրան համոզել են լինել կուսակցական բջիջի անդամ, քանի որ զգացել են թէ այդ երիտասարդը շատ է ուզում հաւատալ այն երջանիկ ապագային որ կառուցելու է իր սեփական ձեռքերով: Յետոյ… Յետոյ ուղարկել են գիւղ… որպէսզի կոլխոզ կազմակերպի…

— Տասը տնտեսութիւն հազիւ լինէր... Ով մի կով ունէր կամ մի քանի ոչխար, ի հարկէ չէր ուզում ունեցածը բաժանել միւսների հետ: Այդ մարդկանց կովերն ու ոչխարները բռնութեամբ խլեցին, իսկ իրենց էլ ուղարկեցին աքսոր… Էն գնալն էլ՝ որ գնացին… Չնայած լուրեր հասան թէ ոչ մի տեղ էլ չեն ուղարկել… այլ աչքից ու ականջից հեռու՝ սարերում գնդակահարել վերջացրել են:

— Իսկ սովի տարի՞ն,— հարցրեց Լեռպարդո Սերոբոն:

— Սովի տարի՞ն,— Գլասեւոս պապը մի նոր սիգարեթ վառեց։—Հա՛, ի հարկէ, սովի տարի էլ եղաւ… Չէր կարող չլինէլ… Կոլխոզ ասածդ ի՞նչ է… Կոլխոզ ասածդ՝ այն է որ մարդ ոչ հող ունի եւ ոչ էլ անասուն… Ամէն ինչը՝ բոլորինն է… Իսկ եթէ բոլորինն է՝ կը նշանակի ոչ մէկինն էլ չէ… Տէր չունի… Իսկ երբ տէր չկայ՝ սով էլ կը լինի… գողութիւն էլ կը լինի… մի կտոր հացի համար իրար կոկորդ կրծել էլ կը լինի… Ամէն բան էլ կը լինի, ինչը մարդուն դարձնում է գազան… Գիւղն ու գիւղացին դարձել էին աչքի գրող։ Կամ գիւղացին էր գլուխը պահելու համար քաղաք գնում՝ բանուորութիւն անելու… Կամ էլ գիւղն էին որոշում քաղաք դարձնել… որպէսզի գիւղացին իր գիւղում դառնայ բանուոր… Մեր Լուսաշէնն էլ դարձաւ քաղաք... Չեղած տեղից…

— Պապ, ոնց էլ չես մոռացել,— ասաց Նուարդը։

— Ամէն օրուայ հետ մի մազ է ճերմակել գլխիս վրայ,— պատասխանեց Գլասեւոս պապը։— Ու դեռ չյիշե՞մ։ Իսկ յիշելը շատ պէտք է։— Նա յանկարծ ժպտաց, ու ես անդրադարձայ, որ այդպիսի ժպիտ եւս առաջին անգամ եմ տեսնում նրա դէմքին։— Ձեզ համար է պէտք։

— Անցած բաներ են,— վրայ բերեց Կարոն։—Հետաքրքիր է, բայց ո՞ւմ է պէտք։ Հիմա ուրիշ ժամանակներ են։

— Պէտք են,— պնդեց Գլասեւոս պապը։—Ես մի հիւր ունեմ... Երեկոները նստում զրուցում ենք։ Խելացի մարդ է։ Նա էլ է ասում, որ յիշողութիւնները պէտք են։—Գլասեւոս պապը յանկարծ շրջուեց Կարոյի կողմը։— Դու գետնափոր կամ հողէ տուն տեսե՞լ ես,— հարցրեց նա։

Ճիզվիտ Կարոն շփոթուած նայեց մեզ։

— Տեսե՞լ ես։

Ճիզվիտ Կարոն խեղճացաւ ու գլուխը բացասաբար շարժէց։

— Տեսել ես,— ասաց Գլասեւոս պապը։— Հողէ տանն ես ծնուել։ Բայց չես յիշում։ Մի մատ երեխայ էիր, երբ հայրդ նոր տուն շինեց։ Բա՛... Կարծում եք, ամէն բան պատրաստ է եղել։ Կարծում եք, թէ այս է որ կայ... Իսկ ես յիշում եմ, ու հոգիս տաքանում է որ այսքան բան ենք արել։ Ուրեմն, ի զուր չեմ ապրել։ Իսկ ովքեր չհասան այս օրուան, նրանք էլ ի զուր չեն նահատակուել։ Նրանց նահատակութիւնը մեզ պէտք է միշտ յիշեցնի թէ ինչ է բան է բռնատիրութիւնը… Հիմա մեր պատմութիւնը, մեր յիշողութիւնները պահել-պահպանելու հերթը ձերն է։ Ես ի՛նչ... Ես հիմա սուլիչներ պատրաստելուց բացի, ուրիշ բան անել չեմ կարող։ Ծերացել եմ։ Ինձ պապ էք ասում։ Գլասեւոս պապ,— նա հեգնանքով քմծիծաղեց։— Գլասեւոս պապ... Այդ էլ մտքովս չէր անցնում։ Միայն դրան չեմ հաւատացել։ Չեմ հաւատացել, որ ինձ մի օր էլ պապ են ասելու։ Կարծում էի, թէ միշտ ջահել եմ մնալու։

— Գլասեւոս պապ, դու այն ժամանակ է՞լ էիր սուլիչներ պատրաստում,— հարցրեց Շէկ Դավիթը։

Պապը ծիծաղեց։

— Գիտէ՞ս ինչ բան է մահու ե կենաց կռիւը։ Լսել ես։ Բայց չես պատկերացնում։— Պապը այս անգամ քանդեց կիտելի կոճակները ու բացեց կուրծքը։ Կապտաւուն սպին ձգւում էր նրա ձախ ուսից դէպի ցած։—Բա՛... Իսկ սուլիչները... Հա՛, երբ տեսայ որ այլեւս ուրիշ կերպ չեմ կարողանում մարդկանց համար մի բարի գործ անել, մտածեցի, ա՛յ Գլասեւոս, եկ երեխաների համար սուլիչներ պատրաստիր։ Քեֆս գալիս է, երբ սուլիչն առնում փչում են...

— Այսօր քանի՞ հատ ես վաճառել,— հետաքրքրուեց Լեոպարդո Սերոբոն։

— Ութ հատ։

— Մէկ ռուբլի վաթսուն կոպեկ,— անմիջապէս հաշուեց Սերոբը։

Պապը անսպասելի բարկացաւ։

— Ի՛նչ ես հաշւում: Քո կարծիքով փողի համար եմ պատրաստում, հա՞,— նա շուռ տուեց կիտելի գրպանները: Մի քանի սուլիչ ընկան գետնին:— Վերցրէ՛ք,— պապը սուլիչները հաւաքեց ու պարզեց մեզ:— Նուիրում եմ: Կարող եմ միշտ էլ նուիրել: Բայց դուք կարծելու էք թէ ինչ որ մէկը պարտաւոր է սուլիչ պատրաստել ու բաժանել: Մարդու բնոյթն է այդպէս: Վատ վարժեցնես, կը կարծեն, թէ օրէնք է, ամէն բան պատրաստի պիտի ստանան: Ու ձրի: Ու առանց աշխատելու: Ո՛նց չէ... Հայկ ջան, օգնիր, բարձրանամ: Հիւրս արդէն քաղցած կը լինի: Ինձ խօսքի բռնեցիք այսօր:

– Մենք քո հիւրին տեսել ենք,— ասաց Ճիզվիտ Կարոն:

— Ի՞նչ կա որ... Կարող է պատահել,— համաձայնեց Գլասեւոս պապը:

— Բայց ծանօթ չենք,— աւելացրեց Լեոպարդո Սերոբոն:

— Էհ, կը ծանօթացնեմ,— խոստացաւ Գլասեւոս պապը: Յետոյ թափ տուեց տաբաթի փողքն ու քայլեց դէպի տուն:

— Ես էլ կարող եմ ծանօթացնել,—ասաց Նուարդը:—Չէ՞, Տիգրան: Մենք լաւ բարեկամներ ենք: Անցեալ օրն էլ Նաթը մի շատ հետաքրքիր...

— Գիտեմ,— ասաց Ճիզվիտ Կարոն:— Ծովահէնների աչքից ոչինչ չի վրիպում:

Դիմացի տներն ու ծառերը յանկարծ մի փոքր պտտուեցին դէպի աջ, յետոյ՝ ձախ, իսկ արեւը դողդողաց, մթնեց մի պահ. ես թափահարեցի գլուխս, որպէսզի այդ ֆոկուսները դադարեն, ու նայեցի Նուարդին: Ի հարկէ, այդ Նուարդն է հասցրել ասելու, որ «ծովահէն» անունը ես»եմ դրել Կարոյին ու Սերոբին: Իսկ ինչո՞ւ... Չէ՞ որ դա ամէնից առաջ իմ գաղտնիքն էր: Ուրեմն, ծովահէնները շատ ուրիշ բաներ էլ գիտեն երեւի, ամէն ինչ գիտեն... Կոկորդս սեղմուեց: Բայց ամէնից տխուրն այն էր որ ես տեղնուտեղը ստիպուած էի կատարելու մի տհաճ եզրակացութիւն՝ աղջիկների հետ չարժէ ընկերութիւն անել: Աղջիկները գաղտնիք պահել չգիտեն: Նրանք հաւատարիմ ընկերներ լինել չեն կարող... Ես այլեւս չէի կասկածում, որ իմ եզրակացութիւնները ճիշտ են: Չէի կասկածում նաեւ, որ իմ ներկայութիւնն այլեւս աւելորդ է. որ Նուարդը հիմա ինձ կը թողնի ընկուզենու մօտ եւ կը գնա ծովահէնների հետ:

Ու չսպասելով դրան, ոտքի ելայ:

Ես պէտք չէ որեւէ բան ասէի, պէտք է պարզապէս

հեռանայի: Բայց սկզբում Նուարդն ախր ի՛մ ընկերն էր:

— Նուարդ, չե՞ս գալիս,— հարցրեցի ես:

— Իսկ դու ո՞ւր ես գնալու,— Նուարդի փոխարեն, ծաղրանքով հարցրեց Ճիզվիտ Կարոն:

Ես դարձեալ սխալուեցի: Պէտք չէ պատասխանէի: Բայց ասացի.

— Քեզ ի՞նչ...

— Լսո՞ւմ ես, Լեոպարդո,— հարցրեց Կարոն:

— Լսում եմ, Ճիզվիտ,— պատասխանեց Սերոբը:

— Ո՛ւխ, ինչ լաւ անուններ են,— ուրախացաւ Շէկ Դավիթը:— Իսկ իմ անունը ի՞նչ ես դրել, Տիգրան:

— Դու դեռ անուն չունես,— ասաց Նուարդը:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ դեռ իսկական ծովահէն չես,— բացատրեց Նուարդը:

— Սպասե՛ք, սպասե՛ք,— ընդհատեց Ճիզվիտ Կարոն:— Տիգրանն ասաց՝ «Քեզ ի՞նչ»... Լսեցի՛ք, չէ՞,— նա դարձաւ Հայկին ու Սուրենին:

Նրանք միայն գլխով արեցին ու յետ քաշուեցին մի քանի քայլ: Հասկացան որ շատ տխուր մի պատմութիւն է սկսուելու… հասկացան որ իմաստ չունի, եթէ յանկարծ

իրենք էլ խառնուեն այդ տխուր պատմութեանը… յետոյ, պարզապէս, թողեցին մեզ ու հեռացան:

— Եթէ ինձ ինչ, ուրեմն, գնա՛, էլ ինչո՞ւ ես Նուարդին կանչում,— ասաց Ճիզվիտ Կարոն:

— Մենք գործ ունենք,— ստիպուած բացատրեցի ես:

— Գործ ունէք... Ոնց չէ՛...— ծոր տուեց Ճիզվիտը:—Իսկ ինչո՞ւ մինչեւ հիմա մարդաւարի խօսել չես սովորել: Քանի անգամ եմ ասել, որ բարեկիրթ մարդուն չի սազում այդպէս խօսելը: Մօտեցար մեզ եւ նոյնիսկ չբարեւեցիր: Սերո՞ք...

— Հին հնդկականով,— առանց երկար-բարակ մտածելու, ասաց Լեոպարդո Սերոքոն:

— Ճիշտ է,— համաձայնեց Ճիզվիտ Կարոն:— Մինչեւ Տիգրանին դաստիարակենք, հոգիներս դուրս կը գայ: Դու նրան բոլորովին չես ճանաչում ախր, Նուարդ:

— Չէ՛, չէ՛,— վախեցաւ Նուարդը:—Ի՞նչ կը լինի... առանց այդ ձեւերի: Ես գիտեմ, որ դու Տիգրանից ուժեղ ես, կարող ես խփել, որովհետեւ մեծ ես: Բայց թոյլերին ու փոքրերին խփել չի կարելի: Անազնիւ բան է:

Ճիզվիտ Կարոն ոտքից գլուխ չափեց ինձ, ու ես հասկացայ որ նա հաճոյքով պատրաստ է կատարելու Նուարդի խնդիրքը: Ու դարձեալ վիրաւորուեցի: Ինչ որ մի գունդ դէմ առաւ կոկորդիս ու սկսեց խեղդել ինձ: Աչքերս կսկծացին: Ես շատ վախեցայ որ յանկարծ արցունքներ կը հոսեն... Աւելի լաւ կը լինէր, եթէ Ճիզվիտ Կարոն իսկապէս խփէր ինձ, ծեծէր, տրորէր ոտքերով, կաշիս քերթէր եւ գլուխս շամփրէր ցցին:

Ձեռքս տարայ գրպանս ու զգացի վառիչի մետաղական սառնութիւնը: Ակամայից սկսեցի խաղալ վառիչի հետ: Եւ տարօրինակ բան... Վառիչը դարձեալ օգնեց ինձ: Ես յիշեցի, որ այլեւս երեխա չեմ… որ աշխարհում ամէն բան աստիճանաբար փոխւում է աչքերիս առաջ... Նիկելապատ լծակը յանկարծ սեղմուեց ու պարզորոշ լսուեց մի չրխկոց: Ճիզվիտ Կարոյի աչքերը կլորացան: Իսկ ես հազիւ զսպեցի ծիծաղս: Ախր նրա աչքերը վախից կլորացան: Ի հարկէ: Չրխկոցը լսելուն պէս, նա հարցրեց.

— Այդ ի՞նչ կայ գրպանումդ:

— Գնդացիր,— պատասխանեցի ես:

— Լսո՞ւմ ես, Սերոք:

— Ի՛նչ գնդացիր,— ասաց Սերոքը:— Խաղալիք ատրճանակ կը լինի: Ուզում է մեզ վախեցնել:

— Ո՞վ... Տիգրա՞նը... Հի՛-հի՛...— շփոթուած ծոր տուեց Ճիզվիտ Կարոն:

— Հի՛–հի՛,— ծաղրեցի ես նրան: Յետոյ վառիչը հանելով, նորից չրխկացրի Ճիզվիտ Կարոյի քթի առաջ: Կապտաւուն բոցը տեսնելով, նա յետ-յետ գնաց, ու մինչեւ ուշքի կը գար, անմիջապէս թաքցրեցի իմ թալիսմանը:

— Ծխո՞ւմ ես,— կասկածանքով հարցրեց Կարոն:

Ես դարձեալ սխալուեցի: Ես պէտք է ասէի, որ ծխում եմ: Եւ նա անպայման մի քիչ կը վախենար ինձնից: Բայց ասացի.

— Չեմ ծխում:

Նա մի քայլ առաջ եկաւ:

— Իսկ ինչո՞ւ ես վառիչ պահում:

— Ուզում եմ՝ պահում եմ,— պատասխանեցի ես:

— Հա՛,— ասաց Ճիզվիտ Կարոն:—Ուրեմն՝ ուզում ես:

— Ուզում եմ:

— Ուրիշ բան էլ չե՞ս պահում:

— Պահում եմ:

— Ուզո՞ւմ ես:
— Որ պահում եմ, ուրեմն ուզում եմ: .
— Խաղալիքնե՞ր... Քնովի տիկնի՞կ... Հը՞...
Նա ուզում էր համբերութիւնից հանել ինձ: Ու ես որոշեցի այլեւս չպատասխանել: Այլապէս համբերութիւնից անպայման դուրս կը գայի, որովհետեւ Նուարդը քիչ այն կողմ, Սերոբի մօտ կանգնած, կարծես հէնց դրան էլ սպասում էր:
— Լաւ վառիչ է,— ասաց Կարոն:— Չէ՞... Ձայն հանիր:
— Հը՛...— ձայն հանեցի ես:
— Բայց քո ձեռքին ի՞նչ գործ ունի:
— Հը՛...— համաձայնեցի ես:
— Դու ախր երեխայ ես: Մէկ էլ տեսար՝ տունը հրդեհեցիր:
Ուսերս վեր քաշեցի, այսինքն՝ «Միանգամայն հնարաւոր բան է»:
Շատ գոհ էի որ այդպէս անտարբեր եմ. պարզապէս երջանիկ էի զգում ինձ: Հակառակ դէպքում նրանք արդէն խայտառակ կերպով եկած կը լինէին իմ հախից: Ամենախայտառակ կերպով, որովհետեւ Նուարդը կանգնած էր ընդամէնը երկու քայլ այն կողմ:
— Տուր տեսնեմ,— ասաց Ճիզվիտ Կարոն:
— Տեսա՛ր:
— Ափսոսո՞ւմ ես:
— Հը՛:
— Վախենում ես՝ մաշուի...
— Շատ եմ վախենում:
— Տո՛ւր տեսնեմ,— կրկնեց նա:
— Շատ նայելուց աչքերդ կը ցաւեն,— ասացի ես:
— Ասացի՝ տեսնեմ,— ատամների տակից նետեց Ճիզվիտ Կարոն ու վրայ եկաւ:
Ես անօգնական նայեցի շուրջս: Լեոպարդո Սերոբոն անտարբեր կանգնել ու սպասում էր, թե ինչով պիտի վերջանայ այս ամէնը: Շէկ Դավիթը երանութեամբ ժպտում էր ու շատ լաւ էր իրեն զգում որ ինքը չի գտնւում իմ վիճակում: Իսկ Նուարդը... Գոնէ նա կարող էր ինձ դուրս բերել այս անտանելի կացութիւնից: Կարող էր ձեռքս բռնել ու տանել, ասելով՝ թե շատ կարեւոր գործ ունենք, կամ էլ նման մի բան:
Վառիչը տալու միտք անգամ չունէի: Որովհետեւ, գիտէի, որ յետ չեմ ստանայ: Իմ վառիչը: Դա սոսկ վառիչ չէր, այլ մի ուրիշ բան, որից ոչ մի դէպքում չէի բաժանուի: Թալիսմա՞ն... Ես այդ պահին մտածում էի որ աւելին է, քան թալիսմանը: Վառիչը իմ ուժն էր... վառիչը այն փաստն էր որ ես այլեւս երեխայ չեմ... վառիչն ինձ օգնում էր որ աշխարհին բոլորովին նոր աչքով նայեմ: Եւ շատ բաներ տեսնեմ առաջին անգամ: Ա՛յ, հիմա էլ վառիչի շնորհիւ էր միայն որ այդպէս անվրդով էի ու հանգիստ:
— Ասացի՝ տո՛ւր տեսնեմ,— ձեռք չէր քաշում Ճիզվիտ Կարոն:
— Ի զուր մի՛ ասա:
— Հա՛... Հիմա ինքդ կը խնդրես,— ժպտալով կանխագուշակեց Ճիզվիտ Կարոն:— Նոյնիսկ կ'աղաչե՛ս, բայց արդէն ուշ կը լինի,— նա մի քայլ եւս մօտեցաւ:
— Չէ՛, չէ՛,— աղաղակեց Նուարդը:
— Ո՛ւշ կը լինի,— յաղթական հայեացքով Նուարդին նայելով, երգեցիկ ձայնով ասաց Ճիզվիտ Կարոն, ու ձեռքը յետ տարաւ:— Ո՛ւշ կը լինի...
Իմ վառիչն իսկապէս կախարդական էր: Գուցէ հէնց նրա շնորհիւ ժամանակը դանդաղեց, ու ես որոշակիօրեն տեսայ, թէ ինչպէս աջ բռունցքս դուրս սողաց իմ գրպանից, օդում մի աղեղ գծելով, ձեռքս լողաց մի կողմ... ասենք, դա բնաւ էլ իմ սեփական մարմնի մասը չէր... դա բոլորովին ուրիշ ձեռք էր... ինքնուրոյն ձեռք... Ու

յաջորդ պահին բռունցքս հանդարտ ու անմեղօրեն նստեց Կարոյի ծնօտին, ճիշտ սեղանատամների տակ: Ասես այդ տեղը նախատեսուած էր բռունցքիս համար… ու բռունցքս էլ շարունակ որոնել էր աշխարհում այդ միակ հարմարաւէտ տեղը: Այդ ամէնը ես տեսայ ամենայն մանրամասնութեամբ, ու հոգուս խորքում զարհուրում էի, հետեւելով, թէ այդ տարօրինակ բռունցքը դէպի ուր է ձգտում... Միեւնոյն ժամանակ, դա երեւի այնքան արագ կատարուեց, որ Ճիզվիտ Կարոյի ձեռքը այնպէս էլ չհասցրեց առաջ գալ:

Յետոյ ես նոյնքան որոշակիօրեն տեսայ Ճիզվիտ Կարոյի նախ՝ զարմացած, եւ ապա վախեցած աչքերը:

Յետոյ նա երերաց տեղում, մի քանի բերան օդ կուլ տուեց, եւ կամա՛ց, կամա՛ց, ինչպէս տիեզերագնացները անկշռելիութեան մէջ, լողաց դէպի գետին:

Ժամանակը դարձեալ ընկաւ իր սովորական հունի մէջ, երբ Նուարդը ճչաց.

— Նոկառ՛ ուտ...

Երբ սթափուեցի, Ճիզվիտ Կարոն արդէն փռուել էր գետնին: Գլուխս կորցրած, փորձեցի նրան բարձրացնել, բայց ծանր էր: Ուժս չպատեց:

— Ի՛նչ ես ապուշի նման կանգնել,— յուսահատ գոչեցի ես Սերոբի վրայ, որովհետեւ եթէ Կարոն ոտքի ելնէր, ապա տեղնուտեղը կը մաքրէր հաշիւս:

Սերոբն ու Նուարդը օգնեցին ինձ: Կարոն մի քանի բերան էլ օդ կուլ տուեց ու պղտոր հայեացքով մեզ նայեց:

— Ուժդ ես փորձո՞ւմ...— մրմնջաց նա:— Տե՛ս, թէ գլխիդ ի՛նչ կը բերեմ:

Զարմանալին այն էր որ նա նոյնիսկ չփորձեց պատասխան հարուած հասցնել ինձ: Թէկուզ եւ շատ թոյլ մի հարուած: Շա՛տ թոյլ: Որովհետեւ, եթէ նոյնիսկ մատով բոթէր, ապա կփռուէի հասակով մէկ ու երեւի այդպէս էլ կմնայի մինչեւ ուշ գիշեր:

Ճիզվիտ Կարոն միայն սպառնաց. «Տե՛ս, թէ գլխիդ ի՛նչ կը բերեմ»: Բայց դա արդէն հետաքրքիր չէր:

Քանի որ, երբ սպառնաց, ես դարձեալ զգացի, որ եթէ նա մատով իսկ փորձի դիպչել, ապա բռունցքս, նորից իմ կամքից անկախ, կը որոնի ու կը գտնի աշխարհի ամենահարմարաւէտ տեղը, որ նախատեսուած էր իր համար՝ Ճիզվիտ Կարոյի ծնօտի վրայ, սեղանատամների տակ:

Ես խղճահարութեամբ նայեցի նրան ու կոահեցի որ այստեղ, դարաւոր ընկուզենու տակ, այլեւս ոչինչ չունեմ անելու:

Ստուգեցի, թէ արդեո՞ք վառիչը գրպանումս է… եւ մի անգամ էլ չրխկացնելով նիկելապատ լծակը, որպէսզի իմ յուզմունքից հետք էլ չմնայ, շրջուեցի ու հեռացայ:

Կարծեմ Նուարդն էր որ կանչեց իմ յետեւից. «Տիգրա՛ն… սպասի՛ր, ես էլ եմ գալիս»: Չեմ յիշում, իսկապե՞ս կանչեց նա, թէ՞ պարզապէս ինձ թուաց. «Ես էլ եմ գալիս»:

Առանց յետ նայելու, ինքնաբերաբար արագացրեցի քայլերս: Քիչ յետոյ թեքուեցի հարեւան փողոցը, տենդօրեն մտածելով այն մասին միայն որ աղջիկների հետ չի կարելի ընկերութիւն անել:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Հանդիպում Շէկ Դավթի հետ: Պեղումներ եւ յայտնագործութիւն: Ինչպէս պէտք է վարուել դաւաճանների հետ: Հիասթափութիւն:

ԱÜò²ô մի քանի օր, բայց Ճիզվիտ Կարոն ո՛չ երեւում էր, ո՛չ էլ երեւի, յիշում էր շշմած ժամանակ յայտարարած իր սպառնալիքը: Ես էլ իմ հերթին էի խուսափում նրան հանդիպել:

Գրեթէ ամէն օր, տարբեր ժամերի, ես լսում էի Նուարդի ձայնը: Իրենց բակից նա կանչում էր ինձ, բայց ես համառօրեն չլսելու էի տալիս: Չէի ուզում հանդիպել նրան, որովհետեւ դեռ ընկուզենու տակ նստած պահից էլ բոլորովին մենակ էի զգում ինձ այս աշխարհում:

Ու հէնց այդ էր պատճառը, որ վճռեցի սկսել պեղումները: Առանց Նուարդի: Ես չգիտեմ, արդեո՞ք երբեւէ կը սկսէի այդ գործը, եթէ աշխարհում մենակ չմնայի, եթէ չլինէի հիասթափուած, եթէ վերջնականապէս չհամոզուէի, որ մարդ երբէք չի կարող իսկական, հաւատարիմ ընկեր ունենալ:

Այդ առաւօտ, նախաճաշից յետոյ, մի փոքրիկ կապոց սարքեցի, մէջը՝ լաւաշ, կանաչի ու պանիր, որպէսզի կէսօրին ստիպուած տուն չվերադառնամ, եւ ամբողջ օրն զբաղուեմ իմ պեղումներով: Վերցրեցի կարճ կոթով բահը, երկու հատ տափակացրած մեխ, ատամի հին խոզանակը, սոսնձի ու ջրաներկի վրձիններ, թիթեղեայ մի շերեփ որ ինքս էի սարքել, եւ որն այս բոլորի մէջ իմ ամենասիրած գործիքն էր:

Պեղումների վայրն արդէն վճռել էի:

Գետից այն կողմ, չհասած հինաւուրց վանքին, մի թումբ կար: Որոշել էի սկսել հէնց այդ թմբից, որովհետեւ առայժմ իմ ուժերից վեր բան էր ամբողջ բլուրը բանդել:

Վստահ էի որ մէկ օրում էլ որոշակի արդիւնքի կը հասնեմ: Ի հարկէ, գետից այն կողմ դեռ ոչ Մեքսիկա էր, ոչ Միջագետք, եւ ոչ էլ Տրոյ, իսկ թումբն էլ որեւէ քաղաքի աւերակներ իր ընդերքում թաքցնելու ոչ մի հնարաւորութիւն չուներ: Սակայն վստահ էի, ու շտապում էի յայտնաբերել մինչեւ հիմա անյայտ գանձեր, գտնել հայոց թագուհիների շքեղ զարդերը, որոնք հիմա այլեւս ոչ ոքի հագցնել չէի կարող: Ու խղճում էի ինքս ինձ: Զարդերը կը գտնեմ, ու մտովի կը խոսեմ մի երեւակայական աղջկայ հետ, որը երեւի շատ նման լինի Նուարդին: Բայց երբէք այլեւս իմ գաղտնիքները չի յայտնի ծովահէններին, որովհետեւ ընդամէնը երեւակայական աղջիկ էր:

Քայլում էի Լուսաշէնի ոլորմոլոր փողոցներով, ու մտածում, թէ զարդերը գտնելուց յետոյ ի՞նչ պէտք է անեմ: Դարձեալ թաքցնե՞մ հողի տակ, մինչեւ ինձ յաջողուի ունենալ մի այնպիսի ընկերուհի, որն համաձայնի համահաւասար կրել բոլոր յուսախաբութիւններն ու զրկանքները, թէ՞ հանձնեմ թանգարանին:

Կեանքումս ինչ էլ անելու լինեմ, համոզուած եմ, թէ դա լինելու է յանուն այն աղջկայ, որին երբ ազատեմ ծովահէնների ձեռքից, երբէք չի ծաղրի ինձ ուրիշների մօտ, միշտ հաւատարիմ կը լինի ու կը դառնայ իսկական ընկեր:

Կիսաշէն բաղնիքի մօտ կանգնած Շէկ Դավիթը կտրեց իմ մտորումների թելը: Ես անակնկալի եկայ, բայց անմիջապէս ձեռքս տարայ տաբաթիս գրպանն ու սկսեցի խաղալ վառիչի հետ:

— Բարեւ, Տիգրան,— լսեցի Շէկ Դավթի ձայնը, երբ արդէն անցնում էի նրա մօտով:

Ուրիշ ժամանակ կ'անցնէի կը գնայի: Բայց հիմա կանգնեցի ու ոտքից գլուխ չափեցի նրան: Եւ ամէնից կարեւորը՝ արհամարհեցի:

— Ո՞ւր, Տիգրան,— հարցրեց նա:

— Ի՞նչ ես ուզում:

— Ոչինչ, ոչինչ,— ահաբեկուած ասաց նա:— Հէնց այնպէս եմ հարցնում:

Ես խեթ-խեթ նրան նայեցի ու շրջուեցի որ գնամ:

— Բայց անցեալ օրը լաւ հասցրիր Ճիզվիտին, չէ՞...— վրայ տուեց նա։— Տե՛ղն էր։ Արդէն համը հանում է... Իրեն փի՛ղ է կարծում։

— Հա՞... Գուցէ՝ ռնգեղջի՞ւր։

— Ի հարկէ,— համաձայնեց Շէկ Դավիթը։— Ռնգեղջիւր... Հի՛-հի՛... Կարծում է, թե ճապոնական ու հնդկական ձեւերով կարող է մարդկանց վախեցնել...

— Ոչ մի հնդկական ձեւ էլ չկայ։

— Հաստա՞տ գիտես։

— Հաստատից էլ հաստատ։

— Իսկ ճապոնակա՞նը...

— Ճապոնական ձեւ կայ։ Բայց Կարոն փչում է։ Ուզում է հոգեբանօրեն վախեցնել,— բացատրեցի ես։

Շէկ Դավիթի դէմքը կնճռոտուեց։

— Հոգեբանօրեն վախեցնել,— կրկնեց նա։—Չէի լսել։ Լաւ խօսք է։ Հոգեբանօրեն վախեցնել... Հի՛-հի՛... Քո գնալուց յետոյ Ճիզվիտը դեռ չէր կարողանում ուշքի գալ։ Շշմել էր... Պա՛հ, ո՛նց էր շշմել։ Իսկ երբ խելքը գլուխը եկաւ, բժշկի աղջիկը գիտե՞ս ինչ ասաց։

— Որտեղի՞ց իմանամ... Չեմ էլ ուզում։ Շա՛տ պէտքս է։

— «Որ ասում էի Տիգրանը քեզ ցոյց կը տայ՛»,— Նուարդի ձայնին նմանեցնելով, ասաց Շէկ Դավիթը։— Հէնց այդպէս էլ ասաց։

— Հա՞,— զարմացայ ես։— Իսկ Կարո՞ն։

— Ճիզվիտն էլ փնթփնթաց, փնթփնթաց ու գնաց աղբիւր՝ լուացուելու, որպէսզի շշմածութիւնն անցնի։ Երանի քեզ,— ասաց Շէկ Դավիթը։—Կարգին ուժեղ ես։ Իսկ ինչո՞ւ առաջ չէիր հասցնում։

— Համբերում էի,— մեծահոգաբար պատասխանեցի ես։— Սպասում էի որ համբերութեան բաժակը լցուի։

— Համբերութեան բաժակը լցուի,— կրկնեց Շէկ Դավիթը։— Այսօր լաւ-լաւ խօսքեր ես ասում։ Ոչ մէկն էլ մինչեւ հիմա չէի լսել։ Պեղումների՞ ես գնում։

— Որտեղի՞ց գիտես։

— Բժշկի աղջիկն էր պատմում, որ դուք պիտի փող հաւաքեք ու գնաք պեղումների։ Ուզո՞ւմ ես, օգնեմ։ Բահը տուր ինձ։ Ծանր չի՞։

— Ծանր չի,— ասացի ես։

— Ձեռքիդ կապոցն էլ տուր,— համառեց նա։– Երեւի չես ուզում, որ օգնեմ։

Ես մի փոքր մտածեցի։ Ի հարկէ, օգնականով աւելի դիւրին կը լինի։ Ես հո չեմ կարող ամբողջ թումբը միայնակ տեղահան անել։

— Օգնի՛ր,— համաձայնեցի ես։

Շէկ Դավիթը շատ ուրախացաւ։ Բահն ու կապոցը տուեցի նրան, բայց խոզանակն ու վրձինները չվստահեցի։

Մինչեւ կամուրջ հասնելը քայլում էինք լուռ։ Երբեմն աչքի ծայրով նայում էի Շէկ Դավթին։ Նրա պեպենոտ դէմքը փայլում էր. երեւի ուրախութիւնից՝ որ համաձայնեցի իրեն էլ պեղումների տանել ինձ հետ։ Փայլում էր նաեւ ուղղակի իմաստով, որովհետեւ կարգին քրտնել էր։

Իսկ իմ ականջին հեռու-հեռու մի տեղից հասնում էր Նուարդի ձայնը. «Որ ասում էի Տիգրանը քեզ ցոյց կը տա՛յ...» Ես պատկերացնում էի, թէ նա ինչպիսի երանգով է ասել, պատկերացնում էի դէմքի արտայայտութիւնը, ու մտածում էի որ այնուամենայնիւ, լաւ բան է, երբ մարդ իր սեփական ուժերով է հակառակորդների հախիցը գալիս։

Երբ եօթը-ութը տարեկան էի եւ Ռուբէնն էլ դեռ չէր գնացել սովորելու, յիշում եմ, միշտ նա էր դուրս գալիս փողոց՝ ինձ պաշտպանելու։ Այն ժամանակ ինձ ծեծում էին,

ու ես չէի համարձակւում նոյնիսկ պաշտպանուել: Ու միշտ գոհունակութեամբ ժպտում էի, երբ հասակակից ու ինձնից մեծ տղաները թողնում փախչում էին Ռուբէնի ստուերը տեսնելուն պէս: Պաշտպանութեան ամենադիւրին միջոցն էր դա, եւ ես բաւարարւում էի այդքանով: Ու երբէք, մինչեւ անցեալ օրը, ես չէի պատկերացնում, թէ որքան հաճելի է սեփական ուժի զգացողութիւնը: Ասենք, ուժն այնքան էլ էական չէր:

Կարեւորն ու հիմնականը վճռականութիւնն էր: Իսկ որտեղի՞ց ծնուեց այդ վճռականութիւնը:

Վառիչի՞ց:

Ծիծաղելի է: Ազնիւ խօսք: Ի՜նչ վառիչ:

Թալիսմանի կախարդական ուժի՞ց...

Բայց վառիչը՝ վառիչ է: Թալիսմանն էլ...

Ուրեմն՝ ինչի՞ց: Հաւատի՞ց:

Այո՛, ի հարկէ, հաւատից: Վառիչը կամ թալիսմանը պարզապէս յիշեցրին, որ պէտք է ինքնավստահ լինել: Պէտք չէ յուզուել, վախենալ: Եթէ այդ ամէնը եղբայրս հէնց այնպէս ասած լինէր, յաջորդ պահին արդէն մոռացած կը լինէի: Բայց վառի՜չը... Դա արդէն ուրիշ բան էր:

Բոլոր տեսակի ծովահէններին իրենց տեղը նստեցնելու համար մարդ պէտք է հաւատ ունենայ, ինքնավստահութիւն եւ հոգեկան կորով: Իսկ հաւատն էլ լինում է այն դէպքում միայն, երբ արդարամիտ ես: Հակառակ դեպքում ոչինչ չի փրկի:

Ես դարձեալ նայեցի Շէկ Դավիթին ու ժպտացի: Եթէ իմ այս մտքերը լսէր, ապա արդէն խառնած կը լինէր բոլոր բառերն ու արտայայտութիւնները, որոնք անծանօթ են նրան:

«Որ ասում էի Տիգրանը քեզ ցոյց կտայ՜»...»

Մեծ բա՜ն...

— Դեռ շա՞տ ենք գնալու,— կամուրջն անցնելուց յետոյ հարցրեց Շէկ Դավիթը:

— Քիչ մնաց: Քեզ ուղարկե՞լ են...

Շէկ Դավիթը անմիջապէս հասկացաւ, թէ ինչի մասին է խօսքը:

— Ես եմ եկել:

— Բայց դու նրանց ընկերն ես:

— Ի՜նչ ընկեր...— հեգնանքով ու շնչակտուր ծոր տուեց Շէկ Դավիթը եւ մերկ բազուկով վերից վար սրբեց դէմքին փայլող անտանելի քրտինքը:— Ես վախենում եմ նրանցից:

— Իսկ հիմա՞:

— Չեմ վախենում: Դու այնպէս հասցրեցիր Ճիզվիտին որ...

— Ուրեմն, հիմա էլ ինձնից ես վախենում:

— Չէ՛,— մի փոքր կասկածանքով, մի փոքր էլ վստահութեամբ ասաց Շէկ Դավիթը:— Դու ինձ չես նեղի:

— Ի՞նչ գիտէս:

— Գիտեմ, էլի՛,— հոգնած ժպիտով ասաց Շէկ Դավիթը, եւ բեռը մի ձեռքից միւսը տեղափոխեց:— Ես հիմա ուրիշ բանի վրայ եմ զարմանում: Ախր դու միշտ էլ կարող էիր ինձ ծեծել:

— Դրա կարիքը չկար:

— Ի հարկէ՛, չկար,— ուրախացած հաստատեց Շէկ Դավիթը:— Դեռ չհասա՞նք...

— Հասանք:

— Որտե՞ղ է:

— Հէնց այս թումբը:

— Ճի՞շտ,— չհաւատաց Շէկ Դավիթը:—Այս թմբի տակ գանձե՞ր կան:

— Ըհը...

— Ի՞նչ գիտես: Եթէ գանձ լինէր, վաղուց փորած հանած կը լինէին:

— Դրա համար մարդ պետք է հոտառութիւն ունենայ,— ասացի ես:— Նստիր մի քիչ շունչ առնենք:

— Ամբողջ թումբը քանդելո՞ւ ենք,— ահաբեկուած հարցրեց Շէկ Դավիթը:

— Ամբողջ թումբը:

— Իսկ թոյլ կը տա՞ն:

— Ո՞վ պիտի արգելի: Սովորական թումբ է:

— Գուցէ...— Շէկ Դավիթը վախեցած շուրջը նայեց ու լռեց:

— Ի՞նչ:

— Ոչինչ:

— Ինչ որ բան էիր ուզում ասել: Գուցէ՞...

— Ասում եմ, գուցէ սա գերեզման է, հը՞...— շշուկով ասաց Շէկ Դավիթը:—Ախր ո՞նց կը լինի:

Այդ մասին բոլորովին չէի մտածել: Ու մարմինս

մի տեսակ փշաքաղուեց: Շատ հաւանական է: Ժամանակին եկեղեցիների ու վանքերի շրջակայքում գերեզմաններ են եղել: Դա յայտնի բան է: Բայց ինչպե՛ս մտքովս չէր անցել: Զգացի, որ մատներիս ծայրերը սառչում են:

— Հիմար բաներ ես ասում,— շշնջացի:

— Եթէ յանկարծ...— Շէկ Դավիթը դարձեալ լռեց: Ու քիչ յետոյ ասաց.– Ես վախից կը մեռնեմ: Տեղնուտեղը:

— Չես մեռնի,— ասացի ես:

— Կը մեռնեմ: Դու չգիտես: Արի յետ դառնանք:

— Կարծում ես հնէաբանները գերեզմանները չե՞ն պեղում,— գոչեցի ես:— Միայն թե նրանք ոչ թե գերեզման են ասում, այլ՝ դամբարան: Իսկ դամբարաններ պեղելիս ոչ մի սարսափելի բան էլ չի պատահում: Ի՞նչ կայ որ...

— Դամբարա՞ն:

— Կամ էլ, եթէ խօսքը վերաբերում է Եգիպտոսին՝ բուրգ: Փարաւոնների մումիաները այդ բուրգերի մէջէին յուղարկաւորում: Չե՞ս լսել: Վերջին հաշուով այդ բուրգերն էլ են դամբարաններ: Վեր կաց... Սկզբում մի քիչ դու փորձիր: Յետոյ՝ ես:

— Ուրեմն՝ դամբարա՞ն:

—Դե՛հ, վեր կաց,— այլեւս չդիմացայ ես:

— Հոգեբանօրե՞ն ես վախեցնում,— բողոքեց Շէկ Դավիթը: Բայց եւ այնպէս բահը վերցրեց ու ոտքի ելաւ:

Ես չկարողացայ զսպել ծիծաղս:

— Դե՞հ:

Շէկ Դավիթը բահի սուր եզրը սեղմեց գետնին ու ամբողջ ուժով ընկաւ վրան: Բահն աստիճանաբար խրուեց հողի մէջ, ու քիչ յետոյ թմբի վրայ արդէն սեւին էր տալիս փոքրիկ մի խոռոչ: Փորուածքի մէջ սկսեցին գալարուել մի քանի անձրեւաորդ, իսկ մի փոքր հեռու, արեւի ճառագայթների տակ սկսեց տապակուել մի հարսնեակ:

Բահը երկրորդ անգամ խրուեց հողի մէջ:

Յետոյ՝ երրորդ, չորրորդ...

Շէկ Դավիթը մերթ ընդ մերթ սրբում էր քրտինքը ու նայում ինձ: Նա դեռ չէր պատկերացնում գերեզմանի ու դամբարանի տարբերութիւնը եւ վախենում էր:

Քիչ յետոյ, երբ Շէկ Դավիթը արդէն մի կողմի վրա էր շրջել թմբի կատարը, ես նրա ձեռքից վերցրեցի բահն ու սկսեցի ինքս փորել: Հողը փխրուն էր, խոնաւ: Փորելն այնքան էլ դժուար չէր: Բայց կապոյտ երկնքի կենտրոնից կախուած արեւի

սկաւառակը ուղղակի մարդ էր խաշում: Ես մի քանի անգամ դժգոհութեամբ նայեցի վեր՝ արեւին, որոշակի ուրուագծերից զուրկ այդ շիկացած զանգուածին:

Շէկ Դավիթը նստել էր գետնին ու տափակացրած մեխերից մէկով, մտազբաղ, քչփորում էր խոնաւ, սեւ գուղձերը: Քչփորում էր ու տնտղում: Եթէ նրա դէմքի այդքան մտահոգ ու մի փոքր էլ անտարբեր արտայայտութիւնը չլինէր, համոզուած կարող էի ասել, որ նա գուղձերի մէջ անպայման գանձ է որոնում: Սակայն, ի դէպ, դա եւս բացառուած չէր:

— Ի զուր ես տանջւում,— բահի կոթին հենուելով, նկատեցի ես:— Գանձը դեռ խորն է:

— Հէնց այնպէս եմ քչփորում,— ասաց նա, տափակացրած մեխը խրելով հէնց նոր իմ նետած գուղձի մէջ: Եւ նոյն պահին նրա դէմքը լարուեց, հայեացքը կենտրոնացաւ, լրջացաւ, որովհետեւ մեխը դէմ առաւ ինչ որ բանի ու այլեւս առաջ չգնաց:

— Սպասի՛ր,— գոչեցի ես:

Շէկ Դավիթը ցատկեց նստած տեղից ու շփոթուած ինձ նայեց: Մօտեցայ ու զգուշութեամբ տրորեցի խոնաւ հողը: Անիծեալ անձրեւաորդերը դուրս էին պրծնում մատներիս տակից ու յուսահատութեամբ գալարւում արեւի տակ: Վերջապէս, մի կոշտ բան զգացի:

— Ի՞նչ է,— անհամբերութեամբ հարցրեց Շէկ Դավիթը:

— Խեցի,— անվրդով պատասխանեցի ես, նրան պարզելով թրծուած կաւի բեկորը:— Տե՛ս, կանթի տեղից է պոկուել: Վերցրո՛ւ:

— Ո՞ւմ է պէտք:

— Ինչպե՞ս թէ ո՛ւմ է պէտք,— բարկացայ ես:— Կաւէ սափորի բեկոր է: Վրան նախշեր էլ կան: Հիմա միւս բեկորներն էլ կը գտնեմ:

Ես սկսեցի աւելի եռանդով փորել: Բահն այլեւս չէի վստահում Շէկ Դավիթին: Իսկ խեղճը երեւի երբէք էլ չհասկանայ, թէ որքան մեծ է այդ հասարակ բեկորի նշանակութիւնը հնէաբանութեան համար:

Ահագին փորեցի, բայց ապարդիւն:

— Նախաճաշե՞նք,— վերջապէս առաջարկեցի ես, որովհետեւ արդէն յուսահատուել էի:

Արդէն ահագին հող էի շրջել, բայց միայն այդ բեկորն էր յայտնաբերուել: Ինչպե՞ս չհուսահատուէի:

— Նախաճաշենք,— Շէկ Դավթի աչքերը փայլեցին:

— Պէտք է լուացուենք,— ես նայեցի հողոտ ձեռքերիս:

— Վազե՞նք գետը:

— Վազենք:

Եւ քիչ յետոյ, արդէն լուացուած, սկսեցինք ախորժակով նախաճաշել:

— Այսպէս չի լինի,— մտածկոտ ասացի ես:— Փորում ենք, փորում, բայց արդիւնք չկայ:

— Ըհը,— հաստատեց Շէկ Դավիթը:

— Պէտք է բոլոր օրէնքներով գործենք: Ամբողջ թումբը քանդելու կարիք չկայ: Փորձուած մարդիկ պեղումները կատարում են հետեւեալ սկզբունքով: Նախ խրամատ են բացում հիւսիս-հարաւ ուղղութեամբ, յետոյ արեւելք-արեւմուտք: Հողային աշխատանքը պակասում է: Եթէ մենք խրամատ փորէինք, արդէն մի մետրի չափ խորացած կը լինէինք, չէ՞:

— Ըհը՛:

— Եւ այդ դէպքում որեւէ բան գտնելու հաւանականութիւնն էլ մեծ կը լինէր:

— Ըհը՛...

— Լսի՛ր, դու օգտուում ես որ խօսում եմ,— յանկարծ բարկացայ ես։—Եւ անդադար ուտում ես։ Գոնէ ինձ էլ մի բան թող։

— Ախր շատ անօթի եմ,— արդարացաւ Շէկ Դավիթը։

— Կարծում ես կուշտն էլ ե՞ս եմ։ Ուրեմն, խրամատ ենք փորելու...

— Այո՛, խրամատ... Մի քիչ էլ թիկն կը տանք, կը հանգստանանք ու կը սկսենք խրամատ փորել։

— Իսկ քնել չե՞ս ուզում։

— Ինչո՞ւ չէ։ Բայց արեւի տակ քնել չի կարելի։ Այս կտորը չե՞ս ուտելու։

— Ուտելու եմ,— ասացի ես։

Շէկ Դավիթը ափսոսանքով նայեց պանրի փոքրիկ կտորին ու հառաչեց։

— Ի՛նչ է, համով չէ՞ր։

— Շատ համով էր, բայց քիչ էր,— ասաց նա։

— Չգիտէի, թէ քեզ կը հանդիպեմ։ Դե՛հ, մի ծուլանա։ Վե՛ր կաց։ Ուրեմն, փորում ես հիւսիս-հարաւ ուղղութեամբ։ Զգոյշ կը լինես։ Եթէ բահը որեւէ բանի դիպչի, սկսիր ձեռքերով քանդել։ Թէ չէ, մէկ էլ տեսար, կը տաս ամէն բան կը փչացնես։

Շէկ Դավիթը հնազանդօրեն գործի անցաւ։

Իսկ ես, ճիշտն ասած, արդէն ձանձրացել էի։ Գտնուած խեցին ինձ այլեւս չէր ոգեւորում։ Բայց չէի ուզում յայտնի անել, թէ ձանձրացել եմ, ու արդէն ուզում եմ տուն վերադառնալ, պառկել թախտին ու կարդալ, ասենք նոյն Շլիմանի մասին, որին զարմանալի կերպով յաջողուեց հինաւուրց քաղաք յայտնագործել։ Իսկ այս թմբի տակ ի՞նչ քաղաք... Ի՞նչ դամբարան... Եթէ Շէկ Դավիթը չլինէր, ես հէնց այդպէս էլ կը վարուէի։ Երբ կարդում ես պեղումների մասին, հետաքրքրութիւնից շունչդ բռնւում է։ Իսկ երբ ինքդ ես սկսում այդ պեղումները, պարզւում է՝ որ ոչ մի հետաքրքիր բան էլ չկայ… որ ձանձրալի ու հոգնեցուցիչ գործ է։ Միայն անձրեւաորդերին ես ի զուր անհանգստացնում։ Նոյն բանը պատահում է արկածային գրքերի հետ։ Կարդում ես, կարդում, դարձեալ շունչդ բռնւում է գլխապտոյտ արկածներից, իսկ իրականո՞ւմ... Ո՛չ մի արկած։ Տխուր բան է։

Շէկ Դավիթը մինչեւ գօտկատեղ արդէն փոսի մէջ էր։ Ի զուր չէ, որ նախաճաշս կերաւ։ Ինչպե՛ս է փորում։ Մինչեւ երեկոյ առաջին խրամատը պատրաստ կը լինի։ Մի քիչ էլ, ի հարկէ, ես կը փորեմ։ Իսկ վաղը... Վաղուայ գործը դիւրին է։ Միայն թէ այսօր դիմանամ մինչեւ երեկոյ։ Կարծում եմ, որ Շէկ Դավիթը ծպտուն չի հանի պեղումների մասին։ Հո խենթ չէ... Երեւի մտքում արդէն անիծում է այն րոպէն, երբ հանդիպեց ինձ ու առաջարկեց իր ծառայութիւնները։ Բայց… Հիմա թող տանջուի...

— Տիգրան, հոգնեցի,— ձայն տուեց Շէկ Դավիթը։ Փոսի միջից երեւում էր միայն նրա գլուխը։

— Փորի՛ր, փորի՛ր,— ասացի ես։

Իմ ձայնի երանգից նա երեւի մի վատ բան նախազգաց, ու թէեւ հազիւ էր կանգնում ոտքի վրայ, շարունակեց հողը դուրս նետել։ Ու գրեթէ այդ պահին էլ ես մի չրխկոց լսեցի։ Յետոյ Շէկ Դավթի գլուխն անհետացաւ։ Յաջորդ վայրկեանին փոսի միջից լսուեց նրա ճիչը.

— Տիգրա՛ն, տես ի՛նչ գտայ։

Աշխարհում ամէն բան մոռացած, ես մի թռիչքով յայտնուեցի Շէկ Դավթի մօտ։

— Ի՞նչ ես գտել։

Փոսից նա ինձ պարզեց միջին մեծութեան մի թաս։ Մետաղեայ թաս։

— Ուրիշ չկայ՞։

— Չկայ։

Իսկական մետաղեայ թաս էր դա։ Տեսնես ո՞ր իշխանն է այդ թասում լուացուել... Նայեցի փոսի մէջ։

— Ոչի՞նչ չկայ։

— Չկայ,— ճակատի քրտինքը սրբելով, ասաց Շէկ Դավիթը։— Դուրս եմ գալիս, Տիգրան,— խեղճ-խեղճ աւելացրեց նա։— Մի քիչ էլ դու փորիր, եթէ ուզում ես։

— Դուրս արի,— համաձայնեցի ես։— Լաւ թաս է։

Շէկ Դավիթը մի կերպ դուրս ելաւ փոսից եւ հոգոց հանելով, նստեց քիչ հեռու։

— Վաղը կը տանեմ Նաթին ցոյց տալու,— թասը զննելով ասացի ես։— Այսպիսի թաս երբէք չեմ տեսել։ Երեւի հինգ-վեց հարիւր տարուայ կը լինի։

— Հինգ-վեց հարի՞ւր...— զարմացաւ Շէկ Դավիթը։

— Հապա ի՞նչ ես կարծում։ Վախեցիր, որ հազար տարուայ չլինի։

— Իսկ ինչո՞ւ վախենամ։

Ես թասը դրեցի մի կողմ ու կանգնեցի նրա գլխավերը։

— Ինչու վախենա՞ս... Հըմ... Փորելը լա՞ւ էր։

Շէկ Դավիթը միայն աչքերը ճպճպացրեց։

— Չե՞ս հասկանում։

— Հասկանում եմ... Ախր հոգնել եմ։

— Եւ չգիտէս էլ, թէ ինչո՛ւ պէտք է վախենաս, չէ՞...

Նա գլուխը թափահարեց։ Ի հարկէ, չգիտէր։

— Իսկ ընկերներին դաւաճանելը, քո կարծիքով, լա՞ւ բան է։

— Ես... ես քեզ չեմ դաւաճանել...— կմկմաց նա։

— Բայց ծովահէններին... ծովահէններին դաւաճանե՞լ ես։

— Դու... ախր... ես... դու նրանց...

— Վաղն էլ ինձ կը դաւաճանես, չէ՞,— վրայ էի տալիս ես։

— Չէ... ես...

— Գիտեմ...— հեգնանքով ժպտացի ես։—Դե՛հ… հիմա վեր կաց ու փախի՛ր, քանի չեմ հասցրել։

— Ախր ինչո՞ւ...

— Դե՛հ...

Շէկ Դավիթը ոտքի կանգնեց ու խղճալի հայեացքով, վարից վեր նայում էր ինձ։

— Լաւ տանջուեցիր, չէ՞... Սա քեզ պատիժ, որ մէկ էլ ընկերներիդ չդաւաճանես։ Հիմա փախի՛ր։ Փախի՛ր...— գոչեցի ես։

Նա շրջուեց ու կարծեմ լաց լինելով, վազեց դեպի գետը։

Ես հաւաքեցի գործիքները, վերցրի մետաղեայ թասը, մի անգամ էլ նայեցի փոսի կողմը, մտքումս հաստատ որոշելով որ պեղումներ այլեւս չեմ անելու եւ աշխարհի բոլոր գանձերն էլ միասին վերցրած՝ ինձ երբէք ու երբէք չեն յուզի։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ

Հանդիպում Նաթանայէլի մօտ։ Հիշատակութիւն հինաւրց ձեռագրերի գրադարանի մասին։ Հաշտութիւն ճիշտ այն ժամանակ, երբ Տիգրանը վերջնականապէս ձանձրացել է ծովահէններից, պեղումներից եւ նոյնիսկ… կեանքից։

ՈՒՂՂԱՆԿԻՒՆԻ գորշ հենքի վրայ յայտնուեց Գլասեւոս պապը։ Մոխրագոյն գոգնոցի եզրով նա անշտապ սրբեց կաւոտ ձեռքերն ու հարցրեց.

— Դու է՞լ եկար։

Ես գլխով արեցի։

— Հա՛... Մի խօսքով, չէք թողնում, որ մարդն աշխատի։ Այդ ի՞նչ թաս է։

Ես ուսերս վեր քաշեցի։

— Հազար տարուայ կը լինի,— քմծիծաղեց Գլասեւոս պապը։— Որտեղի՞ց ես ճարել։

Շանչս բռնուեց։

— Հազար տարուայ՞... Ի՞նչ իմացար, պապ։

Գլասեւոս պապը մատով հարուածեց մետաղեայ թասի եզրին, յետոյ եղունգով քերեց, նորէն հարուածեց ու ասաց.

— Պղինձ է… Ներս են։ Ինչո՞ւ կանգնեցիր մնացիր։

— Ուրիշ մարդի՞կ էլ կան,— վարանած հարցրեցի ես։— Գուցէ մի ուրիշ անգամ...

— Ոչինչ, ոչինչ... Միեւնոյն է, արդէն խանգարեցին մարդուն… Բայց չի էլ դժգոհում… Գիւղ է եկել իբրեւ թէ հանգիստ աշխատելու… Բայց ի՛նչ աշխատել…

Գլասեւոս պապը յետ քաշուեց եւ ինձ առաջ թողեց։ Յետոյ գոցեց դուռը, եւ ես յայտնուեցի կիսամութ, երկար միջանցքում։

— Ես էլ եմ գործի վրայ,— բացատրեց նա։— Կաւն էլ սպառուում է։ Մի երկու օր յետոյ գնալու եմ ձորը։ Կաւ քանդելու… Գուցէ կ՚օգնե՞ս…

— Կ՚օգնեմ, Գլասեւոս պապ,— խոստացայ ես։ Կաւ քանդելիս՝ նա միշտ էլ գիւղի տղաներից մէկնումէկին խնդրում էր որ իրեն օգնեն։

— Կը սպասեմ,— ասաց պապը։— Մտի՛ր,— նա գլխով ցոյց տուեց միջանցքի ծայրին գտնուող դուռը։— Իսկ ես գնամ գործիս…

Պապը դուրս ելաւ պատշգամբ։ Իսկ ես դռան մօտ կանգնած՝ ականջ դրեցի։ Ներսից խուլ ձայներ էին լսւում։ Գուցէ… ծովահէննե՞րն են… Քիչ էր մնում մետաղէ թասը վերցնէի եւ փախչէի… Յետոյ անդրադարձայ որ բոլորովին աւելորդ տեղն եմ յուզւում։ Մի քանի անգամ չրխկացրեցի իմ վառիչը, յետոյ ծնկով թեթեւակի հրեցի դուռը։ Փեղկը մեղմ ճռռոցով պտտուեց ծխնիների վրայ։ Ես կկոցեցի աչքերս, որովհետեւ արեւի ճառագայթները հեղեղի պէս լցուեցին կիսամութ միջանցք։

— Օհո՛…— բացականչեց Նաթը։— Տիգրանն է։ Իսկ դուք ասում էիք թէ ոտքով-գլխով կորել է։ Բարե՛ւ, Տիգրան։

— Բարեւ ձեզ,— ասացի ես, դիմելով ոչ միայն Նաթին, այլեւ կլոր ճաշասեղանի առաջ նստած Լեոպարդո Սերոբոյին ու Նուարդին։ Լեոպարդո Սերոբոն հառաչանքի պէս ինչ որ ձայն հանեց եւ ծուռ-ծուռ նայեց ինձ։ Իսկ Նուարդը իբր այնպէս էր տարուած սեղանին դրուած գրքով որ նոյնիսկ չզգաց, թէ մարդ մտաւ սենեակ։

— Նստիր, Տիգրան,— հրաւիրեց Նաթը։— Այդ ի՞նչ է։

— Թաս,— ասացի ես։— Պղնձէ թաս։ Հազար տարուայ։ Գլասեւոս պապն ասաց։ Հազար տարուայ պղնձէ թաս։ Երեկ եմ պեղել։

Նուարդը չդիմացաւ ու գողունի նայեց իմ կողմը։ Մեր հայեացքները մի պահ հանդիպեցին… Ես ուղղակի չհասցրեցի ժպտալ, ու նա դարձեալ սկսեց զննել սեղանին դրուած գիրքը։ Եթէ թէկուզ մի վայրկեան ուշ փախցնէր հայեացքը, ես անպայման կը ժպտայի, ու մենք կը հաշտուէինք։

Ճիշտն ասած, դեռ կարգին էլ չգիտէի, թէ մենք գժտուա՞ծ ենք արդեօք։ Ես անցեալ օրը իսկապէս վիրաւորուեցի, նրան տեսնելով ծովահէնների հետ, վիրաւորուեցի, երբ յանկարծ պարզուեց որ նա ամէն բան, նոյնիսկ իմ դրած մականունները յայտնել է իմ հակառակորդներին... Բայց ինչո՞ւ էր Նուարդը սպառնացել նրանց։ Մինչեւ հիմա էլ չէի հասկանում։ Եւ այդ բոլորը՝ ի զուր։ Ես պեղումները կը կատարէի Նուարդի հետ։ Թէեւ պղնձէ թասը բոլորովին էլ հայոց իշխանուհիների եւ թագուհիների զարդարանք չէ, բայց որքա՛ն լաւ կը լինէր, եթէ հազար տարուայ այդ իրը միասին յայտնագործած լինէինք։

Իսկ Նաթանայէլը ուշադիր զննում էր թասը։ Սկզբում, Գլասեւոս պապի պէս թրխկացրեց մատով, եղունգով քերեց գորշ մակերեւոյթը, շրջեց, նայեց տակը, յետոյ

խոնաւ լաթով սրբեց, յետոյ՝ չոր լաթով սրբեց, ու երբ թասի տակը փայլեց ոսկու պէս, Նաթը ժպտաց:

— Որտեղի՞ց ես գտել այս հրաշքը,— հարցրեց նա: Ես զգացի, որ ինչ որ բան կարգին չէ:

— Վանքին չհասած մի թումբ կայ: Երեկ ամբողջ օրը փորել եմ...

— Թասը հազար տարուայ չէ,— ասաց Նաթը:— Նոյնիսկ հարիւր տարուայ էլ չէ: Սերոբ, հապա՛, տուր խոշորացոյցը:— Նաթը սեւ շրջանակով խոշորացոյցը մօտեցրեց թասին:— Ահաւասիկ, թուականը... Սա ընդամէնը քսանութ տարուայ թաս է:— Նա խոշորացոյցը դրեց սեղանի եզրին ու կրկնեց.— Քսանութ տարուայ: Այո՛:

Ես շփեցի ճակատս: Նուարդը թողեց գիրքն ու մօտեցաւ մեզ:

— Յետոյ ի՞նչ,— ասաց նա:— Պարտադի՞ր է, որ անպայման հազար տարուայ լինի:

— Ո՛չ, ի հարկէ, ոչ,— համաձայնեց Նաթը:—Կարեւորն այն է, թէ այս յայտնագործութիւնը ի՞նչ կը պատմի մեզ: Հէնց այդ տեղեկութեան կարեւորութեամբ էլ կ՚արժէքաւորուի Տիգրանի գտածոն: Շարունակելո՞ւ ես պեղումները, Տիգրան:

Ուսերս վեր քաշեցի: Իրրեւ՝ դեռ չգիտեմ: Բայց հոգուս խորքում անիծում էի եւ՛ թումբը, ե՛ւ այս թասը, ե՛ւ հնէաբանութիւնը՝ ընդհանրապէս: Լաւ կը լինէր, եթէ ոչինչ էլ չգտնէի: Քսանութ տարուայ... Ո՛վ գիտէ, թէ այս թասը ինչպէ՛ս է յայտնուել թմբի տակ: Ո՛ւմ թասն է եղել... Եւ հիմա էլ ինչ կարեւորութիւն կարող է ունենալ:

Չէ՛ մի... Յայտնագործութի՛ւն...

— Հիսաթափուե՞լ ես,— հարցրեց Նաթը:

— Թասի՞ց:

— Չէ՛... Պեղումներից:

— Ինչո՞ւ պիտի հիսաթափուի,— իմ փոխարեն խօսեց Նուարդը:— Յետոյ ի՞նչ... Տիգրանը գոնէ մի թաս գտել է: Իսկ հնէաբանները երբեմն ամիսներով են պեղում, եւ ոչինչ էլ չեն գտնում: Չէ՞, Տիգրան:

— Ըհը,— գլխով արեցի ես:

— Սխալն էլ այն է, որ դու պատահական թումբ ես փորել: Եւ պատահականօրեն էլ գտել ես մի պղնձէ թաս որ նոյն յաջողութեամբ կարող էիր նաեւ չգտնել,— ասաց Նաթանայէլը:—Հնէաբանն առաջին հերթին պէտք է պատմութիւնը լաւ իմանայ: Իսկ պեղումները,— Նաթը ծիծաղեց,— պեղումները դեռեւս հնէաբանութիւն չեն: Կարելի է հնէաբան լինել առանց պեղումներ կատարելու, ինչպէս Մոնթելիուսը: Ոչ ոք չի կարող ասել, թէ Մոնթելիուսը երբեէ պեղումներ կատարե՞լ է արդեօք: Բայց ամէն մի հնէաբան շատ լաւ գիտէ նրա սքանչելի աշխատութիւնը՝ Եւրոպայի նէոլիթի, բրոնզի եւ երկաթի դարերի մանրակրկիտ ժամանակագրութիւնը:

— Իսկ Շլիմանը...— ուզեցի առարկել ես:

— Շլիմանը պարզապէս սիրում էր հնէաբանութիւնը: Նա մասնագէտ չէր: Այդ պատճառով էլ պեղումների ժամանակ անուղղելի սխալներ էր կատարում:

— Ուրեմն, այլեւս չմտածեմ պեղումների մասին:

— Ոչ... Մտածի՛ր: Բայց ամէնից առաջ պէտք է սովորել,— ասաց Նաթը:— Դու գնացել թումբն ես փորել եւ առանց որեւէ արդիւնքի: Իսկ ես, օրինակ, այս քանի օրը տանը նստած արդէն պարզել եմ, որ մօտակայքին մի հարուստ գրադարան կայ թաքցրած: Հին ձեռագրերի գրադարան:

Նաթը սեղանից վերցրեց սրբատեղիում գտած պատառիկներից մէկը:

— Խնդրեմ:

Ես շուռումուռ տուեցի պատառիկը, ուշադիր զննեցի մանրանկարները, բայց գրադարանի մասին ոչ մի ակնարկ չկար: Թերթի եզրն այրուած էր, յետոյ երեւի ջրի

մէջ էր ընկել, որովհետեւ էջը յիշեցնում էր գունաթափ քարտէզ: Լուսանցքի վրայ, շագանակագոյն թանաքով ինչ որ մէկը ժամանակին ինչ որ բան էր գրել, որն անընթեռնելի էր ու կիսատ: Կրակը լիզել էր նախադասութեան մի մասը:

— Սա տասներկուերորդ կամ տասներեքերորդ դարի սկիզբների ձեռագիր է,— ասաց Նաթը:

— Իսկ մակագրութի՞ւնը,— հարցրեցի ես:

— Շագանակագոյն թանաքո՞վը... Դա էլ երեւի մի ութսուն-հարիւր տարուայ պատմութիւն ունի:

— Գրադարանի մասի՞ն է:

— Ոչ, գրադարանի մասին յիշատակուած է հիմնական բնագրի մէջ,— ասաց Նաթը:— Այստեղ... Երկու տողը բոլորովին չի վերաբերում բնագրին: Երեւի արտագրողը հոգնել ու մի փոքր դադար առնելուց յետոյ մեքենաբար գրել է այն, ինչ նրան մտահոգութիւն է պատճառել: Եթէ թարգմանենք ժամանակակից հայերէնի, ապա այդ երկու տողը կարելի է հասկանալ այսպէս, «...եւ արհաւիրքից փրկեցին մատեանները, եւ թաքցրեցին: Համբերութիւն տուր մեզ, Տէ՛ր, եւ տոկունութիւն... համար»: Հասկացա՞ր:

Անհասկանալի ոչինչ չկար, բացի այն բանից, թէ ի՞նչ գործ ունի այստեղ Լեոպարդո Սերոբոն, որն աթոռին ծնկած, հենուել էր սեղանին ու իբր մեծագոյն ուշադրութեամբ զննում էր գիրքը:

— Մենք որոշել ենք գտնել այդ գրադարանը,— ասաց Նուարդը:— Եթէ դու էլ միանաս մեզ, շատ լաւ կը լինի:

— Ե՞ս... Ո՞ւմ հետ...

— Մեզ հետ,— ասաց Նուարդը:— Իսկ գրադարանը գտնելուց յետոյ միշտ էլ կարող ենք սկսել մեր իսկական պեղումները:

— Մե՞ր...

— Միասին պեղումների ենք գնալու, չէ՞,— յիշեցրեց Նուարդը:

— Տեսնենք,— անորոշ պատասխանեցի ես:— Չգիտեմ: Իսկ գրադարանի հետ ես գործ չունեմ: Չեմ էլ ուզում գործ ունենալ: Յատկապէս այդ... Այդ...

Լեոպարդո Սերոբոն անհանգիստ շարժուեց աթոռի վրայ:

— Ինքներս կը գտնենք,— մրմնջաց նա:—Կարոն ասում է որ ամբողջ վանքը շուռ կը տայ:

— Շտապում էք,— ժպտաց Նաթանայէլը:— Իսկ հնէաբանութիւնը շտապողականութիւն չի սիրում: Վանքն էլ շուռ տալու կարիք չկայ: Դժուար թէ գրադարանը այնտեղ լինի:

— Ի՞նչ գիտէք,— հարցրեց Լեոպարդո Սերոբոն:

— Չգիտեմ, ենթադրում եմ,— պատասխանեց Նաթը:— Ինչի՞ց են փրկել մատեանները, ինչո՞ւ են թաքցրել:

— Այդ տարիներին մոնղոլները արշաւել էին Հայաստանի վրայ,— ասացի ես:— Դրա համար էլ երեւի թաքցրել են:

— Ճիշտ է: Միանգամայն ճիշտ է,— ասաց Նաթը:— Տասներեքերորդ դարը շատ ծանր ժամանակաշրջան է եղել ոչ միայն մեր, այլեւ միւս քաղաքակիրթ ժողովուրդների համար: Թաթար-մոնղոլական արշաւանքների ընթացքին ոչ միայն ֆիզիկական, այլեւ հոգեւոր, մշակութային արժէքների բնաջնջում է եղել: Եւ ես կարծում եմ որ ձեռագրերը այդ բնաջնջումից փրկելու համար շատափոյթ թաքցրել են: Հեռու տանել չէին կարող: Եւ պատահական որոնումներ չկատարելու համար անհրաժեշտ է ամէնից առաջ ուսումնասիրել այն ամէնը, ինչ ունենք մեր ձեռքի տակ: Իսկական հնէաբանութիւնն սկսւում է գրասեղանի առջեւից, տղաներ: Եւ

գրասեղանի առաջ էլ աւարտւում է: Պեղումները հիմնական աշխատանքի մի փոքրիկ օղակն են միայն:

Նաթը ոգեւորուել էր: Իսկ ես այդ ամէնը լսում էի հէնց այնպէս, ականջիս ծայրով:

Քսանութ տարի...

Պղնձէ թասը այլեւս քարշ չեմ տայ տուն, հէնց այստեղ էլ կը թողնեմ: Իբր՝ մոռացայ տանել: Գլասեւոս պապը թող կաւ հունցի թասի մէջ. շատ հարմար է:

— Գրադարան լինէր՝ վաղուց գտած կը լինէին,— ասացի ես:— Ի զուր չարչարանք է: Երեկ ամբողջ օրը փորեցի, փորեցի ու խնդրեմ...

Նաթը ծիծաղեց ու գլուխն օրորեց:

— Դու այսօր պարզապէս անտրամադիր ես, Տիգրան: Ճի՞շտ եմ գուշակում:

Ես գլխով արեցի ու ոտքի ելայ:

— Ոչինչ,— սիրտ տուեց Նաթը:—Միանգամից ոչինչ չի լինում:

— Տիգրան, ես էլ եմ գալիս,— ասաց Նուարդը:— Սերոբ, դու Կարոյին սպասիր: Ես գնում եմ: Տիգրանի հետ գործ ունեմ: Վաղը կը հանդիպենք:

— Այսօր երեկոյեան ենք պայմանաւորուել,— առարկեց Լեոպարդո Սերոբոն:

— Երեկոյան ոչինչ էլ չենք կարող անել,— ասաց Նուարդը, յետոյ բռնեց ձեռքս ու քաշեց դէպի դուռը:

— Էլ ինչո՞ւ սպասեմ,— Լեոպարդո Սերոբոն ոտքի ելաւ:— Ես էլ եմ գալիս:

— Նստի՛ր, նստի՛ր,— ասաց Նաթը:— Ես քեզ հետ դեռ գործ անեմ:— Յետոյ դարձաւ մեզ ու գլխով նշան արեց. «Հանգիստ գնացեք: Ես Սերոբին կը պահեմ»: Գոնէ ես այդպէս հասկացայ, որովհետեւ Նաթի աչքերը շատ հաճելի ու մտերմաբար էին ժպտում:

Մութ միջանցքում ես ձեռքս ազատեցի ու կանգնեցի:

— Գնանք,— ասաց Նուարդը: Բայց ես մեխուել մնացել էի: Նուարդը շշուկով հարցրեց.— Դու գիտէի՞ր, որ այստեղ եմ:

— Չէ: Եթէ իմանայի...

— Ես կարծեցի, թէ գիտէիր:

— Եթէ իմանայի՝ չէի գայ,— ասացի ես:

Մենք լուռ դուրս ելանք փողոց: Նուարդը մի քայլ առաջ անցաւ, ու թուաց, թէ նա ուզում է հեռանալ: Բայց շրջուեց ու կանգնեց իմ դիմաց:

— Ինչպե՞ս թե՝ չէիր գա:

— Հէնց այնպէս:

— Հոտե՞լ ես:

— Իսկ դու գնա՝ ծովահէնների հետ ընկերութեան արա:

Նուարդի աչքերը փայլեցին: Ես յետ-յետ գնացի, որովհետեւ կեանքումս աղջիկների հետ չեմ կռուել: Ասենք, տղաների հետ էլ գլուխ չեմ դրել, եթէ չհաշուենք անցեալ օրուայ դէպքը:

— Ուրեմն, դրա համա՞ր ես մենակ պեղումների գնացել:

— Մենակ չեմ գնացել: Շէկ Դավիթի հետ էի:

— Ինչո՞ւ ինձ էլ չասացիր:

— Որովհետեւ ես ծովահէնների հետ գործ ունենալ չեմ ուզում:

— Արդէն ես է՞լ եմ ծովահէն:

— Ծովահէնուհի ես,— ճշտեցի ես, ու Նուարդը բարկանալու փոխարեն, ծիծաղեց:— Ճիզվիտը քեզնից վախենում է,— ասաց նա:—Սերոբն էլ...

— Ի զուր: Ես նրանց չեմ խնդրել որ վախենան:

— Չես խնդրել,— համաձայնեց նա:— Ստիպել ես:

— Ոչ էլ ստիպել եմ,— ասացի ես: Եւ քիչ լռելուց յետոյ աւելացրի.— Ես պարզապէս ձանձրացել եմ:

— Ինչի՞ց:

— Ծովահէններից, պեղումներից... կեանքից:

— Կեանքի՞ց էլ,— զարմացաւ Նուարդը:— Երանի քեզ...

Ես յանկարծ ուզեցի լաց լինել: Որովհետեւ շատ տխուր բան է կեանքից ձանձրանալը:

— Չեմ ուզում... չեմ ուզում, որ դու ձանձրանաս ամէն ինչից,— աղերսեց Նուարդը:

— Իսկ ես...— ասացի կոկորդիս դեմ առած կոշտը կուլ տալով,— իսկ ես ուզում եմ ձանձրանալ: Եթէ ճար լինէր, հէնց այսօր էլ կը գնայի Մեքսիկա: Ջունգլիներ:

Նուարդը քնքշանքով շոյեց այտս: Մեծի նման: Ես շշմած նայեցի նրան:

— Ջունգլներում գիշատիչները կը յօշոտեն քեզ,— լուրջ ասաց նա, թէեւ աչքերը ժպտում էին:

Ես դարձեալ յուզուեցի:

— Գիշատիչները...— կարկամեցի ես. օդը չէր բաւականացնում:— Ես նրանց հետ... ընկերութիւն կ'անեմ... Պիթոնի հետ, ռնգեղջիւրի հետ... հովազի հետ ընկերութիւն կ'անեմ:

— Իսկ ինձ հետ՝ չես ուզում...— հառաչեց Նուարդը:— Ախր այդ ծովահէնները վախկոտ, լաւ տղաներ են: Ես նրանց ասել էի, որ եթէ ուզենաս՝ բոլորի հախից կը գաս: Չհաւատացին: Նոյնիսկ ծաղրում էին: Իսկ այդ Շէկը տնազ էր անում: Ափսո՛ս որ նրան էլ չհասցրիր:

— Ես կռիւ չեմ սիրում: Չգիտեմ, թէ այդ օրն էլ ոնց եղաւ:

— Նրանք մեզ այլեւս չեն նեղացնի: Չե՞ս հաւատում... Նրանք տեսան, որ մենք ուժեղ ենք: Չեն նեղացնի... Եւ մենք այս հեռաւոր ցամաքի վրայ կը փորձենք նրանց հոգու մէջ ազնիւ զգացումներ արթնացնել: Նրանք կը զղջան, կը սկսեն բարի գործեր անել, ու երբ մի որեւէ նաւ գայ ու մեզ այստեղից տանի, մենք նրանց կը պաշտպանենք: Կ'ասենք որ դարձել են ազնիւ մարդիկ, կը փրկենք կախաղանի օղակից:

Ես լուռ լսում էի Նուարդին:

— Իսկ դու ինձնից նեղացել ես, հա՞:

Ես նայեցի կապոյտ-կապոյտ երկնքով ճախրող բազէին:

— Ուզում եմ որ հաշտուենք,— ասաց Նուարդը:

Բազէն քարի պէս սուրաց դէպի վար ու անհետացաւ:

«Երեւի որս ճանկեց», մտածեցի ես:

— Տիգրան, ես հաշտուել եմ ուզում:

— Որ ուզում ես՝ հաշտուենք,— զիջեցի ես:

— Այդպէս չեն հաշտւում,— ասաց Նուարդը. յետոյ մօտեցաւ ու համբուրեց այտս:— Հիմա էլ դու համբուրիր,— ասաց նա, այտը դէմ անելով:

Ես շուարած ու շփոթուած նայում էի աշխարհին:

— Դե՛,— ասաց Նուարդը:

Իմ շրթունքները հազիւ շփուեցին նրա այտին:

Աշխարհը մի տեսակ պտտուե՛ց, պտտուե՛ց... Ասենք, ոչ թէ աշխարհը, այլ ինչ որ մտքեր էին պտտո՛ւմ, պտտո՛ւմ գլխումս: Յետոյ պարզուեց որ ես իմ մտքում բոլոր պիթոններին ու հովազներին ուղարկում եմ գրողի ծոցը: Պարզուեց, որ ես չեմ ձանձրացել ո՛չ ծովահէններից, ո՛չ պեղումներից, եւ… ո՛չ էլ կեանքից...

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Երբ սկսում են հալածել անլուծելի հարցերը, մարդիկ յիշում են երեք

հրացանակիրներին: Նուաճուած ժողովուրդներից առաւել վտանգաւոր են նրանց գրքերը: Բժիշկ Սուրէնեանի անսպասելի այցելութիւնը: Աղջիկները կարող են այսօր համբուրել, բայց վաղը ապտակել:

— ԴՈՒ գիտէ՞ս, թե ով է Արման դը Սելլեք դ'Աթոս դ'Օթեւիլլը,– հարցրեց Ռուբէնը:

— Դ'Աթո՞ս,— հարցրեցի ես:

— Արման դը Սելլեք դ'Աթոս դ'Օթեւիլլի մասին է խօսքը:

— Չգիտեմ:

— Իսկ Իսահակ դը Պորտէի մասին լսե՞լ ես:

— Ոչ: Ինչո՞ւ ես հարցնում:

— Հէնց այնպէս,— ասաց Ռուբէնը:— Հոգնել եմ այն ամէնից, ինչ բոլորին յայտնի է: Երեւի Շարլ դը Բաս դ'Արտանիանի մասին լսել ես, չէ՞:

— Դ'Արտանիանի՞:

— Շարլ դը Բաս դ'Արտանիանի մասին է խօսքը,— նոյն անվրդովութեամբ ասաց Ռուբէնը:— Նշանաւոր մարդ է եղել: Իսկ դու կասկածում ես:

— Չեմ կասկածում: Պարզապէս չեմ հասկանում, թէ ի՛նչ ես ուզում ասել:

Դժոխային աղմուկ բարձրացնելով, փողոցով մի շարժանիւ սլացաւ: Ռուբէնը դէմքը կնճռոտեց: Այնպէս կնճռոտեց որ ասես ատամնաբոյժը պատրաստւում էր փոքրիկ շաղափով փորել նրա ատամը:

— Այսօր շաբա՞թ է,— հարցրեց նա այն յոյսով, թէ ես կը պատասխանեմ՝ «Ոչ»:

— Այո՛,— պատասխանեցի ես:

— Ուրեմն, այս գիշեր էլ չենք քնելու: Անդադար մեքենաներ են անցնելու փողոցով:

— Արման դը Սելլեք դ'Աթոս դ'Օթեւի՞լլ,— հարցրեցի ես:— Դա Աթոսի լրիւ անունը չէ՞:

— Ի հարկէ, Աթոսի անունն է:

Հեռուից ազդանշան տալով ու հոնդիւնով մի մեքենա եւս խելագարի պէս մտաւ մեր փողոց: Վարորդը երեւի շատ էր շտապում: Իսկ փողոցում քուջուջ անող հաւերն ու աշխարհի վրայ վերեւից նայող սագերը խանգարում էին նրան: Բայց դեռ ձուից դուրս չելած էլ այդ նոյն հաւերն ու սագերը արդէն նախապատրաստուած էին բոլոր տեսակի ավտոմեքենաների ազդանշանների նկատմամբ սառնարիւն անտարբերութիւն դրսեւորելու համար:

— Կորած ենք,— ասաց Ռուբէնը:— Ես կը գժուեմ:

— Իսկ ես չեմ էլ անդրադառնում: Երեւի արդէն վարժուել եմ: Շուտով դու էլ կը վարժուես:

— Շուտո՞վ... Շուտով ես կը կորչեմ գրողի ծոցը:— Ռուբէնը քայլեց պատշգամբի երկայնքով յետ ու առաջ: Յետոյ աջ ձեռքով ընկաւ պատի վրայ: Լսուեց անջատիչի չրխկոցն, ու վառուեց պատշգամբի էլեկտրական լամպը:

— Դեռ լոյս է,— նկատեցի ես:

— Լո՛յս է... Մո՛ւթ է... Աղջամո՛ւղջ է,— վրայ տուեց Ռուբէնը:— Իսկ ես հոգնել եմ այդ ամէնից:

— Բարկացա՞ծ ես,— ի վերջոյ կռահեցի ես:

— Ասացի՝ հոգնել եմ: Երանի՜ յիսուն տարի յետոյ... Այն ժամանակ երեւի այլեւս մեքենաներ չեն լինի:

— Գուցէ թռչո՞ղ մեքենաներ կը լինեն,— ենթադրեցի ես:

— Միամիտ ես,— ծիծաղեց Ռուբէնը։Յիսուն կամ հարիւր տարի յետոյ մարդիկ ձիերով կը շրջեն, կամ փղերով, գուցէ ջայլամներով... Ախր ջայլամները շատ արագ էլ վազում են։

— Դե լա՛ւ,— ասացի ես։—Մի՛ ծաղրիր։

— Չեմ ծաղրում... Երբ մարդիկ իրենք խելոքանան, կը սկսեն կենդանիներին էլ խելք սովորեցնել։ Ձիերը, փղերը, ջայլամները կը դառնան շատ խելացի կենդանիներ։ Կը կատարեն մարդկանց յանձնարարութիւնները։ Գործ կ'անեն։ Եւ շատ հաճելի կը լինի քաղաքով ջայլամ հեծնած շրջելը։

— Ու մեր փողոցում մեքենաների աղմուկ չի՞ լինի։

— Վառիչը դեռ չե՞ս կորցրել։

Տաբաթիս գրպանից հանեցի վառիչը։

— Օգնո՞ւմ է։

— Շա՛տ... Ճիզվիտ Կարոյին այնպէս հասցրեցի, որ դրանից յետոյ ընդհանրապէս չի ուզում երեւալ աչքիս։

— Երանի ձեզ,— ասաց Ռուբէնը։— Հիմա քո մտքով չի էլ անցնում, չէ՞, որ երբեւէ գլուխ ես կոտրելու այնպիսի հարցերի վրայ, որոնք ամէն քայլափոխին հալածելու են քեզ։

Երեւի նկատեցիք՝ չգիտեմ ինչո՛ւ, հիմա բոլորն էլ ինձ երանի էին տալիս։

— Քեզ հարցերը հալածո՞ւմ են։

— Այն էլ ինչպէ՛ս... Ճար լինի, կը փախչեմ աշխարհի ծայրը, կամ մշտական բնակութիւն կը հաստատեմ Եուպիտերի վրայ։

— Դատարկ բան է, կ'անցնի,— համոզուած ասացի ես։— Անցեալ օրն էլ ես էի ուզում կորչել ջունգլներում։

— Իսկ հիմա՞։

— Հիմա ոչ մի տեղ էլ չեմ ուզում կորչել։

Ռուբէնը խորամանկօրէն ժպտաց, ձեռքերը դրեց գրպաններն ու հարցրեց.

— Վերջերս ընկերուհիդ չի երեւում, գժտուե՞լ էք։

— Չգիտեմ,— ասացի ես։—Իմ կարծիքով գժտուել էինք։ Բայց նրա կարծիքով ոչինչ էլ չէր եղել։

— Արդէն հաշտուե՞լ եք։

— Երեւի հաշտուել ենք։ Բայց նա խելքը տուել է ծովահէններին... Այս էլ քանի օր է՝ գրադարան են որոնում։

— Ի՞նչ գրադարան։

— Նաթն ասում է, որ եօթը յարիւր տարի առաջ վանքից ձեռագրերը տարել ու թաքցրել են ինչ որ տեղ։ Որպէսզի մոնղոլները չոչնչացնեն… Ռուբէն, մի բան հարցնեմ...

— Հարցրու։

— Երբ հարձակւում են ժողովրդի վրա ու մարդկանց են կոտորում, դա հասկանալի է։ Բայց օրինակ Լենկթեմուրին ի՞նչ վնաս էին տալիս ձեռագրերը։ Թող վերցնէր, թերթէր, նայէր նկարներին... Նոյնիսկ շատ հետաքրքիր է։ Էլ ինչո՞ւ էր ոչնչացնում, վառում... Միայն Լենկթեմուրը չէ... Միւսներն էլ... Ասենք՝ իսպանացիները երբ հարձակուեցին մայաների ու ասթեկների վրա։ Գիտէ՞ս որքան ձեռագրեր են այրել... Բոլորը... Եւ հիմա մնացել է մի քանի հատ։ Ախր ի՞նչ օգուտ դրանից։

— Խելո՛ք,— ասաց Ռուբէնը։— Դրանք աւելի վտանգաւոր են։

— Գրքե՞ր։

— Գրքերը, երգերը... այն ամէնը, ինչ դարերի ընթացքին ժողովուրդն ստեղծել է։ Դրանք աւելի վտանգաւոր են զաւթիչների համար։ Ըմբոստներին կարելի է կոտորել

մէկ անգամ: Ժողովրդին կարելի է ստրկացնել մէկ անգամ: Բայց երբ տարիներ յետոյ սերունդը մեծանայ ու ճանաչի ինքն իրեն, իմանայ իր պատմութիւնը, դարձեալ պէտք է ըմբոստանայ: Անընդհատ հո չի՞ կարելի կոտորել: Եւ, ընդհանրապէս, պատկերացրու, որ այն ամէնը, ինչ մինչեւ հիմա սովորել ես, գիտես, յանկարծ մի վայրկեանում մոռանաս:

— Յետոյ՞...

— Յետոյ այն, որ դու կը դադարես Տիգրանը լինել: Դու Տիգրանն ես, որովհետեւ ունես քո սեփական յիշողութիւնները, քո սեփական փորձը, շատ լաւ գիտես, որ եթէ Ճիզվիտ Կարոն մի անգամ էլ փորձի քեզ նեղացնել, դու այլեւս չես վախենայ: Իսկ եթէ յիշողութիւններդ քեզնից խլեն ու ոչնչացնե՞ն... Այդ դէպքում կը լինես բոլորովին անօգնական, անուժ մի մարդ: Ստիպուած, նորէն պէտք է սովորես, կենսափորձ ձեռք բերես... Ու դառնաս մի նոր մարդ: Եւ եթէ ցանկանան, քեզ կարող են դարձնել ֆրանսացի, ռուս, իռլանդացի կամ էսկիմոս: Իսկ զաւթիչները հէնց դա էլ ուզում են: Չինգիզ խանն ու Բաթու խանը ժամանակին տիրել են ոչ միայն Հայաստանը… Թաթար-մոնղոլները ստեղծեցին Ոսկէ Հորդան, ու ամէն կերպ ջանում էին, որ ժողովուրդները մոռանան իրենց անցեալը, կորցնեն իրենց յիշողութիւնը ու դառնան մոնղոլ: Իսկ դա հնարաւոր էր միայն մշակոյթը ոչնչացնելու միջոցով:

— Ինչո՞ւ դառնան մոնղոլ: Զաւթելուց յետոյ՝ միեւնոյնը չէ՞...

— Խելո՛ք,— յուսահատուած գոչեց Ռուբէնը:—

Քանի՛-քանի՛ անգամ են մեր ժողովրդին ստրկացրել, հը՞... Եթէ ժողովուրդը կորցներ իր յիշողութիւնը, ապա կը ձուլուէր բիւզանդացիներին, պարսիկներին, ռուսներին, թուրքերին ու վերջ: Բայց յիշողութիւնը չէր կորցնում: Մոնղոլներն ամբողջ Հայաստանն աւերել էին, բայց նոյն տասներեքերորդ դարում ստեղծւում էին համալսարաններ, զարգանում էր գիտութիւնը, արուեստը: Ու զաւթիչները չկարողացան հասնել իրենց նպատակին: Նրանք հեռացան ու կորան… Լաւ իմացիր, եթէ միայն ինքներս չկորցնենք… ապա ոչ ոք չի կարող մեր յիշողութիւնը ջնջել: Իսկ յիշողութիւնը կարող ենք կորցնել, եթէ կտրուենք մեր հազարաւոր տարիների անցեալից ու կարծենք թէ մեր աշխարհը սկսւում է մեզնով, լաւագոյն դէպքում՝ մեր հայրերով… Եւ եթէ այնքան սիրենք տգիտութիւնը եւ այնպէս կորցնենք մեր արժանապատուութիւնը որ կարծենք, թէ մենք որեւէ արժէք ներկայացնում ենք այն դէպքում միայն, երբ ինչ որ կողմնակի ու օտար մէկն է իր շահերից ելնելով՝ փորձում մեզ գնահատել…

— Լաւ կը լինի, եթէ այդ գրադարանը գտնեն:

— Իսկ ինչո՞ւ դու էլ չես որոնում:

— Չեմ ուզում ծովահէնների հետ գործ ունենալ:

Բակի դռան մուրճը թրխկացրին:

— Բա՛ց է,– գոչեց Ռուբէնը:

Լսուեց ծանր փեղկի ճռինչը, եւ մէկը զգուշօրեն մտաւ բակ: Դռնից մինչեւ պատշգամբ ձգուող արահետի սալաքարերի վրայ, իրիկնային անդորրի մէջ թնդացին հուժկու ոտնաձայները: Նուարդի հայրն էր: Ու ես ակամայից կծկուեցի: Սիրտս մի վատ բան գուշակեց:

— Բարի երեկոյ,— ասաց նա, բարձրանալով պատշգամբ:

— Բարեւ,— պատասխանեց Ռուբէնը, եւ ապա տարակուսանքով ինձ նայեց, իբր՝ ո՞վ է այս անծանօթը:

— Բժիշկ Սուրէնեան,— ասաց նա, դիմելով Ռուբէնին:— Դուք երեւի Տիգրանի եղբայրն էք: Այո՛...

Նուարդի հայրը յաղթանդամ մի տղամարդ էր, փոքրիկ մօրուքով, որ թէեւ Լուսաշէնի ոչ մի բնակիչի համար նորութիւն չէր, բայց միշտ էլ արտակարգ

տպաւորութիւն էր թողնում ե՛ւ առողջների, ե՛ւ հիւանդների վրայ: Նա կանգնել էլ պատշգամբի կենտրոնը եւ ձեռքերը խաչել կրծքին:

«Ոնց որ թատրոնում լինի»,— անցաւ մտքովս:

Ես ու եղբայրս լուռ սպասում էինք: Բժիշկ Սուրենեանին ես տեսել էի երկու կամ երեք անգամ, ու միշտ էլ այն ժամանակ, երբ նա երեկոյեան դուրս էր գալիս եւ տուն կանչում Նուարդին: Երբէ՛ք այսպէս դէմ-դիմաց չէի հանդիպել հետը, չէի խօսել: Նա դաժան ու խիստ մարդ էր: Ես համոզուած էի դրանում:

— Ես որոնում եմ Նուարդին,— առանց կեցուածքը փոխելու, վերջապէս, խօսեց բժիշկը:— Առաւօտից դուրս է եկել ու մինչեւ հիմա չկայ:

Ես ու եղբայրս լուռ իրար նայեցինք:

— Տիգրան, դու այսօր հանդիպե՞լ ես նրան,— հարցրեց բժիշկը, առանց իմ կողմը նայելու:

— Չեմ հանդիպել: Ո՛չ այսօր, ո՛չ երեկ, ո՛չ էլ երեկ չէ առաջին օրը, ո՛չ էլ...

— Հասկանալի է: Դու երեւի գժտուած ես Նուարդի հետ,— ասաց բժիշկը:— Կամ, ինչպէս ասում են, ձեր միջով սեւ կատու է անցել: Բայց գոնէ կարող ես ենթադրել, թէ որտեղ կը լինի նա:

— Ծովահէնների մօտ,— ենթադրեցի ես:

— Պարզ է,— ասաց բժիշկը:— Բայց նրանք այսօր չեն երեւացել: Գուցէ ծովահէնական որեւէ ծրագի՞ր են իրականացնում:

Նա այնպէս էր խօսում, որ ինձ թուաց, թէ հիմա ասելու է. «Տղա՛ս, բաց բերանդ ու ասա՝ ա՜-ա՜-ա՛: Եւ ես, ազնիւ խօսք, յանկարծ հաւանեցի Նուարդի հայրիկին:

— Բայց, իմ կարծիքով, մութն ընկնելուց յետոյ այլեւս միտք չունի այդպիսի ծրագրերի իրականացումը շարունակել: Աւելի նպատակահարմար է հետաձգել յաջորդ օրուան,— շարունակեց նա:— Այդպէս չէ՞:

— Ի հարկէ՛,— համաձայնեց Ռուբէնը:

Ես էլ գլխով արեցի:

— Տիգրան, իսկ դու չե՞ս ենթադրում, թէ ի՛նչ ծրագիր կարող է լինել,— այս անգամ արդեն իմ կողմը շրջուելով,— բայց սկզբունքօրեն վրաս չնայելով, հարցրեց բժիշկը:

— Գրադարանն են որոնում,— ասացի ես:— Ժամանակին վանքում մի գրադարան է եղել, ու մոնղոլական արշաւանքների ժամանակ մարդիկ թաքցրել են: Հիմա նրանք ուզում են գտնել… ի՛նչ գնով էլ լինի:

— Իսկ եթէ գտնե՞ն,— յուսահատ ձայնով հառաչեց բժիշկ Սուրէնեանը:— Եւ դու էլ այդպէս հանգիստ նստել ես: Թէկուզ եւ գժտուել ես Նուարդի հետ: Չե՞ս մտածում ձեռագրերի ճակատագրի մասին... Տե՛ր Աստուած, իսկապէս, որ զարմանալի ժողովուրդ են այս երեխաները:

Ես զարմացայ, թէ ինչո՛ւ է բժիշկ Սուրէնեանը այդպէս անհանգստանում ձեռագրերի համար:

— Այո՛, այո՛,— նա ձեռքերը դրեց մէջքին ու թեքուեց դէպի ինձ:—Ինչպե՞ս կարելի է թոյլ տալ, որ այդ հարստութիւնն ընկնի ծովահէնների ձեռքը: Չէ՞ որ նրանց համար ոչ մի սրբութիւն գոյութիւն չունի: Գտնելուն պէս, նրանք՝ այդ անիծեալ ծովահէնները, գրադարանը կը տանեն հեռաւոր երկրներ ու աճուրդի կը հանեն բոլոր ձեռագրերը:

Ես չհասկացայ, թէ ինչո՛ւ էր այդքան տարօրինակ ժպտում Ռուբէնը եւ անդադար գլխով անում:

— Նուարդը թոյլ չի տայ,— վստահօրեն ասացի ես:

— Նուա՞րդը...— բժիշկ Սուրէնեանը յուսահատօրեն տարածեց ձեռքերը:— Մի՞թե կարելի է վստահել մէկին, որը ծովահէնների համախոհն է դարձել: Կարծում ես, հէնց ինքը չի՞ առաջարկի...

— Ո՛չ, ի՛նչ էք ասում,— ես տեղիցս վեր թռայ։—Երբե՛ք... Ուղղակի հետաքրքիր գործ է գրադարան որոնելը, դրա համար էլ նա միացել է Կարոյին ու Սերոբին։

— Այո՞։ Կարծո՞ւմ ես,— բժիշկը վերջապէս նստեց։— Իսկ ես համոզուած էի, թէ դուք գժտուած եք։

— Ճիշտ է... էինք... Բայց Նուարդը...— ես մի պահ լռեցի։ Ու փոխեցի խօսքս.— Վերջին հաշուով ախր ո՛չ գրադարան կա, ո՛չ էլ այդ ծովահէններն են իսկական ծովահէններ։ Ես մինչեւ հիմա չգիտեմ, Նաթը կա՞յ, թէ չկայ...

Ռուբէնը այնպէս քրքջաց, որ ես վախեցայ, թե հայրիկը հիմա դուրս կը գայ ննջարանից։

Իսկ բժիշկը տարակուսանքով ասաց.

— Դե՛հ, արի ու հասկացիր այս ժողովրդին։

— Բայց նրանք գրադարանն են որոնում,— համոզուած պնդեցի ես։

— Որտե՞ղ։

— Ամէն տեղ։

— Տիգրան,— ասաց բժիշկ Սուրէնեանը։— Իսկ ես որոնում եմ Նուարդին։

— Ես հիմա կը գտնեմ նրան։ Դուք մի քիչ զրուցէք Ռուբէնի հետ, իսկ ես... Հիմա...

Ու գնդակի պէս դուրս թռայ տնից։

Բայց փողոցում, ինձնից անկախ, մեխուեցի դարպասի մօտ։ Ո՞ր կողմը գնամ, որտե՞ղ որոնեմ Նուարդին։ Վանքո՞ւմ, շրջակայքո՞ւմ... Գուցէ Գլասեւոս պապի տա՞նը... Ի հարկէ, հիմա մութ է, եւ նրանք արդէն վերադարձած կը լինեն։

Ուրեմն, ո՞ր կողմը գնամ։

Քայլեցի դէպի Գլասեւոս պապի տունը։

Մեր փողոցի անկիւնից թեքուելուն պէս իմ դիմաց դուրս ելաւ Շէկ Դավիթը։ Նրա կերպարանքը տեսնելով, կեանքումս առաջին անգամ կարգին ուրախացայ, որ աշխարհում գոյութիւն ունի գոնէ մի Շէկ Դավիթ։

— Լսիր, Նուարդին չե՞ս տեսել,— գոչեցի ես։

— Բժշկի աղջկա՞ն,— հարցրեց նա գլուխը քորելով։

— Չէ, բժշկի տղային,— ասացի ես։

—Հի-հի՛... հասկացա՛յ,— ասաց Շէկ Դավիթը։

— Տեսե՞լ ես, թե ոչ։

— Այսի՛նքն...— ծոր տուեց նա ու լռեց։

Ես բռնեցի նրա օձիքը։ Շէկ Դավիթը կծկուեց ու պատրաստուեց լաց լինել։

— Զայնդ չլսեմ,— սպառնացի ես։

Նա միայն խռխռացրեց, իբրեւ՝ շունչը հիմա կը փչի։

— Զա՛յնդ...

— Խեղդում ես...— ողբաց նա։

Ես բաց թողեցի նրա օձիքը։

— Տեսե՞լ ես,— հարցրեցի ես։

— Ամ-ամբողջ օրը միաս-սին էինք… Տիգրան, չե՞ս կատաղի... Ախր ես էլ եմ նրանց հետ գրադարան որոնում։

— Լաւ ես անում,— ասացի ես։— Իսկ հիմա որտե՞ղ է։

— Հիմա՞...— նա յարդարեց շապիկն ու դարձեալ սկսեց ծամծմել։

— Խօսելո՞ւ ես, թէ՝ չէ։

— Հիմա աւերակներում է... Բաղնիքի...— Շեկ Դավիթի դէմքն աղաւաղուեց։ Իբրեւ թէ ժպտում էր։— Երեւի համբուրւում է Ճիզվիտի հետ... Հի-հի՛...

— Ի՞նչ։

Ու այնպէս հասցրեցի Շէկ Դավթի ժպտացող, պեպենոտ, հիմար մռութին որ զարմանքից նա նոյնիսկ չգոռաց։ Ես նետուեցի կիսաշէն բաղնիքի կողմը։

Այնտեղ, ուր ժամանակին աւազի ու խճի բլուրն էր՝ կանգնեցի, շունչս յետ բերեցի ու գոռացի.

— Նու-ա՛րդ... Նու-ա՛-ա՛-րդ...

— Ի՛նչ ես ձայնդ գլուխդ գցել,— մի քանի քայլ հեռուից լսեցի Ճիզվիտ Կարոյի դժգոհ քրթմնջոցը:

— Նուա՛րդ...— առանց նրա վրայ ուշադրութիւն դարձնելու, գոչեցի ես:— Այդտե՞ղ ես...

— Այստեղ եմ,— ասաց Նուարդը ու խաւարից պոկուելով, կանգնեց իմ դիմաց.—Ի՞նչ կայ:

— Գնանք,— ասացի ես:

— Իրեն փիղ է կարծում,— խաւարից լսուեց Ճիզվիտ Կարոյի ձայնը:

— Գնանք,— կրկնեցի ես:— Թե չէ՝ ստիպուած կը լինեմ մի անգամ էլ նոկաուտ անել:

— Ո՞ւմ,— հարցրեց Նուարդը:

— Գնանք:

— Իսկ ո՞ւր ենք գնալու,— հարցրեց Նուարդը, բայց եկաւ իմ հետեւից:

Մենք ահագին տեղ քայլեցինք լուռ: Բայց երբ մօտեցանք մեր տանը, ատամներիս տակից նետեցի.

— Գրադարանն էիք որոնում, հա՞... Կարծում էք բաղնիքի աւերակներում են թաքցրել...

— Չէ,— ասաց Նուարդը, զարմանալով, որ այդքան բան էլ չեմ հասկանում: Բաղնիքը մօտ տասը տարուայ պատմութիւն ունի, իսկ գրադարանը...— Ի՛նչ բաղնիք: Ոչ մի գրադարան էլ չկայ: Երեւի Նաթը սխալուել է:

— Իսկ Նաթը կա՞յ,— գժուեցի ես:

— Գժուեցի՞ր,— անմիջապես կռահեց Նուարդը:

— Իսկ աւերակներում ի՞նչ գործ ունէիր:

— Վաղուայ որոնումների ծրագիրն էինք որոշում:

— Ի՞նչ ծրագիր:

— Որոնումների:

— Գրադարանի՞... որ գոյութիւն չունի,— յաղթականօրեն ասացի ես:

— Այո: Բայց Կարոն ու Սերոբը համոզուած են որ գոյութիւն ունի:

— Սերոբն է՞լ էր այնտեղ,— հարցրեցի ես:

— Սերոբն էլ...

— Ինչո՞ւ ես կանգնում, քայլի՛ր:

— Մենք հաշտուել ենք, չէ՞:

— Երեւի: Ինչո՞ւ ես կանգնում:

— Եւ դու չե՞ս նեղացել:

— Ի՞նչ...

— Որ ես նրանց հետ գրադարան եմ որոնում:

— Դա ինձ բոլորովին չի հետաքրքրում:

— Սպասիր, դու ախր դեռ չգիտես... Նրանք որոշել են փող հաւաքել...

— Թող հաւաքեն... Չի հետաքրքրում:

— Որ այդպէս է, բարի գիշեր:

— Ի՛նչ բարի գիշեր: Գնում ենք մեր տուն:

— Ձեր տո՞ւն... Ինչո՞ւ...

— Ինչո՛ւ... Ինչո՛ւ...— չդիմացայ ես:— Հայրիկդ մեր տանը նստած՝ քեզ է սպասում: Իսկ դու ամբողջ օրը կորել ես: Ծովահէնների հետ գրադարա՛ն ես որոնում... Ծովահէնների հետ համբուրո՛ւմ ես...

— Ասացի՝ ծրագիր էինք մշակում,— գրեթէ լացակումած ասաց Նուարդը։— Ես... ես միայն քեզ եմ համբուրել....

— Հի-հի՛...— ասացի ես ճիշտ Շէկ Դավիթի նման։— Ես էլ հաւատացի...

Ու հէնց նոյն պահին ականջիս տակ ինչ որ բան պայթեց։ Սկզբում լսեցի միայն շրխկոցի ձայն, յետոյ զգացի, որ այտս այրւում է Նուարդի ապտակից։

Ես շշմած մնացի փողոցում այնքան ժամանակ, մինչեւ որ նորէն բացուեց մեր բակի դուռը։

Երբ Նուարդն ու հայրը դուրս ելան, ես փախայ… Փախայ հեռու, որպէսզի բժիշկ Սուրէնեանը ինձ տեսնելով յանկարծ չհարցնի. «Տիգրան, չլինի՞ կարմրուկով ես հիւանդ։ Հապա, բաց բերանդ եւ ասա՝ ա՛-ա՛-ա՛…

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Խնոցու օրը։ Նամակ Նաթանայէլից։ Զորակը։ Տիգրանին առեւանգում են։ Ճիզվիտ Կարոն խօսքի տեր մարդ է։

ԱՌԱՒՕՏՆ սկսուեց դոյլերի շրխկոցներով ու հայրիկի դժգոհ քրթմնջոցով որ երկու որդի ունի, եւ երկուսն էլ մի բանի պէտք չեն։ Թողնես՝ կը քնեն մինչեւ կէսօր։ Իսկ կէսօրը հայրիկի համար ժամը ութն էր… կամ ծայրահեղ դէպքում՝ ինը։ Մայրս այսօր նրան չէր սաստում ինչպէս միշտ։ Մայրս էլ դէմ չէր լինի, եթէ այսօր ես ու Ռուբէնը մի ոտք շուտ վեր կենայինք։

Նայեցի եղբօրս կողմը։ Արթնացել էր։

— Ժամը քանի՞սն է,— կամացուկ հարցրեցի ես։

— Երեւի գիշերուայ երկուսը,— պատասխանեց նա։

— Չէ՛... Արեւն արդէն դուրս է եկել։

— Իսկ ինձ համար դեռ գիշերուայ երկուսն է։ Ո՛ւֆ... Քնել եմ ուզում։

— Չի լինի,— ասացի ես։— Յոյսդ կտրիր։

— Կտրել եմ։

— Վեր կենա՞նք։

— Մե՛կ... Երկո՛ւ... Երե՛ք,— հաշուեց Ռուբէնը, եւ քանի որ ինքն էր հաշուողը, ու գիտէր, թէ երբ է ասելու «երեք», ինձնից աւելի շուտ մի կողմ նետեց վերմակն ու ցատկեց յատակին։ Ցատկեց ու սկսեց մարմնամարզական շարժումները։ Յատկապէս կտրուկ շարժումներ էր անում, որպէսզի յանկարծ չքնի ոտքի վրայ։

Յետոյ հագնուեցինք եւ դուրս ելանք լուացուելու։

— Այսօր թան ենք խմելու, չէ՞,– օճառի փրփուրի մէջ կորած դէմքն իմ կողմը շրջելով, ասաց Ռուբենը։

— Ըհը...

Մայրս փորձում էր միջանցքից պատշգամբ հանել
լուացքի մեքենան։ Բայց չէր կարողանում, որովհետեւ նա դարձեալ մոռացել էր որ մեքենան ընդամէնը մի անւակ ունի։ Ամէն անգամ ես նրան յիշեցրել եմ, բայց միշտ մոռանում էր։

— Թո՛ղ, թո՛ղ,— ասացի ես ու բռնակից մի փոքր բարձրացնելով, լուացքի մեքենան քաշեցի պատշգամբ, սէրուցքով լիքը մեծմեծ կաթսաների մօտ։

...Մեր թաղի հարեւանները, մօտ քսան ընտանիք, բոլորն էլ կով ունեցողներ, հարմարութեան համար, պայմանաւորուել էին քսան օրը մէկ զտել կաթը։ Միւսները մէկական դոյլ կաթ էին բերում հերթական հարեւանին։ Ու նա էլ քսան օրը մէկ անգամ միանգամից զտում էր քսան դոյլի սերուցքը։ Այսօր մեր հերթն էր, մեր խնոցու օրը։

— Մարմար ազին այնպէս էլ չուղարկեց,— դժգոհեց մայրս։— Միշտ ուշացնում է։ Բայց երբ իր հե՛րթն է լինում...

Ես ու Ռուբէնը կաթսաներից մէկի պարունակութիւնը շրջեցինք լուացքի մեքենայի մէջ։ Յետոյ ծածկեցինք կափարիչով, ու հայրս հանդիսաւորութեամբ սեղմեց շագանակագոյն կոճակը։ Մեքենան նոյնպիսի հանդիսաւորութեամբ սկսեց դռռալ։

Հայրս նստեց թախտին ու մի սիգարէթ վառեց։

Ամէն անգամ լուացքի մեքենան միացնելուց ու սիգարէթը վառելուց յետոյ, նա յիշում էր իր մանկութիւնը, յիշում էր այն երանելի օրերը, երբ մարդիկ դեռ չգիտէին, թէ ինչ բան է լուացքի մեքենան։

Սէրուցքը մեղմ շփշփում էր մեքենայի երախի մէջ։ Հայրս ծխում էր։ Նա հիմա, աչքերը կիսախուփ, կը սկսի. «Խնոցին ուրի՛շ բան էր»։

— Խնոցին ուրի՛շ բան էր,— ասաց նա, եւ ես ինձ հազիւ զսպեցի որ չփոթկացնեմ։— Խնոցու կարագն էլ ուրի՛շ համ ունէր ախր... Իսկ թա՛նը... Ո՞վ հնարեց այս անտէր մեքենան։ Քաղաքում էլի լաւ է։ Մարդիկ մի հատ առնում են, դնում տանը, իրենց համար լուացք են անում։ Իսկ խեղճ գիւղացին մէկն առնում է լուացքի համար, մի հատ էլ՝ խնոցու փոխարեն։ Ու ոչ կարագն է՝ կարագ, ոչ էլ թանը՝ թան։ Դուք ախր ի՛նչ գիտէք իսկական թանի համը։ Սա ոնց որ լուացքաջուր լինի։ Մարդ չի էլ ուզում խմել։

Իսկ մեքենան զուսպ դռռում էր... Սէրուցքի ցայտերը երբեմն դուրս էին պրծնում կափարիչի բացուածքից։

— Խնոցի հարելիս մի կաթիլ անգամ չէր ցայտում,— շարունակեց հայրս։

— Եթէ կափարիչի եզրերը մի քիչ սեղմենք՝ չի ցայտի,— նկատեցի ես։

— Միեւնոյն է,— ծխախոտի մոխիրը հատակին թափ տալով, ասաց հայրս։— Մի տես, չեղա՞ւ։

Ես անջատեցի մեքենան ու բարձրացրեցի կափարիչը։ Դեղնաւուն կարագը գունդ-գունդ լողում էր ճերմակ հեղուկի մէջ։ Մայրս մօտեցրեց դատարկ կաթսան, ու ես ռետինէ խողովակը ցած պահեցի։ Թանը փրփրալով հոսեց կաթսայի մէջ, իսկ լուացքի մեքենայի մէջ մնացին կարագի գնդերը։

Ռուբէնը խոհանոցից լիքը պնակով մեղր ու թոնրի

մէջ թխած բոքոն բերեց։ Ու մինչ լուացքի մեքենան նորէն դռռացնում էր, Ռուբէնն ու ես վրայ պրծանք թարմ կարագին ու մեղրին։

— Վրան յանկարծ թան չխմեք,— զգուշացրեց մայրս, որովհետեւ գիտէր մեր այդ անտանելի սովորութիւնը։

— Թանն էլ թան լինի...— փնթփնթաց հայրս։—Իսկական լուացքաջուր...

— Չես հավանում՝ մի խմիր,— ասաց մայրս։— Խնոցու առաջ որ մէջքս կոտրէի, թանը համով կը լինէր, հա՞...

— Դեհ, լա՛ւ, լա՛ւ,— նահանջեց հայրս։—Կրակը չընկանք... Տիգրան, դուռն են բախում։

Ես վազեցի բակ, բացեցի դուռն ու իմ առաջ տեսայ Շէկ Դավիթին։

— Ի՞նչ կայ,— բարկացած հարցրեցի ես։

— Բարի լոյս, Տիգրան ջան,— քրթմնջաց նա։— Սա՝ քեզ...— ու մի ծրար մէկնեց։

— Կը տանես յետ,— ասացի ես։— Կը տանես ու կ՚ասես, որ այլեւս չեմ ուզում գործ ունենալ հետները։ Կրպակս փակում եմ։ Հասկացա՞ր։

— Նաթն է ուղարկել,— ասաց Շէկ Դավիթը։— Ասաց՝ շտապ հասցրու Տիգրանին։ Երեւի շատ կարեւոր բան է։ Այնպե՛ս եմ վազել... Շունչս կտրուեց։

Ես կասկածանքով նայեցի Շէկ Դավիթին: Նա շունչը կտրած մարդու նման չէր: Ես լաւ եմ ճանաչում նրան: Շտապ հանձնարարութիւն են տուել, իսկ նա երկնքի թռչունները հաշուելով է եկել:

— Դեհ կարդա՛, կարդա՛,— ասաց նա:

Ես բացեցի երկնագոյն ծրարը:

Առաջին անգամ էի Նաթից նամակ ստանում: Ու ճիշտն ասած, երբէք չէի տեսել գրամեքենայով տպած նամակ: Սովորաբար նամակները ձեռագիր են լինում: Ես անշտապ կարդացի.

Սիրելի Տիգրան.

Ես քեզ հետ կարեւոր գործ ունեմ: Արի հանդիպենք ձորակում: Որքան կարող ես շուտ արի: Եթէ հիմա չես կարող, քիչ յետոյ արի: Կը հանդիպենք կաղնու մօտ: Այն՝ որ ամենամեծն է:

Բարեւներով՝

Նաթ

— Գնալո՞ւ ես,— հարցրեց Շէկ Դավիթը:

— Հիմա կը գնամ... Իսկ դու որտեղի՞ց գիտես, թէ կանչում է:

— Ինքն ասաց:

— Ուրիշ ո՞ւմ է կանչել:

Շէկ Դավիթը ուսերը վեր քաշեց:

— Լաւ,— ասացի ես:— Պարզ է:

— Ես գնա՞մ,— հարցրեց Շէկ Դավիթը:

— Գնա՛: Եթէ Նաթին տեսնես՝ ասա որ քիչ յետոյ կը լինեմ պայմանաւորուած տեղը:

— Ըհը՛...— խոստացաւ Շէկ Դավիթն ու սուլելով հեռացաւ:

Լուացքի մեքենան խուլ դռռոցով հարում էր սէրուցքի երկրորդ բաժինը: Ես նստեցի թախտի եզրին: Ու երբ հայրս հարցրեց, թէ ո՛վ էր եկողն ու ի՛նչ էր ուզում, իբր հէնց այնպէս պատասխանեցի. «Տղաներն էին»:

— Հիմա կը չքուի,— անմիջապէս կռահեց մայրս:

Ռուբէնը ինձ նայեց ու աչքով արեց: Իբր՝ «Իսկապե՞ս չքուելու ես»: Ես էլ նրան աչքով արեցի, որ՝ «Այո»:

Յետոյ նստեցի պատշգամբի սանդուղքի աստիճաններին: Երբ մայրս լուացքի մեքենան անջատեց եւ ուզում էր թանը քամել, յիշեց, որ ես թախտին չեմ եւ կաթսայի վրայ ռետինէ խողովակ բռնող չկայ:

— Որ ասում էի կը չքուի,— դժգոհեց նա: Բայց

Ռուբէնը կաթսան մօտեցրեց, թանը փրփրալով սկսեց հոսել, ու ինձ մոռացան:

Երբ վերջնականապէս համոզուեցի, որ ինձ մոռացան, դուրս ելայ բակից:

Մինչեւ կամուրջ հասնելը վազում էի, բայց երբ յայտնուեցի բլրակի վրայ, ինձ միայն թւում էր, թէ վազում եմ: Գնացի դէպի վանքը տանող արահետով, որ մի քանի տասնեակ քայլ այն կողմ սկսում էր ոլոր-մոլոր իջնել դէպի ձորը:

Զառիթափ լանջով իջնելիս, յիշեցի, որ այսօր երեկոյեան պայմանաւորուել եմ Գլասեւոս պապի հետ: Ուրեմն, մի անգամ էլ պէտք է իջնեմ այս արահետով: Միայն թէ բարձրանալն արդէն դժուար կը լինի: Կաւը շատ ծանր է, ու Գլասեւոս պապն էլ խնդրեց իրեն ընկերակցել ոչ թէ զրուցելու համար:

Ձորը շատ խորն է: Երբ նայում ես սրբատեղիի մօտից, գլուխդ պտտւում է: Իսկ երբ իջնում ես դէպի խշշացող գետակը, մի տեսակ խորհրդաւորութիւն ես զգում, եւ սիրտդ սկսում է անհանգիստ խփել: Նախ՝ անմիջապէս ցրտում է: Յետոյ

տարօրինակ լռութեան մէջ երբէք չդադարող խուլ խշշոցից սարսռում է մարմինդ: Եւ այս ամէնի հետ, դիմացի լանջին փարթամօրեն աճած ծառերը, որոնց սաղարթն սկսել է գունափոխուել, զարմանալի բերկրանք է հաղորդում մարդուն: Իմ այս տպաւորութիւնը երբէք չի փոխուել: Ի հարկէ, չեմ յիշում, թէ երբ եմ առաջին անգամ իջել մեր ձորակը: Երեւի շատ վաղուց, երբ հազիւ մէկ կամ երկու տարեկան եմ եղել, ու մայրս էլ եկել է այս կողմերը մասուր հաւաքելու: Հիմա, ի հարկէ, նա մասուր հաւաքելու չի գնում: Տղաներով մենք ենք աշնանն իջնում ձորն ու մաքրազարդում կարմիր ուլունքաշար փշոտ թփերը:

Մեր ձորակում մէկ ուրիշ բան էլ կայ, որն ինձ կարգին զարմացնում է: Այստեղ մարդուն թւում է, թէ վերջնականապէս եւ անվերադարձ կտրուել է աշխարհից: Կամ, աւելի ճիշտ, թւում է, թէ ամբողջ աշխարհում միայն այսպիսի խորհրդաւոր ու սառնաշունչ ձորակներ են, ու ոչ գիւղեր կան, ոչ գիւղաքաղաքներ եւ ոչ էլ իսկական քաղաքներ: Չես հաւատում, թէ մարդիկ էլ կան: Վստահ ես, որ ամբողջ աշխարհում միայն դու ես: Ու մէկ էլ ինչ որ սարսափելի կենդանիներ, որոնք սակայն ոչ մի անգամ իմ ճանապարհը չեն կտրել: Մեր ձորակում, ես հաւատում եմ որ առասպելական կենդանիներ պիտի լինեն: Անպայմա՛ն: Ու եթէ մի անգամ որեւէ ծառի կամ թփի ետեւից մի առասպելական կենդանի յայտնուի ու ինձ հետ սկսի խօսել մարդկային լեզուով, ոչ կը շփոթուեմ ու ոչ էլ կը վախենամ:

Օրինակ, եթէ նա հարցնի. «Դէպի ո՞ւր, երիտասարդ», հաստատ գիտէնալով, որ հարցը տրւում է որոշակի չար մտադրութեամբ, ես ամենայն սառնարիւնութեամբ կը պատասխանեմ. «Մասուր հաւաքելու: Բայց դուք որքա՛ն լաւ էք խօսում մարդկային լեզուով: Որտե՞ղ էք սովորել»: Կամ գուցէ նա կը հարցնի. «Ահա՛... Վերջապէս ընկա՞ր իմ ճանկը»: Այդ դէպքում ես անպայման կը նկատեմ արդէն բացայայտ մարտահրաւերը եւ...

Ես շուարած կանգնեցի:

Արդէն հասել էի ձորակի ամենամեծ կաղնուն, որից մի քանի մետր ցած խշշում էր գետակը: Զարմանալի էր նաեւ այդ գետակը: Եթէ ասեմ, որ մի կարգին, յորդառատ ջուր ունի, սխալ կը լինի: Ընդամէնը մի քանի դույլ կամ տակառ, միեւնոյն է... Բայց այնպէս է խշշում, որ եթէ մարդ գոցի աչքերը, իրեն կարող է պատկերացնել Նիագարայի ջրվէժի ափին:

Կաղնու մօտ ինձ ոչ ոք էլ չէր սպասում: Եւ, ընդհանրապէս, շրջակայքում մարդ-մարդասանք չկար:

Ես նստեցի մի քարի վրայ ու որոշեցի սպասել:

Ի հարկէ, սպասելուց աւելի տաղտկալի բան չկայ աշխարհում:

Հոգնեցի շուրջս նայելուց, եւ ճիշտ իմ դիմաց, կանաչի վրա մի դօդօշ նկատեցի, որ նոյնպէս ինչ որ բանի էր սպասում: Ես վեր ելայ քարից ու մօտեցայ դօդօշին: Խեղճ երկկենցաղի առաջ պպզած, դիտում էի, թէ ինչպէս է շնչում: Նա կարծես շնչահեղձ էր լինում: Վերուվար էր անում ոչ միայն կուրծքը, այլեւ կարճլիկ վիզը՝ մինչեւ բերանը: Դա, ի հարկէ, բնաւ էլ առասպելական այն կենդանին չէր, որին ես պատրաստ էի ամէն վայրկեան հանդիպել ձորակում: Մի շիւղով փորձեցի հրել դօդօշին: Բայց նա տեղից չշարժուեց: Միայն ծանր հեւում էր: Ես բարկացայ, ու աւելի ուժով հրեցի: Դօդօշն արհամարհեց ե՛ւ ինձ, ե՛ւ շիւղի ծակոցը: Ես արդէն ձանձրացայ, յետոյ յուսահատուեցի, եւ որոշեցի նորէն նստել քարին ու սպասել: Մի կողմ քաշուեցի, թէ չէ՝ դօդօշը մի խոշոր ցատկ կատարեց եւ ձուլուեց շրջապատի կանաչին:

Եւ նոյն պահին ամէն ինչ մթնեց աչքերիս առաջ: Սկզբում չհասկացայ, թէ ի՛նչ պատահեց, բայց յետոյ զգացի, որ փոշոտ պարկի մէջ շնչահեղձ եմ լինելու: Մի քանի

անգամ փոշտացի, յետոյ պատկերացրեցի, որ հիմա շնչում եմ երեւի ճիշտ այդ անիծեալ դոդոշի նման:

Մինչեւ կը սթափուէի, ոտքերս գետնից կտրուեցին: Փորձեցի ճչալ ու օգնութիւն կանչել, բայց մի ձեռք պարկի վրայից սեղմեց բերանս: «Ովքե՞ր են»,— անցաւ իմ մտքով: Բայց այդ հարցին պատասխանելու ո՛չ ժամանակ կար, ո՛չ էլ հնարաւորութիւն: Ուստի սկսեցի գալարուել, որպէսզի դուրս պրծնեմ ինձ տանող մարդկանց գրկից: Բայց ոտքերս եւ ուսերս աւելի ամուր սեղմեցին, յետոյ մի զոյգ ձեռք էլ աքցանի պէս գրկեց մէջքս, ու ես լողացի օդում:

Չեմ կարող ասել, թէ որքան տեւեց այդ տարօրինակ ճանապարհորդութիւնը: Հէնց որ փորձում էի նորէն գալարուել եւ դուրս պրծնել ինձ առեւանգողների գրկից, ձեռքերն անմիջապէս աւելի էին սեղմւում:

Յետոյ այդ ձեռքերը հոգնեցին:

Ինձ փորի վրա պառկեցրին գետնին:

Գետինը չոր էր: Քարերի եզրերը ցաւեցնում էին կողերս: Ինչ որ մէկը ծնկները սեղմեց ուսերիս:

Պարկը ձգեցին: Եզրերը հասնում էին մինչեւ ծնկներս: Յետոյ թոկով կապեցին, որպէսզի ոտքերս չթափահարեմ. թոկի ծայրը քաշեցին մէջքիս վրայով, անցկացրին թեւատակերովս ու կրծքիս վրայ մի մեծ հանգոյց արեցին:

Ու նորէն կտրուեցի գետնից:

— Նաթանայե՛լ... Նաթա՛-նա՛-այե՛լ...— կանչեցի ես այն յոյսով, որ թերեւս Նաթն արդէն ձորակում կը լինի ու ձայնս կը լսի:

Այս անգամ ինձ առեւանգողները երեւի շատ բարկացան: Եւ ոչ թէ փորձեցին փակել բերանս, այլ պարկի կոպիտ գործուածքով այնպէս տրորեցին դէմքս, որ ցաւից քիչ մնաց ուշաթափուէի:

Չէ՛, դիմադրելը ո՛չ մի օգուտ չունէր:

Բայց ովքե՞ր են այդպէս, օրը ցերեկով, համարձակօրեն մարդ առեւանգում:

Նրանք ծպտուն չէին հանում: Ես լսում էի նրանց ծանր շնչառութիւնը եւ մէկ էլ ոտքերի տակից դուրս պրծնող ու գլորուող քարակտորների ձայնը: Ո՞ւր են տանում... Մի՞թէ արդէն ձորից դուրս են բերել: Ականջ դրեցի: Գետակի խշշոցը դեռեւս լսւում էր: Բայց աջ կողմից: Ուրեմն, նրանք բարձրանում են հոսանքն ի վեր:

Վերջապէս, ինձ նորէն գետնին դրեցին: Աւելի ճիշտ՝ ցած նետեցին ալիւրով լի պարկի պէս: Բարեբախտաբար քարեր չկային, ու ես թրմփացի խոնաւ հողի վրայ:

Յետոյ լսեցի հեռացող ոտնաձայներ: Մի՞թէ ինձ այսպէս թողեցին ու հեռացան: Պէտք է խոհեմ լինել: Պէտք է մի փոքր էլ համբերել:

Երբ ոտնաձայները մարեցին, ես զգուշօրեն փորձեցի աւելի հարմար տեղաւորուել, մինչեւ պարկից ազատուելու մի ճար գտնեմ: Բայց հէնց որ շարժուեցի, ինչ որ մէկը բամփեց գլխիս:

Ուրեմն, ինձ վրայ պահակ են թողել:

— Լսի՛ր,— պարկի միջից ասացի ես:— Ի՞նչ էք ուզում ինձնից:

Ոչ մի պատասխան:

— Լեզուդ կո՞ւլ ես տուել: Օ՜ֆ... Մէջքս ցաւեց,— ու ես նորէն փորձեցի շարժուել:

Նորէն բամփեցին գլխիս:

— Դեհ... լա՛ւ, լա՛ւ...— ասացի ես:— Գուցէ անո՞ւնդ կասես: Իմը՝ Տիգրան է: Ծանօթանանք:

Լռութիւն:

— Ես չեմ հասկանում ձեր նպատակը,— շարունակեցի ես:— Մենք հո միջնադարում չե՞նք ապրում: Եւ ոչ էլ գանգստերներ կան... Ի՞նչ էք ուզում ինձնից... Լսի՛ր, գուցէ հայերէն չե՞ս հասկանում: Do you speak English?

Լռութիւն:

— Ասում եմ՝ անգլերէն գիտե՞ս... Չէ... Habla Usted el español ?.. Իսպաներէն է՞լ չգիտէս: Ափսո՜ս...

Բայց այս անգամ լսուեցին քայլերի ձայներ: Երեւի միւս երկուսը վերադարձան:

— Հը՞...— ասաց ինչ որ մէկը:

Ու դարձեալ լռութիւն: Յետոյ ծանր տնքոցով ինձ նորէն գրկեցին ու տարան: Ես արդէն վստահ էի որ այս պատմութեանը վերջ չի լինելու: Ու մտածեցի որ ամէնից լաւը սուսիկ-փուսիկ համբերելն է:

Բայց այս անգամ աքցանների մէջ իմ ուղեւորութիւնը կարճ տեւեց: Երբ նորէն կանգ առան, այլեւս գետնին չնետեցին ինձ: Զգացի միայն, որ կամ զառիվարի վրայ ենք, կամ ինձ իջեցնում են փոսի մէջ: Որովհետեւ գլուխս աւելի ցած էր, քան ոտքերս: Քունքերս սկսեցին տրոփել: Զարհուրելի բան է, երբ մարդուն շրջում են գլխիվայր:

Յանկարծ ցուրտ զգացի: Մի տեսակ՝ սառնութիւն:

— Ըհը՛,— ասաց առեւանգողներից մէկը, եւ ես դարձեալ յայտնուեցի սառն ու կոշտ գետնին:

Փորձեցի պարկի փոքրիկ անցքից դուրս նայել:Բայց անցքը չափազանց փոքր էր: Ու պատահաբար էր յայտնուել աչքիս առաջ: Լսուեցին ոտնաձայներ, քրթմնջոց, տնքոցներ... Յետոյ ես ցնցուեցի ահաբեկող դղիրդի արձագանգից:

— Լսի՛ր,—կիսաձայն ասացի ես:— Քանդիր պարանը: Ուզում ես, պայման կապենք: Դու քանդիր, իսկ ես խոստանում եմ մատով անգամ չդիպչել քեզ: Հը՞... Քեզ հետ եմ: Գոնէ պարկը հանիր... խեղդւում եմ: Առանց պարկի չի՞ կարելի մարդուն կապոտել... Պատասխանելո՞ւ ես, թէ ոչ,– այլեւս չդիմացայ ես ու ոտքով փորձեցի հարուածել այդ աւազակներից մէկին: Բայց ոտքս ճեղքեց դատարկ օդն ու թափով դիպաւ քարին... Օ՜ֆ...— ցաւից հառաչեցի ես:

— Դու մեզ լսո՞ւմ ես,— հեռուից ինձ հասաւ Լեոպարդո Սերոբոյի խուլ ձայնը:

Ես չպատասխանեցի: Ու զղջացի որ այդքան էլ խօսել եմ:

— Ի հարկէ, լսում է,— ասաց Ճիզվիտ Կարոն:

— Եթէ լսում ես՝ իմացիր, որ դու այլեւս դուրս չես գայ այստեղից,— ձայն տուեց Լեոպարդո Սերոբոն:—Եւ ի զուր աղմուկ-աղաղակ չրարձրացնես: Միեւնոյն է՝ ոչ ոք չի լսի: Խելոք կը պառկես ու տղամարդու պէս կը դիմանաս քաղցի տառապանքներին: Իսկ եթէ չդիմանաս, մի վախեցիր, սարսափելի ոչինչ չի լինի: Ուղղակի շունչդ կը փչես ու վերջ:

— Հի-հի՛...— ծիծաղեց Շէկ Դավիթը:

— Տղերք, սիրտս խառնում է,—ասաց Ճիզվիտ Կարոն:— Գնանք:

— Ի հարկէ, կը խառնի...— հաստատեց Լեոպարդո Սերոբոն:— Լսիր, տեսնո՞ւմ ես, Կարոյի սիրտը խառնում է... եւ պատճառը դու ես: Աստուած քեզ հետ: Միւս աշխարհում աւելի խելոք կը լինես, որպէսզի դարձեալ չընկնես անախորժութիւնների մէջ:

— Գնանք,— կրկնեց Ճիզվիտ Կարոն:— Հա՛, մէկ
էլ ասա, որ շունչը փչելիս՝ յիշի որ Կարոն խօսքի տէր մարդ է:

— Շունչդ փչելիս յիշիր որ Կարոն խօսքի տէր մարդ է,— գոչեց Լեոպարդո Սերոբոն: Ու երեւի անհանգստանալով, որ ես լուռ եմ, վախեցած ձայնով ասաց.— Չլինի՞ արդէն շունչը փչել է, Կարո:

— Հիի՛...

— Ի՜նչ էլ միամիտ ես,— պատասխանեց Ճիզվիտ Կարոն:— Լաւ հոգնեցինք: Քո սիրտը խառնո՞ւմ է:

— Իսկականի՞ց:

— Իսկականից:

— Չէ,— պատասխանեց Լեոպարդո Սերոբոն։

— Ուրեմն, սոված եմ,— եզբակացրեց Ճիզվիտ Կարոն։— Սիրտս շատ փիս է խառնում։

Ես լուռ ականջ դրեցի վերջնականապէս հեռացող ոտնաձայներին, որոնք աստիճանաբար մարեցին, մարեցին ու տիրեց զարհուրելի մի լռութիւն։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Մտքեր, որոնք ծնւում են միայն պարկի մէջ։ Վառիչը դարձեալ օգնում է։ Կտաւէ պարկից Տիգրանը յայտնւում է քարէ տոպրակի մէջ։ Գետնանցքը։

ԵՐԲ ես ու եղբայրս փոքր էինք, սիրում էինք երեկոները անկողին մտնելուց յետոյ զզուզ անել։ Եւ միշտ էլ Ռուբէնը հէնց այնպէս, կատակի համար, փորձում էր խեղդել ինձ։ Վերմակը նետում էր վրաս եւ պահում ոտքերով ու ձեռքերով։ Ես քացի-քացի էի անում, ճչում էի, շնչահեղձ էի լինում, ու այն պահին, երբ արդէն համոզւում էի, որ խեղդւում եմ, Ռուբէնը վերմակը քաշում էր իմ վրայից եւ ուրախանում։ Ես ոչ մի կերպ չէի կարողանում նրան հասկացնել որ դա շատ անտանելի, տհաճ բան է։ Նա համբերութեամբ եւ լրջօրեն լսում, լսում էր ինձ, ու այն պահին, երբ արդէն թւում էր, թէ ամէն բան հասկացել է ու կը խոստանայ այլեւս չխեղդել, յանկարծ սկսում էր քրքջա՛լ, քրքջա՛լ, եւ ես վերջնականապէս յուսահատւում էի։

Եւ արդիւնքում ես մի կարեւոր յայտնագործութիւն կատարեցի։ Համոզուած լինելով, որ վերմակի տակ երբէք չեմ խեղդուի օդի պակասից, վճռեցի հանգիստ ու անշարժ պառկել, մտածելով միայն կանոնաւոր շնչառութեան մասին։ Եւ այդ միջոցն օգնեց։

Երբ Ռուբէնը վերմակը նետում էր վրաս, առաջին հերթին ջանում էի հարմար դիրքով պառկել, չշարժուել ու մտածել որ աշխարհում աւելի հաճելի բան չկայ, քան երբ ուզում են վերմակի տակ խեղդել քեզ։ Բայց Ռուբէնը շատ համառ էր։ Առաջին անգամ նա կարգին վախեցաւ ու անմիջապէս ստուգեց՝ սիրտս չի՞ պայթել արդեօք։ Երկրորդ անգամ աւելի երկար դիմացաւ։ Յետոյ նորէն չհամբերեց ու ստուգեց՝ չե՞մ խեղդուել արդեօք։ Երրորդ անգամ նա զայրացաւ, երբ ստուգելուց յետոյ պարզուեց, որ ես ուղղակի ժպտում եմ։ Բայց համառ էր։ Մի անգամ պահեց մօտ կէս ժամ։ Միեւնոյնն էր։ Ես հանգիստ պառկում ու սպասում էի, թէ եղբայրս երբ է ձանձրանալու այդ տխմար ու զզուելի խաղից։ Իմ համբերութիւնը սահման չունէր։ Իսկ Ռուբէնի համառութիւնը մի օր կոտրուեց։ Ու ինձ համար դեռ այն ժամանակ բացայայտուեց մի ճշմարտութիւն որ մարդ ուրիշին յաղթելու համար ամէնից առաջ ինքն իրեն պէտք է յաղթի։ Դա շատ կարեւոր ճշմարտութիւն է, որի էութիւնը զգացել էի տարիներ առաջ, բայց ձեւակերպումը գտայ միայն հիմա, երբ պարկի մէջ կապոտած ինձ նետել էին չգիտեմ թէ ո՛ր գրողի ծոցը։

Իմ փոխարեն մէկ ուրիշը երեւի արդէն խեղդուած կը լինէր։ Իսկ ես փորձ ունէի։ Հանգիստ պառկած մտածում էի ու միաժամանակ ջանում խորն ու համաչափ շնչել։ Յետոյ փորձեցի շարժուել։ Դա, պարզուեց որ այնքան էլ դժուար բան չէ։ Եթէ գիտէնայի, թէ որտեղ եմ, ապա կարող էի ոտքի կանգնել ու թոչկոտելով գնալ դեպի տուն։ Ծիծաղս եկաւ։ Պատկերացրեցի Մարմար ազիին՝ եթէ նա այդ վիճակում ինձ տեսնէր։ Չէր էլ հասցնի խաչակնքել։ Վախից սիրտը կը պայթէր, ու վերջ։

Ամէնից կարեւորն այն էր, որ պարկի մէջ ձեռքերս ազատ էին։ Որոշեցի լայնացնել աչքիս դիմաց գտնուող անցքը։ Բայց օգուտն ի՞նչ... Անցքը մի փոքր լայնացաւ։ Մատս ազատ դուրս էր գալիս։ Սակայն պարկի գործուածքը շատ ամուր էր…

Եթէ միայն դանակ ունենայի՛... Գոնէ պեղումների գործիքներից մէկնումէկը... Թէկուզ եւ ծայրը տափակեցրած մեխը: Այնուամենայնիւ, ստուգեցի գրպաններս: Թաշկինակ... ռետին... թղթի կտոր... Որտեղի՞ց է յայտնուել գրպանումս: Հա՛... Նաթի գրած նամակն է:

Նաթի գրած նամա՞կը:

Ես անօգնականութիւնից քիչ էր մնում ոռնայի: Ա՛յ թե ձեռքս կ'ընկնի Շէկ Դավիթը: Եւ ինչո՞ւ անցեալ օրը, պեղումների ժամանակ մի լաւ չհասցրի նրան: Հիմա միայն հասկացայ, թէ որքան հիմար, դիւրահաւատ մարդ եմ ես: Եւ վերլուծական միտք էլ չունեմ: Բոլորովին չունեմ:

Զայրոյթը սկսեց խեղդել ինձ: Պատճառը իմ յուսահատ վիճակն էր ու այն դաժան գիտակցութիւնը որ միամտօրեն ընկել եմ ծովահէնների՝ խնամքով նախապատրաստած ծուղակը:

Համոզուած էի, որ նրանք իսկապէս հէնց այդպէս էլ կը թողնեն ինձ: Ո՞վ կարող է գտնել իմ հետքերը: Մինչեւ ուշ երեկոյ ոչ ոք չի անդրադառնայ իմ բացակայութեանը: Իսկ երբ մութն ընկնի, մայրս կը սկսի նորէն ու նորէն յանդիմանութիւնների տարափն իմ հասցէին: Բայց այս երեկոյ նրա բոլոր կանխազգացումներն արդէն կ'իրականանան: Հայրիկն էլ մէկ ընդ միշտ կը համոզուի որ այնուամենայնիւ աշխարհում փորձանքներ շատ կան… որ մայրս ի զուր չէր անհանգստանում իմ ու Ռուբէնի համար:

Սիրտս սկսեց արագ-արագ խփել, որովհետեւ փրկութեան ոչ մի յոյս չէի տեսնում: Կ'որոնեն ամբողջ գիշեր, կ'որոնեն, յետոյ կը յայտնեն միլիցիա: Մի քանի օր շարունակ Լուսաշէնում կը խօսեն միայն իմ մասին: Մարմար ազին ոգեւորուած սրան-նրան կը պատմի չարքերի մասին, կ'երդուի որ աչքով է տեսել... նոյնիսկ կը խաչակնքի: Եւ կ'ուրախանայ որ այս անգամ իրեն ականջ դնող կայ: Իսկ Բարթուղ պապը կը սկսի եղած-չեղած պատմութիւններ յօրինել, հին-հին դէպքեր յիշել... Յետոյ կամաց-կամաց կը մոռանան ինձ:

Ի հարկէ կը մոռանան: Բացի մերոնցից:

Այդ տխուր հեռանկարներից ես կարգին յուզուեցի, ձեռքս նորէն տարայ գրպանս: Վառիչն ընկել էր թոկի տակ, բայց հեշտութեամբ դուրս եկաւ: Մեքենաբար սեղմեցի ողորկ լծակը:

Կայծերի խուրձ...

Մի ակնթարթ միայն լուսաւորուեց պարկի ներսը: Դա ինձ սիրտ տուեց: Նորից չրխկացրեցի: Դարձեալ կայծերի խուրձ... յետոյ պատրոյգը բոցավառուեց: Ես լծակը բաց չթողեցի, ու հիանում էի բոցի լեզուակով, որ ցածում կապտաւուն-թափանցիկ էր, իսկ ծայրը՝ կարմրաւուն, եւ աստիճանաբար սեւացող երիզով:

Ուրեմն, ես մենակ չեմ: Կրակն իսկապէս սրտապնդեց ինձ: Ու ես մի անգամ եւս ապշեցի այս սովորական վառիչի կախարդական յատկութիւնների վրայ:

Պարկի մէջ այդպէս կիսապառկած, կիսանստած, ես հիանում էի փոքրիկ, կենդանի բոցով, երբ յանկարծ այրուածի հոտ եկաւ: Անմիջապէս թողեցի վառիչի լծակը: Այդ էր պակաս, որ ողջ-ողջ խորովուէի: Աչքերս դեռ չէին վարժուել խաւարին, երբ նկատեցի, որ պարկի հիւսուածքն այրւում է: Լուսաւոր կետերը միառժամանակ մլմլացին, յետոյ մի քանի միլիմետր սողալուց յետոյ՝ մարեցին:

Կծու ծխից սկսեցի հազալ: Միեւնոյն ժամանակ ամէն տեսակի վիրաւորական արտայայտութիւններով հարձակուեցի ինքս ինձ վրա:

Միայն ինձ նման անուղղելի կերպով խախտուած բթամիտը կարող էր անմիջապէս չկռահել:

Պարկի այրուած տեղը հեշտութեամբ լայնացրեցի այնքան, որ ձեռքս ազատ դուրս եկաւ: Յետոյ նորից չրխկացրեցի վառիչը, ու պահելով կտաւի վրայ, դանդաղ շարժեցի մէկ վեր, եւ ապա՝ դէպի վար:

Պարկը լոբու պատիճի պէս կիսուեց մէջտեղից: Ես գլուխս դուրս հանեցի: Մութ էր: Մի՞թէ օրն այդքան շուտ անցաւ:

Ճիշտն ասած, այնպէս էի ոգեւորուել, որ ծուլացայ

հանգոյցը քանդել, եւ գերադասեցի վառիչի բոցով այրել-կտրել թոկը:

Թեթեւացած շունչ քաշեցի: Մտքովս երբէք չէր անցել, թէ որքան լաւ բան է, երբ մարդու ձեռքերն ու ոտքերը ազատ են:

Նայեցի շուրջս:

Ա՜յդ էր պակաս:

Ես քարէ տոպրակի մէջ էի:

Տոպրակի տակը բաւականին լայն էր: Յետոյ պատերը հետ զհետէ նեղանում էին, եւ վերը իրար միանում այնպէս, ասես մի հսկայ թոկով ամուր կապել էր տոպրակի բերանը, չանդրադառնալով, որ ցածը ճեղք կայ, որից թափանցում էր լոյսի մի նեղ շերտ:

Ճեղքը գետնից բարձր էր: Ես մօտեցայ ու փորձեցի դուրս նայել: Երեւաց կապոյտ-կապոյտ երկինքը: Եւ ուրիշ ոչինչ: Փորձեցի տեղից շարժել քարանձաւի մուտքը փակող ժայռաբեկորը, բայց ապարդիւն: Նախ՝ տեղս էր անհարմար: Յետոյ՝ քարն էր բաւականին ծանր:

Ճարահատեալ նստեցի քարանձաւի խորքը, գրկեցի ոտքերս, ու գլուխս ծնկներիս հենած, անթարթ նայեցի լոյսի նեղ շերտին որ անհոգ փռուել, տարածուել էր հատակի վրայ:

Դրութիւնը յուսահատական էր:

Ես հոգնեցի լոյսի շերտին նայելուց: Աչքերս գոցեցի ու որոշեցի յիշել, թէ ինչպիսի միջոցներ գոյութիւն ունեն քարէ տոպրակից դուրս գալու համար: Միջոցները, ի հարկէ, շատ էին: Բայց դրանք օգտագործելու համար անհրաժեշտ էին մուրճ կամ բրիչ, վառոդ կամ նիտրոգլիցերին...

Եւ միակ մխիթարական միջոցը համբերատարութեամբ սպասելն էր: Սպասել մինչեւ ծովահէնները բարեհաճեն... Խուճապի մէջ ընկնելու կարիք չկայ: Նրանք պարզապէս սպառնացին, թէ կը թողնեն այս տոպրակի մէջ, մինչեւ որ քաղցամահ լինեմ: Համոզուած էի որ նրանք այս նոյն պահերին աւելի անհանգիստ էին, քան ես: Վստահ էի որ հազիւ են իրենց զսպում, որպէսզի ոչպէ առաջ չգան ու չարձակեն ինձ: Կարեւորն այն է որ համբերութեամբ սպասեմ: Իսկ երբ նրանք գան, ես պէտք է այնպէս ձեւանամ որ իբր շատ լաւ էի զգում քարանձաւի մէջ: Որպէսզի մտքներովը չանցնի, թէ ես ընկճուել եմ կամ վախեցել:

Աչքս ընկաւ դիմացի պատին, որի վրայ խաղում էր արեւի ճառագայթը: Իմ ուշադրութիւնը գրաւեցին մրի շերտերն ու ճարպամոմի հետքերը: Ես նստած տեղից վեր թռայ ու մօտեցայ պատին: Վառիչը չրխկացրեցի ու ճարպամոմը կեղտոտ մի բոցով ճաթճաթեց: Ու երբ վառիչը հեռացրեցի, կեղտոտ բոցը մարեց, իսկ քարանձաւի պատին մնաց աւելի մուգ մի շերտ:

Ես հերթով մօտեցայ բոլոր պատերին: Քարերի ցցուածքներին որոշակիօրեն նկատելի էին մոմերի հետքերը:

Երեւի այնքան էլ բութ մարդ չեմ, որովհետեւ անմիջապէս կռահեցի, որ այս անձաւը բնաւ էլ անյայտ մի տեղ չէ: Հայրս պատմել էր որ շատ առաջ, երեւի մօտ հարիւր տարի առաջ, մարդիկ իջնում էին ձորը եւ այնտեղի քարանձաւներից մէկում մոմ վառում: Մի խօսքով, սրբատեղին մի ժամանակ եղել է հէնց այս քարէ

տոպրակը: Բայց ամէն անգամ ձորն իջնելն ու բարձրանալը բաւականին դժուար գործ էր: Ու սրբատեղին տեղափոխել են աւելի հարմար մի տեղ, բլրակի գլխին:

Բայց այս ի՞նչ խորշ է:

Ոտքիս տակ ընկած չոր ճիւղերից մէկը վառեցի ու մօտեցայ խորշին: Նայեցի ներս: Բոցը թրթռաց, ձգուեց դէպի խորշը, նորէն թրթռաց ու մարեց օդի սաստիկ հոսանքից:

Այդպէս ուրեմն:

Դա ոչ թէ խորշ է, այլ գետնանցք:

Յետ քաշուեցի ու նստեցի գետնին ընկած քարերից մէկի վրայ:

Գլուխս առա ափերիս մէջ ու պաղած աչքերով նայեցի այդ անհրապոյր, ժամանակին մարդկանց երեւակայութիւնը բորբոքող, իսկ այժմ լքուած ու մոռացուած անձաւի ճարպակալած պատերին:

Չգիտեմ, թէ որքան ժամանակ նստեցի այդպէս, բայց եղաւ մի պահ որ ձանձրոյթը սկսեց նորէն խեղդել ինձ: Սիրտս ճմլուեց ու վրաս դարձեալ մի յուսահատութիւն իջաւ:

Իսկ եթէ ծովահէնները իսկապէ՞ս վճռել են քաղցամահ անել ինձ:

Ծանր մի հոգոց հանելով, ոտքի ելայ: Նայեցի գետնանցքի մուտքին:

Գուցէ սա՞ է իմ փրկութիւնը: Գուցէ գետնանցքը այնուամենայնիւ դուրս է գալիս լոյս աշխա՞րհ:

Այդ միտքը ոգեւորեց ինձ:

Եթէ ենթադրութիւնս ճիշտ է, ապա... Ես պատկերացրեցի ծովահէնների դէմքի արտայայտութիւնը, եթէ յանկարծ ինձ տեսնեն դարաւոր ընկուզենու տակ, Գլասեւոս պապի հետ զրուցելիս: Ես միայն արհամարհանքով կը չափեմ նրանց ոտքից գլուխ, ու կը շարունակեմ իմ հետաքրքիր զրոյցը:

Նորէն վառեցի չոր ճիւղը… եւ կրակը ափով պաշտպանելով, մտայ գետնանցք: Սկզբում ստիպուած էի կռացած քայլել: Մի քանի մետր գնալուց յետոյ նկատեցի որ գետնանցքը լայնանում է: Ես ուղղուեցի: Կարմրաւուն բոցը շատ թոյլ էր լուսաւորում, եւ ամէն վայրկեան կարող էր մարել օդի ուժեղ հոսանքից:

Քիչ անց ստորգետնեայ ուղին գրեթէ ուղիղ անկեան տակ թեքուեց դէպի ձախ: Վառուող ճիւղը մի քիչ բարձրացրեցի, որպէսզի գոնէ տեսնեմ, թէ առջեւը արդեո՞ք փակուղի չկայ: Կրակը մի քանի վայրկեան թրթռաց, յետոյ հոսանքը պոկեց այն ճիւղի ծայրից ու տարաւ իր հետ դեպի գետնանցքի խորքը: Իմ ձեռքին մնաց ծայրն ածխացած ճիւղը որ մի քիչ էլ առկայծեց ու մարեց: Շփոթուած կանգնեցի: Այնուամենայնիւ հասցրեցի նկատել, որ իմ առջեւ անվերջանալի գետնուղու մութ երախն է: Լիակատար խաւարի մէջ մի քանի քայլ առաջ գնացի… բայց երբ ահարկու լռութեան մէջ պարզորոշ լսուեցին սրտիս թնդացող զարկերը, որոշեցի կրկին վառել ջահը:

Մի քանի անգամ չրխկացրի վառիչը, բայց ճիւղը վառել այնպէս էլ չյաջողուեց: Յուսահատուած ու զայրացած, ճիւղը նետեցի, եւ մի քանի քայլ եւս խորացայ խաւարի մէջ:

Բայց այլեւս հնարաւոր չէր դիմանալ այն սոսկալի զգացողութեանը որ պատել էր ինձ գետնանցքի մէջ: Թւում էր, թէ գետնանցքը անդադար նեղանում, չորս կողմից սեղմում է ինձ, եւ ուր որ է կը ճզմի, կը ճզմի ու կը դարձնի բլիթ: Որոշակիօրեն զգում էի այն վիթխարի ծանրութիւնը որ կախուած էր վրաս: Իսկ եթէ գետնանցքի առաստաղը չդիմանա՞յ... Ես սարսռացի ու սեղմեցի վառիչը լծակը: Խաւարն անմիջապէս նահանջեց մի քանի քայլ: Տեսնելով գետնանցքի պատերն ու բաւականին բարձր առաստաղը, սրտապնդուեցի ու շարունակեցի առաջ գնալ:

Վառիչի լոյսն աւելի հարմար էր: Կրակը ափով պաշտպանելու ոչ մի անհրաժեշտութիւն չկար: Երբ բոցը մարում էր, խաւարն ինձ կուլ էր տալիս մի քանի վայրկեան միայն: Ես նորէն սեղմում էի լծակն ու աղօտ լոյսը սպունգի նման ներծծում էր մութը:

Իսկ գետնանցքը վերջ չունէր:

Վառիչի բոցն սկսեց նուաղել: Փոքրացաւ, դարձաւ մի կէտ, ու մարէց: Ես մի քանի անգամ իրար յետեւից սեղմեցի լծակը: Կայծերի խուրձը առատօրեն ժայթքում էր անւակի տակից, բայց պատրոյգը այլեւս չէր վառում:

Բենզինն էր վերջացել:

Ես կանգնեցի:

Ոչ համարձակւում էի քայլել առաջ, եւ ոչ էլ յետ դառնալ էի ուզում: Այդպէս, անորոշ վիճակում կանգնեցի, կանգնեցի... եւ ապա, երբ ինքս ինձ ստիպեցի խուճապի մէջ չընկնել, պարզուեց, որ ամենաճիշտ ելքը առաջ գնալն է: Չէ՞ որ վերադառնալիս, դարձեալ նոյն խաւարն է ինձ ուղեկցելու:

Ձեռքերս պարզեցի առաջ ու շարունակեցի քայլել: Քիչ յետոյ պարզուեց որ դիմացս պատ է: Այս անգամ գետնանցքը թեքւում էր դէպի աջ: Եւս մի քանի քայլ... եւ ճիշտ իմ դիմաց, խորքում, այնտեղ, ուր ըստ երեւոյթին վերջանում էր գետնանցքը, նշմարեցի աղօտ մի լոյս:

Քայլերս արագացրեցի, որովհետեւ գետնանցքն ինձ տանելու էր դէպի ազատութիւն: Մի պահ միայն տարակուսեցի, թէ ինչո՞ւ է թոյլ այդ լոյսը: «Երեւի մթնում է»,— ենթադրեցի ես գրեթէ վազելով, որպէ առաջ անցնելու համար մի քանի մետր տարածութիւնը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Գաղտնարանը: Առանց փականի սնդուկը որի կափարիչը, սակայն, չի բացւում: Գլասեւոս պապը օգնութեան է հասնում: Երեքնուկով շղթան: Թէ ինչու էր խառնում Ճիզվիտ Կարոյի սիրտը:

ԵՍ հիասթափուած մեխուեցի տեղումս, որովհետեւ գետնանցքը միանգամից խոշորացաւ ու դարձաւ մի ընդարձակ անձաւ:

Ճիշտ իմ դիմաց, երկու-երեք մետր բարձրութեան վրայ, անձաւի թեք պատի անցքից թափանցող լոյսը մեղմօրեն ողողել էր շուրջը: Դրսի կողմից, անցքի եզրին մի հինաւուրց ծառ կար երեւի, որի արմատները երկաթացանցի նման հիւսուել էին բացուածքի վրայ, կախուել անձաւի պատերից, իսկ մի քանիսն էլ օղակուել ու դարձեալ մխրճուել էին պատի մէջ:

Անորոշ մի յոյսով նայեցի այդ անցքին: Գուցէ կարողանամ այնտեղի՞ց դուրս գալ:

Երկնքի թափանցիկ բաց կապոյտը դարձել էր մուգ, նոյնիսկ երեւի գորշ: Ըստ երեւոյթին արդէն իրիկնանում էր: Ես համոզուած էի, որ եթէ կարողանամ հասնել ճեղքին, ապա հնարաւոր կը լինի նաեւ մի կերպ անցնել միահիւսուած արմատների արանքով:

Անձաւի յատակին դեսուդեն ընկած քարակտորները կիտեցի ճեղքի տակ: Բայց կէս մետրանոց այդ բարձրութիւնից դրսի աշխարհը շարունակում էր մնալ դեռեւս շատ հեռու եւ անհասանելի:

Իսկ եթէ կարողանամ խորքում գտնուող ժայռաբեկորը տեղաշարժէլ...

Մօտեցայ ու փորձեցի: Ժայռաբեկորը շատ հաստատուն էր նստել իր տեղը ու շարժուելու ոչ մի մտադրութիւն չուներ:

... Իսկ եթէ հիմա, միւս անձաւում, ծովահէնները եկել ու ինձ են որոնո՞ւմ: Այս ենթադրութիւնը մի պահ միայն անհանգստացրեց ինձ: Ու ես դարձեալ որոշեցի, որ ամէնից ճիշտը սեփական ուժերի վրայ յոյս ունենալն է: Ծովահէնները սովորաբար դաժան են լինում եւ չափազանց մոռացկոտ: Նրանք ընդունակ են հաշուեյարդար տեսնել ազնիւ մարդկանց հետ ու այլեւս բնաւ չանդրադառնալ, որ յանցագործութիւն են կատարել: Մոռացկոտութիւնը նրանց խիղճը միշտ մաքուր է պահում: Գոնէ իրենք այդպէս են համոզուած:

Երկու ձեռքով կառչեցի ժայռաբեկորից, ոտքերս հենեցի պատին ու սեղմեցի: Մկաններս այնպէս էին լարուել, որ թւում էր, թէ քաշս տասնապատկուել է, ու քիչ յետոյ ժայռաբեկորը տեղի կը տայ:

Բայց դա միայն թւում էր:

Հրաժարուելով իմ մտադրութիւնից, բաց թողեցի քարը, ու հէնց այդ ժամանակ էլ նկատեցի, որ այն թեթեւակի ցնցուեց:

Աջ ձեռքով հենուեցի ժայռաբեկորին ու զգուշութեամբ հրեցի: Նորէն հրեցի: Նորէն ու նորէն...

Եւ ժայռաբեկորը սկզբում գրեթէ աննկատ, յետոյ աւելի ու աւելի բացայայտօրեն սկսեց ճօճուել: Ես ընկայ մոլուցքի մէջ: Շարունակեցի հրել երկու ձեռով: Ժայռաբեկորի տափակ գագաթը տատանւում էր երաժշտական չափաբեր ճօճանակի նման, որի վրայի ծանրոց-սողնակը դրուած է Grave կամ Largo նշումի վրայ:

«Մե՛կ... Երկո՛ւ... Մե՛կ... Երկո՛ւ...»,— բարձրաձայն սկսեցի հաշուել ես, ու բարեբախտաբար ժամանակին կարողացայ յետ ցատկել, որովհետեւ ժայռաբեկորը բաւականին ցած թեքուելով, դէպի իմ կողմը վերադառնալիս, չկարողացաւ թափը մեղմել ու դղրդոցով ընկաւ մի կողքի վրայ, յետոյ էլ կիսապտոյտ կատարեց:

Թեթեւացած շունչ քաշեցի: Այժմ մնում էր քարը մի քանի քայլ գլորել, բերել առաստաղի անցքի տակ ու փորձել: Եթէ աչքաչափս չէր խաբում, ապա միանգամայն հնարաւոր էր ժայռաբեկորի վրայ միւս քարակտորներից բուրգ սարքել ու մի ցատկ կատարելով՝ կառչել հաստ արմատներից: Յետոյ... յետոյ հարկ կը լինէր ձգուել, ինչպէս պտտաձողի վրայ, եւ դուրս գալ այս անիծեալ զնդանից:

Ձեռքերս շփեցի ու անցայ պատի կողմը, որպէսզի մէջքով հենուեմ ու ոտքերով հրեմ ժայռաբեկորը:

Գրո՛ղը տանի...

Քիչ մնաց փռուէի հասակով մէկ, որովհետեւ պատի փոխարէն մի մութ դատարկութիւն էր: Մի՞թէ դա մի նոր գետնանցք է, որի մուտքը ինչ որ մարդիկ դիտաւորեալ փակել էին ժայռաբեկորով: Գուցէ հիմա՞, առանց մարմնամարզական ճիգերի, կը կարողանամ դուրս գալ այստեղից:

Քանի որ վարժուել էի գետնանցքով գնալուն, ես համարձակօրեն մտայ խորշը: Եւ հազիւ զսպեցի ճիչս, որովհետեւ ծունկս մի կոշտ բանի դիպաւ այն դէպքում, երբ առաջ պարզած ձեռքերս ոչ մի արգելքի չհանդիպեցին:

Մի ձեռքով տրորեցի ցաւեցրած ծունկս, իսկ միւսով փորձեցի ստուգել, թէ քարն արդեո՞ք խոշոր է:

Ստուգելուց յետոյ պարզուեց, որ դա բնաւ էլ քար չէ, այլ՝ երեւի արկղ: Փորձեցի բարձրացնել, բայց ի զուր: Որոշեցի քաշելով դուրս բերել: Եւ դա ինձ յաջողուեց:

Դա ոչ թէ արկղ էր, այլ սնդուկ:

Հին, երեւի շատ հին մի սնդուկ: Կափարիչը թեթեւակի կորութիւն ունէր ու ծածկուած էր բրոնզէ կամ աւելի շուտ՝ պղնձէ, տեղ-տեղ կանաչած, նախշաւոր շերտերով: Մի այդպիսի սնդուկ էլ մեր տանն ունենք, որի վրայ երբեմն նստում ու

նայում եմ դիմացի պատից կախած լուսանկարներին: Մեր տան սնդուկն էլ է հին, բայց ոչ այսքան:

Ու յիշելով մեր տան սնդուկը, սիրտս յանկարծ թրթռաց:

Հինաւուրց սնդուկների մէջ սովորաբար պահում են նոյնքան հինաւուրց իրեր: Ես դա հաստատ գիտեմ:

Գուցէ այս սնդուկի մէջ է՞լ գանձեր կան... Այլապէս, ինչո՞ւ են այսքան խնամքով թաքցրել:

Ամէնից առաջ, բնականաբար, փորձեցի բացել կափարիչը: Չկարողացայ: Տարօրինակն այն էր, որ դրսի կողմից ոչ մի փական չունէր սնդուկը: Ես շուարած կանգնեցի, մտածելով, թէ ինչպիսին պէտք է լինեն հետագայ գործողութիւններս: Եւ, ըստ երեւոյթին, որեւէ խելացի բան չկարողանալով որոշել, երկու ձեռքով բռնեցի սնդուկի միակ կանթից ու քաշեցի դեպի գետնանցքը: Մի քանի քայլ սնդուկը սահեց հանդարտ ու հնազանդօրեն, բայց յետոյ դեմ առաւ մի ցցուածքի, ու ես ստիպուած մի փոքր բարձրացրեցի ու նորէն քաշեցի առաջ:

Ես նոյնիսկ չանդրադարձայ որ գետնանցքում մութ է, չանդրադարձայ որ այն բաւականին երկար է: Քրտինքի մէջ կորած՝ ես քաշում ու քաշում էի սնդուկը, բոլորովին մոռացած, որ ի զուր եմ տանջւում, միեւնոյն է, ես էլ, սնդուկն էլ անյուսալի վիճակում ենք:

Յետոյ մելանի պէս խաւարը լուծուեց տարօրինակ, կապտաւուն եթերի մէջ, յետոյ բոլորովին նահանջեց, ու ես, սնդուկի հետ յայտնուեցի մեղմ լոյսով ողողուած առաջին քարանձաւում:

Շունչս յետ բերելուց յետոյ առաջին հերթին մօտեցայ փակ մուտքին, ու երկու ափերս խոսափողի պէս պահելով բերանիս մօտ, կոկորդիս ամբողջ ուժով ձայն տուեցի.

— Է՜-հե՜յ... ո՞վ կայ այդտեղ... Հե՜յ... Օգնեցէ՜ք...

Ի հարկէ, շրջապատում ոչ ոք էլ չկար:

Վերադարձայ սնդուկի մօտ: Ցնցեցի կափարիչը, կանթը ձգեցի, թխկացրեցի բոլոր կողմերից, ինչպէս բժիշկն է թխկացնում հիւանդի կուրծքն ու մէջքը: Բայց ի զուր: Սնդուկը չէր բացւում:

Բարկացած, մի անգամ էլ հարուածեցի ոտքով, ու հէնց սնդուկի վրայ նստած, մի կուշտ ոռնացի: Յետոյ, երբ հանգստացայ ու համոզուեցի որ միեւնոյն է, լացն էլ չի օգնի, գլուխս բռնած, նայեցի մուտքը փակող քարաբեկորի արանքից երեւացող կապոյտ երկնքին որ քիչ յետոյ ծածկուելու էր մոխրագոյն շղարշով, եւ ապա՝ աշխարհի վրայ իջնելու էր գիշերային թանձր ու անթափանց խաւարը: Այդպէս նստած, մտածում էի, յիշում էի կեանքիս ամենաուրախ օրերը, ու նաեւ որոշում, թէ ինչ կ'անեմ, եթէ ինձ յաջողուի ազատուել այս տխուր քարանձաւից: Յետոյ չկարողացայ համբերել: Դարձեալ նետուեցի դէպի փակ մուտքն ու ձայն տուեցի.

— Է-հէ՜յ... Օգնեցէ՜ք... Է՜-հէ՜յ-հէ՜յ...

Լռութեան մէջ, հեռուներից լսւում էր գետի խուլ վշշոցը:

— Օգնեցէ՜ք... Հէ՜յ... Օգնեցէ՜ք...

Ու ասես արձագանգի պէս քարանձաւ հասաւ մի ձայն.

— Է՜-հէ՜-հէ՜-հէ՜յ...

Դա, ի հարկէ, արձագանգ չէր: Ես չհաւատացի ականջներիս ու դարձեալ կանչեցի:

Այս անգամ պատասխանը լսուեց աւելի մօտիկից:

Յետոյ զառիթափից գլորուեցին փոքր ու մեծ քարակտորները:

— Հէ՜յ... Ո՞վ է... Ո՜վ կայ...

— Ե՜ս եմ... Գլասեւոս պապ... Տիգրա՜նը,— գոչեցի ես:

Ու այդ վայրկեանից էլ իմ բոլոր անհանգստութիւնները, վախը, յուզումները չափազանց ծիծաղելի թուացին։

— Գլասեւոս պապ... Քարանձաւում եմ...

Ոտնաձայները մօտեցան։ Յետոյ քարանձաւը միանգամից մթնեց, որովհետեւ Գլասեւոս պապը իր մարմնով փակեց ճեղքը։

— Տիգրա՞ն... Այստեղ ի՞նչ ես անում... Ես էլ սպասում էի քեզ։ Յետոյ որոշեցի մենակ իջնել ձորը՝ կաւ քանդելու։

— Պապ, կարո՞ղ ես քարը մի կողմ քաշել,— անհամբեր ասացի ես։— Առաւօտից փակել են...

— Ովքե՞ր։

— Ծովահէնները։

— Ծովահէնները,— քրթմնջաց պապը։— Ծովահէնները... Հապա, այդ կողմից էլ դու օգնիր։ Մէ՛կ... երկո՛ւ...երե՛ք...

Ու քարանձաւի մուտքը բացուեց։

— Հիմա ասա տեսնենք, թէ ի՞նչ գործ ունես այստեղ,— կռանալով ներս մտաւ Գլասեւոս պապը։

— Ծովահէնները ինձ ծուղակն էին գցել։

— Նորէն՝ ծովահէնները,— բարկացաւ պապը։

— Առաւօտից փակել են ու գնացել,— ասացի ես։— Իսկ ես գանձ եմ գտել, պա՛պ։

— Հիմա էլ՝ գանձ... Ծովահէննե՛ր, գա՛նձ... Ախր արդէն մեծ տղա ես,— ասաց Գլասեւոս պապը, յետոյ մեքենաբար նայեց իմ ցոյց տուած կողմը։— Գա՞նձ։ Այս ինչ սնդուկ է։

— Քովի քարանձաւից գտայ։ Գետնանցքով գնացի ու պարզուեց որ մէկ ուրիշ անձաւ էլ կայ։ Խորշի մէջ էին թաքցրել։

— Իսկապէս, սնդուկ է,— ինքն իրեն ասաց Գլասեւոս պապը։— Մէջը բան կա՞յ։

— Երեւի։

— Ի՞նչ է։

— Չգիտեմ։

— Կողպա՞ծ է։

— Երեւի։

Պապը մօտեցաւ սնդուկին, տնտղեց, շոշափեց պղնձէ գամերը, թեթեւակի սեղմեց դրանցից մեկը, ու կափարիչը ինքն իրեն բացուեց։

— Զսպանակով է,— ասաց Գլասեւոս պապը։

Սնդուկի պարունակութիւնը ծածկուած էր գունաթափ կտաւով։ Գլասեւոս պապը զգուշօրեն բռնեց կտաւի եզրը ու բարձրացրեց։

Եթէ սնդուկի մէջ իսկապէս ոսկէ զարդեր լինէին, ես, հաւանաբար, այդպէս չէի զարմանայ եւ յուզուի։ Բայց տեսնելով կաշէկազմ ու հաստափոր գրքերը, նոյնիսկ սուլեցի։

— Գրադարա՞ն է,— շշուկով հարցրեցի ես։

Գլասեւոս պապը դողացող ձեռքով վերցրեց գրքերից մէկն ու բաճկոնի թեւքով սրբեց կաշիէ կազմը։ Յետոյ գիրքը բացեց, ու ես տեսայ, թէ ինչպէս են շարժւում նրա շրթունքները։ Անձայն, անշշուկ։ Չուզեցի խանգարել այդ հանդիսաւոր պահը, եւ պպզելով սնդուկի առաջ, ապշահար զննեցի խնամքով դասաւորած գրքերը։

Աչքովս մի տարօրինակ առարկայ ընկաւ, որն սկզբում, չհասկացայ, թէ ինչ էր։ Բայց երբ փորձեցի վերցնել, նախ՝ դէպի վեր ձգուեց մետաղեայ նուրբ մի շղթայ, որից սահեց ու ափիս մէջ ընկաւ մետաղադրամի չափ մի երեքնուկ։

Սիրտս սկսեց արագարագ խփել։

Շղթան հաւաքեցի բռիս մէջ ու ամուր սեղմեցի։

— Ի՞նչ,— սթափուելով, հարցրեց Գլասեւոս պապը, եւ գիրքը գոցելով, երկիւղածութեամբ դրեց տեղը, նորէն վրան քաշեց գունաթափ կտաւն ու փակեց սնդուկի կափարիչը։— Գրադարանն է,— ասաց նա։—Ախր Նաթանայէլն ասում էր որ մօտերքում գրադարան են թաքցրել։

Ես բռնեցի սնդուկի կանթից ու նայեցի Գլասեւոս պապին։

— Չէ՛, թող մնա՛։ Երկուսով չենք կարողանայ տանել։ Ահագին ճանապարհ է... Օգնի՛ր, մուտքը նորէն փակենք։

Քարաբեկորը դարձեալ շրջեցինք քաբանձաւի մուտքի վրայ։

Իրիկնանում էր։

Իսկ ծովահէնները ահագին տանջուել էին ինձ քարշ տալիս։ Գետափի կաղնուց մինչեւ քարանձաւ մօտ երկու հարիւր մետր կը լինէր։

— Մի՛ վազիր,— ասաց Գլասեւոս պապը։—Դեռ կաւ պիտի քանդենք։

Երբ քայլեցինք դեպի կաւահանք, ճանապարհին Գլասեւոս պապը հարցրեց.

— Ասում ես՝ ինչո՛ւ էիր մտել քարանձաւ։

— Ես չէի մտել։ Ծովահէնները խաբեցին։

— Ծովահէնները,— փնթփնթաց Գլասեւոս պապը։— Կարգին բան ասա՛, հասկանամ։

— Շէկ Դավիթը նամակ բերեց, թէ Նաթը գետափին ինձ է սպասում։ Ես էլ եկայ։ Յետոյ պարկը գլխիս քաշեցին ու տարան նետեցին քարանձաւ։

— Ովքե՞ր։

— Դե՛հ, Կարոն ու Սերոբը,— ասացի ես։— Վրէժ էին լուծում։ Ձեռքս դեռ կընկնե՛ն,— սպառնացի ես։

— Կարո՞ն,— կրկնեց Գլասեւոս պապը։—Խեղճ տղային հիւանդանոց տարան կէսօրին։ Կոյր աղիքն էր... Կտրելու են։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

Այն ջերմութեան մասին, որը հազարաւոր կիլոմետրերի վրայով էլ գալիս հասնում է մարդուն։ Այցելութիւն Ճիզվիտ Կարոյին։ Ծովահէններն էլ երազել գիտէն։

ՉԳԻՏԷԻ, թէ նա ի՛նչ է խնդրելու, ո՛ւմ համար, ինչո՛ւ, բայց խոստացայ, որովհետեւ աշխարհում ամէնից շատ ուզում էի հանդիսաւորութեամբ Նուարդին նուիրել երեքնուկով այն շղթան, որ գտել էի սնդուկի մէջ։

Սովորական շղթայ էր եւ մետաղեայ սովորական մի երեքնուկ։ Եւ հնէաբանական ոչ մի արժէք չունէր, յատկապէս այդքան հարուստ գրադարանի համեմատութեամբ։

Ու երբ Նուարդը եկաւ, ես նրան հրաւիրեցի ճաշասենեակ։ Ռուբէնը ժպտալով պատասխանեց Նուարդի բարեւին ու հարցական հայեացքով ինձ նայեց։ Նայեց, հասկացաւ ու ներողութիւն խնդրելով, թէ շատ շտապ գործ ունի, դուրս ելաւ սենեակից։

Անուշեղենի թիթեղեայ տուփի միջից շղթան վերցրեցի ու հաւաքեցի բռիս մէջ։

— Յիշո՞ւմ ես, խոստացել էի, որ միասին պեղումներ ենք կատարելու։

— Յիշում եմ,— ասաց Նուարդը։— Բայց դու երկու անգամ էլ առանց ինձ ես յայտնագործութիւններ արել։

— Ի՞նչ յայտնագործութիւններ։

— Պղնձէ թասն ու գրադարանը։

— Ծովահէններին բողոքիր։ Ինչո՞ւ էին միայն ինձ փակում քարանձաւի մէջ։

— Կը բողոքեմ:
— Սպասիր, իսկ հիշո՞ւմ ես գեղեցկուհի Հեղինեի զարդերի մասին:
— Այդ էլ եմ յիշում,— ասաց Նուարդը:— Բայց մենք ուշանում ենք:
— Ո՞ւր:
— Ես քեզ խնդրել եմ:
— Իսկ ես խոստացել եմ,— ասացի ես, ներքուստ նեղուելով որ նա անընդհատ խանգարում է մտքերս կանոնաւոր արտայայտելուն:— Ես մի անգամ եմ խոստանում: Եթէ ասացի որ անվերապահօրեն կ'անեմ՝ ինչ էլ որ խնդրելու լինես, ուրեմն՝ կ'անեմ: Իսկ հիմա ուզում եմ քեզ մի զարդ նուիրել որը... ճիշտն ասած, չգիտեմ, թէ ումն է: Բայց դա նշանակութիւն չունի:
Երկու ձեռքով Նուարդի վզին հագցրեցի հինաւուրց շղթան: Փոքրիկ երեքնուկը դիպչելով նրա զգեստի կոճակին, մեղմ ծլնգաց:
— Հիմա նայիր հայելուն,— խնդրեցի ես:
Նուարդը շրջուեց ու նայեց պատից կախուած հայելուն, յետոյ ժպտաց, հակեց գլուխը, բայց չհամբերեց ու նորէն նայեց աչքի ծայրով:
— Վայելում է,— ասացի ես:
Նուարդը ժպտաց ու գլխով արեւց:
— Գիտէ՞ս որտեղից:
— Պեղումնե՞ր ես արել:
— Չէ: Սնդուկի միջից եմ գտել:
— Գրադարանի՞:
— Ըհը՛:
— Գուցէ շատ կարեւոր իր է,— անհանգստացաւ Նուարդը:— Ախր հնութիւն է: Նաթը տեսե՞լ է:
— Դժուար թէ կարեւոր լինի,— ասացի ես:— Երեւի պատահաբար է ընկել սնդուկի մէջ: Այդ ո՞ր գրադարանում են այսպիսի իրեր պահում:
— Ես Նաթին անպայման ցոյց կտամ,— որոշեց Նուարդը:
— Դու գիտես: Բայց թող առայժմ մնա վզիդ:
Նուարդը ծիծաղեց:
— Որ շատ ես ուզում՝ թո՛ղ մնայ:
Սենեակի դուռը զգոյշ բախեցին: Համոզուած էի, որ եղբայրս է:
— Ռուբէ՞ն:
Դուռն անաղմուկ բացվեց:
— Չե՞մ խանգարի:
— Ի՜նչ եք ասում,— բողոքեց Նուարդը:— Երեւի ես խանգարեցի: Աշխատո՞ւմ էիք:
Ռուբէնը մօտեցաւ, շոյեց Նուարդի մազերը, որոնցից միշտ հաճելի ու գլուխ պտտեցնող հոտ էր գալիս, եւ ժպտաց:
— Լաւ ընկերներ էք,— ասաց նա:— Ու ես նախանձում եմ ձեզ:
— Ես մի քանի րոպէով եկայ: Տիգրանի հետ մի տեղ ենք գնալու: Կարելի՞ է:
— Ի հարկէ,— ասաց Ռուբէնը:
— Դուք ընկեր չունե՞ք,— հետաքրքրուեց Նուարդը:
— Երեւի ունեմ,— պատասխանեց Ռուբէնը:— Դժուար է ասել... Այդ հարցում մարդիկ հեշտութեամբ են սխալւում:
— Դուք է՞լ,— հարցրեց Նուարդը:
— Ես էլ... այն էլ հաճախ: Դժուար բան է:
— Ընկերութիւն անե՞լը,— հարցրեցի ես:

— Ոչ, պահպանելը,— ասաց Ռուբէնը:— Դրա համար պէտք է ջանաք, որ ձեր ընկերութիւնը երբէք չխամրի: Ինչպէս էլ որ դասաւորուի կեանքը: Դա շատ կարեւոր է: Եթէ աշխարհի տարբեր ծայրերում էլ լինէք, շատ կարեւոր է ունենալ այն վստահութիւնը, որ գոնէ մէկը կայ, մի շատ մտերիմ ու հաւատարիմ մարդ որ յիշում է քեզ, կը գայ կը հասնի առաջին իսկ կանչի դէպքում, զօրաւիգ կը լինի... Իսկ մնացեալը սուտ բաներ են,— Ռուբէնը թախծոտ ժպտաց:— Սուտ են,— կրկնեց նա:— Սէ՛րը, սիրահարությո՛ւն... Բարեկամութի՛ւն կամ ազգականութի՛ւն... Միեւնոյն է: Ի՛նչ էլ որ լինի, ամէնից կարեւորը ընկերութիւնն է: Այն ջերմութիւնը, որը հազարաւոր կիլոմետրերի վրայով էլ հասնում է մարդուն: Եւ այդ դէպքում է որ լինում է սէր… բարեկամութիւն… ազգականութիւն…

Նուարդն ու ես զարմացած նայում էինք եղբօրս:

— Եթէ շտապում էք՝ գնացէք,— առաջարկեց Ռուբենը:— Հաճոյքով կը զրուցէի ձեզ հետ, բայց դա գործին չի օգնի: Ճիշտ է, թերեւս կը թեթեւանամ մի քիչ, բայց հիմա դա էլ այնքան կարեւոր չէ:

Մենք լուռ էինք:

Ես ուզում էի անպայման ինչ որ բան ասել: Շատ էի ուզում, բայց ոչ մի կերպ չէի գտնում, թէ յատկապէս ի՛նչ:

Բայց մի այնպիսի բան որ շատ անհրաժեշտ լինէր եղբօրս համար:

— Գնա՞նք,— կիսաձայն ասաց Նուարդը:

— Ըհը,— գլխով արեցի ես:— Գնա՛նք:

Ռուբէնը ժպտում էր:

... Փողոցում անմիջապէս սթափուելով, ես հարցրեցի.

— Իսկ ո՞ւր ենք գնում:

— Գեղեցիկ զարդ է,— ասաց Նուարդը, խաղալով շղթայի հետ:— Գնում ենք հիւանդանոց:

Մենք թեքուեցինք դէպի ձախ, եւ փողոցի կենտրոնում տեսայ Շէկ Դավիթին ու Լեոպարդո Սերոբոյին:— Ուշացա՞նք,— հարցրեց Նուարդը:

— Մի քիչ,– պատասխանեց Լեոպարդո Սերոբոն:

— Չէ,— ասաց Շէկ Դավիթը:– Հէնց նոր եկանք:

— Իսկ ծաղիկնե՞րը,— հարցրեց Նուարդը:– Մոռացե՞լ եք:

— Չէ՛,— ծոր տուեց Լեոպարդո Սերոբոն, ու շապիկի տակից հանեց դաշտային ծաղիկների մի փոքրիկ փունջ:

Նուարդը զննեց փունջն ու գլխով հաւանութեան նշան արեց:

Փողոցի ծայրին չհասած, թեքուեցինք դէպի հարեւան նրբանցքը, որտեղ երկ-յարկանի տների մէջ բազմել էր սրբատաշ քարից կառուցուած մի շէնք: Դա Լուսաշէնի ամենաբարձր շէնքն էր երեի: Լայն ու մեծ պատուհաններ ունէր, եւ առջեւն էլ մշակած այգի ու աւազանով ծաղկանոց: Գլխաւոր մուտքի վրա ամբացրած սեւ ու փայլուն տախտակին ոսկէգոյն, մեծ-մեծ տառերով գրուած էր. «ՀԻՒԱՆԴԱՆՈՑ»:

Նուարդի հետեւից համարձակօրեն մտանք ընդունարան, որտեղ դեղատնային մթնոլորտ էր տիրում: Յետոյ հագանք ճերմակ խալաթներ ու բարձրացանք երկրորդ հարկ:

«Վիրահատական բաժանմունք» — կարդացի ցուցանակի վրայ:

Երկարաւուն միջանցքի յատակը առատօրեն մոմել էին: Պատերից կախուած էին մի քանի իւղանկարներ՝ վիթխարի շրջանակների մէջ: Դրանցից երկուսը բնանպատկերներ էին, երրորդը իբրեւ թէ էր ծաղիկներով սափոր էր, իսկ ճիշտ մեր դիմաց, կտաւի վրայ, կանգնած էր տխմար հայեացքը ինչ որ անորոշ կէտի հառած,

դարչնագոյն կամ կապոյտ հագուստով մի մարդ, որը թեւատակին ոլորած թուղթ ու մի երկար քանոն ուներ:

Նուարդը կանգնեց դռներից մէկի մօտ:

— Հիմա,— ասաց նա,— որոշենք, թէ ո՛վ է առաջինը ներս մտնելու:

— Կարոն այստե՞ղ է,— յուզուած հարցրեց Շէկ Դավիթը:

— Այստեղ է,— ասաց Նուարդը:

Շէկ Դավիթը ձեռքը մօտեցրեց բռնակին: Նա չէր համբերում:Նա չէր պատկերացնում, թէ ինչպիսի տեսք է ունենում ծովահէնը վիրահատութիւնից յետոյ:

— Սպասիր, սկզբում ներս կը մտնի Տիգրանը,— ասաց Նուարդը:

— Ե՞ս...

— Յետոյ Սերոբը,— շարունակեց Նուարդը:— Ծաղիկները կը դնես ծաղկամանի մէջ: Երկար նստել չի կարելի: Հայրիկս ասաց, որ վիրահատութեան յաջորդ օրն ընդհանրապէս չի կարելի հիւանդին անհանգստացնել: Բայց թոյլ տուեց...

— Ծանօթութիւնը լաւ բան է,— եզրակացրեց Լեոպարդո Սերոբոն:

— Իսկ ինչի՞ մասին ենք խօսելու,— հետաքրքրուեց Շէկ Դավիթը:

— Ամէն ինչի... Միայն ծիծաղեցնել չի կարելի: Կարերը կը քանդուեն: Մտի՛ր, Տիգրան:

Շփոթուած նայեցի նրանց: Շատ հիմար վիճակ էր:

Եւ զգուշութեամբ հրեցի դուռը:

Հիւանդասենեակն աւելի լուսաւոր էր, քան միջանցքը: Չորս մահճակալ կար: Երկուսն ազատ էին: Անկիւնի մահճակալին պառկած էր Ճիզվիտ Կարոն, իսկ պատուհանի տակ՝ Վերին թաղի Յակոբը: Ես նրան անմիջապէս ճանաչեցի, որովհետեւ Լուսաշէնի ամենաբարձրահասակ մարդն էր, ու ոտքերը մահճակալից դուրս էին ցցվել:

Ես վարանած կանգնեցի:

Ճիզվիտ Կարոն գլուխը շրջեց իմ կողմը: Սկզբում խեղճը չհասկացաւ, թէ բանն ինչ է: Յետոյ նրա աչքերը մի քիչ զարմանքից, մի քիչ էլ վախից կլորացան ու ստացան սարսափելի ապուշ մի արտայայտութիւն: Բայց դա շատ կարճ տեւեց: Ճիզվիտն անօգնական նայեց շուրջը, յետոյ՝ դռան կողմն ու նկատելով իմ հետեւից ներս մտած Լեոպարդո Սերոբոյին, Նուարդին ու Շէկ Դավիթին, համոզուեց, որ իր կեանքին որեւէ վտանգ չի սպառնում, եւ այդ մտքից բաւականին ուրախացած՝ ժպտաց: Բայց այդ ժպիտն էլ շատ էր խղճալի:

Լեոպարդո Սերոբոն մօտեցաւ փոքրիկ սեղանին, ծաղկեփունջը դրեց ծաղկամանի մէջ ու անհամարձակ ասաց.

— Եկել ենք... Ո՞նց ես...

Ճիզվիտ Կարոյի շրթունքներն անաղմուկ շարժուեցին:

— Ջերմութիւն ունե՞ս,— հարցրեց Նուարդն ու

նայեց մահճակալին ամրացուած տախտակին:— Ոչինչ... այնքան էլ բարձր չէ: Ցաւո՞ւմ է:

Ճիզվիտ Կարոն նորէն ժպտաց: Գուցէ նրան թւում էր, թէ ինքը ծիծաղում է: Նա այդ ժպիտով ուզում էր հասկացնել, ապացուցել ու համոզել որ այդ ամէնը դատարկ բաներ են իր նման ստոր մի ծովահէնի համար, եւ որ ինքը, եթէ խղճի խայթ չի զգում, ապա ցաւ չի զգայ ու չի զգայ:

— Չծիծաղես,— վախեցած գոչեց Շէկ Դավիթը:— Կարերը կը քանդուեն:

— Չեն քանդուի,— հանգստացրեց Երկար Յակոբը: Նա անշարժ պառկել էր մէջքի վրայ: Ոտքերի մօտ, ապակէ տարօրինակ սրուակներով ու խողովակներով մի մեծ սարք էր դրուած: Ամենավերջին անօթը լի էր անգոյն հեղուկով, որ կաթիլ-կաթիլ

հոսում էր ռետինէ խողովակի մէջ: Իսկ ռետինէ խողովակի ծայրին մի մեծ ասեղ կար. այդ ասեղն անգթօրեն տեղաւորել էին Երկար Յակորի ոտքի մաշկի տակ: Ես նայեցի, նայեցի ու չհասկացայ, թէ ինչի համար է այդ բոլորը:

— Քանի՞ օր ես պառկելու,— հետաքրքրուեց Լեոպարդո Սերոբոն:

— Դատարկ բան է,— ասաց Երկար Յակորը:— Կոյր աղիքը վիրահատելուց յետոյ տասը օր են պառկում: Դժուարն իմն է: Օրերի հաշիւն արդէն կորցրել եմ: Ստամոքսս են վիրահատել: Գլիւկոզայով եմ սնւում: Տիգրան, այսօր մերոնցից մարդ տեսե՞լ ես: Ի՞նչ են անում...

— Չեմ տեսել,— ասացի ես:

— Երե՞կ էլ...

— Երեկ էլ:

Երկար Յակորը աչքերը փակեց:

Ամենավերջին անօթից գլիւկոզան կաթիլ-կաթիլ լցւում էր ռետինէ խողովակի մէջ:

Ճիզվիտ Կարոն խուսափում էր նայել իմ կողմը:

Նա շատ էր ուզում իմանալ, թէ ինչպէս եմ կարողացել քարանձաւից դուրս գալ, բայց հարցնել չէր համարձակւում:

— Տիգրանը գրադարանը գտել է,— յայտնեց Նուարդը ամենակարեւոր նորութիւնը:— Իսկ մենք իրրեւ թէ որոնում էինք... Մարդիկ հո հիմար չե՞ն եղել որ սնդուկը աչքի ընկնող տեղ պահէին: Եւ մտքներովս էլ չէր անցնում, թէ որ տեղ պէտք է որոնել:

Ճիզվիտ Կարոն, վերջապէս, ինձ նայեց:

— Ուզո՞ւմ ես իմանալ, թէ որտեղ է գտել,— հարցրեց Նուարդը:

Ճիզվիտ Կարոն շարժեց շրթունքները. «Այո»:

— Պատմիր, Տիգրան,— ասաց Նուարդը:

— Քարանձաւից,— կարճ ասացի ես, ու երբ Ճիզվիտ Կարոն հայեացքը փախցրեց, բոլորովին անտարբեր երանգով աւելացրեցի.— Երեկ գնացել էի զբօսնելու: Ձորում էի... Շատ լաւ օդ էր... Մէկ էլ մի քարանձաւ տեսայ: Ասացի՝ մտնեմ: Քարանձաւում մի քիչ մութ էր: Երբ աչքերս վարժուեցին խաւարին, տեսնեմ՝ ճիշտ կենտրոնում մի սնդուկ կայ դրուած, վրան էլ մի յայտարարութեան են փակցրել. «Գրադարան: Ամէն օր բաց է ժամը 9-ից մինչեւ 17-ը»:

Լեոպարդո Սերոբոն գլուխը քաշեց ուսերի մէջ: Նուարդը զարմացած ինձ նայեց: Իսկ Շէկ Դավիթը իրեն կորցրած, սկսեց արագարագ թարթել աչքերը:

— Շուտ առողջացիր,— շարունակեցի ես՝ դիմելով Կարոյին:— Ես ուզում եմ անպայման քեզ ցոյց տալ այդ քարանձաւը: Շատ հետաքրքիր է: Գուցէ դու էլ կարողանաս մի որեւէ բան գտնել:

— Տասը օր յետոյ ոտքի կը կանգնի,— առանց աչքերը բանալու ասաց Երկար Յակորը:— Վիրահատութիւնից յետոյ կարեւորը լաւ ուտելն է: Կարգին, մարդաւարի ուտելը: Եւ ոչ թէ ասեղով... Չէինք տեսել, որ մարդուն ոտքից սնունդ տան:

Ու լռեց:

Ճիզվիտ Կարոն ուզում էր ինչ որ բան ասել: Եւ մտածում էր, թէ ինչպէ՛ս եւ ի՛նչ ասի:

Յետոյ վերմակի տակից հանեց ձեռքն ու նշան արեց, որպէսզի մօտենամ:

Մօտեցայ, նստեցի մահճակալի եզրին, ու քանի որ նա շշնջում էր, ականջս մօտեցրեցի, որպէսզի լսեմ, թէ ի՛նչ է ասում: Նա խօսում էր բառերը կուլ տալով: Ու ինձ թւում էր, թէ նա երբէք չի վերջացնելու իր ասելիքը որ սկզբում ուղղակի նողկալի էր, բայց քիչ անց պարզուեց, որ Կարոն առանց կոյր աղիքի՝ շատ լաւ տղայ է:

Երբ վերջացրեց, ես միայն գլխով հաստատական նշան արեցի:

Լեոպարդո Սերոբոն նկատելով որ ես էլ եմ ժպտում, դարձեալ գլուխը քաշեց ուսերի մէջ ու շուրջը նայեց, ասես նոր էր նկատում, թէ որտեղ է ինքը:

— Անպայման,— ասացի ես բարձրաձայն:— Միայն թէ շուտ առողջացիր: Անպայման կը գնանք:

— Նաթանայէլը խոստացել է մեզ մի շատ հեռաւոր ճանապարհորդութեան տանել,— ասաց Նուարդը. դա ինձ համար նորութիւն էր:— Իսկ Տիգրանը մինչեւ հիմա էլ չգիտէ, որ դուք պատրաստվում էիք Ավստրալիա մեկնել:

Ինձ թուաց, թէ Նուարդը ինչ որ պատառիկներ է լսել Կարոյի շշուկից:

— Ովքե՞ր,— միամտաբար հարցրեցի ես:

— Ծովահէնները,— անվրդով պատասխանեց Նուարդը:— Մոմի վաճառքից հաւաքած փողերով գնալու էին Ավստրալիա: Կենգուրու որսալու: Երբ Նաթը իմացաւ՝ ծիծաղեց: Ու խոստացաւ, որ բոլորիս կը տանի մի այնպիսի՜ տեղ...

Կարոն հայեացքն այլեւս չէր փախցնում ինձնից:

— Քարանձաւում բոլորովին էլ սարսափելի չէր,— ասացի Կարոյին:

— Ճի՞շտ,— հարցրեց Շէկ Դավիթը:

— Ուզո՞ւմ ես՝ փորձիր,— առաջարկեց Լեոպարդո Սերոբոն:

Շէկ Դավիթն աչքերը արագ-արագ թարթեց ու շատ զղջաց, որ այդքան անզգոյշ հարց է տուել:

— Ես կօգնեմ,— ասաց:— Ինքդ կը համոզուես որ սարսափելի չէ: Բայց ափսոս որ այլեւս թաքցրած գրադարան չկայ :

— Պէ՜տքս է,— ծոր տուեց Շէկ Դավիթը:— Ես հէնց այնպէս հարցրեցի:

— Մարդ անձնական փորձով է համոզուելու,—
ասաց Լեոպարդո Սերոբոն:— Գուցէ դու էլ իսկակա՛ն գանձ գտնես: Ասենք՝ լիքը սնդուկ ոսկի: Հը՞...

Շէկ Դավիթը կարմրատակեց: Նոյնիսկ պեպենները անհետացան: Ես խղճացի նրան, որովհետեւ վիճակը բոլորովին էլ նախանձելի չէր: Եթէ հաւատարիմ մնար Կարոյին ու Սերոբին, ապա հիմա, նրանց նման կը կարողանար առանց հայեացքը փախցնելու նայել ինձ: Ես էլ կը յարգէի նրան, եւ նոյնիսկ գուցէ տարօրինակ մի ջերմութիւն զգայի, ինչպիսին զգում եմ ծովահէնների նկատմամբ, երբ պարզուեց, որ նրանք էլ են սիրում երազել, ու երազում են հեռաւոր Ավստրալիայում կենգուրուների որսի մասին: Պատահական չէր որ կեղծ նամակը նրա ձեռքով էին ուղարկել: Գուցէ Կարոն ու Սերոբն էլ են նրան խղճում: Չգիտեմ: Երբ Կարոն ոտքի կանգնի, ես նրա հետ կը խորհրդակցեմ, թէ ինչպէ՛ս դաստիարակենք Շէկ Դավիթին, որպէսզի հողմնացոյցի պէս չշրջուի դէպի այն կողմը, որտեղից կը փչի ուժեղ քամին:

— Մենք նորէն կը գանք,— ասաց Նուարդը:

Կարոն ժպտաց:

— Տիգրանի հետ,— աւելացրեց Նուարդը:

— Տիգրանը...— շշուկով ասաց Կարոն:—Տղամարդ տղայ է:

— Եւ ազնիւ,— վրայ բերեց Սերոբը:

Կարոն, այնուամենայնիւ, աչքերը ոլորեց ընկերոջ վրայ:

— Գնանք,— ասացի ես:—Կարո, շո՛ւտ առողջացիր:

— Շուտ կ’առողջանայ,— ասաց Երկար Յակոբը:— Ի՜նչ է եղել որ... Ամէնից դժուարը ստամոքսի վիրահատութիւնն է: Ես, օրինակ...

... Մենք դուրս ելանք հիւանդանոցից:

Դարպասի մօտ Սերոբը բռնեց թեւս: Մենք մի երկու քայլ յետ մնացինք Նուարդից ու Շէկ Դավիթից:

— Վերցրու,— ասաց նա, պարզելով ճմրթուած մի հինգ ռուբլիանոց:

— Ինչո՞ւ:

— Քոնն է:

— Ի՞մը:

— Մենք գիտէինք, որ դու... բայց...

— Գիտե՞ս ինչ...— զայրացայ ես, բայց յետոյ միտքս փոխեցի:— Թող մնայ քեզ մօտ: Միասին կը մէկնենք կենգուրու որսալու:

Սերոբը զարմացած ինձ նայեց: Ես քայլերս արագացրեցի:

— Սպասիր,— ասաց Սերոբը:— Ես ու Նաթանայէլն ախր գալու էինք քո հետեւից: Կարոյին տարան հիւանդանոց, ու մինչեւ վիրահատելը մտքիցս թռել էր որ դու մնացել ես այնտեղ:— Նա խօսում էր արագ-արագ, վախենալով, որ յանկարծ կ՚ընդհատեմ իրեն:— Եկել կանգնել էինք հիւանդանոցի բակում: Նաթն էլ: Յետոյ բժիշկն ասաց, որ ամէն ինչ յաջող է անցել: Ես էլ յիշեցի: Բայց մութ էր: Նաթին ասացի, թէ այսպէս, այսպէս... Միասին գալու էինք, ու մէկ էլ փողոցի ծայրին տեսանք քեզ ու Գլասեւոս պապին: Դու ուրիշ բան չմտածես:

Չեմ մտածում,— ասացի ես:

Ուզում ես՝ Նաթին հարցրու:

— Չեմ հարցնի:

— Մի բան էր՝ պատահեց: Մոռացի՛ր...

— Չեմ մոռանայ,— ասացի ես:— Այդ էր պակաս: Հո միշտ գրադարաններ չե՞մ գտնելու: Այդպիսի բանը կեանքում մի անգամ է լինում:

— Ըհը՛,— հաստատեց Սերոբը:

Ես արագացրեցի քայլերս, որպէսզի հասնեմ Նուարդին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՕԹՆԵՐՈՐԴ

Փահլեւանենց հինաւուրց տոհմը: Ընտանեկան խորհրդակցութիւն: Մարդիկ ե՞րբ կը սովորեն մտածել իրենց նախնիների լեզուով: Ռուբէնը մէկնում է:

ԵՍ նայում էի պատից կախուած շրջանակին:

Շրջանակը դարչնագոյն էր ու միայն մէկ նկարի համար: Բայց ապակու տակ երեւի հարիւր հատ տարբեր չափի ու տարիքի լուսանկարներ կը լինէին: Տարիների, տասնամեակների ընթացքին գունատուած ու չգունատուած լուսանկարները մեր ամբողջ տոհմի պատմութիւնն էին ներկայացնում, մեր տոհմի մարդկանց պատմութիւնը: Ինչպիսի՜ մարդ ասես, որ չկար այդ շրջանակի մէջ:

Մազերը կարճ կտրած, դէմքին արհեստական ժպիտով, մուգ պաստառին նկարած մի տարօրինակ բերդի հենքի վրայ կանգնած անծանօթի մասին բոլորը պնդում են, թե Փահլեւանենց Արշակն է: Իսկ Փահլեւանենց Արշակը հայրս է: Հաւատալս չի գալիս, բայց ախր հայրս էլ է հաստատում, որ այդ ինքն է:

Իսկ մինչեւ գօտկատեղը նկարուած մարդը Փահլեւանենց Գուրգենն է: Այսինքն՝ հարազատ պապս: Գլխին մի տարօրինակ փաթթոց ունի որ գլխարկի է նման, բայց աջ ուսի վրայ կախուած է փաթթոցի լայն եզրը: Ու ես ոչ մի կերպ չեմ կարողանում պարզել, թէ նրա կրծքին խաչուող պատրոնտաշներում փամփուշտներ կա՞ն արդեօք: Նկարը շատ էր դեղնել եւ ստուգելու ոչ մի հնարաւորութիւն չկայ: Բայց ձեռքի հրացանը որ դէպի առաջ է պարզել, իսկ փողը ուղղուած է վար՝ իսկական է: Հայաստանի լեռներում այդպիսի հրացաններով են կռուել: Գօտուց կախած վիթխարի դաշոյնը նոյնպէս իսկական է: Այդ դաշոյնը հիմա էլ կայ: Հէնց այն սնդուկի մէջ է, որի վրայ նստած, սենեակում տիրող լռութեան մէջ, նայում եմ զարմանալի լուսանկարներով շրջանակին:

Թաւ բեղերով ու մօրուքով, հանդիսաւոր լրջութեամբ մարդն էլ որի լուսանկարը զետեղուած է շրջանակի վերին աջ անկիւնում, հօրս պապն է. երեւի հէնց ինքը՝ նշանաւոր Փահլեւանը, որի անունով էլ այժմ կոչւում է մեր ամբողջ տոհմը: Ես միշտ էլ զարմացել եմ այդ նկարին նայելիս: Ախր շատ նիհարակազմ է ու անառողջ: Գուցէ դեղնած լուսանկա՞րն է պատճառը որ այդպիսի տպաւորութիւն ունեմ: Շատ հաւանական է: Բայց մի՞թե այն ժամանակուայ փահլեւանները նիհարակազմ են եղել:

Ամենամեծ, երկարաւուն լուսանկարը տեղաւորուած է շրջանակի կենտրոնում: Ինձ շատ նման մէկը նստել է թանգարանային մի աթոռի եւ ուղիղ աչքերիս մէջ է նայում: Հայեացքի մէջ զարմանք կայ, որի պատճառը ոչ մի կերպ չեմ կարողանում կռահել: Զարմանքից բացի, ինքնավստահութիւն էլ կայ: Ինձ շատ նման այդ մարդու կողքին ազգային տարազով, ոտքից մինչեւ գլուխ ոսկէ մետաղադրամներով զարդարուած մի ամաչկոտ հարս է կանգնած: Ո՛վ գիտէ, թէ տասնիններորդ դարի ո՛ր հատուածում են լուսանկարուել նրանք: Որտե՛ղ են լուսանկարուել: Գուցէ՝ Մո՞ւշ... Կամ գուցէ՝ Բալո՞ւ... Բայց հնարաւոր է նաեւ՝ Իգդի՞ր... Հայրս իմ այդ հարցին միշտ էլ շատ կարճ ու հաստատ պատասխան է տուել՝ «Երկիր... Լուսանկարուել են Երկրում»: Եւ կարեւորը այս է որ պէտք չէ ուրիշ մի բանի հետ շփոթել կամ մոռանալ... Չգիտեմ նաեւ, թէ ի՛նչ է եղել նրանց անունը: Հայրս էլ չգիտէ: Բայց ամէնից շատ կ'ուզենայի իմանալ նրանց ազգանունը: Նրանք հորս պապի՝ Փահլեւանի ծնողներն են եղել: Խեղճերն ի՛նչ իմանային, որ իրենց որդին իր փահլեւանութեամբ պէտք է մի մեծ տոհմի ազգանուն փոխի: «Չէ՛... Ի՛նչ փահլեւանութիւն... Նրան փահլեւան են ասել, քանի որ շատ ուժեղ մարդ է եղել... Մի՛ նայիր որ նիհարակազմ է... Հովազի պէս ճկուն եւ առիւծի նման ուժեղ կռուող... Երբ Երկրի լեռներում թշնամին լսում էր թէ Փահլեւանն է մօտենում իր խմբով, նախ եւ առաջ մտահոգւում էր թէ ինչպէս խուսափի դէմ առ դէմ կռուից»,— բացատրում էր եղբայրս. նա աւելի լաւ գիտէր մեր տոհմի հետ կապուած պատմութիւնների մանրամասները:

Ուրիշ նկարներ էլ կան: Կարծեմ ասացի, որ մի հարիւր հատ կը լինեն: Կան նոյնիսկ անձնագրային փոքրիկ լուսանկարներ: Եւ բոլորն էլ նոյն մարդիկ են: Նոյն հայրս, նոյն պապս, մայրս, մեր ազգականները, մի քանի տեղ էլ՝ ես:

Երբ ինձ յանկարծ շատ միայնակ եմ զգում, այսպէս նստած, նայում եմ նկարներին ու ընկնում մտքերի մէջ: Երբեմն այնքան եմ տարւում մտքերով, որ կրծքին խաչաձեւ պատրոնտաշներով պապս սկսում է խօսել, զրուցել ինձ հետ: Ու թէեւ նկարում նա մօտ երեսուն-երեսունհինգ տարեկան մարդ է, բայց ինձ հետ զրուցելիս դառնում եօթանասուն տարեկան այն ծերունին որ սրանից երկու-երեք տարի առաջ, կարծեմ առանց որեւէ լուրջ պատճառի, յանկարծ որոշեց մեռնել ու մէկ օրուայ մէջ մեռաւ: Յիշում եմ, առաւօտեան վեր կացաւ, յայտարարեց որ մի վերջին անգամ ուզում է բանջարանոցը ջրել, իրիկնադեմին մօրիցս մի պնակ սպաս խնդրեց դարձեալ վերջին անգամ, ու ասաց, թէ որոշել է մէկ-երկու ժամ յետոյ այս աշխարհը թողնել մեզ: Կարծում էի, թե կատակ է անում: Եւ ի զուր: Ախր նա լուրջ հարցերում կատակել չէր սիրում, եւ այնքանով, որքանով լսել եմ մերոնցից, Փահլեւանենց Գուրգենը իր ասածին մարդ է եղել: Հիմա էլ ինձ մի քիչ մենակ զգացի: Ու սենեակում էլ լռութիւն էր տիրում:

Մենակ զգացի, թէեւ սեղանի մօտ նստած էին հայրս, մայրս ու Ռուբէնը: Իսկ լռութիւնը անկայուն էր, խաբուսիկ, նոյնիսկ՝ ակնթարթային:

Իսկապէս, չեմ կարող ասել, թէ քանի՛ վայրկեան, կամ քանի՛ րոպէ առաջ Փահլեւանենց Արշակը, այլեւս չկարողանալով համբերել, ափով խփեց սեղանին, անհասկանալի ու խռոպոտ մի բացագանչութեամբ:

Դրանից յետոյ էր որ բաց պատուհանից սենեակ սողոսկեց լռութիւնը, իր հետ բերելով ծղրիդի միալար ճռռոցը, կարտոֆիլի մարգերում կուտակուող ջրի խշշոցը, չգիտեմ ո՛ր հեռաւոր անկիւնից հասնող շան առոյգ ու ընդհատ հաչոցը, որ նման էր մօտոցիկլետի հնացած շարժիչի կտկտոցի:

Այս ամէնը դեռ իսկական լռութիւնը չէ: Երբ արդէն կէսգիշերն անց է, լռութիւնը կատարեալ է լինում միայն մեր բակի փեթակներից լսուող մեղուների բզզոցի եւ մէկ էլ՝ աստղերի շշուկի հետ: Իսկ մեր Լուսաշէնում աստղերը միշտ շշնջում են: Ամբողջ երկնակամարով մէկ, դաշտի հեռաւոր եզրից մինչեւ Չաթալ սարի կատարը սփռուած են լինում աստղերը եւ իրար հետ շշնջում են տիեզերական անցուդարձի մասին:

Եւ այդ պահին շրջանակի մէջ բազմած պապս յանկարծ հոգոց է հանում, «Է՜հ, աշխա՜րհ, աշխա՜րհ...»»

Հարցական հայեացքով նայում եմ նրան: Չեմ ուզում ընդհատել դեռեւս չսկսուած զրոյցը: Այդպիսի դէպքերում միշտ համբերութեամբ սպասում եմ, մինչեւ որ Փահլեւանենց Գուրգենը ժողովի մտքերն ու տրամադրուի ինձ հետ խօսելու:

«Չես հասկանում, դեռ փոքր ես,— կարճատեւ դադարից յետոյ շարունակում է պապս:— Իսկ երբ մեծանա՜ս... Ո՞վ գիտէ: Կը լինե՜մ, չե՜մ լինի»...

Ես գլուխս թափահարում եմ: Բայց ոչ... Փահլեւանենց Գուրգէնը հաստատ որոշել է իր կարծիքն ասել: Նա չի հեռանում: Ընդհակառակը, անհետանում է շրջանակի միջից: Աննկատ, անաղմուկ: Ու չգիտեմ, թէ ինչպէս, յայտնուում ենք մեր բակում: Եւ բոլորովին էլ կէսգիշեր չէ, այլ՝ իրիկնամուտ: Պապս նստած է հացատան պատի տակ դրուած կոճղին ու անշտապ քաշում է դեղձի հղկած կորիզներից սարքած համրիչի հատիկները: Իսկ ես նստել եմ արեւի ճառագայթների տակ ամբողջ օրը խանձուած ու ջերմութիւնը դեռ չկորցրած գետնին:

Մատներիս արանքով մի մրջիւն է վազում: Յետոյ դես ու դեն է նետւում, մինչեւ որ գտնում է մի սատկած բոռ: Պտտւում է շուրջը, տանջւում, կաշիից դուրս է գալիս բոռի խոշոր իրանը քարշ տալու համար: Սկզբում բռնելու տեղ է որոնում: Գտնում է վերջապէս: Ծնօտների մէջ է առնում նուրբ ու թափանցիկ թեւը եւ քաշում է: Բոռը շատ ծանր է, մրջիւնը հուսահատ պտոյտներ է կատարում: Յետոյ մի քանի մրջիւններ էլ են յայտնւում ու երկար խորհրդակցելուց յետոյ միայն գալիս են եզրակացութեան որ աւարը պէտք է քարշ տալ մի՛ ուղղութեամբ: Ու երբ նրանց յաջողւում է բոռին մի քանի սանտիմետր տեղաշարժել, ես գետնից մի շիւղ եմ վերցնում ու դրանով մի կողմի վրա եմ շպրտում ե՛ւ սատկած բոռը, ե՛ւ նրան իրենց ամուր ծնօտներով կառչած մրջիւններին:

«Աշխարհը փոքրացաւ... Շա՜տ փոքրացաւ,— ասում է պապս:— Էլ փոքրանալու տեղ չի մնացել... Բայց, ասենք՝ ո՞վ գիտէ»:

«Ո՞նց թէ փոքրացաւ»,— զարմանում եմ ես:

«Ո՞վ էր լսել, որ մէկուկէս ժամում Երկրի շուրջը մարդ պտտուէր... Ո՞վ կը հաւատար: Բարթուղն էլ գոնէ մէկ անգամ երկնքին չնայեց, ու դռան տակ նստած դեռ իր հէքիաթներն է պատմում երջանիկ աշխարհների մասին, որտեղ իբր ապրելու ենք: Մարդիկ էլ բան ու գործ թողած, լսում են այդ հէքիաթները: Չգիտեն ու երջանիկ աշխարհների մասին հէքիաթներով մարդու կեանքը երջանիկ չի դառնում… Մի հէքիաթ էլ այն սուտը չէ՞, թէ իբր քաղաքացի ենք դարձել»:

«Չե՞նք դարձել,— հարցնում եմ ես:— Թերթերում գրեցին, որ...»»

«Գրեցի՜ն,— ծոր է տալիս Փահլեւանենց Գուրգենը:— Յետոյ ի՞նչ... Թերթերի մէջ գրելով ոչ գիւղն է քաղաք դառնում եւ ոչ էլ անօթի փորն է կշտանում: Եթէ թերթերի մէջ գրածները հանես ու նորէն աչքի անցկացնես՝ պիտի հաւատաս, թէ մեր երկիրը արդէն դրախտ է դարձել… Ու քանի որ դրախտ է դարձել, խելքը գլխին մարդիկ այդ

դրախտի արգելուած պտուղը ուզում են անպայման ուտել որպէսզի կարողանան դուրս գալ դրախտից ու մարդավարի ապրել… Թերթերին շատ մի հաւատայ… Դու քո շուրջը նայիր: Ամէն բան մնացել է նոյնը: Խեղճութիւնը՝ եզան համբերութիւնը եւ էշի հնազանդութիւնը… Մարդը պիտի փոխուի, մա՛րդը»:

«Ինչպե՞ս»:

«Գյո՛ւղ... Քաղա՛ք...— ասում է պապս ու չխկացնում համրիչի հատիկները:— Դատարկ բաներ են... Ուզում ես՝ վեր կաց ու գնա՛ քաղաք: Միեւնոյն է, գաւառացի ես: Որովհետեւ գիւղացի չի մնացել: Հողի մշակ չի մնացել: Նրանք էլ որ դեռ չեն ուզում կտրուել իրեն պապերի հողից՝ դարձնում են քաղաքացի:— Պապս քա՛հ-քա՛հ ծիծաղեց:— Ուրիշ տեղ ուրիշ մէկին էս ամէնի մասին չշատախօսես: Քեզ եմ ասում… Եթէ ես չասեմ՝ ո՛վ է ասելու: Հողից կտրում՝ քշում են քաղաք եւ քաղաքն էլ դառնում գլուխներն ու հոգիները կորցրած մարդկանց մի բազմութիւն: Չէ՛... Դու չես հասկանայ: Փոքր ես: Մարդու բնոյթը պիտի փոխուի: Մարդը պէտք է սովորի մտածել իր պապերի լեզուով...»

— Ինչո՞ւ ես բարկանում որ...— խեղդուած ձայնով ասաց եղբայրս:

Մի ակնթարթում ես յայտնուեցի մեր սեղանատանը, սնդուկի վրայ, իսկ Փահլեւանենց Գուրգենը դարձաւ երեսուն-երեսունհինգ տարեկան մի լուսանկար: Հայեացքս մի կերպ կտրեցի դարչնագոյն շրջանակից ու նայեցի սեղանի մօտ նստածներին:

Հա՛յրս:

Նիհարաւուն: Արմունկները սեղանի եզրին հենած գարշահոտ «ավրորա»»էր ծխում: Ծուխը դուրս է մղում քթանցքներից ուղիղ գծով, դեպի ցած, յետոյ կապոյտ քուլաները դառնում էին մոխրագոյն, մի քիչ թաւալում էին սեղանի եզրին ու տարածւում սենեակով մէկ: Ձախ ձեռքի ափով շփեց ճաղատը: Բարկացել էր: Բարկանալիս միշտ շփում էր ճաղատը:

Մա՛յրս:

Այնպէս էր նստել որ սեղանից ե՛ւ հեռու էր, ե՛ւ մօտիկ: Նա միշտ այդպէս էր նստում յատկապէս հարսանքատներում: Ձեռքերն էլ դրել էր ծնկներին: Բայց հիմա ախր հարսանքատուն չէր: Ձեռքերը ծնկներին էր դրել ու տագնապով նայում էր մերթ Փահլեւանենց Արշակին, մերթ Ռուբէնին: Ես շատ խղճացի մորս:

Բայց ամէնից խղճալին Ռուբէնն էր: Կծկուած նստել ու խուսափում էր աւելորդ մի բան ասել: Երբ հայրս բարկանում էր, նա միշտ այդպէս կծկուած էր նստում: Ու ես առաջին անգամ էի լսում, որ նա յանկարծ առարկէր հօրս: «Ինչո՞ւ ես բարկանում որ...» Սա արդէն նորութիւն էր: Ես ծափ կտայի ու կը թռչկոտէի տեղումս, եթէ կէսգիշեր չլինէր ու չլինէր այսքան լուրջ իրադրութիւն: Եւ Ռուբէնը աւելի խեղճացաւ այդ երկու-երեք բառն ասելուց յետոյ: Նրա համար եւս դա նորութիւն էր:

Ես բռունցքներս ամուր սեղմեցի, որովհետեւ յուզուել էի: Ի՞նչ կը լինի հիմա: Ինչպե՞ս կ'աւարտուի այս ամէնը:

Հայրս հայեացքով որոնեց մոխրամանը, որպէսզի սիգարեթը մարի: Ռուբէնը պատրաստակամօրեն նրան մօտեցրեց ալումինէ, վրան ծով ու առագաստանաւակ դրոշմած մոխրամանը որ նախանցեալ տարի Փահլեւանենց Արշակը բերել էր Եալթայից որպէս յուշ: Տասնհինգ օր հանգստացել էր Ղրիմում:

Հայրս մի նոր սիգարեթ վառեց: Եւ հեռու-հեռուներից լսեցի նրա խուլ, վիրաւորանքից խեղդուած ձայնը.

— Դեռ չբարկանա՞մ... Ասենք որ բարկանում եմ՝ օգուտն ի՞նչ: Մտքիդ դրել ես՝ կ'անես: Փահլեւանենց Գուրգէնի թոռը չե՞ս:

— Ի՞նչ վատ բան եմ անում, հայրիկ,— ասաց Ռուբէնը, հորս խօսելու երանգից մի փոքր էլ համարձակութիւն ստանալով։— Հո միշտ կպած չե՞նք մնալու մեր չունեցած հողին։

— Փիլիսոփա-փիլիսոփա մի՛ խօսիր,— վրայ տուեց հայրս։— Էլ ինչի՞ն ես կպած մնալու։ Ամէն բան չէ՛ որ քոնը կարծելու համար պէտք է գրպանդ դրած լինես։ Մեր աւերուած ու ամայացած երկրի հողն էլ է ուրիշինը… Մենք նոյնիսկ այդ հողի վրայ քայլելու հնար չունենք… Բայց նոյն մեր Հայաստանն է… Եթէ, ի հարկէ, ճիշտ մտածելու լինենք…

— Հայրի՛կ... Ես սխա՞լ եմ մտածում…

— Ոչ ոք սխալ չի մտածում, եթէ ընդհանրապէս մտածելու կարողութիւն ունի։

— Հիմա էլ ուրիշ բան ես ասում։

— Ամէն մարդ մտածում է իր լեզուով,— ասաց հայրս։— Եւ իր լեզուով մտածածն է նրա համար ճիշտը։ Ինչո՛ւ ենք այպէս շարունակ կորցնում մեր ոտքերի տակի հողը… Որովհետեւ մեզ մտածել են ստիպում ուրիշների՛… օտարների՛ լեզուով։

— Ուրեմն, ամէն մէկս փակուենք մեր փոքրի՛կ-փոքրիկ աշխարհի մէ՞ջ… Քովից նայենք թէ ինչպէս ենք հալուելու-գնալո՞ւ…

— Ի՞նչ ես կորցրել քաղաքում,— այս անգամ խեղճացաւ հայրս։— Կարծում ես որ գնացիր՝ ինչ որ բան փրկելո՞ւ ես… Թէ՞ վախենում ես այստեղ մի աղջիկ չճարենք։

— Դու ինձ մի՛ մոլորեցրու, հայրիկ… Հարցերը իրար մի՛ խառնիր։

— Ի՛նչ հայրիկ... Իսկ եթէ քաղաքի քո աղջիկը այդքան լաւն է, թող ինքը գայ։ Կուզէք՝ մեզ հետ կապրէք։ Մի յարկ կ’աւելացնենք։ Չէք ուզի՝ նոր տուն կը շինենք մեր ձեռքով։ Առանձին կ’ապրեք։

— Նա կը գայ,— պաշտպանեց Ռուբէնը։— Բայց ե՛ս եմ ուզում գնալ։

— Որդի, դու այս գիւղում, այս տանը չե՞ս ծնուել։

— Իմ պապի երկիրը այս տնով ու գիւղով չի վերջանում…

— Ասացի փիլիսոփա-փիլիսոփա մի՛ խօսիր,— առանց թոյլ տալու որ եղբայրս խօսքը վերջացնի, ընդհատեց հայրս։— Քաղաքում ի՞նչ ես անելու... Աբովեանի ծառե՞րն ես մշակելու, թէ՞ Կոմիտասի այգու խոտերը... Կարծում ես աչքը ջուր կտրած՝ քաղաքը քե՞զ է սպասում։ Թէ՞ քաղաքի գիւղացիներն են քիչ։ Այնքան շատ են, որ նայելիս մեղքս գալիս են… Քաղաքն է ափսոս… Դո՞ւ ինչ ես բերանդ ջուր առել, կին,— մօրս դիմեց նա։— Մի խօսք էլ դո՛ւ ասա։

Մայրս տագնապով նայեց Փահլեւանենց Արշակին, յետոյ էլ՝ Փահլեւանեան Ռուբէնին, եւ բթամատն ու ցուցամատը պտղունց արած՝ մօտեցրեց աչքերին։

Եղբայրս, նկատելիորեն շփոթուած՝ ժամացոյցին նայեց։ Երեւի շատ էր ափսոսում, որ գնացքի գալուն դեռ մէկ ժամ կայ։

— Շուտ-շուտ կը գամ,— խոստացաւ նա։— Ամէն շաբաթ։

Հայրս ուզում էր ծիծաղել նրա այս խօսքի վրա, բայց ծիծաղելու փոխարեն սկսեց հազալ։ Ես վախեցայ, թէ յանկարծ կը խեղդուի։ Աչքերն արցունքոտուեցին։ Դէմքը կանաչեց։ Ծխախոտի կապոյտ ծուխն օդում սկսեց պարել։ Ձեռքերը ջղաձգորեն ցնցւում էին։

Ես վազեցի միջանցք ու թասով ջուր բերեցի։ Նա խմեց ջուրը, թասը դրեց սեղանին ու ոտքի ելաւ։

— Չես էլ մտածում, թէ այս փոքրը ի՞նչ պէտք է սովորի քեզնից,— դառնացած ասաց նա։

Իսկ փոքրը ես եմ։

«Փահլեւանենց Արշակ, դու իսկական հայր ես, է՛... Որդին որ հօրից առաջ չգնայ, էլ ի՞նչ որդի... Մի վեր կենար Փահլեւանն ու տեսնէր, թէ իր սերունդն ո՛ւր հասաւ։ Աչքին չէր հաւատայ։ Կենա՛ցդ, Փահլեւանենց Արշակ, ողջ լինես։ Բոլորիս համար

օրինակ լինես: Բարով քո փոքրին էլ մարդամէջ հանես»,— ասում էին մեր հարեւան ութսուն կամ հարիւր տարեկան ծերերը կիրակնօրեայ սեղանների շուրջ նստած՝ հօրս կենացը խմելիս: Յետոյ խմում էին հարիւր գրամանոց նիստաւոր բաժակների մէջ բերնէ բերան լցուած օղին, ու ոսկրացած մատներով մեծ թասի միջից ընտրում էին խորոված՝ փափուկ կտորները:

— Ձեռքդ ու ոտքդ կապեմ՝ միեւնոյն է գնալու ես,— ասաց հայրս:— Ի զուր էլ խօսում եմ: Սիրտս թեթեւացնելու համար եմ խօսում: Ախր դու ես խեղճ: Կարօտելու ես, շա՛տ ես կարօտելու մեր տունը, մեր հողն ու ջուրը... Համա՛ս, մարգերը խեղդուեցին, ձայն էլ չես հանում:

Հայրս նորէն սիգարեթ վառեց, միջանցքում հագաւ ռետինէ երկարաճիտ կօշիկները, վառեց բակի լոյսը, բայց դուրս գալուց առաջ մի պահ կանգնեց շեմքին, որպէսզի մի անգամ էլ գլխին տայ:

— Ախր ո՛վ էր ասում, որ քեզ քաղաք ուղարկեմ: Ո՛վ էր ասում:

Դուռը դանդաղ պտտուեց ծխնիների վրայ ու չրխկաց փականքի լեզուակը:

Այդ չրխկոցը լսելուն պէս, մայրս վեր թռաւ: Նրան ասես մի ակնթարթում փոխեցին:

Մի խոր ափսէով լիքը մածուն դրեց սեղանին, յետոյ՝ պանիր ու լաւաշ բերեց:

— Կե՛ր,— ասաց նա եղբօրս: Ապա մի անգամ էլ ստուգեց նրա ճամպրուկը — յանկարծ մի բան մոռացած չլինի՞: — Քեզ լաւ կը նայես:

Այս խորհուրդը նա արդէն հինգ տարի շարունակ տալիս էր եղբօրս:

— Ըհը՛,— խոստացաւ Ռուբէնը:

— Հայրիկից չնեղանաս,— ասաց մայրս:—Հին մարդ է:

— Լա՛ւ,— համաձայնեց Ռաբենը:

— Շաբաթական մի նամակ եթէ գրես՝ Աստծուն փառք կտամ:

— Կը գրեմ:

— Լուացքի մեքենայի մասին՝ է՛լ չեմ ասում: Անպայման կ'առնես: Ամենանոր տեսակը: Հինը վաճառելու եմ:

— Լա՛ւ:

Եղբայրս մածունը կերաւ: Նայեց ժամացոյցին:

— Գնամ,— ասաց նա:— Մինչեւ կայարան հասնեմ, գնացքն էլ կը գայ:

— Ճանապարհ դնե՞մ,— առաջարկեցի նրան: Կայարանը Լուսաշէնից երկու կիլոմետր հեռաւորութեան վրայ է: Քունս էլ չէր տանում: Յետոյ էլ ուզում էի Ռուբէնին մի քիչ հարց ու փորձ անել նրա քաղաքացի հարսնացուի մասին:

— Չէ՛,— ասաց Ռուբէնը,— մենակ կը գնամ:

Նա ճամպրուկը ծանրութեթեւ արեց: Ուզեց բողոքել, որ մայրս այդքան բան է լցրել մէջը: Բայց քանի որ այնքան էլ ծանր չէր, չբողոքեց:

Պատշգամբում նա ճամպրուկը դրեց գետնին ու ձայն տուեց.

— Հայրի՛կ, ցտեսությո՛ւն: Ես գնացի:

Կարտոֆիլի մարգերի հեռու մի անկիւնից հայրս ինչ որ բան ասաց որ մենք չլսեցինք:

Ջուրը քչքչում էր: Գիշերային խաւարի մէջ զրնգում էին շների հատուկենտ հաչոցները: Պատշգամբի կողքի ցեմենտած հարթակի վրայ գտնուող փեթակների մէջ բզզում էին մեղուները:

Ռուբէնը վերցրեց ճամպրուկը: Նրա ետեւից մենք էլ դուրս ելանք փողոց ու անխօս ուղեկցեցինք մինչեւ գետակի կամուրջը:

Դեռ գետակին չհասած, տներից մէկի մօտով անցնելիս, Մարմար ազին ձայն տուեց.

— Համաս... Ռուբէնի՞դ ես ճամփու դնում:

— Մարմար ազի, դու ախր ե՞րբ ես քնում,— մօրս փոխարեն ասաց Ռուբէնը:

Փողոցին նայող մութ պատուհանից լսուեց մի տարօրինակ կոնչոց: Այդ Մարմար ազին ծիծաղեց Ռուբէնի միամիտ հարցի վրայ:

Մենք մի քիչ դանդաղեցինք, բայց Մարմար ազին այլեւս չխօսեց:

Կամրջի կենտրոնում Ռուբէնը կանգնեց:

Մայրս ձգուեց, գրկեց Ռուբէնին ու երկու անգամ ամուր-ամուր համբուրեց նրան:

— Ճամպրուկի մէջ գլխաշոր եմ դրել: Անցեալ տարի էի առել գիւղխանութից: Նրան կը տաս,— ասաց նա: Քիչ լռելուց յետոյ անհամարձակ աւելացրեց.— Արտասահմանեան է… Կը հաւանի:

Եղբայրս միայն ծիծաղեց ու չգիտէս ինչու՝ խառնեց մազերս:

Նա առաջ ոչ այդպէս ծիծաղում էր, ոչ էլ մազերս խառնելու այդքան վատ սովորութիւն ունէր:

— Վառիչը քեզ պէտք չի՞ գայ,— հարցրեցի ես:

— Չէ, այլեւս պէտք չի գայ:

— Ուզո՞ւմ ես, վերցրո՛ւ: Կ՚օգնի,— առաջարկեցի ես:

— Չեմ ուզում,— ասաց նա:—Ես բոլոր դժուար հարցերն արդէն լուծել եմ:

— Իսկ ես ուզում եմ հարցնել…— եւ շփոթուած լռեցի:

— Հարցրո՛ւ,— ասաց Ռուբէնը:

«Հարցնե՞մ որ,— լուռ եւ տենդօրէն մտածում էի ես:

— Ինչո՞ւ չես խօսում:

— Ուզում եմ հարցնել…— նորէն ասացի ու նորէն լռեցի: Բայց շատ գրեթէ վայրկեան տեւեց: Ուրախացած՝ որ ելքը գտայ, ասացի.— Իսկ ովքե՞ր են գաւառացիները… Գիւղացինե՞ր, թէ քաղաքացիներ…

— Գիւղի ծնունդ լինես, թէ՝ քաղաքի — միեւնոյն է: Գաւառացին գաւառամիտն է:

— Դու էլ բա՛ն ասացիր,— դժգոհեցի ես:— Այդպէս որ լինի՝ գիւղացին էլ գիւղացիամիտն է, իսկ քաղաքացին…

— Սպասի՛ր,— ասաց Ռուբէնը եւ ժամացոյցին նայեց:— Երկու խօսքով եմ ասելու… Թէ չէ՝ կ՚ուշանամ… Գաւառացի են նրանք, ովքեր թերուս են, բայց սիրում են սովորեցնել. ովքեր տգէտ են, բայց տիտղոսներով են ուզում գիտուն համարուել. ովքեր անտեղեակ են իրենց տոհմի պատմութիւնից, բայց ազգի պատմութեամբ են ուզում ներկայանալ. ովքեր ստրկամիտ են, բայց իրենց ստրկամտութիւնը ներկայացնում են իբրեւ հաւատարմութիւն. ովքեր իրենց եւ իրենց հայրենակիցների մէջ հային տեսնելու փոխարէն տեսնում են զանազան բնակավայրերի կամ շրջանների ծնունդների, եւ ո՛չ աւելին… Վերջապէս նրանք, ովքեր համոզուած են թէ աշխարհը բանն ու գործը թողած՝ հայերով է հիանում, բայց իրենք ոչ հային են նուիրուած եւ ոչ էլ իրենց երկրին են սիրում… Իսկական Երկիրը… Մեր եծատառով Երկիր Հայաստանը:

— Դու դրանց հետ ի՞նչ գործ ունես:

— Ես նրանց հետ ոչ մի գործ էլ չունեմ: Ես նրանց դէմ կռիւ ունեմ: Գաւառացիները աւելի վտանգաւոր են, քան երկու կայսրութիւնները որոնք մեր արիւնն են թափել եւ մեր հոգիներն են սպանել: Արիւն թափելուց եւ հոգին սպանելուց յետոյ մենք դեռ ապրում ենք, խօսում ենք, մտածում ենք մեր նախնիների լեզուով… Բայց եթէ գաւառացիներին յանդուրժենք՝ վստահ եղիր, մենք կը վերջանանք… Մեր ժամանակը կը սպառուի եւ մեր պատմութիւնը կ՚աւարտուի… Ուրիշ ի՞նչ հարց ունես:

Մի պահ միայն վարանեցի եւ տուեցի այն հարցը որ քիչ առաջ չէի համարձակւում:

— Անունն ի՞նչ է,— կիսաձայն հարցրեցի ես:

— Վառիչի մէջ չմոռանաս բենզին լցնել,— ասաց Ռուբէնը։— Փոքրիկ սրւակով դրել եմ պահարանի մէջ։ Միայն թէ զգոյշ...

— Չե՞ս ուզում ասել։

Մայրս մի կողմ էր քաշուել։ Մէկմէկ աչքերն էր սրբում, բայց ես համոզուած էի որ նա ուրախ էր, իրեն անչափ երջանիկ էր զգում։ Որդին քաղաքում էր ապրելու։ Կարծում էք քի՞չ բան է։

— Կ'ասեմ,— խոստացաւ Ռուբենը։

— Չե՞ս ուշանամ։

— Մօտեցրու ականջդ։

Եւ նա ականջիս փսփսած անունը։

— Լաւ անուն է,— ասացի ես։

— Հաւանո՞ւմ ես,— ասաց Ռուբէնը։—Դե՛հ, ես գնացի։ Մնաք բարով։

Քիչ յետոյ նա հալուեց խաւարի մէջ։ Շները մի քիչ էլ հաչեցին, ու դարձեալ լռութիւն տիրեց։

... Փահլեւանեան Ռուբենը գնաց, որ գաւառամիտները չկարողանան կործանել մեր հինաւուրց ու ազնուական ցեղը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Ամառը վերջ ունի։ Ի՞նչ է պէտք զարմանալի մարդ մնալու համար։ Թոդրոս եւ Վարդիկ պատանիները։ Թե ինչպէս գաղտնարանը դարձաւ սրբատեղի։ «Ցտեսութի՛ւն, Նաթանայէլ»։

Երկնքում անշարժ կախուել էին մի քանի ճերմա՛կ–ճերմա՛կ ամպաքուլաներ։

Մէջքիս վրայ պառկած, անթարթ նայում էի վեր՝ երկնագոյն, վիթխարի տարածութեանը։ Եւ աչքերիս առջեւ մի տարօրինակ պար էին սկսել արեւից երկրի վրա թափուող կայծերը։ Աւելի շուտ, դրանք փոքրիկ, շատ փոքրիկ գնդիկներ էին, որ անսպասելի յայտնուելով, դանդաղ լողում եւ ապա՝ նոյնքան անսպասելի հալւում, անէանում էին։

Տղաների ձայները լսւում էին կցկտուր եւ հեռուներից. լսւում էին ինչպէս միջատների բզզոցը, ինչպէս բլրակից այն կողմ սփռուած անծայրածիր հարթավայրի եզրից հասնող տրակտորի հոնդոցը, եւ ինչպէս իմ իսկ ձայնը.

— Երեւի Մեքսիկայում էլ երկինքը ճիշտ այսպիսին է։

— Մեքսիկայում՝ չգիտեմ,— ասաց Կարոն։— Բայց Ավստրալիայում՝ ճիշտ այսպիսին է։

— Ի՞նչ գիտէս։

Կարոն չպատասխանեց։

— Որտեղի՞ց գիտես,— դարձեալ հարցրեցի ես։

— Գիտեմ,— ասաց Կարոն։— Աւելի լաւ գիտեմ, քան իրենք՝ պապուասները։

— Դե լա՛ւ...

— Որովհետեւ պապուասները զբաղւում են կենգուրու որսալով ու երկնքին նայում են միայն իրիկնադեմին, խարոյկների շուրջ նստոտած ժամանակ։ Իսկ ուշ գիշերին երկինքն այնտեղ բոլորովին ուրիշ տեսակ է։ Ցերեկով նոյնն է, բայց գիշերով... Աստղերն ուրիշ են, համաստեղութիւնները՝ օտար... Եւ Մեծ ու Փոքր Արջերի փոխարեն Հարավային Խաչն են միայն տեսնում։

— Տխուր բան է,— ասաց Նուարդը։

— Ի հարկէ,— համաձայնեց Սերոբը։— Իսկ արեւն է՞լ է այնտեղ ուրիշ տեսակ։

— Արեւն ամէն տեղ նոյնն է:

Ես շրջուեցի կողքի, տղաների կողմը:

— Նաթը չի՞ երեւում:

— Կը գայ,— ասաց Նուարդը:

Պառկած տեղից ես տեսնում էի միայն վանքի գմբեթը:

— Կարո, սարսափելի՞ էր,— չորս հարիւր տասնութերորդ անգամ հարցրեց Սերոբը:

— Խուտուտ էր գալիս,— պատասխանեց Կարոն:—Շատ հաճելի մի խուտուտ:

— Իսկ հիմա ցաւո՞ւմ է:

— Չէ, միայն խուտուտ է գալիս:

Սերոբը վիրաւորուած լռեց: Նա ամէն կերպ փորձում էր իմանալ, թէ մարդ ինչպէս է իրեն զգում վիրահատական սեղանի վրայ, որովհետեւ ամէն անգամ Կարոյին հանդիպելիս, սկսում էր կոյր աղիքի նոպայի ցաւեր զգալ:

— Իսկ ամառը շուտով կը վերջանայ,— ասաց Նուարդը ափսոսանքով:

— Այո՛,— հառաչեցի ես:— Եւ դու էլ կը մեկնես:

— Ո՞ւր:

— Քաղաք:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ բոլորը մեկնում են: Եղբայրս... Նաթանայէլն էլ երեւի վաղը կը գնայ: Որովհետեւ այստեղ ինտ-ինտելեկ-տուալ զրոյցների համար միջավայր չկայ: Խանութում էլ շշերով կաթ չեն վաճառում: Որովհետեւ դու ամէն օր պէտք է կաթ խմես: Յետոյ էլ գաւառը մէր բոլորի վերջը կը տայ… Գիւղը լինենք կամ քաղաք՝ գաւառը մեր վերջը կը տայ…

Նուարդը գլուխը շարժեց:

— Չգիտեմ: Հայրիկս ասում է որ կարեւորն այն է որ…

Նուարդը լռեց:

— Ի՞նչն է կարեւորը:

— Կարեւորն այն է որ միշտ աչալուրջ լինենք: Եւ մեր խեցիների մէջ չթաքնուենք… Հայրիկս է ասում,— ասաց Նուարդը:— Յետոյ էլ… այստեղ էլ վատ չէ: Միայն սկզբում էր մի քիչ դժուար: Իսկ հայրիկը, վերջապէս, կարողացաւ կենտրոնանալ: Ու հիմա նորից սկսել է հետազօտութիւնները: Դրանք շատ անհրաժեշտ են գիտութեան համար:

— Ի հարկէ,— համաձայնեցի ես:—Գիտութիւնն էլ զոհաբերութիւններ է պահանջում: Բայց կարծում ես գիւղը գիտական հետազոտութիւնների համար հարմա՞ր տեղ է…

— Նայած ինչո՛ւ ես գիտութեամբ զբաղւում… Մարդկա՞նց համար, թէ՞ քո կոչումների…

— Օրինակ, ժամանակին, Շլիմանը...

— Դեռ չե՞ս մոռացել Շլիմանին:

— Ոչ,— ասացի ես:— Միտք էլ չունեմ: Շլիմանին ոչ մի գիտական տիտղոս էլ չէր հետաքրքրում…

— Տիգրան,— ձայն տուեց Կարոն, որովհետեւ Շլիմանին այնքան էլ չէր ախորժում:— Իսկ մեր գտած գրադարանի գրքերը գրած գիտուններին հետաքրքրո՞ւմ էր…

— Այն ժամանակ կարեւորը գիտուն լինելն էր:

— Հիմա էլ գիտնական կոչուելն է,— բացատրեց Կարոն:— Նաթը ե՞րբ ասաց, որ հաւաքուենք այստեղ:

— Երեկոյեան։ Ասաց, որ վերջին անգամ ուզում է բոլորիս միասին տեսնել։ Մեկնելուց առաջ։

— Ինչո՞ւ է մեկնում,— դժգոհեց Սերոբը։— Հազիւ էինք մի քիչ ծանօթացել, ու արդէն մեկնում է։

— Որովհետեւ ամառը վերջանում է,— տխուր ասաց Նուարդը։— Եւ մի քանի օր յետոյ դասերը կը սկսուեն։

— Նաթն էլ հո չի՞ սովորում,— մէջ ընկաւ Շէկ Դավիթը։

— Չի սովորում,— ասաց Կարոն։— Եւ զարմանալի մարդ է։

— Լաւ մարդ է,— ճշտեցի ես։

— Բոլոր մարդիկ էլ երեւի լաւ են։ Բայց զարմանալի... քչերն են լինում,— առարկեց Նուարդը։

— Օրինակ...

— Կարոն, դու…

— Մե՞նք։

— Չե՞ս հաւատում։

Ես հաւատում էի։ Իսկապէս, մենք զարմանալի մարդիկ էինք։

— Դու էլ,— աւելացրեցի ես։

— Երեւի։ Մայրիկս միշտ ասում է, որ ես զարմանալի աղջիկ եմ։ Եւ միշտ բարկանալիս է ասում։

— Ճիշտ է ասում։ Դրա համար էլ տասը օր շարունակ հիւանդանոցից տուն չէիր գալիս։

— Բողոքո՞ւմ ես,— հարցրեց Նուարդը։

— Չէ... Միայն թէ ինչո՞ւ էիր մեզ տասը րոպէ յետոյ քշում, իսկ դու նստում էիր ու նստում,— ասացի ես։— Ի՞նչ էիք խօսում այդքան ժամանակ։

— Առանձնապէս ոչինչ,— ասաց Կարոն։— Երկար Յակոբին էինք մխիթարում։

— Նա է՞լ է զարմանալի մարդ։

— Մի ժամանակ եղել է։ Իսկ հիմա պարզապէս լաւ մարդ է,— ասաց Նուարդը։— Մեծանալիս, ինչ որ բան կորչում է, անհետանում, եւ զարմանալի մարդը դառնում է ուղղակի լաւ մարդ։

— Մենք է՞լ ենք կորցնելու։

— Նաթը չի կորցրել։

— Իսկ մենք... Մենք կը կորցնե՞նք։

— Չգիտեմ,— ուսերը վեր քաշեց Նուարդը։— Ոչ ոք չգիտէ։

— Ես կ’ուզենայի միշտ զարմանալի մարդ մնալ։

— Կը մնաս,— ասաց Նաթանայէլը։— Դրա համար մարդ միշտ պէտք է երազել իմանայ։

Նա կանգնել էր մեր գլխավերն ու ժպտում էր։ Նրա շուրջը երկնագոյն, անսահման տարածութիւնն էր որի վրայ ճերմակ ամպաքուլաներ էին անշարժ կախուած։

— Երազողները միշտ աւելին են անում, քան սովորական լաւ մարդիկ։ Երազողներն ապրում են այսօրուա մէջ, եւ վաղուայ։

— Այդ ինչպե՞ս,— չհաւատաց Սերոբը։

— Այն մարդկանց նման, ովքեր եօթը հարիւր տարի առաջ քարանձաւի մէջ թաքցրեցին ձեռագիր մատեաններով սնդուկը։ Նրանք ապրել են այն ժամանակ, եւ այսօր էլ նրանք կան...

Ա՛յն ժամանակ...

Դա եօթը հարիւր տարի առաջ էր։ Գուցէ՝ երե՞կ... Կամ մէկ ժամ առա՞ջ... Հէնց հիմա՞...

Եւ նոյն արեւն էր, նոյն երկինքը որի վրայ սփռուած էին նոյն աստղերը, նոյն ծանօթ համաստեղութիւնները: Նոյն Մեծ ու Փոքր Արջերը...

Ամէն բան նոյնն էր. վանքը, բլրակը, հարթավայրը, գետակը, իսկ քաղաք յայտարարուած Լուսաշէնի տեղը ներքին բակեր ունեցող գլաքարերով կառուցած տներ էին, եւ ոլորմոլոր արահետներ, որոնք ձգւում էին ծառաշատ պուրակների միջով:

Ուրիշ ժամանակներ էին...

Ծեգը ծեգին պուրակների մէջ գտնուող տներից դուրս էին գալիս շինականները եւ փայտէ արորով շուռ տալիս իւղոտ սեւահողը: Հարթավայրի հեռուներից ու բլուրների լանջերից լսւում էր ջինջ օդում զրնգացող հորովելը:

Ծանր, դժուար ժամանակներ էին...

...Վանքի կողմից լսւում էր տխուր մի զանգահարութիւն: Տագնապալի ու նուազող ղօղանջները տարածւում էին դէպի հեռուները, հասնում մինչեւ լեռնափեշերին ծուարած գիւղերն ու աւանները:

Տագնապ եւ զուսպ լարուածութիւն կար այդ օրը շինականի երգում, դարաւոր թթենիների տակ բուրդ զզող կանանց մատների վարժ շարժումներում, աղբիւրից ջուր բերող հարսների սահուն քայլուածքում:

...Բլրակի լանջին յայտնուեց մի կերպարանք որն արագ-արագ քայլում էր դէպի գետակը:

Նա կանգնեց ուռենու մօտ. նայեց աջ, յետոյ՝ ձախ. քորեց ծոծրակը եւ նոյնիսկ որոշեց վրդովմունքից ուռցնել թշերը, որովհետեւ առայժմ տասնչորս-տասնհինգ տարեկան մի պատանի էր, ու դեռ չէր մոռացել մանկական խռովկանութիւնը:

Նա կանգնեց այդպէս մի առժամանակ, յետոյ ափերը մօտեցնելով բերանին, ձայն տուեց.

— Է՛- հէ՛յ- հէ՛յ...

Ոչ ոք չարձագանքեց նրան:

— Վարդի՛ի՛ի՛կ...

Պատանին յուսահատուած ու խռոված նստեց գետնին:

Նա յետ գնալ չէր ուզում: Բայց սպասելն էլ ձանձրալի էր: Ուստի սկսեց փոքրիկ քարակտորներ նետել գետախորշի մէջ, որտեղ ջուրը գրեթէ անշարժ էր, ու հարթ մակերեւոյթի վրայով յետ ու առաջ էին սահում տարօրինակ, փոքրիկ միջատները: Քարակտորների հարուածների տակ ջուրն ալեկոծւում էր եւ միջատները հաճոյքով ճօճւում էին մանր ալիքների վրա:

... Ամէն օրուայ պէս, այս առաւօտ էլ՝ լոյսը նոր բացուած, նա իր անվարժ ձեռքով սկսել էր ծաղկել ձեռագիր մատեանը: Ծաղկե՛լ... Հոգու խորքում նա հպարտօրեն կրկնում էր այդ հմայիչ բառը, թէեւ շատ լաւ գիտէր, որ քանի՛-քանի՛ տարիներ պէտք է անցնեն, մինչեւ մարդիկ պատկառանքով ու յարգանքով ասեն նրա մասին «Թոդրոս ծաղկող»:

Անցեալ շաբաթ տղան աւարտեց մօտ երկու հարիւր տարի առաջ Գրիգոր Մագիստրոս Պահլաւանու թարգմանած Եվկլիդէսի «Երկրաչափութեան»» նոր ձեռագրի գծանկարները: Իսկ երեկ վարպետը՝ Մժեժ գրիչը, յանձնարարեց մի նոր գործ: Դա հինգ հարիւր տարի առաջ պատկերուած «Աշխարհացոյցն»» էր՝ նշանաւոր մաթեմատիկոս ու աստղագէտ Անանիա Շիրակացու հաշուարկներով ու աղիւսակներով: Մժեժ գրիչը նորից արտագրել էր այդ աշխատութիւնը, ու տղան բնագրից պէտք է արտանկարէր գծագրութիւնը ու լրացնէր աղիւսակները:

Անցեալ տասնամեակների, հարիւրամեակների ընթացքին ժողովուրդը չորս անգամ ապստամբել էր արաբների տիրակալութեան դէմ, յետոյ Անին դարձել էր մայրաքաղաք, յետոյ Հայ թագավորը իր երկիրը ծախել էր օտարին, յետոյ սկսուել

էին սելջուկների ասպատակութիւնները: Եւ մարդիկ մոռացութեան էին տուել այն գանձերը որ անցեալ ժամանակներում ստեղծել էին նախահայրերը: Բայց հիմա Մժեժ գրիչն ու նրա նման բազմաթիւ ուրիշներ, կիսախաւար խցերի մէջ նստած, նորէն ու նորէն արտագրում էին հինաւուրց ձեռագրերը, որոնք պէտք է զարմանահրաշ գիտութիւններ ուսուցանէին դպրանոցներում. որոնք նախնիների լոյսը դարերի միջով պէտք է հասցնէին հեռաւոր սերունդներին:

Եւ առայժմ, մինչեւ ձեռքը վարժուէր, տղան կարկինով շրջաններ էր գծում միայն. յետոյ՝ եռանկիւնիներ ու քառակուսիներ. գծում էր սեւով ու կարմիրով, գծում էր սիրով ու երկիւղածութեամբ: Ու երբ հոգնում էին ձեռքերն ու աչքերը, Մժեժ գրիչը նրան սովորեցնում էր խորհրդաւոր գիտութիւններ: Ազատ ժամերին տղան փորձում էր նկարել: Մագաղաթի պատառիկների վրայ նա արտանկարում էր այն տեսարանները, որոնք պատկերում էին նոյն այս վանքի կառուցումը տասներորդ դարում: Պատանին դրանք արտանկարում էր Վարդիկի համար: Իսկ աղջիկը ամէն անգամ այդպիսի արտակարգ նուէր ստանալիս, ճչում էր ուրախութիւնից եւ ի զուր ստիպում որ էջի տակ տղան ստորագրի՝ «Թոդրոս»:

... Թոդրոսը մի բուռ աւազ վերցրեց, շփեց ներկոտ ափերը, լուացուեց, ու որոշեց այլեւս վերադառնալ վանք:

Երբ նա քայլերն ուղղեց բլրակի լանջն ի վեր, գետափի եղեգնուտից խշշոց լսուեց: Թոդրոսը մեխուեց տեղում ու ականջ դրեց:

Խշշոցը դադարեց:

Պատանին ուզեց շարունակել ճանապարհը, բայց նոյն պահին եղեգնուտի կողմից լսուեց մի ձայն.

— Թոդրո՞ս...

Եւ յետոյ, ծիծաղից թուլանալով, եղեգնուտից դուրս ելաւ Վարդիկը:

Տղան չիմացաւ, բարկանա՞յ, թէ՞ ուրախանայ այդ անտեղի կատակի համար, եւ այն էլ հատկապէս՝ այսօր:

— Թաքնուել էիր,— ասաց նա:— Այդպէս էլ գիտէի:

Աղջիկը շարունակում էր ծիծաղել, որովհետեւ համոզուած էր՝ Թոդրոսը ոչինչ էլ չգիտէր:

Պատանին բռնեց Վարդիկի ձեռքը:

— Առաւօտեան սուրհանդակ եկաւ:

Վարդիկը շփոթուած նրան նայեց:

— Մուղանի կողմից մոնղոլները խուժել են մեր երկիր,— ասաց Թոդրոսը:— Վարպետն ասաց, որ գրիչի փոխարեն սուր ենք վերցնելու հիմա:

Աղջիկը կծկուեց:

— Առաջին հերթին թաքցնելու ենք ձեռագիր մատեանները,— ասաց պատանին:—Կ՚օգնե՞ս:

Վարդիկը հուզուած տրորում էր կրծքին շղթայից կախուած փոքրիկ երեքնուկը:

— Իսկ յետոյ ի՞նչ կը լինի,— գրեթէ շշուկով հարցրեց նա:

Մի քայլ ցածում վշշում էր գետը: Փրփրած ջուրը զարնւում էր լերկ քարերին, իսկ ցայտերը փոքրիկ-փոքրիկ ծիածաններ էին կապում արեւի ճառագայթների տակ:

Զանգերի ղօղանջները գալիս, հասնում էին նրանց, ու անցնում, գնում դէպի հեռուները: Արեւը կախուել էր երկնակամարի կենտրոնից, եւ անծայր հարթավայրում լռել էր ակոսներ բացող շինականի հորովելը:

...Մեծ բազմութիւն էր հաւաքուել վանքի գաւիթում:

Թոդրոս ու Վարդիկ պատանիները մտան վանք ու
պղնձակոփ դռնից անցան դէպի կիսամութ միջանցքը, որտեղ վառում էին երկու ճարպամոմ:

— Վարպե՛տ,— խցերից մէկի մօտ կանգնելով, ձայն տուեց Թոդրոսը:

Դուռը բացուեց: Մժեժ գրիչը գլխաբաց ու ասես մի ծանր բեռան տակ կորացած, կանգնեց շեմին:

— Եկա՛նք, վարպետ,— ասաց Թոդրոս պատանին:

Մժեժ գրիչը մի կողմ քաշուեց, ու նրանք ներս մտան: Խցի կենտրոնում դրուած էր բոլորովին նոր մի սնդուկ:

Վանքի բոլոր գրքերը արդէն բերել էին այդ խուցը: Մժեժ գրիչը խնամքով ու համբերութեամբ մատեանները դարսել էր ըստ չափերի: Թոդրոս ու Վարդիկ պատանիները սնդուկի մէջ տեղաւորեցին վարպետի դարսածները: Սնդուկի կէսն արդէն լցուեց, իսկ Մժեժ գրիչը դեռեւս դարսում էր ձեռագրերը:

Դրանք արժէքաւոր ձեռագրեր էին: Շատերը՝ բնարեր, որոնք հարիւրամեակների ընթացքին չէին կորել կամ քայքայուել, շատերն էլ Մժեժ գրիչի արտագրածներն էին, որոնց բնագրերը արդէն մաշուել ու այլեւս պիտանի չէին:

Երեխաները մօտեցան խցի նեղլիկ պատուհանին որն աւելի շատ ճեղքի էր նման:

— Թոդրո՛ս,— շշնջաց Վարդիկը:

— Ասա՛:

— Երանի մի քանի ամիս յետոյ հէնց մենք էլ դատարկենք սնդուկը:

— Ո՞վ գիտէ,— ասաց Թոդրոսը:— Գուցէ մի քանի տարի յետոյ՞ կը դատարկենք:

— Միեւնոյն է… Թէկուզ եւ տասնամեակներ յետոյ,— ասաց Վարդիկը:— Բայց երանի այնպէս լինի, որ մենք դատարկենք: Ես կ’արտագրեմ, գրիչ կը դառնամ, իսկ դու պատկերներ կը գծես:

Մժեժ գրիչը քարէ սառը հատակին ծնկի եկած,
թերթում ու թերթում էր մագաղաթէ մատեանները: Ընտրում էր, դնում մի կողմ: Յետոյ նորէն ընտրում էր արդէն ընտրածներից:

— Եթէ սնդուկի մէջ մի որեւէ բան թողնենք, ապա ինքներս էլ կը դատարկենք,— ասաց Վարդիկը:

— Ի՞նչ թողնենք:

Վարդիկը վզից հանեց երեքնուկով շղթան:

— Երեքնուկը:

— Մի՛ արա,— ասաց Թոդրոսը:— Ես դա նուիրել եմ քեզ, որպէսզի մեզ երջանկութիւն բերի:

— Կը բերի,— ասաց Վարդիկը:— Եւ մենք ինքներս կը դատարկենք սնդուկը:

Վարդիկը երեքնուկով շղթան դրեց գրքերի արանքը:

Դնելիս՝ աղջկայ շրթունքները շարժւում էին, բայց Թոդրոսը այնպէս էլ չկարողացաւ հասկանալ, թէ նա ինչ է խնդրում Աստծուց:

...Իրիկնադեմին չորս հաղթանդամ շինական փակ սնդուկը հանեցին վանքից եւ Մժեժ գրիչի, Թոդրոս ու Վարդիկ պատանիների ուղեկցութեամբ իջան դէպի ձորը:

Շինականները սնդուկը թաքցրեցին ձորի քարանձաւներից մէկում: Յետոյ կից անձաւի մէջ, որ գաղտնարանին էր միանում նեղլիկ մի գետնանցքով, Մժեժ գրիչը մի մոմ վառեց ու ամրացրեց քարի ցցուածքին:

Երբ դուրս եկան քարանձաւից, արդէն մութ էր: Թոդրոս ու Վարդիկ պատանիները մի քանի անգամ յետ նայեցին, որովհետեւ նրանց համար շատ արտակարգ էր ձորի խաւարում, տձեւ, մութ ժայռերի մռայլութեան մէջ առկայծող լուսաւոր շերտը:

... Յաջորդ օրը հարեւան գիւղերից ու աւաններից եկած տղամարդիկ ու կանայք, ծերերն ու մանուկները սկսեցին ամրութիւններ կառուցել, նետերի սլաքներ ու տեգեր պատրաստել, սննդամթերքի պաշար կուտակել, որովհետեւ երկու հարիւր

տարեկան վանքը դարձեալ դառնալու էր մի բերդ, մի ամրոց, որի մատոյցներին տեղի էին ունենալու արիւնահեղ ճակատամարտեր:

Յետոյ՞...

Թոդրոս ու Վարդիկ պատանիներին սնդուկի մէջ պահած երեքնուկը երջանկութիւն չբերեց: Նրանք սնդուկը չդատարկեցին ո՛չ մի քանի ամիս, ո՛չ մի քանի տարի եւ ո՛չ էլ մի քանի տասնամեակ յետոյ:

Հրոսակները աւերեցին Հայաստանը…

Իսկ մարդիկ շարունակեցին մոմ վառել ձորակի քարանձաւում, որպէսզի երբէք չմարի խաւարի մէջ միակ լուսաւոր շերտը: Որովհետեւ մարդիկ սիրում էին լոյսը:

Տասնամեակները մարդկանց յիշողութիւնից ջնջեցին քարանձաւում վառուող լոյսի խորհուրդը: Իսկ հարիւրամեայկների ընթացքին այդ խորհուրդն ստացաւ նոր իմաստ: Յետոյ էլ այդ իմաստը դարձաւ ձորակի պռնկից կախուած իսկական մի սրբավայր:

... Մարդիկ անցան գնացին:

Եւ սերունդներ անցան գնացին:

Մնաց լոյսը:

Պուրակների տները կուլ գնացին կրակի բոցերին, մնացին գլաքարերի կմախքները… յետոյ այդ կմախքներն էլ փոշիացան… Բայց քանի որ վանքը կանգուն էր, նրա շուրջ դարձեալ հաստատուեց մի նոր շէն որ հետագային պէտք է Լուսաշէն անունն ստանար:

Մնաց նոյն հարթավայրը, նոյն գետակն ու բլրակը:

Նոյն արեւն է, նոյն երկինքը, որի վրա սփռուած են նոյն աստղերը, նոյն ծանօթ համաստեղութիւնները: Նոյն Մեծ ու Փոքր Արջերը...

Յոթը հարիւր տարի... Գուցէ երե՞կ... Կամ՝ մէկ ժամ առա՞ջ... Հէնց հիմա՞...

Հէնց հիմա:

Որովհետեւ նրանք ապրել են անցած, հեռաւոր ժամանակներում, բայց հիմա էլ կան:

Որովհետեւ նրանք՝ մենք ենք:

Շէկ Դաւիթը:

Սերոբը:

Կարոն:

Նուարդը որի պարանոցին է հիմա երջանկութիւն բերող երեքնուկը:

Ես:

Եւ Նաթանայէլը:

— Նաթանայե՛լ...

Մենք տարակուսած իրար նայեցինք:

— Նաթանայե՛լ,— ձայն տուեց Կարոն:

— Նա՛թ,— ճչաց Նուարդը:

— Նա՛-ա՛-ա՛թ...

Լռեցինք:

Սթափուելու համար ամբողջ ուժով ցնցեցի գլուխս: Ու երբ սթափուեցի, պարզուեց, որ արտակարգ ոչինչ էլ չի պատահել:

Նաթն այսօր գնալու էր: Եւ գնաց: Կհանդիպե՞նք նորէն նրան:

Ի հարկէ, կը հանդիպենք:

Որովհետեւ բոլորս էլ ուզում ենք միշտ զարմանալի մարդ մնալ:

Ուստի հիմա, ճչալու եւ բղաւելու փոխարեն, պէտք է միայն հազիւ լսելի մրմնջալ:

— Յտեսությո՛ւն, Նաթանայէլ:

Երեւան
1966-68

ՀԵՂԻՆԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կարէն Ա. Սիմոնեանի ստեղծագործութիւնն ունի գրական սեռերի խոշոր ընդգրկում՝ մանկական պատմուածքներ ու վէպեր («Մարսեցիները», «Մենք խաղալ էինք ուզում», «Մարգագետին», «Թափառող մոլորակը», «Ցտեսութի՛ւն, Նաթանայէլ» եւն), իրապաշտական եւ գերիրապաշտական երկեր («Սիցիլիական պաշտպանութիւն», «Ներսէս Մաժան դեղագործը» եւն), վարքագրութիւններ («Ազատութեան Ասպետն ու Նահատակը կամ Միքայէլ Նալբանդեան», «Վարք Աբովեան Խաչատուրի»), հրապարակագրութիւն («Մենք՝ անհայրենիք ու դատապարտուած», «Լեզու եւ ուղղագրութիւն», «Կրեմլի յոյժ գաղտնի փաստաթղթերից մի քանիսը», «VIVOS VOCO. Պէտք է Սովորենք Հայերէ՛ն Մտածել» եւն), թատրերգութիւն («Թող կատարուի քո երազանքը» — բեմադրուել է Երեւանի Պատանի Հանդիսականի թատրոնում, «Մենանուագ Վալթհորնի Համար» — բեմադրուել է Երեւանի Հեռուստաթատրոնում, «Վարք Նալբանդեան Միքայէլի» — բեմադրուել է Երեւանի Ռադիո-թատրոնում, «Երշալայիմ...», «Կաւ եւ Կեանք կամ Peccatum Originale», «Մոբիուսի Ժապավէնը», «Երկաթէ ցախաւել»— բեմադրուել են Փարիզի Մեծ Բուլվարների ՆՈՐԴ-ՈՒԵՍԹ թատրոնում, Սթոքհոլմի եւ Մոսկուայի Ռադիո-թատրոնները բեմականացրել են «Ցտեսութի՛ւն, Նաթանայէլ» վէպը շուէդերէն եւ ռուսերէն), գրականագիտական եւ թատերագիտական յօդուածներ:

Թարգմանել է Ջ. Դ. Սելինջերին («...Եւ այդ շուրթերը, աչքերը կանաչ»), Ռ. Բրեդբերիին («Տիեզերագնացը»), Ջ. Լոնդոնին («Ջսպաշապիկը», «Մեծ տան փոքրիկ տիրուհին»), Դ. Բիսեթին («Մոռացուած ծննդեան օրը»), Ջ. Սթէյնբէքին («Մեր հոգսերի ձմեռը»), Հ. Մելվիլին («Մոբի Դիկ կամ Ճերմակ կետաձուկը»), Կ. Աբէին («Աւազուտների կինը», «Ուրիշի դէմքը», «Այրուած քարտէզը»), Գ. Գ. Մարկեսին («Բացառիկ ու ցաւալի մի պատմութիւն միամիտ Էրենդիրայի եւ նրա անգութ տատիկի մասին»), Ջ. Օրուէլին («Անասնատուն»), Եվգ. Զամեատինին («Մենք»), Ա. Չեխովին («Իվանովը»), Կարդինալ Եոզեֆ Ռացինգերի (հետագային Բենետիկտոս քահանայապետ) գլխաւորութեամբ ստեղծուած «Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցու» դաւանաբանական աշխատութիւնը:

«Կաւ եւ Կեանք կամ Peccatum Originale» թատրերգութիւնը 2004 թուականին արժանացել է «Վահրիճ եւ Վերժին Ճերեճեան մրցանակինե:

Նրա ստեղծագործութիւնները թարգմանուել են տարբեր լեզուներով եւ գնահատուել են ըստ արժանւոյն:

«Ամէն մի գրող ունի իր՝ ոչ միայն անձնական, անշուշտ նաեւ ստեղծագործող մարդու ճակատագիրը: Կարէն Սիմոնեանը, որի հետ իմ ունեցած բարեկամութեամբ հպարտ եմ, ստեղծագործական բարդ անհատականութիւն է: Մի կողմից՝ նա իրապաշտ գրող է, որ շատ ամուր է կապուած իր Հայաստանի, նրա պատմական անցեալի եւ այսօրուայ հետ: Միւս կողմից՝ գիտա-երեւակայական պատմուածքների եւ վէպերի հեղինակ է: Բանն այն է, սակայն, որ շատ դժուար է սահմանազատել նրա իրապաշտական գրականութիւնը տեսլապաշտականից: Իրապաշտական ստեղծագործութիւնների մէջ նա գրում է ժամանակակից կեանքի

մասին, բայց միշտ գտնում է մոգական ինչ-ինչ գոյներ, որ ընթերցողին է փոխանցում աշխարհով հմայուելու նրա կարողութիւնը: Գիտա-երեւակայական գործերի մէջ, որտեղ միշտ էլ առկայ է հրաշքը, Կարէն Սիմոնեանի բերած հրաշքը նոյնպէս շողում է իր բարի, մանկան հայեացքի թարմութեամբ ողողուած գոյներով: Այսպիսով, գրողը առօրէականի մէջ տեսնում է հրաշալիքը, իսկ հրաշալիքի մէջ՝ առօրէականը: Եւ սա հազուագիւտ շնորհ է: Ըստ երեւոյթին, հէնց այդ շնորհն էլ Կարէն Սիմոնեանին ապահովել է գրողի համար նախանձելի յաջողութիւն: Նրա գրքերը, որ հրատարակւում են մայրենի լեզուով, թարգմանւում եւ լոյս են տեսնում ոչ միայն մեր, այլեւ արտասահմանեան բազմաթիւ երկրների մէջ:

Երեմէյ ՊԱՐՆՈՎ
Հեռուստատեսային ելոյթից

Տաք բանակռիւ է զգացւում «Ցտեսութի՛ւն, Նաթանայէլ» վէպում որն, անշուշտ, կառուցուած է մանկական գրականութեան նախընտրելի կանոններով: Բայց տասնամեակների փորձութեամբ անցած այդ կանոնների պաղ մոխիրներից յանկարծ տարածուել է իրական, կենսական հարցադրումների ջերմութիւնը որոնք հրատապ են ոչ միայն Սիմոնեանի Հայաստան աշաարհի համար: Ինչպէ՞ս, օրինակ, փրկել ազգային մշակոյթի արժէքները՝ համահարթեցումի ու ապազգայնացումի պայմաններում, որոնք ունեն ոչնչացնող եւ ազգային անկրկնելի գոյներից զրկող յատկութիւններ: Բացայայտ է հեղինակի համոզմունքը, թէ քաղաքի ժամանակակից պայմանները, երբէք էլ չբացառելով ազգային խառնուածքի, նկարագրի աւանդութիւնների բոլոր լաւագոյն յառկանիշները, ամէնից առաջ չեն բացառում բարոյական բարձր չափանիշները, եթէ միայն: Եթէ միայն ինքը՝ մարդը, չի բացառում դրանք՝ առանց կարեկցանքի, առանց արմատների, առանց պատասխանատուութեան ապրելու, «հեշտ կեանքով» ապրելու համար:

Անդրէյ ՆՈՅԿԻՆ
«Դետսկայա Լիտերատուրա»

«Ցտեսութի՛ւն, Նաթանայէլ» վէպը յիշեցնում է Ասթրիդ Լինդգրենի գրքերը: Բայց Կարէն Սիմոնեանը աւելի խորը մօտեցում ունի իր հերոսների հոգեբանութեան նկատմամբ: Ձեւի առումով այս վէպը նուազ դրուագային է, սակայն որպէս հակադրութիւն սկանդինաւեան պատանեկան վէպերի՝ կարդացւում է հափշտակութեամբ:

Եորան ԼՈՒՆԴՍԹԵԴՍ
«Սիւդսվենսկա Դագբադեթ», 14 Յունուար, 1980

Այս աշնանը աւելի քան երբեւէ գրքեր են լոյս տեսեմ մանուկների ու պատանիների համար: Այդ գրքերի մեծ մասը որեւէ հետաքրքրութիւն չի առաջացնում: Եւ դրանք ընթերցելը նոյնն է, ինչ եթէ ջրի միջով քայլելիս լինես:

Ուստի եւ նետւում ես այն գրքերը որոնք ինչ որ ասելիք ունեն:

Վէպում յառնում են նկարագրուած պատկերները, ընթերցողի դիմաց բացւում է բոլորովին անծանօթ մի կեանք որն յագեցած է մանրամասներով, մարդկանցով, կոպտութեամբ եւ խորունկ երջանկութեան այնքա՜ն հազուագիւտ պահերով: «Ցտեսութի՛ւն, Նաթանայէլ» վէպը ուժեղ զգացմունքներով եւ մութ գիշերներով գիրք է, երբ լոյսը մարելիս աստղերը դեռեւս թափանցում են մարդկանց տները, եւ շարունակւում են զրոյցները, եւ ամրանում է մարդկային բարեկամութիւնն ու ընկերութիւնը: Ծագում եւ մայր է մտնում լուսինը, զնգում են

դոյլերը, հացի բոյրը տարածւում է չորս բոլոր։ Վեպի մէջ նկարագրուած միջավայրն ու մարդիկ գամւում են ընթերցողի յիշողութեան մէջ։

Վէպը պատմում է մարդկային անհատականութեան մասին. այն մասին, թէ որքան կարեւոր է որ մարդը լինի ինքը՝ իբրեւ բացառիկ, անկրկնելի էութիւն պատմութեան ջրապտոյտների մէջ։

Կարեն Ա. Սիմոնեանի «Ցտեսութի՛ւն, Նաթանայէլ» վէպը։ Շուեդական գրականութեան մէջ յայտնուել է Հայաստանից։ այսինքն մեզ հասել է բոլորովին ուրիշ եւ տարբեր մշակոյթից։ Գրքերի ծովի մէջ, որտեղ, ինչպէս եւ պէտք էր սպասել, ոչ մի անակընկալի սովորաբար չենք հանդիպում, «Ցտեսութի՛ւն, Նաթանայէլ»ե վէպը բացառիկ է։ Եւ մի՞թէ զարմանալի չէ. ահաւասիկ, Հայաստանից մեզ է հասել մի գիրք եւ դուք ամբողջ հոգով ուրախանում էք այդ գրքի համար, որ հանդգնել է լինել գրականութիւն։

Քերսթին ՇԵՐՆԷ
«Արբաթեթ», 14 Նոյեմբեր, 1979

Յիրաւի, Հայաստանը գտնւում է բաւականին հեռու։ Կարող էք հեշտութեամբ համոզուել, եթէ ընթերցէ՛ք Կարէն Ա. Սիմոնեանի «Ցտեսութի՛ւն. Նաթանայէլ» փոքրիկ վէպը։ Հեղինակի հայրենիքում այս գիրէը գրուած է պատանեկութեան համար։ Շուէդական հրատարակչութեան կողմից խելացի կը լինէր, եթէ այն իբրեւ այդպիսին չներկայացուէր մեր ընթերցողին։ Գեղարուեստական եւ ոճական առումով վէպը գտնւում է «մեծահասակների գրականութեան» մակարդակի վրայ։ Մի յանգամանք որ թերեւս պատճառ է դարձել որպէսզի մենք, յամեանայն դէպս, ձեռք ենք բերել այդ պատանեկան վէպը։ Սա նման է բեղմնաւոր, բայց անկատար ճշմարտութեան։

Մենք գործ ունենք հասուն գրողի հետ որ շատ լաւ գիտէ իր գործը եւ չի կամենում երեսպաշտ լինել։ Նրա դիտողական հայեացքը կարող է միայն գրողի հայեացք լինել։ Արթուն եւ զարմանալու ընդունակութիւնը չկորցրած հայեացք։

Յոհան ԳԻԻՆՏԵՐ
«Ավենսկա Դագբլաթեթ»,
29 Հոկտեմբեր, 1979

Կարէն Ա. Սիմոնեանը իր վէպը գրել է ոչ միայն բացառապէս պատանեկութեան համար։

Մարդկային յիշողութիւններն ու ազգային պատմութիւնը կորցնելու դէպքում մեծանում է այն վտանգը, թէ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող հակասութիւնները կարող են վերաճել ճակատագրական աղետի։

Պատանի Տիգրանը վստահ է որ «գրքերը կարող են լինել աւելի վտանգաւոր, քան զօրաբանակները»։ Գրողը, ըստ երեւոյթին կամենում է ասել որ օսքի ուժն ու նշանակութիւնը չի կարելի չգերագնահատել։

Անցեալից կտրուած ամէն մի անհատ կորցնում է իր ոտքի տակ հողը եւ զրկուելով արմատներից՝ դառնում է կիսատ ու թերարժէք արարած։

Կարէն Ա. Սիմոնեանը գրում է լաւ եւ նրա գրքում կան բազմաթիւ դրամատիկ պահեր։ Իսկ այդ, անշուշտ, գրաւում է ինչպէս դեռահասներին, նոյնպէս եւ մեծահասակներին։

Հազուադէպ է պատահում որ պատանեկութեան համար գրուած գիրքը ունենայ այնպիսի նշանակութիւնը որպիսին հաղորդել է իր վէպին Կարէն Ա. Սիմոնեանը.

Այս վէպը շուէդերէն թարգմանելու փոստը, անկասկած, շատ մեծ գործ է:

Բենգտ ԲԵՆԳՍԹՈՆ

«Եոստրա Սմոլանդ», 10 Նոյեմբեր, 1979

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՁԱՅՆԱՍՓԻՒՌԻ ԵՒ ՀԵՌԱՏԵՍԻԼԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՄԷՋ

Հուլիս, 1980

Շուտով, ամարնային արձակուրդի օրերին, առաջին ծրագրով ժամը 8 անց 30-ին Շուէդական ձայնսփիւռով կը սկսուեն մի նոր վէպի շարունակելի հաղորդումները:

Հուլիսի 10-ից մինչեւ 19-ը
«Ցտեսութի՛ւն, Նաթանայէլ»
Հեղինակ՝ Կարէն Ա. ՍԻՄՈՆԵԱՆ
Թարգմանիչ Թորստեն ՆԻԼՍՈՆ,
Ընթերցում է Թորստեն ՎԱԼԻԻՆԳԸ

Հայաստանի Լուսաշէն գիւղաքաղաքում ապրում են Տիգրանն ու նրա ընկերները: Ընկերութեան, սիրոյ, մատնութեան, առեւանգումի եւ գանձի որոնումների մասին է պատմում Հայաստանից եկած այս վէպը:

«ՑՏԵՍՈՒԹԻ՛ՒՆ, ՆԱԹԱՆԱՅԷԼ» ՎԷՊԸ ԹԱՐԳՄԱՆԱԲԱՐ ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ.

Karenas SIMONIANAS, IKI PASIMATYMO, NATANARLI !
Iš armėnų kalbos vertė MARYTĖ KONTRIMAITĖ,
Iliustrations Karel BENEŠ,
VILNIUS, 1987

Karen SZIMONJAN, VISSXÁVARUNK, NATANAEL !
Forditotta Balassa ANNA, A. LURJE rajzaival,
BUDAPEST, 1983

Карэн А.СИМОНЯН, ДО СВИДАНИЯ, НАТАНАЕЛ!
Перевод с армянского Р. КАФРИЭЛЬЯНЦ,
Художник Н. КОРОТКИНА,
МОСКВА, 1974
В авторском однотомнике :
Художник М. ЗЛАТКОВСКИЙ,
МОСКВА,1983

Карэн А. СИМОНЯН, АК ЖОЛУҢ АЧЫЛСЫН, НАТАНАЕЛ !
Котор. Ж. ЕГЕМБАРДИЕВ,
БИШКЕК (ФРУНЗЕ) 1978

Karen A. SIMONJAN, PÅ ÅTERSEENDE, NATANAEL!
Oversatt av Torsten M. NILSSON,
STOCKHOLM, 1979

Карэн А. СИМОНЯН, ДО ПОБАЧЕННЯ, НАТАНАЄЛЕ!
Переклад з вірменьскої Олександра БОЖКА,
Художник Алла ХАРЧЕНКО ,
КИЇВ 1983